

ԱՐԴԱՎԻՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԻՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՅԱՐՑԵՐԸ XVII-XVIII ԴԱՐԵՐԻ  
ԴԱՅ ՊԱՏՄԻՉԱԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ




1134265 955

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԺԱՎԻՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ

*Հ. 101394*  
ԻՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ  
XVII-XVIII ԴԱՐԵՐԻ ՀԱՅ  
ՊԱՏՄԻՉՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2016



NATIONAL ACADEMY OF SCIENCES  
REPUBLIC ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

ARSHAVIR GASPARIAN

THE QUESTIONS OF IRAN HISTORY IN  
THE WORK OF ARMENIAN  
HISTORIANS OF XVII-XVIII CENTUR

YEREVAN 2016

ՀՏԴ 93/94  
ԳՄԴ 63.3  
Գ 316

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԲՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՍՔ

Խմբագիր՝ Վ. Ա. Դիլոյան  
պատմ. զիտ. դոկտոր, պրոֆեսոր

Գրախոս՝ Վ. Ա. Բայրուրդյան  
պատմ. զիտ. դոկտոր, պրոֆեսոր

Գասպարյան Արշավիր

Գ 316 Իրանի պատմության հարցերը XVII-XVIII դարերի հայ  
պատմչների երկերում, Ա. Գասպարյան, Եր.: Հեղ. Հրատ., 2016,  
201 էջ:

Պատմական զիտուրյունների թեկնածու, դոցենտ Արշավիր  
Գասպարյանի աշխատության մեջ XVII-XVIII դարերի հայկական  
աղբյուրների հավաստի և արժանահավատ տեղեկությունների  
հիման վրա լայնորեն քննարկման է ենթարկվում Իրանի սոցիալ-  
տնտեսական ու քաղաքական կացությունը, հայ-իրանական  
փոխհարաբերությունները, միջազգային դրությունը, ինչպես նաև  
Իրանի XVII-XVIII դարերի պատմության առանցքային հիմնա-  
հարցերը:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, արևելագետնե-  
րի, միջազգայնագետների, ուսանողության և ընթերցող լայն  
հասարակայնության համար:


ՀՏԴ 93/94  
ԳՄԴ 63.3



ISBN 978-9939-0-1641-2

© Գասպարյան Ա., 2016

## ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ ԱՐԱՄԻ



Պատմաբան, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, Գյումրու Ս. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետի պատմության, իրավագիտության և նրանց դասավանդ-

ման մեթոդիկաների ամբիոնի դոցենտ:

Արշավիր Գասպարյանը մոտ քառորդ դար զբաղվում է գիտամանկավարժական գործունեությամբ: Նրա հետաքրքրությունների ոլորտն ընդգրկում է Ասիայի և Աֆրիկայի երկրների, Հայաստանի հարակից երկրների, սփյուռքահայ գաղթավայրերի պատմության հիմնահարցերի ուսումնասիրությունը, ինչպես նաև հայ-իրանական ու հայ-թուրքական փոխհարաբերությունները:

Դասավանդում է Գյումրու Ս. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում և Գյումրու ակադեմիական վարժարանում:

Արշավիր Գասպարյանի գիտական հետազոտությունները հրատարակված են ավելի քան 25 գիտական հոդվածներում: Զեկուցումներով հանդես է եկել հանրապետական ու միջազգային գիտաժողովներում:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի ժամանակաշրջանում խիստ կարևորվում է հայ-իրանական հարաբերությունների հետազա զարգացման ու ամրապնդման անհրաժեշտությունը: Երկու ժողովուրդները միմյանց հետ ունեցել են դարավոր կապեր, որոնք տարբեր պատմական ժամանակահատվածներում ունեցել են յուրահատուկ դրսորումներ: Դրանք պայմանավորված են եղել քաղաքական ու տնտեսական գործոններով:

Իրանը համաշխարհային քաղաքակրթության հնագույն օրաններից մեկն է: Նրա հնագույն բնակիչներն առաջիններից մեկն են, որ թևակոխնեցին պատմական առաջընթացի ուղին: Նախապատմական ժամանակներում այդ ընդարձակ երկրի տարածքը հանդիսացել է արիական ցեղերի տարածման հանգրվան-ներից մեկը, որտեղ ծավալվել են նրանց ռազմաշունչ ոգին և ստեղծագործ եռանդը:

Ներկա աշխատության ընդգրկած ժամանակաշրջանը ուշագրավ ժամանակահատված է հայ-իրանական հարաբերությունների պատմության ուսումնասիրման տեսանկյունից:

Ժամանակաշրջանի բարդ ու խճճված իրադարձությունները, գոյություն ունեցող աղբյուրների առատությամբ հանդերձ, այնուամենայնիվ, բավականաշափ դժվարացնում են տվյալ շրջանի Իրանի պատմության ամբողջական ուսումնասիրությունը: Նկատի առնելով ուսումնասիրվող ժամանակաշրջանի հիմնահարցերի բազմազանությունը, մեր խնդիրը սահմանափակում ենք Իրանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական պատմության հարցերի լուսաբանմամբ՝ ըստ հայկական աղբյուրների: Այս հիմնահարցը մեր կողմից ուսումնասիրվում է հայ-իրանական հարաբերութ-

յունների անխօնի կապի մեջ: XVII-XVIII դարերի հայկական աղբյուրները հիմնականում պատմական իրադարձությունները ներկայացնում են անաշառ կերպով, առանց գունազարդման, քանզի առանց հայկական աղբյուրների ուսումնասիրման լիարժեք չի կարող լինել Իրանի պատմության հետազոտությունը:

Իհարկե, չի բացառվում, որ հիշյալ աղբյուրները չեն կարող լիովին անթերի լինել: Հիմնականում, դրանք գերծ են միակողմանիությունից, և նրանց ուշադրության կենտրոնում միշտ առկա են ռազմա-քաղաքական պատմության տեսակետից կարևոր նշանակություն ունեցող իրադարձությունները:

Հանրահայտ է, որ դեռևս հնագույն ժամանակաշրջանում, աշխարհագրական դիրքի պատճառով Հայաստանը գրավում էր Իրանի ուշադրությունը, ռազմավարական, քաղաքական, մասսամբ նաև տնտեսական տեսակետներից: Իրանի կողմից դեպի Հայաստան ձեռնարկած արշավանքների դրդիչը գերազանցապես քաղաքական գործոնն էր, բայց անկասկած առկա էր նաև՝ տնտեսականը: Հայաստանը դարձել էր երկու մրցակից պետությունների՝ Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի միջև կռվախնձոր: Իրանի պատմության մեջ ուշ միջնադարի դարաշրջանը առանձնանում է վերելքներով ու վայրէջքներով<sup>1</sup>:

Գրությունը բարդանում էր նրանով, որ դեռևս XVII դարում շարունակվում էին թուրք-իրանական պատերազմները: Այս երկու ռազմաշունչ մուտքամանական պետությունների միջև գոյություն ունեին խորը քաղաքական, տնտեսական և աշխարհաքաղա-

<sup>1</sup> Բայրության Վ., Իրանի պատմություն (Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2005, էջ 317-318:

բական բնույթի հակասություններ, որոնք և պատճառ էին հանդիսանում նրանց միջև ռազմական դիմակայության համար:

Առաջնորդվելով Սասանյան տերության վերականգնման ձգումներով, Սեֆյան տերությունը փորձում էր տարածաշրջանում դառնալ տիրապետող ուժ: XVII-XVIII դարերի Իրանի տիրակալները (Չահ Աբբաս Առաջին, Նաղիր Չահ, Քերիմ խան Զենդ և այլն) յուրահատուկ մոտեցում են ունեցել հայ եկեղեցու նկատմամբ՝ քաջ գիտակցելով, որ պետականության բացակայության պայմաններում եկեղեցին էր հանդիսանում հայ ժողովրդի ներկայացուցիչը:

Զերնամուխ լինելով այս թեմայի ուսումնասիրությանը, մենք առաջնորդվել ենք այն գիտակցությամբ, որ XVII-XVIII դարերի Իրանի պատմության վերաբերյալ գոյություն ունեցող հայկական աղբյուրները դեռևս լրիվ ուսումնասիրված չեն: Հետևաբար ներկայացվող աշխատությունը մի փորձ է այդ բացը լրացնելու ուղղությամբ:

Հայկական աղբյուրների օգնությամբ մենք նպատակ ենք հետապնդում ուսումնասիրել Իրանի պատմության կարևորագույն և որոշակի գիտական հետաքրքրություն ներկայացնող դրվագները:

Իրանը մեր տարածաշրջանի այն երկրներից մեկն է, որի պատմությունը սերտորեն շաղկապված է Հայաստանի պատմության հետ: Հիրավի, այդ երկիրը ավելի քան երեք հազարամյակի ընթացքում հանդիսացել է հայ ժողովրդի պատմական ճակատագրի կերտման անմիջական ու գործուն մասնակիցը<sup>2</sup>:

<sup>2</sup> Բայրության Վ., Իրանն այսօր, (Տեղեկատու), Երևան, 1999, էջ 3:

«Հանրահայտ իրողություն է. - զրում է անվանի իրանագետ, Իրանի Խալամական Հանրապետությունում ՀՀ առաջին արտակարգ և լիազոր դեսպան (1992-1998թթ.) պրոֆեսոր Վահան Բայրուրյանը, որ հայ ժողովուրդն իր պատմության ընթացքում ամենաբազմազան շփումներ է ունեցել հարևան երկրների ու ժողովուրդների հետ: Սակայն պատմականորեն ոչ մի երկիր և ոչ մի ժողովուրդ աշխարհագրական, քաղաքական, հոգևոր - մշակութային առումներով այնքան մոտ չի եղել հայերին, որքան Իրանն ու իրանական ժողովուրդը»<sup>3</sup>:

Եվ ամենին էլ պատահական չէ, որ առ այսօր էլ հայ և իրանական ժողովուրդների կենցաղի, բարքի մտածողության և անզամ հոգեկան կերտվածքի բնագավառում կան բազում ընդհանրություններ: Մինչև անզամ, առանձին դարաշրջաններում Հայաստանն ու հայ ժողովուրդը Իրանի հետ գտնվել են սերտ դինաստիական կապերի մեջ, ունեցել շատ դեպքերում ընդհանուր քաղաքական և մշակութային շահեր<sup>4</sup>:

Ներկա ժամանակաշրջանում, հատկապես Հայաստանի երրորդ հանրապետության ստեղծումից հետո հայ-իրանական հարաբերություններն ապրեցին բուռն ու անկասելի վերելք: Անկախություն ձեռք բերելուց հետո Հայաստանի և Իրանի համագործակցությունը ձեռք բերեց նոր որակ, թևակոխսելով ավելի ընդարձակ ու ծավալուն տարածաշրջանային համագործակցության ոլորտը: Այս տեսանկյունից խիստ կարևորվում է Իրանի պատմության հարցերի ուսումնասիրությունը:

<sup>3</sup> Բայրուրյան Վ., նշվ. աշխ., էջ 4:

<sup>4</sup> Նոյն տեղում:

Ներկայացվող աշխատության մեջ փորձել ենք անդրադառնալ Իրանի պատմության երկու հարյուրամյակ ընդգրկող XVII-XVIII դարերի պատմությանը: Այդ ժամանակաշրջանի հայ սպատմիջների աշխատությունները համարվում են Իրանի պատմության ուսումնասիրման համար կարևոր սկզբնաղբյուրներ և առ այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը և գիտական արժեքը:

Քննության ենթակա շրջանի մասին գոյություն ունի մեծաթիվ գրականություն, բայց դեռևս կան շատ հարցեր, որոնք կարուտ են լրաբանման: Այս գործում խիստ կարևորվում են պատմական աղբյուրների դերն ու նշանակությունը: Պահպանվել են բազմաթիվ և բազմալեզու աղբյուրներ, որոնք հսկայական նյութ են պարունակում Իրանի պատմության համակողմանի հետագոտման համար: Այս բազում աղբյուրների մեջ առանձնանում են հայկական աղբյուրները (պատմական երկեր, ժամանակագրություններ, օրագրեր, հիշատակարաններ և այլն), որոնց բնորոշ հատկանիշներից են անաշառությունը և հարուստ նյութի պարունակումը:

XVII-XVIII դարերի հայ պատմիջների մեծ մասը եղել են իրենց նկարագրած դեպքերի մասնակիցը, ականատեսը և ականջալուրը: Եվ այս ամենը բնականաբար բարձրացնում են աղբյուրների պատմական ու գիտական արժեքը: Իրանի պատմության ուսումնասիրման մեջ հայկական աղբյուրների կարևորությունը արձանագրում են նաև պարսիկ պատմաբանները: Սայիդ Նաֆի-

սու կարծիքով Իրանի պատմությունը չի կարող գրվել առանց հայկական աղբյուրների<sup>5</sup>:

Դ. Ալիշանի արտահայտությամբ՝ «Օտարք ոչ միայն նոր ծանօթութիւններ գտնեն մերայնոց քով, այլ և իրենց արդէն ունեցածին լրումն և ուղղագրութիւն սխալանաց»<sup>6</sup>:

Հայ պատմիջների հաղորդած տվյալները ներկայացնում են գիտական մեծ արժեք ոչ միայն Հայաստանի, այլև հարևան ժողովուրդների պատմության ուսումնասիրման համար:

Հայկական աղբյուրները զերծ են պալատական ներբողական պատմագրությանը բնորոշ գծերից, թերություններից ու կողմնակալությունից: Հայկական աղբյուրների այս արժեքավոր ու առանձնահատուկ կողմը վաղուց ի վեր իր վրա է գրավել ուսումնասիրողների ուշադրությունը և այսօր հրապարակի վրա կան մի շարք մենագրություններ ու հոդվածներ, որոնց մեջ իրենց արտացոլումն են գտել հայկական աղբյուրների հաղորդած տեղեկությունները:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանը շատ կարևոր, հետաքրիր և միաժամանակ Հայաստանի հետ սերտորեն առնչվող ժամանակահատված է և ամեննեին էլ պատահական չէ, որ մեր կողմից առանձնացվել է հատկապես այդ ժամանակաշրջանը: XVII դարում շարունակվում էին թուրք-իրանական պատերազմները և Հայաստանը հանդիսանում էր ռազմական գործողությունների թատերաբեմ: Շուրջ 125 տարի տևած այդ պատերազմները մեծ վնաս հասցրեցին Հայաստանին և հայ ժողովրդին: Այս

<sup>5</sup>Տե՛ս Դանելյան Լ., «Առաքել Դավթիմեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղյուր», Երևան, 1978, էջ 7:

<sup>6</sup>Տե՛ս Ալիշան Դ., Հայապատում, Վենետիկ, 1901, մաս Ա, էջ 14:

պատերազմում Հայաստանը հերթական անգամ ենթարկվեց բաժանման 1555 թվականին Ամասիայի և 1639 թվականի Քասրէ Շիրինի թուրք-իրանական հաշտության պայմանագրերով։ Դրանք ել ավելի խորացրին Հայաստանի քաղաքական մասնատվածությունը և մեծ վնաս հասցրին տնտեսությանն ու մշակույթին<sup>7</sup>։

Առանձնապես նյութերի հարստությամբ աշքի է ընկնում XVII-XVIII դարերի հայ պատմագրությունը (Առաքել Դավթիթեցի, Խաչատուր Չուլայեցի, Աբրահամ Կրետացի, Զաքարիա Սարկավագ Քանաքեռցի և այլք)։ Նշված պատմիչների աշխատությունները առանձնանում են ոչ միայն Իրանի պատմության վերաբերյալ նյութերի մեծ ծավալների ընդգրկմամբ, այլև տվյալների հավաստիությամբ և անաշառությամբ։ Որակական այս հատկանիշները հիմք են տալիս վստահորեն հենվելու նշված աղբյուրների հաղորդումների վրա և նրանց օգնությամբ հավաստելու կամ հերքելու այլ աղբյուրների տեղեկությունները։

Այս տեսակետից անգնահատելի սկզբնաղբյուր է համարվում Առաքել Դավթիթեցու երկը՝ «Պատմութիւն Առաքել Վարդապետի Դաւթիթեցւոյ», որը ամենայն իրավամբ որոշ ձեռագրերում անվանվում է «Պատմութիւն Պարսից թագաւորացն»<sup>8</sup>։

Տվյալ դարաշրջանի պատմական անցքերին անդրադառնալը դժվար է պատկերացնել առանց այդ պատմիչի արժանահավատ տվյալների օգտագործման։ Բազում ուսումնասիրողներ իրենց աշխատություններում լայնորեն օգտագործել են Դավթիթեցու

<sup>7</sup> Գասպարյան Ա., Հասարակական-քաղաքական կյանքի արտացոլումը XVII-XVIII դարերի հայ պատմագրության մեջ, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ, Գիտական աշխատություններ, հ. VIII, Գյումրի, 2005, էջ 44-48։

<sup>8</sup> Առաքել Դավթիթեցի, Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւթիթեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ Գ։ Այսուհետև՝ Առաքել Դավթիթեցի։

աշխատության նյութերը, որոնք յուրօրինակ գույն ու երանգ են հաղորդում պատմական իրադարձությունների արտացոլմանը:

Առաքել Դավիթեցու երկը իրանազիտական տեսանկյունից ուսումնասիրելու առումով բավականին լուրջ քայլ է Լ. Դանեղյանի «Առաքել Դավիթեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր, աշխատությունը»: Այն արժեքավոր ուսումնասիրություն է Իրանի XVII դարի պատմության բաղադրական ու սոցիալ-տնտեսական բնագավառների վերաբերյալ նյութերի խմբավորման և ամրողացման տեսանկյունից: Աշխատության մեջ Լ. Դանեղյանը արժենորել և գիտականորեն հիմնավորել է Դավիթեցու տեղեկությունները Սեֆյան Իրանի վերաբերյալ:

Նա նաև կարողացել է ներկայացնել այս անզուգական պատմիչի հաղորդած տվյալների հավաստիության աստիճանը և այլ աղբյուրների հետ բաղդատելու միջոցով ցույց տալ, թե ինչ նորություններ են պարունակում Դավիթեցու հաղորդած տվյալները Սեֆյան Իրանի պատմության լրացրանման հարցում և դրանց շնորհիվ նաև հնարավորություն է ընձեռվում բացահայտելու օտար աղբյուրներում առկա որոշ անձշտություններ:

Մենք նույնպես որպես աղբյուրագիտական հիմք, առաջին հերթին անդրադարձել ենք Դավիթեցու աշխատության մեջ բերված տվյալներին: Դավիթեցու հայտնի աշխատությամբ, փաստորեն նշանավորվեց ուշ միջնադարյան հայ պատմագրության ծնունդը:

<sup>9</sup> Դանեղյան Լ., «Առաքել Դավիթեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII - դարի պատմության սկզբնաղբյուր», Երևան, 1978, էջ 5-6:

Աշխատությունը Դավրիժեցին գրել է 9 տարվա ընթացքում և արտացոլել է 60 տարվա պատմություն (1602-1662)<sup>10</sup>:

Դավրիժեցին ծնվել է Աստրապատականի Թավրիզ քաղաքում, որի համար էլ կոչվում է Թավրիզեցի, կամ Դավրիժեցի: Նա եղել է Էջմիածնի միաբանության ճանաչված դեմքերից մեկը և որպես Փիլիպոս կաթողիկոսի նվիրակ շատ է ճանապարհորդել թե՝ Արևելքում, թե՝ Արևմուտքում: Հավաքելով առատ տեղեկություններ՝ կաթողիկոսի հրամանով ձեռնամուխ է եղել գրելու իր ժամանակի կարևոր իրադարձությունների մասին: Պատմիչը նկարագրած իրադարձությունների ականատեսն է ու ականջալուրը. որը խիստ բարձրացնում է աշխատության պատմական արժեքը: Զերմ հայրենասիրությունն է նրան ուժ ու կորով ներշնչել, որպես զի ծերության հասակում իրականացնի այդ ծանր առաքելությունը: Դավրիժեցին ձգտել է իր հնարավորությունների սահմաններում գրելու ճշմարիտ և լիակատար պատմություն: Նա աշխատել է անձնուրաց կերպով. «Յուսով յանձն առի զայսպիսի յոքնաշխատ եւ բազմաերկ եւ զտաժանելի գործն եւ աւուրս յոլովս ի սմին դեգերելով եւ ի յոլով երկիրս եւ յաշխարհս շրջագայելով ի խնդիր գրուցաց պատմութեան»<sup>11</sup>: Ժամանակի նկատմամբ աշխատել է ճշգրտապատում լինել և մեծ տեղ է տվել ժամանակագրությանը:

Առաքել վարդապետի ոճը շատ պարզ է և դյուրըմբռնելի: Աշխատության «Նախադրութիւն»-ում պատմագիրը նշում է «Պատմության» ստեղծման նպատակը: Մեծ տեղ է հատկացվում օգտագործված աղբյուրների ընձեռած նյութի մանրամասն շարադրմա-

<sup>10</sup> Գասպարյան Ա., Պարսկաստանի 17-18-րդ դարերի պատմության առանցքային հարցերը հայ պատմիչների երկերում. ՀՀ Կ Գիտական նստաշրջան, Գյումրի, 1999, էջ 9-10:

<sup>11</sup> Առաքել Դավրիժեցի, էջ Գ-Դ:

Նը: Դավրիթեցին օգտագործում է զավառական և օտար բառեր, որոնք աշխատությանը յուրօրինակ գոյն ու երանգ են հաղորդում: Դիմելով ընթերցողին, նա գրում է. «Իսկ թերին եւ թիւրն եւ այլ սոյնպիսիքն յիմըս տղիտութենէ եւ ի տկարութեն, վասն որոյ աղաշանօք խնդրեմ ի ձենջ ներում»<sup>12</sup>:

«Պատմության» ներածական մասում պատմիչը ընթերցողին ներկայացնում է նյութի կարևորությունը և շարադրանքի սկզբունքները:

Դավրիթեցին հայ այն բացառիկ պատմիչն է, որի աշխատությունը տպագրվել է կենդանության օրոր: Այն հրատարակվել է 1669թ. Ամստերդամում: Այդ երևույթը պայմանավորված էր աշխատության ուշագրավ բովանդակությամբ<sup>13</sup>:

XVII դարը հայ ժողովրդի համար սկսվեց ավերիչ ու օրհասական դեպքերով: Իրանի և Թուրքիայի միջև եղած հակասությունները՝ Մերձավոր Արևելքում և Այսրկովկասում հասան իրենց զազաթնակետին: Հայաստանը դարձավ ռազմական գործողությունների թատերաբեմ: Շահարասյան բռնազաղթը դարձավ հայ ժողովրդի համար ամենածանր հարվածը, ավերվեցին ու ամայացան բազում զյուղեր ու քաղաքներ: Այդ ծանր պայմաններում սկսվեց հայ քաղաքական կյանքի զարթոնքը, ըմբռստացավ հայ ժողովրդի ազատատենչ ողին:

Դավրիթեցու երկը բոլորի համար դարձել էր սիրելի, քանզի այն ճիշտ էր ընկալել ժամանակի ողին: Մ. Աբեղյանը գտնում է, որ նա միամիտ ու սնուտիապաշտ մարդ է եղել, և նա «...ոչնչով

<sup>12</sup> Նոյն տեղում, էջ 2:

<sup>13</sup> Տե՛ս Բարյան Լ., Դրվագներ Հայաստանի XIV-XVIII դարերի պատմագրության, Երևան, 1984, էջ 83:

բարձր չէ ռամիկ ու տգես ժողովրդից»<sup>14</sup>: Իհարկե, Մ.Աբեղյանը շափազանց խիստ է գնահատել նրան, քանզի անգամ օտար պատմիչները դրվատանքով են խոսել պատմիչի մասին: Չնայած պատմագիրը օգտագործել է հրաշապատումներ ու տեսիլներ, այնուամենայնիվ, ինքը դրանցից շատերին չի հավատացել: Եվ միանգամայն իրավացիորեն Լ. Դանեղյանը նշում է. «Այս պայմաններում Դավիթեցի պատմագրի ծնունդը օրինաչափ ու անհրաժեշտ երևույթ էր, և նրա «Պատմությունը» օրգանական շարունակությունն էր սկզբած նորոգության»<sup>15</sup>:

Իր ապրած ժամանակաշրջանում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները չեն վրիպել պատմագրի ուշադրությունից, որոնց մասին նա գրել է որպես ականատես ու ականջալուր: Լեռն գրում է. «Դավիթեցին մի հավատացյալ վանական է, լցված մի վառ սիրով դեպի հայրենի աշխարհը, դեպի ազգային, մտավորկություրական ստացվածքը ներկայացնող եկեղեցին: Այդ սերը դարձնում է նրան երկարաբան, ուշադիր դեպի բոլոր մանրամասնությունները, դեպի ամեն մի հանգամանք, որ հարազատ ժողովրդի նահատակության փաստերն էր ցոլացնում»<sup>16</sup>:

Դավիթեցու «Պատմությունը» կարևոր աղբյուր է նաև XVII դարի առաջին կեսի Այսրկովկասի, Թուրքիայի և Հայաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքի պատմության ուսումնասիրման համար: Այն ուշագրավ տեղեկություններ է պարունակում Թուրքիայի ու Իրանի կառավարման համակարգի, հարկային քաղաքականության և դրանց ծանր հետեանքների

<sup>14</sup> Աբեղյան Մ., Հայոց եին գրականության պատմություն, Երկեր. հ. Դ. Երևան, 1970, էջ 522:

<sup>15</sup> Դանեղյան Լ., նշվ. աշխ., էջ 10:

<sup>16</sup> Լեռ, Սրկերի ժողովածու, երրորդ հատոր, գիրք առաջին, Երևան, 1969, էջ 353:

մասին: Հանգամանորեն ներկայացված են Հայաստանի տարածքում տեղի ունեցող թուրք-իրանական պատերազմների ռազմական գործողությունները և դրանց հետևանքները Հայաստանի և Այսրկովկասի երկրների համար:


*ՀՈՐՅՈՒ*  
Դավիթեցու երկը առ այսօր էլ չի կորցրել իր արդիականությունը, նպաստում է վեր հանելու և ճիշտ լուսաբանելու Իրանի պատմության առանցքային հիմնահարցերը: Ամենայն իրավամբ այն համարվում է մեր պատմագրության ուշագրավ երևույթներից մեկը, որի միջոցով պատմաբանը ի վիճակի է լուսաբանելու և ճշգրտելու ոչ միայն հայոց, այլև Իրանի պատմության բազմաթիվ հարցեր:

Միանգամայն ճիշտ են այն պատմաբանները, որոնք մատնանշում են, որ նման պայմաններում Դավիթեցու աշխատության ծնունդը իրատապ երևույթ էր: Լեռն գրում է. «Առաքելը հանդիսանում է առաջնակարգ գրական մի աստղ, որ չունի իր նմանը թե՝ նախորդ դարում և թե՝ իր ժամանակակիցների մեջ»<sup>17</sup>:

Փաստորեն, եթե XVI դարը միանգամայն ամայի շրջան էր հայ պատմագրության մեջ, ապա Դավիթեցին այն պատմիչն է, որով սկսվում է հայ պատմագրության վերելքը: Բնշափես նշում է պատմագիրը, հայրենիքին վերահաս դժբախտությունները ստիպեցին իրեն գրելու «Պատմությունը». «Եւ ես ինձեն իսկ տեսանելով զաւերս Հայաստան աշխարհին, և զնուազիլս մերոյս ազգին, և զարութիւնն մահմետականաց, կսկծալի մորմորմամբ այրիւր սիրու իմ, վասն որոյ յօժարեցայ յարձանագրութեան սոցին»<sup>18</sup>:

<sup>17</sup> Լեռ. նշվ. աշխ., էջ 353:

<sup>18</sup> Առաքել Դավիթեցի, էջ Դ-Ե:



Լինելով հոգևորական Դավրիժեցին համոզված էր, որ այդպիսի ծանր աշխատանք կատարելով, ազատված կլինի իր բոլոր մեղքերից: Նա ամենայն լրջությամբ է մոտեցել այդ աշխատանքին և ինչպես ինքն է նշում «ի յոդորմելի ծերութեան» «ցաւազար մարմնով»<sup>19</sup> 1651թ սկսում է գրել «Պատմությունը»: 1654 թ. Փիլիպոս կաթողիկոսի մահից հետո ընդհատում է գրելը, բայց 1658թ Հակոբ կաթողիկոսի հրամանով նորից սկսում է գրել:

Աշխատությունն ունի 56 համարակալված գլուխներ /Ա.-ՃԶ/: Գլուխներում նկարագրված է շահ Աբբաս Ա-ի քաղաքականության ներքին ծալքերը: Այս պարագայում Դավրիժեցին փայլում է իբրև պատմիչ և բռնակալի գաղտնի մտադրությունների գիտակ:

Շահ Աբբաս Ա-ի կազմակերպած հայոց բռնագաղթից և հատկապես 1639թ. թուրք-իրանական հաշտությունից հետո սկսվում է խաղաղ շինարարական, ստեղծագործական և մտավոր զարգացման ու աշխատացման ժամանակաշրջան:

Հայ ժողովուրդը այդ դժնակ ժամանակներում, երբ կարծեք կանգնած էր ստույգ կործանման շեմին, ուժ է հավաքում ապրելու, հարատելու և իր մշակույթը վերականգնելու ու զարգացնելու համար:

Դավրիժեցին հրաշալի ծանոթ է եղել հայոց պատմագրությանը և հայ գրականությանը: Զարարիա Սարկավազը, որն անձամբ ճանաչել է նրան, զրում է, որ վերջինս տեղյակ էր բոլոր պատմագիրներին, և իսկապես առողջ ոգով վերլուծում ու գնահատում էր

<sup>19</sup> Նոյն տեղում, էջ Բ:

այս կամ այն գիրքը, նշում նրանց թերություններն ու առավելությունները<sup>20</sup>:

Պատմագիրն ամենայն մանրամասնությամբ նկարագրում է պատմական իրադարձությունները, դատապարտում հակազգային քաղաքականությունը՝ որակումների մեջ խորականություն չդնելով: Առ այսօր էլ Դավրիմեցու գիրքը գնահատվում ու արժենություն է ըստ արժանվույն: Ժամանակակիցները շատ բարձր են դասել նրա գիտելիքները, իսկ նրա երկը դիտել իբրև ճշմարիտ ու հավաստի պատմություն: Զարարիա Սարկավագը իր «Պատմության» մեջ հաճախ է վկայակոչում Դավրիմեցուն, ի վերջո նրան բնութագրում այսպես. «Առաքել Վարդապետն, որ տեղյակ էր ամենայն պատմագրաց»<sup>21</sup>:

Դավրիմեցուն բարձր է գնահատում նաև նրա ժամանակակից Ստեփանոս Լեհացին, որ նույնպես անձնական ծանոթություն է ունեցել պատմիչի հետ: Վերջինիս անվանում է Ճարտարախոս, գիտուն և հմուտ: «Զայնու ժամանակաւ բազում էին երեկի վարդապետք (յէջմիածին), բազաբանք, բանաստեղծք, աստուածային զրոց բազք գիտունք և հմուտք, յորոց մի է և Առաքել վարդապետն վիպասան, որ զժամանակագրութիւնս հայրապետաց և թագաւորաց գեղեցիկ յարմար բանի դրոշմեալ»<sup>22</sup>:

Մեսրոպ Թաղիայյանը խոսելով Առաքել Դավրիմեցու աշխատության մասին զրում է. «Այստեղ մանրամասն է նկարագրում Առաքել Վարդապետ Դավրիմեցին մեծ արքայի հարվածները, դրամաշորթությունները, գերեվարությունները՝ նրան ցույց

<sup>20</sup> Տե՛ս Զարարեայ Սարկավագի Պատմագրութիւն, հ. 3, Վադարշապատ, 1870, էջ 4: Այսուհետև՝ Զարարիա Սարկավագ:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 4:

<sup>22</sup> Զարդիանալյան Գ., Պատմութիւն հայերէն դպրութեան, Վենետիկ, 1878, էջ 172:

տալով իր հոռուրյան մեջ իբրև աշխարհի ծայրահեղ բարբարուներից մեկը: Իսկ եթե երևոյթները կշռադատել կամենաք, նոյն Առաքելի գրվածքից այնպիսի բարի վարք կզտնեք նրա մեջ, մինչև իսկ աշխարհի թիշ թագավորներ կարող են ունենալ»<sup>23</sup>:

Հետևյալ խոսքերով է բնութագրում Դավրիժեցուն Աևոնյ Ալիշանը. «Հետ կանոնավոր պատմչաց ԺԳ դարու և ԺԴ-ին սկզբան արժանավոր պատմիչ մի չէ հասած մեզ հետագա դարերուն մինչև ի սա, իրմէ առջի երկու դարուց պատմիչներեն և թե իրմէ վերջնոց ամենեն լավագույնն է և կարժե օրինավոր պատմաց դասակցել»<sup>24</sup>:

Ըստ Մանուկ Աբեղյանի Դավրիժեցու «Պատմության» մեջ շատ կրկնություններ ու ավելորդաբանություններ կան: Դավրիժեցին իր աղբյուրները չի կարողանում մշակել, ինչպես լսել է զանազան մարդկանցից, այդպես էլ շարադրել է, ուստի և այն զանազան գրույցների անմշակ ժողովածու է: Մ. Աբեղյանը վկայակոչում է իրար հետ կապ չունեցող անկախ գրույցներ, վկայություններ և այլն<sup>25</sup>:

Գուցե այս ամենի մեջ ինչ որ ճշմարտություններ կան բայց շահ Աբբաս Ա-ի պատմությունը, նրա գործունեությունը, հետևողական քաղաքականությունը, Դավրիժեցին ներկայացնում է պատմիչին հատուկ հմտությամբ՝ բոլոր մասերը կապելով իրար և փաստերը բիւեցնելով մեկը մյուսից:

Ամենից առաջ նշենք նրա կրրու ու բոցավառ հայրենասիրությունն ու ազգասիրությունը, որոնց մասին Մ. Աբեղյանը գրում

<sup>23</sup> Թաղիաղեան Մ., Պատմութիւն Պարսից, հ.Ա. Կալկաթա, 1846, էջ 169:

<sup>24</sup> Ալիշան Ղ. Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 131:

<sup>25</sup> Տէ՛ս Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, Երևան, հ. Դ. Երևան, 1970, էջ 524:

է. «Եվ իրավ Խորենացու հայրենասիրության ոգին անցել է այդ վարդապետին»<sup>26</sup>:

Դավրիմեցու «Պատմությունը» ժամանակագրական մի ճշգրիտ վավերագրություն է, որ հեղինակը թիշ է մսում, որ հիշատակի կատարված պատմական իրողության նաև ժամը: Պատմագիրը զրում է. «Այլ և զիտելի է, զի ըստ պահանջելոյ հարկին աստանօր պարտ է դնել զթուականն իբր զիիմն, և ապա յարել ի նոյն զպատմութիւն որպէս զշինուածս, ըստ օրինի պատմագրաց»<sup>27</sup>: Փաստորեն նա շարժվում է Խորենացու պատզամով՝ «Ո՞չ է պատմութիւն ստոյգ, առանց ժամանակագրութեան»<sup>28</sup>:

Դավրիմեցին ժամանակագիր պատմիչ է: Նա նշում է, որ իր աշքերով է տեսել շահ Աբբաս Ա-ի իրականացրած բռնազարդը: Նա այն եզակի պատմիչներից է, ով ուշադրություն է դարձրել մեր ձեռագրիր հիշատակարաններին, իբրև պատմության հավաստի աղբյուրների և օգտվել է դրանցից: Նա հայոց պատմության շարադրանքը սկսում է լայն առումով: Գուցե առաջին հայ պատմիչն է, որ իր զրում Մայր Հայրենիքի պատմության հետ հյուսում է նաև հայ գաղութներում կատարվող անցուդարձերը:

Քանի որ Հայաստանը ենթակա էր իրանական և թուրքական տիրապետություններին, ուստի Դավրիմեցին XVII դարի հայոց պատմությունը շարադրում է այդ երկրներում տեղի ունեցող քաղաքական անցուդարձերի, սրանց միջև կատարվող ռազմական ընդհարումների և այդ կարգի փոխհարաբերությունների հետ: Դավրիմեցու գիրքը Գրիգոր Դարանադցու և Զաքարիա Սարկա-

<sup>26</sup> Նոյն տեղում, էջ 519:

<sup>27</sup> Առաքել Դավրիմեցի, էջ 3:

<sup>28</sup> Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Երևան, 1990, էջ XXXIX:

վազի ժամանակագրությունների հետ միասին կարևոր աղյուր է Իրանի պատմության ուսումնասիրման համար:

Դավրիժեցու աշխատությանը տալով առաջնակարգ տեղ, այնուամենայնիվ հարկ ենք համարում նշել, որ կան, հայկական այլ աղյուրներ, որոնք ոչ պակաս ուշագրավ տեղեկություններ են հաղորդում Իրանի պատմության մասին: Մեր ուսումնասիրության համար որոշակի հետարրբություն է ներկայացնում XVII դարի պատմիչ Զաքարիա Սարկավագ Քանաքեռու աշխատությունը: Վերջինս (1627-1699 թթ.) պատանեկության տարիներին սովորել է ոսկերչություն, բայց 20-25 տարեկանում թողնում է այդ արհեստը, զնում է Հովհաննավանք, որտեղ էլ անցկացնում է իր ամբողջ կյանքը: Աշակերտել է Զաքարիա և Հովհաննես վարդապետներին: Եղել է իր ժամանակի կրթված հոգևորականներից մեկը: Շատ է ճանապարհորդել Եղել է Պոլսում, Թավրիզում, Զմյուռնիայում: Նա ինչ որ տեսել է ու լսել՝ արտահայտել է իր աշխատության մեջ: Մ.Աբեղյանը իրավացիորեն նշում է. «Զաքարիան կատարյալ պարզամիտ է, մի լեռան հովվի, մի ուղտապանի չափ: Խիստ նեղ հայացքով, զրեթե ամեն: Բանի, որ լսել է, հավատում է»<sup>29</sup>:

Պատմիչը մանկության հասակում տեսել ու զգացել է իրանական խաների բիրտ ու վայրագ իշխանությունը: Դաժան իրողությունը դրոշմվել է նրա հիշողության մեջ և արտացոլվել իր երկուս: Դառնորեն նկարագրում է, թե ինչպես են խանի հարկահանները վարվում հարկատուների հետ, ինչպես են իր հորը տանջամահ արել և այլն<sup>30</sup>:

<sup>29</sup> Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 525:

<sup>30</sup> Բարձրական Լ., նշվ.աշխ., էջ 132-133:

Ի տարբերություն Առաքել Դավիթիցու, որից նա առատորեն օգտվել է, Զաքարիան քննադատական վերաբերմունք չունի իր նյութի նկատմամբ:

Մանուկ Աբեղյանը նշում է. «Զաքարիայի Պատմությունն իսկապէս պատմություն չէ, սուտ ու ճշմարիտ, առասպել ու իրողություն, վայրիվերո, խառնիխուտն ժողովված են մի տեղ՝ առանց որոշ դասավորության, առանց որևէ կարգի: Ժամանակագրական ճշտություն, իհարկե, պահանջել կարելի չէ մի պարզամիտ մարդուց, որ պարզ սուտը ճշմարտից ջոկել չի կարողանում և առօրյա չնշին« մանր ու մունք դեպքերը, իբրև կարենոր պատմական եղելություն՝ արձանագրում է»<sup>31</sup>:

Բայց անգամ այդ դեպքում էլ պատմիչի հաղորդումները խիստ ուշագրավ նյութ են պարունակում Իրանի պատմության ուսումնասիրման համար: Զաքարիայի աշխատությունը բաղկացած է երեք հատորից: Առաջին հատորն սկսվում է (Զահանշահից) և ավարտվում է Երևանի Թահմազ դույլի խանի տված ճակատամարտով՝ թուրքական գորբերի դեմ, որտեղ իրանցիները հաղթանակ են տանում:

Աշխատության սկզբում տրված է «Պատմութիւն և կարգ թագաւորացն Պարսից», որտեղ կան հետաքրքիր տեղեկություններ Սասանյան Արտաշիր թագավորի մասին:

Երկրորդ հատորն ընդգրկում է սուլթան Մուրատի կողմից Երևանի գրավումով, ապա իրանցիների կողմից նրա վերագրավումով և ավարտվում է մի քանի նահատակությունների նկարագրությամբ: Ընդգրկում է 1635-1699 թթ. ժամանակաշրջանի իրադարձությունները:

<sup>31</sup> Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 527:

Երրորդ հատորը կազմում է Կոնդակը, որտեղ Զաքարիան գրում է թե Հայաստանում ինչքան վանքեր են կառուցվել և հատկապես գրում է Հովհաննավանքի պատմության մասին<sup>32</sup>:

Մեզ համար հատկապես կարևոր են առաջին երկու գրքերը, որտեղ որոշակի տվյալներ կան նաև Իրանի պատմության և իրանական շահերի վարած քաղաքականության մասին:

Չնայած այս ամենին, ինչպես նշում է Լեռն, Զաքարիան իր պատմության մեջ հավաքել է բազմաթիվ փաստեր ժողովրդական կյանքից, որը մենք չենք գտնում իին գրականության մեջ<sup>33</sup>:

Զաքարիան ներկայացնում է ժողովրդի մեջ իրանական շահերի (Խսմայիլ, Թահմազ, շահ Աբբաս Ա.) մասին տարածված գրույցներն ու երգերը: Պատմիչը շահ Աբբասի ռազմա-քաղաքական գործունեության մասին գրեթե չի խոսում, այլ մեծ սիրով նկարագրում է այդ հերիաթ-գրույցները: Նա չի զիտակցել, որ այդ «բարի» շահը այդ ամենը արել է ելնելով իր տերության շահերից: Միաժամանակ Զաքարիան ցույց է տվել ժողովրդի ծանր դրույունը իրանական լծի տակ: Դրանով փաստորեն ինքն իրեն հակասում է: Այնուամենայնիվ պատմիչը պարսկական իշխանությունների նկատմամբ ունեցել է բացասական վերաբերմունք՝ նրանց ներկայացնելով գոռող, ինքնահավան ու ազահ:

Զաքարիա պատմագիրն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում շահ Աբբաս Ա-ի կողմից իրականացրած մեծ բռնազարդի և նրա հետևանքների մասին: Դրանով նա կարծես լրացնում է Առաքել Դավիթեցուն:

<sup>32</sup> Զաքարիա Սարկավագ, էջ 29:

<sup>33</sup> Տե՛ս Լեռն, նշան. աշխ., էջ 356:

Անկասկած Զաքարիա Քանաքեցու աշխատությունն իր պարունակած հարուստ նյութով ու մատուցման ձևերով, պատկերավոր լեզվով, գեղջկական անմիջականությամբ ու պարզությամբ իր արժանի տեղն է գրավում հայ պատմագիտության մեջ<sup>34</sup>:

XVII դարի կարևոր սկզբնաղբյուրներից է նաև Զաքարիա Ազուլեցու (1630-1691 թթ.) «Օրագիրը», որը բովանդակում է նաև ուղեգրության ու ժամանակագրության տարրեր<sup>35</sup>:

Զաքարիան ծնվել է Ազուլիս քաղաքում, որը զգալի դեր է կատարել Այսրկովկասի ու Իրանի մետաքսի արդյունահանման և առևտրաշրջանառության ոլորտում:

Ազուլեցի վաճառականները առևտրական սերտ կապեր էին հաստատել Իրանի, Թուրքիայի և Եվրոպական մի շարք երկրների հետ: Իր առևտրական գործունեությունը Զաքարիան սկսել է նախ Իրանի և Թուրքիայի շուկաներում, իսկ այնուհետև Եվրոպայում: «Օրագիր»-ը սկսել է գրել 1647 թ., որը հիմնականում տեղեկատու բնույթի աշխատություն է և տալիս է տվյալներ, որոնք առաջին հերթին կարող են հետաքրքրել վաճառականին: «Օրագրի» առաջին մասը բովանդակում է առևտրական երթուղիների նկարագրությունը, նշված են այն քաղաքները, զյուղերն ու իջևանատները, որոնցով անցնում է տվյալ ուղին: Երկրորդ մասում Ազուլեցին նկարագրում է իր ճանապարհորդությունները 1647-1681 թթ:

Ազուլեցին նկարագրում է նաև իրանական արքունիքի փոխհարաբերությունները, կառավարող շրջաններում տիրող բարերը, և որ ամենակարևորն է, այդ ամենը տրված է քաղաքական

<sup>34</sup> Առաքելյան Ա., Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հ. 2, Երևան, 1964, էջ 568:

<sup>35</sup> Հայոց պատմություն, հ. III, զիրք առաջին, ՀՀ ԳԱԱ, Երևան 2010, էջ 110:

իրադարձությունների հենքի վրա: Ազուլեցին անկեղծորեն զրում է. «Դարձեալ՝ ով սիրելի եխապայրը թէպէտ զրած անշահ այ ապա շատ շահաւոր է իմացողի»<sup>36</sup>: Նրա փոքրածավալ աշխատությունը իր մեջ պարունակում է հատակ ու չափազանց արժեքավոր տեղեկություններ Հայաստանի, Իրանի, Թուրքիայի, ինչպես նաև Եվրոպական մի շարք երկրների XVII դարի ապրանքների գների, թանկության և էժանության, ռազմական տուրքերի և այլնի մասին<sup>37</sup>:

XVIII դարը, որը Հայաստանի պատմության մեջ բնորոշիւմ է Իրանի և Օսմանյան Թուրքիայի լծից ազատագրվելու համար հայ ժողովրդի մղած պայքարով, իր արտացոլումն է գտել նաև պատմագիտության բնագավառում:

Իր բնույթով Զաքարիա Ազուլեցու «Օրագրին» մոտ է նորջուղայեցի հայ վաճառական տեր Դավթի որդի՝ Հովհաննեսի «Հաշվետումարը»: Վերջինս կարևոր տեղեկություններ է հաղորդում Իրանից Հնդկաստան ներմուծվող և արտահանվող ապրանքների, դրանցից զանձվող մաքսերի չափերի, ինչպես նաև ապրանքադրամական հարաբերությունների մասին<sup>38</sup>:

Նյութի ընդգրկումով և ուշագրավ բովանդակությամբ «Հաշվետումարը» իր ուրույն տեղն է գրավում հայ միջնադարյան մատենագրության մեջ: Դրանք համարվում են Հայաստանի և հարևան երկրների քաղաքական ու սոցիալ-տնտեսական պատմության ուսումնասիրման սկզբնադրյուրներ:

Աշխատության մեջ օգտագործել ենք XVIII դարի այն հայ պատմիչների աշխատությունները, որոնց հեղինակների մի մասը

<sup>36</sup> Զաքարիա Ազուլեցի Օրագրություն, Երևան, 1938, էջ 5:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 133-134:

<sup>38</sup> Տե՛ս Հովհաննես Տեր-Դավթյան Զուղայեցու Հաշվետումարը, աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի և Հ. Գ. Փափազյանի, Երևան, 1984, էջ 13 - 22:

եղել է ներկայացվող իրադարձությունների ականատեսն ու մասնակիցը: Մեզ համար զիավոր աղբյուր հանդիսացել են հայ պատմիչների երկերը, իսկ մյուսները լրացուցիչ և օժանդակ դեր են կստարել:

XVIII դարի հայկական աղբյուրներն արտացոլում են Իրանում տիրող քաղաքական իրավիճակը, ճշմարտացի արտահայտում իրանական շահերի վարած քաղաքականությունը, պարզաբանում դրանց պատճառներն ու հետևանքները: Այս սկզբնադրյուրներից ժամանակագրական առումով առաջինը Աբրահամ կաթողիկոս Կրետացու ոչ մեծ աշխատությունն է, զրված ծավալուն հիշատակարանի կամ օրագրի ձևով: Կրետացու ծննդյան թիվը հայտնի չէ: Ավելի քան 25 տարի նա եղել է Թեքիրդաղի (Օնդոստ-Ա. Գ.) հայոց հոգևոր առաջնորդ<sup>39</sup>: 1734 թ. որպես ուխտավոր եղել է Էջմիածնում և թիչ հետո ընտրվել կաթողիկոս: Նրա կաթողիկոսության շրջանը (1734-1737 թթ.) քաղաքական բուռն իրադարձությունների, մեծ մասամբ Հայաստանի տարածքի վրա մղվող թուրք-իրանական հակամարտությունների, Նադիր շահի հզորացման տարիներն են:

Աշխատության մեջ պատմիչը մանրամասն նկարագրում է բոլոր իրադարձություններն ու այն ամենը, ինչ տեղի է ունեցել նրա կաթողիկոս ընտրվելուց հետո: Արտահայտված են քաղաքական կարեռ դեպքերի, Նադիր շահի ու նրա մերձավորների հետ իր հանդիպումների նկարագրությունները:

<sup>39</sup> Աբրահամ կաթողիկոսի Կրետացու պատմագրութիւն անցիցն իւրոց և Նատրի - Շահին Պարսից, Վաղարշապատ, 1870: Այսուհետև Աբրահամ Կրետացի:

Մանրամասն նկարագրված է նաև Մուղանի դաշտում կայացած մեծ դուռությայը, որտեղ Նադիրն ընտրվեց Իրանի շահ: Գրված լինելով ականատեսի և քաղաքական մի շարք կարևոր իրադարձությունների մասնակցի կողմից, այն արժեքավոր աղբյուր է Մերձավոր և Միջին Արևելքի պատմության ուսումնասիրման համար:

Ներկա ժամանակաշրջանի մասին խոսելիս Կրետացին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Նադիր շահի մասին: Նա շատ լավ է հասկացել Նադիրի հետապնդած նպատակները և ինքն էլ իր հերթին փորձել է օգտագործել դրանք ի նպաստ հայոց կաթողիկոսության վիճակի բարելավման: Կարևոր տեղեկություններ կան նաև Իրանի պետության վարչակարգի, սովորույթների, պաշտոնների, բանակի և այլնի մասին:

Մի շարք ուսումնասիրողներ գտնում են, որ Նադիրի հետ փոխհարաբերություններում մեծ դեր են կատարել Կրետացու անձնական հատկանիշները:

Մադարիա Օրմանյանը՝ հայ եկեղեցու պատմության հայտնի ուսումնասիրողը, գտնում էր, որ Կրետացին քաղաքական զործերում ակտիվ էր ու փորձված<sup>40</sup>:

Շատ անգամ էր Նադիրը կաթողիկոսին կանչել իր մոտ և խորհրդակցել:

Իրականում Նադիրի այս հարաբերությունները հետապնդում էին հեռահար նպատակներ: Աշխատության մեջ ներկայացված են բազում փաստեր, որոնք բնութագրում են Նադիրի բոնակալական հատկությունները:

<sup>40</sup>Տե՛ս Օրմանյան Մ., Ազգապատում, մասն. Բ, Կ. Պոլիս, 1914թ., պ. 1972:

Կրետացու աշխատությունը իրականում համարվում է անձնական հիշատակարան և մեր պատմության մեջ մի առանձին տեղ է գրավում և եզակի է իր տեսակի մեջ քանզի հայ պատմագրության մեջ նման հիշատակարաններ շատ հազվադեպ են հանդիպում:

Առաջին անգամ Կրետացու «Պատմությունը» լույս է տեսել 1796 թ. Կալկաթայում և առ այսօր կշի կորցրել իր պատմագիտական արժեքը:

Իրանի պատմության ուսումնասիրության ոլորտում զգայի հետաքրքրություն է ներկայացնում Խաչատոր Զուղայեցու «Պատմութիւն Պարսիցը», որի մեջ հավաքվել և համակարգվել են Իրանի պատմության վերաբերյալ հայկական պատմագրական հուչարձաններում ամբարված բոլոր տեղեկությունները: Գիրքը կազմված է երկու մասից, առաջինում տրված է Կյուրոսից մինչև Քերիմ խան եղած Իրանի շահերի. ինչպես նաև Նոր Զուղայի առաջնորդների ժամանակագրությունը և վերջիններիս համառոտ կենսագրությունները, իսկ երկրորդ մասը Քերիմ խանի պատմությունն է, որը Զուղայեցին գրել է որպես ժամանակակից ու ականատես<sup>41</sup>:

Շարադրանքը որոշ չափով ժամանակագրական բնույթ է կրում: Պատմիչը այն շարադրում է մանրամասն, իսկ որոշ տեղերում ուղղակի թվարկում է թագավորներին ու տարեթվերը: Սերված լինելով շահ Աբբաս Ա-ի կողմից Սպահան գաղթեցված հայերից, Զուղայեցին բազմաթիվ էջեր է նվիրում հայերի բոնազադրին:

<sup>41</sup> Տե՛ս Խաչատոր արեղայի Զուղայեցոյ, Պատմութիւն Պարսից (ԺԸ դար), աշխատական բարեկարգություն, Վահագան Վահարշապատ, 1905, էջ ԺԱ-ԺԲ: Այսուհետև՝ Խաչատոր Զուղայեցի:

Խաչատուր Զուղայեցու աշխատությանը հատուկ են միջնադարյան պատմագրության շատ ներկայացուցիչների երկերում նկատվող թերությունները: Շարադրանքի թելք բազմիցս կտրվում է երկարաշունչ դատողություններով, մեծ տեղ է հատկացված դաշտաբանական հարցերին, հեղինակի գնահատականները հաճախ տառապում են կողմնակալությամբ:

Զուղայեցու աշխատությունում Իրանի պատմության հարցերը շարադրված է հայ իրականության հետ շաղկապված: Աղյուրագիտական տեսակետից ունենալով այն թերությունները, ինչը հատուկ է տվյալ ժամանակաշրջանի պատմագրությանը, այնուամենայնիվ այն Իրանի և Հայաստանի պատմության ուսումնասիրման համար կարեռ աղյուր է, քանի որ հիմնված է ականատեսի վկայությունների վրա: Պատմիչը, տալով ճշգրիտ տեղեկություններ, իբրև ժամանակակից անձ, նշում է. «Արդ ժամ է մեզ այսուհետեւ եւ զերկրորդ մասն վճարել. որ է ճիշտ պատմութիւն գործոց Քերիմ խանի մինչեւ ի մահ նորա բովանդակելով»<sup>42</sup>:

Զուղայեցին գրում է ժամանակագրություն և ինչպես ինքն է ասում . «Այլ ոչ ապաքեն զգործն եւ զարութիւնս նոցա ուրոյն վիպելով. գորոց որք նախ քան զմեզ էին. գեղեցիկ եւ սեթեւեթեալ ոճով զրեցին. այլ եւ եթ միայն զանուանս նոցա յիշատակելով. եւ եթէ արդեօք մարդ ինչ իցէ՝ եւ զթիս ամաց թագաւորելոյն նոցա. այսինքն՝ եթէ յորում ամի. եւ քանի ամ թագաւորեցին»<sup>43</sup>:

Պատմագիրն ընթերցողին համոզում է, որ ինքը բազում անգամ է ստուգել, հետո գրել: Նա կատարյալ վստահում է հայկական աղյուրներին և անվստահություն է տածում իրանական

<sup>42</sup> Խաչատուր Զուղայեցի, էջ Թ-Ժ:

<sup>43</sup> Նույն տեղում, էջ Թ-Ժ:

աղբյուրների նկատմամբ՝ չնայած օգտվել է դրանցից: Այդ մասին նա բազմիցս հիշատակում է. «Այլ այժմ յոյժ կարևոր վարկանիմ ճառել վերստին՝ զՇահաբասայ Արքայէ, քանզի յայլուստ ճառից՝ որ զպատմութիւնս վարուց Շահաբազայ գրէր, այլ իմնապէս ուրեք ուրեք զտի՝ քան զայնս, զորս կանխապէս ճառագրեցի: Որոյ վասն յօժարեցայ ապարէն և զայնս անցանել ի զիրս յայս, զի մի ինչ արտարս քան զբանս մեր մնասցէ մանաւանդ այս զոր գրեմն՝ թուեցաւ ինձ զոլ ուղիղ՝ քան զայն, զոր յառաջագոյն յայլ յուստերէ մատենից գրեցի: Ուրեմն՝ հարկատր է զի աշխատասիրեցայց, զի զոնեա բացայայտեսցի զուղիղն, որով և համայն ընթերցասէրք՝ խսկապէս հասու լիցին եղելոց քանից: Եւ մի ոք զուցէ երբէք զբանս մեր օտարուոի իմն՝ և կամ խառն ի խուռն ստապատիր կարծելով, այլ անվթաք՝ և անստերիւր. զի բազում անզամ յարախոյզ որոնմամբ՝ հետազօտեցաք ի ճառագրութիւնս Պարսից ազգի, և ի մերոց նախնեաց վիպագրաց՝ ոքք կարի ճզամբ բաղդատելով առ միմեանս, և ապա հազիւ թէ՝ զուղորդն շարահիւսեցաք ի բաղդիւսութեան քանիս մերոյ»<sup>44</sup>:

Պատմազիրը փաստորեն երկու աղբյուրների տեղեկությունները համեմատել է միմյանց հետ և դրանք բաղդատելու միջոցով արտահայտել ճշգրիտ պատմություն:

Արմեքավոր տեղեկություններ է տալիս նաև շահ Սուլթան Հուսեյնի, շահ Աբբաս Ա-ի և Նադիր շահի գործունեության մասին: Նկարագրում է Նադիր շահից հետո երկրում ստեղծված անիշխանության ժամանակաշրջանի պատմությունը, զահի համար ծավալված միջֆեռդալական կորիվները, կենտրոնախույս

<sup>44</sup> Խաչատուր Զուղայեցի, էջ 123:

ուժերի ակտիվացումը և ամենայն իրավամբ այդ բոլորի հետևանքները հայ ժողովրդի համար համարում է չարիք:

Հայ Եկեղեցական -քաղաքական նշանավոր գործիչ, կաթողիկոս Սիմեոն Երևանցու /1763-1780/ կրոնական, փիլիսոփայական ու պատմագիտական բնույթի բազմաթիվ ստեղծագործությունների շարքում իր ուշագրավ բովանդակությամբ ուրույն տեղ է գրավում «Զամբո» աշխատությունը:

Նշանավոր այդ գործիչը շատ ուժ ու եռանդ է դրել Էջմիածնի հոգևոր կենտրոնի դերը, հեղինակությունն ու նյութական բարեկեցությունը ամրապնդելու գործում, և իր աշխատությունն էլ գրել է հենց այդ նպատակով: Առաջին տասներկու գլուխները նվիրված են հայ Եկեղեցու պատմությանը, երկրորդ մասում տրված է Էջմիածնի տիրույթների և ընդհանրապես ամբողջ ունեցվածքի ցուցակը, ինչպես նաև նրա տնտեսական յուրօրինակ պատմությունը: Վերջին հինգ գլուխներում բերվում է իրանական ու քուրքական այն իրովարտակների համառոտ բովանդակությունը, որոնք պահպում են Էջմիածնի վանքի դիվանում: Անշարժ կալվածքների, առևտրի, Եկեղեցական տնտեսությունների, վարձումշակների և այլնի մասին «Զամբո»-ի մեջ գրառված տեղեկությունները մեծ արժեք են ներկայացնում ոչ միայն Հայաստանի, այլև Իրանի տնտեսական կյանքի պատմության համար: Այդ իմաստով Սիմեոն Երևանցու աշխատությունը հայ պատմագրության կարևորագույն հուշարձաններից է: Այն հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում XVIII դարի 60-70-ական թթ. Իրանի ու Թուրքիայի ներքաղաքական կյանքի մասին<sup>45</sup>:

<sup>45</sup> Տե՛ս Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Զամբո, Վաղարշապատ, 1873, էջ 11-14:

Արժեքավոր աշխատություն է 1978թ. Մխիթարյան միաբանության կողմից լույս ընծայված Դաւիթ Բեկ կամ «Պատմութիւն Ղափանցոց», աշխատությունը՝ Սամուել վարդապետ Արամյանի աշխատասիրությամբ: Այն իրենից ներկայացնում է երկու բնագիր՝ միևնույն վերնագրով: Աշխատության համար հիմք են հանդիսացել Մխիթարյան միաբանությունում պահվող թիվ 620 և 2685 ձեռագրերը: Այս աշխատությունը հայ ազգային-ազատագրական շարժմանը նվիրված եզակի գործերից մեկն է և վերաբերում է XVIII դարի 20-ական թվականներին: Աշխատության մեջ արտացոլված է նաև հայ-իրանական հարաբերությունները:

Ըստ «Պատմութիւն Ղափանցոց»-ի Դավիթ-Բեկը սակավաթիվ հայ մարտիկներով ժամանել է Ղափան և զլխավորել հայերի ասպատամբությունը: Նա ստեղծել է իշխանապետություն, որը ճանաչվել է Իրանի շահի կողմից, և որ շահը թուրքերի դեմ պայքարելու նպատակով ընդունել է Դավիթ Բեկի առաջարկությունը զինական դաշնակցություն կնքելու մասին և նա լիազորել է Դավիթ-Բեկին զլխավորելու հայ-իրանական զինված ուժերի պայքարը թուրքերի դեմ<sup>46</sup>:

Իրանի պատմության ուսումնասիրման տեսանկյունից տեսանկյունից կարևոր ուղերձ է Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Զալալյանի «Պատմությունը», որից պահպանվել է միայն մի բաժին՝ «Պարսկաստանի պատմության համառոտ ակնարկը»: Այստեղ հատկապես կարևոր են հարկային ծանր քաղաքականությունը բացահայտող ճշգրիտ ու պատկերավոր տվյալները:

<sup>46</sup>Տե՛ս Դավիթ Բեկ կամ «Պատմութիւն Ղափանցոց», աշխ. Սամուել Վրդ Արամյան, Վենետիկ-Ս. Ղազար. 1978, էջ 173-174:

Վարդանանց հոգևոր նահատակների նման, պատմագիրը կաթողիկոսական գավազանը փոխարինել է սրով ու վրաց Վախ-թանգ թագավորի հետ սերտ զինակցած ջանք չի խնայել իրակա-նացնելու Խորայել Օրու վեհ նպատակը<sup>47</sup>:

Պատմագիրը խորապես զիտակցել է պատմության դերն ու նշանակությունը: Ժամանակակիցներին ու գալիք սերունդներին հայրենասիրության, ազգային ինքնազիտակցության ու ազգային արժանապատվության ոգով դաստիարակելու բնագավառում:

Եսայի Հասան-Զալայյանը «Պատմության» առաջարանում թվարկում է հայ և օտար պատմիչներին, որոնց աշխատությունները ուսումնասիրել է իր «Պատմությունը» գրելու համար: Առաջարանում կաթողիկոս պատմիչը խոսում է պատմության դերի, աշխատություն գրելու դրդապատճառների, ապա անդրադառնում է Իրանի պատմության համառոտ ակնարկի շարադրմանը և պարսից շահերի ժամանակագրությանը: Եսային ամենայն բարեխղճությամբ նշում է, թե որ պատմագրից ինքն ինչ ծաղկաբաղ է արել<sup>48</sup>:

Եսայի Հասան-Զալայյանի պատմական երկի արժեքը չափա-գանց մեծ է: Այն ականատեսի, գործող անձի ստուգապատում աղյուս է Այսրկովկասի XVIII դարի առաջին քառորդի պատ-մության ուսումնասիրման համար:

Պատմագիրը կարևոր տեղեկություններ է հաղորդում նվաճ-ված երկրներում Իրանի վարած հարկային քաղաքականության, հարկահանման ձևերի, Սեֆյան հարստության անկման պատ-

<sup>47</sup> Տե՛ս Բաբայան Լ., նշվ. աշխ., էջ 238:

<sup>48</sup> Տե՛ս Հասան-Զալայյան Եսայի, Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ ան-ցից՝ դիպելոց յաշխարիխն Աղուանից. Շուշի, 1839, էջ 8-10: Այսուհետև Եսայի Հասան-Զալայյան:

ճառների, լեզգիների ասպատակությունների, միջֆեոդալական հակամարտությունների, ժողովուրդների ծանր ու անտանելի վիճակի մասին:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի պատմագրության ամենահետաքրքիր հուշարձաններից մեկն էլ Պետրոս դի Սարգիս Գիլանենցի «Օրագիրն» է: Վերջինս վաճառական էր, որը թողնելով առևտրական ասպարեզը, ամբողջությամբ նվիրվել էր հայ ժողովրդի ազատազրական պայքարին: Նա ծառայության է անցնում ուսական բանակում և կարևոր տեղեկություններ էր հավաքում ու ուղարկում ուսական իրամանատարությանը: Ու այս գեկուցագրերն էլ 133 առանձին հոդվածների տեսքով կազմում են Գիլանենցի «Օրագիրը»: Նրա համար որպես տեղեկությունների աղյուր հանդիսանում էին մեծ մասամբ հայ վաճառականները: Նրա շնորհիվ Գիլանենցի երկամյա /1722-1723/ օր-օրի կազմած «Օրագիրը» տալիս է այն ամենի պատկերը, ինչ որ տեղի էր ունենում այդ երկրներում: «Օրագրում» մանրամասն նկարագրված են ափդանների արշավանքները, Նոր Ջուղայի ավերումը, սուլթան Մահմուդի մուտքը Սպահան, ինչպես նաև կենցաղային բնույթի մի շարք մանրամասնություններ՝ պարենամբերքի գների, ափդանների թալանած հարստությունների և այլնի մասին<sup>49</sup>:

«Օրագրում» արտացոլվել է հայ ժողովրդի անսահման հավատը Ռուսաստանի օգնությամբ իրանա-թուրքական լծից ազատազրվելու հնարավորության վերաբերյալ:

<sup>49</sup> Տե՛ս Պետրոս դի Սարգիս Գիլանենց, ժամանակագրություն Զուղայեցոց բարբառով զրած, «Կոռունկ Հայոց աշխարհին». Թիֆլիս, 1863, փետրվար և մարտ. N 3:

XVIII դարի հայերի, վրացիների, աֆղանների, պարսիկների ու թուրքերի, նրանց փոխհարաբերությունների և մղած պատերազմների ուսումնասիրման համար խիստ կարևոր աղբյուր է Աբրահամ Երևանցու «Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի» աշխատությունը: Հեղինակի մասին միայն գիտենք, որ Երևանի բնակիչ է եղել, և դատելով իր գրվածքից կրթված ու ուզմական գործից հասկացող աշխարհիկ անձնավորություն է եղել: Սկսելով աֆղանների կողմից Սպահանը գրավելուց հետո երկրում ծայր առած անիշխանության նկարագրությունից, Երևանցին անցնում է հայ-թուրքական, թուրք-վրացական, աֆղանահրանական և հատկապես իրանա-թուրքական հարաբերությունների ու պատերազմների մանրամասն նկարագրությանը: Դա ականատեսի ու մասնակցի պատմություն է: Զգալի հետաքրքրություն են ներկայացնում պատերազմող բանակների, տեխնիկայի, ինչպես նաև Թահիմազգուլի խանի քաղաքական ու ուզմական գործողությունների մասին նրա հաղորդած ուշագրավ տեղեկությունները: Թուրքերի դեմ Արքաչայի հովտում Թահիմազգուլի խանի տված ճակատամարտի նկարագրությունը պատկանում է Աբրահամ Երևանցու գրքի ամենավառ էջերի թվին<sup>50</sup>:

Հայկական աղբյուրների գիտական ներդրումը իրանազիտության մեջ անվիճելի է: Դրանք լույս են սփռում Իրանի պատմության առանցքային հարցերի ուսումնասիրմանը և հնարավորություն են ընձեռում անաշառ մոտենալ պատմական իրադրաժությունների մեկնաբանմանը:

<sup>50</sup> Տե՛ս Աբրահամ Երևանցի, «Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի», Յառաջաբան, բնագիր, խմբագիր օրինակ և ծանօթութիւններ, պատրաստեց հ. Սահակ Ճեմճեմեան, Վենետիկ, 1977, էջ 40-45: Այսուհետև՝ Աբրահամ Երևանցի:

Հարեան Երկրի պատմության ուսումնասիրման ոլորտում յուրահատուկ դեր ունեն նաև ժամանակագրությունները կամ տարեգրությունները<sup>51</sup>:

Ժամանակագրությունները համարվում են դարեր կազմող տևական ժամանակաշրջանի իրադարձությունների արտացոլումներ, որոնց պատմագիտական արժեքը նախև առաջ կայանում է նրանում, որ դրանք ժամանակակիցների, ականատեսների և դեպքերի անմիջական մասնակիցների վկայություններ են և համարվում են սկզբնադրյուրներ<sup>52</sup>:

Դրանցում անգամ նշվում է պատմական իրադարձությունների թվականը և ամսաթիվը:

Մանր ժամանակագրություններում արտացոլվել են ոչ միայն Հայաստանի, այլև հարեան մի շարք Երկրների պատմության կարևորագույն իրադարձությունները: Միաժամանակ վկայություններ են պահպանվել նաև Իրանի քաղաքական, հասարակական և տնտեսական բնագավառների մասին: Անգամ դրանց մի զգալի մասը ամբողջովին նվիրված է Իրանի պատմության հարցերին<sup>53</sup>:

Մանր ժամանակագրությունները ոչ միայն հավաստում են աղբյուրներում տեղ գտած շատ փաստեր ու իրադարձություններ, այլև լրացնում և ամբողջացնում են դրանք: Կարևոր է այն հանգամանքը, որ առնչվում ենք այնպիսի փաստերի հետ, որոնք գիտական մեծ հետարքքրություն են ներկայացնում:

<sup>51</sup>Տե՛ս Իրանագիտության հարցեր, աշխատասիրությամբ Խ. Բարսեղյանի, Երևան, 1978, էջ 55:

<sup>52</sup>Գասպարյան Ս., Միջնադարյան հայկական ժամանակագրությունները և ձեռագիր հիշատակարանները որպես Իրանի պատմության սկզբնադրյուր, ԳՊՄԻ, Գյումրի 2007, էջ 163-166:

<sup>53</sup>Տե՛ս Հակոբյան Վ., Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ.1, Երևան, 1951, էջ 302:

Հասկապես հարուստ նյութ են պարունակում այն ժամանակագրությունները, որոնք արտացղում են XVI - XVIII դարերի պատմությունը, երբ Իրանը միավորվեց ինքնուրույն պետության շրջանակներում և բռնեց վերելքի ուղին: Դրանցում արձանագրվել են թուրք -իրանական հակամարտությունները:

Քիչ թիվ չեն կազմում նաև այն հաղորդումները, որոնք կարող են ճշտել կամ լրացնել թուրք -իրանական պատերազմի մանրամասնությունները: Արժեքավոր տեղեկություններ է հաղորդվում ռազմական գործողությունների թատերաբեմ դարձած շրջանների, բնակչության ծանր վիճակի /գերեվարություն, սով, կոտորած, համաձարակներ և այլն/ մասին<sup>54</sup>:

XVIII դարերի սկզբին աֆղանների Իրան ձեռնարկած արշավանքի ուսումնասիրման համար կարևոր աղբյուր է հանդիսանում նկարագրվող իրադարձություններին ժամանակակից Մարտիրոս դի Առաքելի ժամանակագրությունը, որը վերաբերում է Սեֆյանների հարստության տապալմանը: Այն արժանահավատ աղբյուր է նաև ոռու - իրանական և ոռու - թուրքական հարաբերությունների ուսումնասիրման համար<sup>55</sup>:

Համեմատաբար փոքր թիվ են կազմում Իրանի ներքին կյանքն արտացղող մանր ժամանակագրությունները: Հովհաննես Արծիշեցին հիշատակում է երկրում տիրող կենտրոնախույս ձգտումները, ժողովրդական ապստամբությունները և ներքին դրությունը<sup>56</sup>:

<sup>54</sup>Տե՛ս Հակոբյան Վ., Աշվ. աշխ., էջ 181-187:

<sup>55</sup>Նույն տեղում, հ. 2, էջ 132-134:

<sup>56</sup>Նույն տեղում, հ. 2, էջ 227:

Մանր ժամանակագրությունները նաև կարևոր տեղեկություններ են հաղորդում իրանահայ զաղթօջախի մասին և հնարավորություն են ընձեռում անզամ օրերի հաջորդականությամբ մեկնարանել շատ իրադարձություններ: Դա իհարկէ չի վերաբերում բոլոր ժամանակագրություններին: Հաճախ լինում է նաև հակառակը, երբ ժամանակագրությունները շփոթում են տարեթվերը և օրերը: Չնայած այս ամենին, մանր ժամանակագրությունները որպես աղբյուր լայնորեն օգտագործվել են հայագիտական հետազոտություններում և պարունակում են խիստ արժեքավոր նյութ նաև Իրանի պատմության հարցերի ուսումնասիրման տեսանկյունից:

XVII դարի իրադարձությունները ավելի կամ պակաս շափով արտացոլվել են ձեռագրեր ընդօրինակող գրիչների կամ ուրիշների գրած հիշատակարաններում, որոնք լրացնելով մեկը մյուսին, որպես ժամանակակցի, կամ ականատեսի գրառումներ, պատմական անզնահատելի արժեք են ներկայացնում: Կարելի է համարձակ նշել, որ տվյալ դարաշրջանի պատմությունը լիարժեք չի կարող գրվել, առանց ժամանակին ընթացակից հիշատակարանների բազմաբովանդակ ու հարուստ նյութերի օգտագործման:<sup>57</sup>

Հիշատակարանների բովանդակած բազմապիսի ու հարուստ նյութը գիտական նշանակություն ունենալուց բացի ունի նաև քաղաքական նշանակություն:

Այս բոլոր աղբյուրներն ու ուսումնասիրությունները առ այսօր ել չեն կորցրել իրենց արդիականությունը և ենթակա են համակողմանի ուսումնասիրման ու վերազնակատման:

<sup>57</sup> Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ: դար, աշխատասիրությամբ Հ. Փափազյանի հ. Ա. Երեսն, 1974թ., էջ Զ:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### 1. ՀԱՅ ՊԱՍՄԻՉՆԵՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՍՈՅԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (XVII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)

XVII դարն աչքի է ընկնում Իրանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի աշխուժացմամբ: Այդ շրջանին բնորոշ էին պետական հողերի զգալի աճը, կենտրոնաձիգ քաղաքականության ուժեղացումը, առևտրական և դիվանագիտական կապերի ընդլայնումը, քաղաքների ու արհեստների աճը և ներքին առևտրի զարգացումը: Հողագործությունը շարունակում էր մնալ տնտեսության գերիշխող ձևը: Գյուղատնտեսության զարկերակը արհեստական ոռոգումն էր:

Իրանում ֆեռալական հարաբերությունները զուգակցվում էին քոչվոր բնակչության մեջ իշխող նահապետական-տոհմատիրական հարաբերություններին: Բնակչության 1/3 -ը քոչվոր կյանք էր վարում:

Ըստ Առաքել Դավթիթեցու գոյություն ունեին հողի ֆեռալական սեփականության հետևյալ տեսակները՝

ա) պետական կամ դիվանի հողեր (արագիե մամալեր),

բ) շահի ընտանիքի սեփականությունը կազմող հողեր (արագիե խասսե),

գ) կրոնական հաստատություններին պատկանող հողեր (վակֆ)

դ) մոլք կամ արբարի կոչվող հողեր:

Նշվում է նաև խորդեմալերը (մանր գյուղացիական սեփականություն) և համայնքապատկան հողերը: Լայն կիրառում է գտել հողային նվիրատվության ձևը: Առաքել Դավթիթեցու աշխա-

տուրթյան մեջ հանդիպում ենք հողային նվիրատվության վերաբերյալ հետաքրքիր փաստերի: Դավիթ կաթողիկոսը հրաժարվելով կարողիկոսությունից մեկնում է Սպահան, որի համար խնդրում է շահ Աբրաս Ա-ի թույլտվությունը: Շահը թույլտարելով, իբրև ապրուստի միջոց մի զյուղ (Զգախոռ գավառում) պարզեց նրան, միայն եկամուտներին տնօրինելու պայմանով՝ «Մինչ ցայս վայր Դաւիթ կաթուղիկոսն ընդ բանակի շահին էր ցգալն ՄԵԼՔԻՍԵԿ կաթուղիկոսին. և իբրև ետև Դաւիթ կաթուղիկոսն թէ շահն թողեալ անտես արար զՄԵԼՔԻՍԵԿԸ մնալ ի կապանս, իմացաւ յոզի իւր, թէ կարի երկարաձգի ի յոլով աւուրս անտեսութիւնն այն, վասն որոյ խորհեցաւ հրաժարիլ ի կաթուղիկոսութենէն, և զնալյԱսպահան, որ և մատուցեալ առ շահն և խնդրեաց հրաման զնալոյ իւրոյ յԱսպահան. և շահն եւտ նմա հրաման. և զնաց Դաւիթ կաթուղիկոսն յԱսպահան և կայր ի լոելեայն, բանզի շահն պարզեաց նմա զյուղ մի դարման կենաց նորա ի զաւառին Զգախոռ, որում անուն կոչէին Ֆոնզիկան. զի կերիցէ զմուտս գեղջն այնմիկ և աղօթեսցէ վասն կենաց թագաւորին. և նա զնացեալ յԱսպահան կեայր այնպես»<sup>58</sup>:

Նման հողերը տրվում էին դիվանի հողերից ֆեոդալներին և կոչվում էին թիուլ: Կար թիուլի երկու տեսակ՝ մեկը տրվում էր պաշտոնի առթիվ, պաշտոնալիարելու ընթացքում, իսկ մյուսը՝ անձնական արժանիքների համար՝ ցմահ: Նման դեպքում գործ ունենք թիուլի մի տեսակի հետ, որը տրվում էր այլակրոն բարձրաստիճան հոգևորականներին:

Ուշագրավ է Դավիթեցու հաղորդած մեկ այլ տեղեկությունը հողային նվիրատվության մասին: Շահ Աբրասը մելիք Շահնազա-

<sup>58</sup> Առաքել Դավիթեցի, էջ 217:

րին ու նրա եղբայրներին պարզեց է զյուղեր. «Ելեալ շահն ի Թիֆլիսու գնաց ի զաւառն Գեղամայ և բանակեցաւ անդէն բանակն արքունի. և ինքն Շահարբասն իշխանեցաւ ի տան մէլիք Շահնազարին, որ էր ի զիւղն Մազրայ, բնական ի նոյն գեղջէն: Եւ էր մէլիք Շահնազարս յազգեն Հայոց՝ և հաւատով քրիստոնեայ, իշխան հզօր և փառաւոր, որ արար հիւրընկալութիւն շահին որպէս վայել: բազաւորի՝ և էր ինքն բարեկամ և մտերիմ և արզոյ առաջի թագաւորին: Վասն որոյ և թագաւորն պատուական և ազնիւ զգեստուր շրեդացուցեալ խիլայեաց. և պարզեաց նմա զիշխանութիւն մէլիքութեան զաւառին, և այլ ևս դաստակերտս և գեղօրայս ետ նմա եւ եղբարց նորա: Եւ հաստատուն նոմոս զրեաց և կնքեաց թագաւորական կնքով և ետ նոցա զի անփոփոխ լիցի ժառանգութիւնն այն նոցա և զաւակաց նոցա յազգե յազգ մինչև յաւիտեան»<sup>59</sup>: Այս դեպում նվիրատվությունը տրվում էր ժառանգաբար:

Դեռևս բավարար ուսումնասիրված չէ Սեֆյան շրջանում զյուղացիության դրությունը: Հայտնի է, որ ուայայի վրա դրված էին մեծ թվով հարկեր ու պարտավորություններ, որոնք նա հաճախ ի վիճակի չէր լինում վճարել:

Այդ բազում հարկերից էր ավարիզը, ուլաղը, բիզարը, շիզեն, շեքարը և այլն:

Պատմիչը հետաքրքիր տեղեկություններ է հայտնում այն մասին, որ Արադաստան կոչվող երկրում ոչխարների հարկ չկա: Նա նշում է, թե ինչպէս շահ Աբբասը վերացրեց այս հարկը և արդյունքում բարելավվեց ժողովրդի վիճակը<sup>60</sup>:

<sup>59</sup> Առաքել Դավիթիմեցի, էջ 96-97:

<sup>60</sup> Նույն տեղում, էջ 99-100:

Այս քայլը նպատակ էր հետապնդում զարկ տալ Երկրի զարգացմանը, իսկ Դավրիթեցին չոբանբեկի վերացումը կապում է շահի ողորմածության հետ:

Հայտնի է, որ Իրանում ռայայի համար ծանր է եղել այնպիսի պարտավորությունների բեռը, ինչպիսիք էին շահին և նրա պաշտոնյաններին այցելությունների ժամանակ օթևան տալը Պատմիք հետարքիր տեղեկություններ է հաղորդում այդ պարտավորությունների կատարման մասին: Նա նկարագրում է, թե ինչպես մի անգամ ծպտված շահ Աբբասին Խոռոմապատ զյուղի բնակիչները հրաժարվում են օթևան տրամադրել, և վերջինս. «Այլ և առաքեաց զիշխանս ի զյուղն Խոռոմապատ, առ ի սպանանել զարսն, որք ընկալան զնա...»<sup>61</sup>: Փաստորեն Երկրում գործել է բավականին դաժան համակարգ:

Սեֆյան Իրանի հարկային համակարգում տեղ են գտել չարաշահումները, որոնք կիրառվել են նույնիսկ բարձրաստիճան հոգնորականների նկատմամբ: Դավրիթեցին արժանահավատ տեղեկություններ է հաղորդում այդ ոլորտում տիրող չարաշահումների ու կամայականությունների մասին: Նա նշում է թե ինչպես Դավիթ կաթողիկոսին պատկանող զյուղը, որը նա պարզեց էր ստացել շահից, նույնպես ենթարկվում էր հարկման: Միայն կաթողիկոսի խնդրանքից հետո, շահի հրամանով դադարեցվում է հարկահավաքը<sup>62</sup>:

Սեֆյանների կառավարման համակարգը բավականին ուժացված էր: Թեև շահը օժտված էր անսահմանափակ իշխանությամբ, այնուամենայնիվ Երկրի կառավարման մեջ մեծ դեր ունեին

<sup>61</sup> Առաքել Դավրիթեցի, էջ 176:

<sup>62</sup> Նույն տեղում, էջ 232:

բարձրաստիճան պաշտոնյաները, որոնց անվանում էին «պետության պյուներ»: Երկրի կառավարումը իրականացվում էր քաղաքացիական, ռազմական և հոգևոր իշխանությունների բազմաթիվ ներկայացուցիչների միջոցով: Շահից հետո երկրի առաջին դեմքը մեծ վեզիրն էր (պետության վատահություն), որի վերահսկմանն էին պատկանում բոլոր վարչական ու ֆինանսական գործերը: Ղզլբաշ Էմիրների թուլացումից հետո, մեծ վեզիրի կշիռը բարձրանում է և նա գրավում է վճռական դիրք: Նա էր նշանակում պաշտոնյաներին, կառավարում դրամական միջոցներն ու հարկերը, հսկում պաշտոնյաների գործունեությունը: Դավրիժեցին տվյալներ է հաղորդում քաղաքական կյանքի կարգավորման գանազան գործընթացների մասին. նշում է, որ մեծ վեզիրը եղել է շահի աջ ձեռքը և գործել է շահի հետ համաձայնեցված<sup>63</sup>:

Հստ պատմիչի մեծ վեզիրը անմիջական շփման մեջ էր քաղաքապետի, վարչական գանազան պաշտոնյաների հետ, ինչպես նաև զաղթականության դեկավարության հետ: Մեծ վեզիրին պաշտոնանկ կարող էր անել միայն շահը<sup>64</sup>:

Ուշագրավ տեղեկություններ են պահպանվել նաև վարչական կառուցվածքի մասին: Նահանգները դեկավարվում էին նահանգապետների կամ բեկլարբեկների կողմից, որոնք սահմանափակելու էին կենտրոնախույս ձգտումները: Շահը նշանակում էր պաշտոնյաներին, որոնք վերահսկում էին նահանգապետների կենտրոնախույս ձգտումները և անձամբ զեկուցում շահին<sup>65</sup>:

<sup>63</sup> Առաքել Դավրիժեցի, էջ 452:

<sup>64</sup> Առաքել Դավրիժեցի, էջ 442-450:

<sup>65</sup> Նույն տեղում, էջ 186-187:

Քաղաքը կառավարում էր քաղաքապետը կամ քալանթարը, որն ակտիվորեն մասնակցում էր քաղաքային կյանքի բոլոր հարցերի լուծմանը և սերտ կապի մեջ էր անզամ շահի հետ: Դավրիժեցին տեղեկություններ է հաղորդում նաև շահ Աբբաս Ա-ի շրջանում Սպահանի քալանթարների մասին: Հատկապես հայտնի էր Միրզա Մուհամմադին, որն իրավասու էր որոշ հարցերում փոխարինել շահին, վերջինիս բացակայության դեպքում: Մինչև անզամ նա կարող էր զինված ջոկատների կամ առանձին զինվորների միջոցով կարգավորել այս կամ այն հարցը<sup>66</sup>:

Պատմիչի տեղեկությունները ընդհանուր գծերով պատկերում են նաև Սեֆյանների վարչակարգին բնորոշ մի շարք կողմեր՝ մի կողմից սերտ կապ և համաձայնեցվածություն բարձր աստիճանավորների միջև՝ մյուս կողմից տարածայնություններ, կենտրոնախույս ձգուումներ, պալատական դավեր, պաշտոնների վաճառք և այլն: Մեծ տարածում է զտել կաշառակերությունը, այն հաճախ հասել է արտակարգ չափերի:

Դավրիժեցին խոսում է նաև երկրում տիրող կաշառակերության մասին, որը հասել է արտակարգ չափերի Կաշառը համարվել է նպատակին հասնելու կարևոր միջոց: Դրա պաշտոնական արտահայտությունն էր փիշքաշը, որն անխոսափելի պարագա էր որևէ հարցի լուծման համար և ընդունվում էր վարչական բոլոր մարմինների և անզամ շահի կողմից: Ըստ Դավրիժեցու Փիլիպոս կաթողիկոսը Լուսավորչի աջը Նոր Ջուղայից եղած միածին տեղափոխելու իրավունք ստացավ միայն այն ժամանակ, եթե կաշառեց շահին. «Եւ ապա յետ ամենեցուն լցեալ զուտուկի դահեկան յսկուտեղ՝ և ընդ նմին զրեալ թուղթ արզայի՝ մա-

<sup>66</sup> Նոյն տեղում:

տոյց առաջի Շահսեֆի արքայի, խնդրելով ի նմանէ հրաման տալոյ զԱշ սրբոյ Լուսաւորչին»<sup>67</sup>:

Փիշրաշը եղել է անզամ գանձարանը լցնելու հիմնական միջոցներից մեկը:

«Պատմության» տարբեր գլուխներում կան տվյալներ, որոնք շոշափում են Իրանի առևտրա-տնտեսական հարաբերությունները: Հստ պատմիչի Վան գնացող Թավրիզի քարավանները երկար ժամանակ հարձակման էին ենթարկվում Խոշար բերդի իշխան Սուլեյման բեկի կողմից: «Տերն Խոշարայ բերդին որում Սուլեյման բեկ ասէին, եղև երբեմն զի զճանապարհորդ կարաւանն որ ի Վանայ գնային ի Թարվէզ և ի Թարվիզու ի Վան, սա զկարաւանաց բերինսն բռնութեամբ բանայր և որ ինչ իրաց և հաւաներ, սուղ ինչ զին ձգէր ի վերայ տիրոջն և կորզեալ ի տիրոջէն յինքն առնոյր զինչսն, և պատճառէր յե զսով զնեցի»<sup>68</sup>: Հստ Էռլիյան շահի մենաշնորհը հանդիսացող մետաքսի առևտուրը զլխավորապես իրականացվում էր հայ վաճառականների միջոցով: Եվ ամենին էլ պատահական չէր, որ Նոր Ջուղայի վաճառականներն ունեցել են լայն իրավունքներ ու արտոնություններ և համարվել են շահ Աբբաս Ա-ի մերձավորները և անզամ խորհրդատունները:

Փաստորեն խորաթափանց շահ Աբբաս Ա-ը լայնորեն օգտագործել է հայ խոչանների միջոցներն ու նվիրվածությունը Սեֆյան Իրանի տնտեսական կյանքի զարգացման համար: Առաքել Դավրիժեցին շատ ճիշտ է ընկալել նման քաղաքականության հեռագնա նպատակները և իր արժեքավոր ու հավաստի տեղեկություններով ամբողջացնում է Իրանի սոցիալ-տնտեսական ու քաղա-

<sup>67</sup> Առաքել Դավրիժեցի, էջ 320:

<sup>68</sup> Նույն տեղում, էջ 494:

բական կացությունը: Հատկապես Իրանի տնտեսության զարգացման գործում մեծ դեր ուներ Նոր Ջուղայի առևտրական կապիտալը<sup>69</sup>:

Դավրիժեցին մեծ թվով տվյալներ է բերում Իրանում հայ վաճառականների կատարած դերի մասին<sup>70</sup>:

Դավրիժեցու վկայությամբ թանկարժեք քարերի առևտրով զբաղվում էին հատկապես հայերն ու հրեաները: Դավրիժեցին մանրակրկիտ տեղեկություններ է տալիս թանկարժեք քարերի, նրանց հատկությունների, վաճառքի և անզամ գների մասին<sup>71</sup>:

Իրանն առևտրական և դիվանագիտական հարաբերություններ ուներ նաև Ռուսաստանի հետ: Շահ Աբրասի օրոք ակտիվ կերպով Ռուսաստանի հետ կատարվել է դեսպանությունների փոխանակում: Դեսպանները իրանական արքունիք էին բերում բազում ընծաներ, որոնց թվում նաև ավանդական բագեն:

Սեֆյան Իրանում առևտրի խոշոր կենտրոն էր Սպահանը, որը, 1598 թ. լինելով մայրաքաղաք, աննախընթաց ծաղկում է ապրում և դառնում ժամանակի աշքի ընկնող կենտրոններից մեկը: Ումանք նոյնիսկ այն համարել են Ասիայի լավագույն քաղաքը: Սպահանը անվանվել է «աշխարհի կես»: Նկարագրելով քաղաքի դիրքը Դավրիժեցին նշում է, որ այն արևմուտքից արևելք հատվում է մեծ գետով, որի հյուսիսային կողմում տեղակորված

<sup>69</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Բայբուրդյան Վ., Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը XVII դարում, Թեհրան, 1996; Baibourtian V., International Trade and the Armenian Merchants in the Seventeenth century, New Delhi, 2004. Բայբուրդյան Վ., Армянская колония Новой Джукольфы в XVII веке (Роль Новой Джукольфы в ирано-европейских политических и экономических связях), Ереван, 1969.

<sup>70</sup> Առաքել Դավրիժեցի, էջ 64:

<sup>71</sup> Նույն տեղում, էջ 588-596:

են շահի պալատը, մահմեղականների տները, վաճառանոցները, իսկ հարավային կողմում բնակվում էին ջուղայեցիները<sup>72</sup>:

Սպահանի բարեկարգման և բարզավաճման մեջ առանձնապես մեծ ջանքեր է գործադրել շահ Աբրաս Ա-ը, որի օրոք քաղաքը առանձնակի շուրջ է ստանում և մեծ հոչակ ձեռք բերում: Մի որոշ ժամանակ այն դառնում է Արևելքի առևտութիւն կենտրոն: Ականատեսները քաղաքի մասին քողել են հիացական խոսքեր: Դավրիժեցին այն անվանում է «մեծահանդէս քաղաք»<sup>73</sup>:

Խաչատուր Զուղայեցու արտահայտությամբ՝ Սպահանը. «Իսկ ի յաւուրս ժամանակաց Արքային Շահաբազայ՝ իբրև վերստին կարի շքեղազարդ տեսութեամբ նորոգեցաւ զշնաղանիստ՝ և զվեհափառ քաղաքս Ասպահան»<sup>74</sup>:

Շահ Աբրաս Ա-ի նախաձեռնությամբ Սպահանը զարդարվեց ճարտարապետական այնպիսի կոթողներով, ինչպիսիք էին Ալի-Ղափուն և Չեհելսորունը (ապարանքներ) Մասջադե-Շահը և Մասջադե-Լորֆոլլան (մզկիթներ): Կառուցվեցին հրապարակներ, շուկաներ, այգիներ և այլն:

Սպահանի նկարագրմանը շատ պատմիչներ են անդրադարձել բայց հատկապես արժանահիշատակ են Դավրիժեցու տվյալները: Նա նկարագրում է քաղաքի քաղամասերը՝ Թորոսկան, Շխշաբանի, Թաղթիղարաջա, Բաղաթ և այլն: Հատկապես հատուկ շեշտում է Շամշապատը, որն ամենախիտ բնակեցված քաղաք է եղել: Այդ քաղում բնակվել են զաղթեցված հայեր, այն մոտ է եղել պալատին ու շուկային և ունեցել է մշտական ջուր<sup>75</sup>:

<sup>72</sup> Առաքել Դավրիժեցի, էջ 452-453:

<sup>73</sup> Նույն տեղում:

<sup>74</sup> Խաչատուր Զուղայեցի, էջ 129:

<sup>75</sup> Տե՛ս Առաքել Դավրիժեցի, էջ 447-448:

Սպահանք եղել է բազմազգ քաղաք: Այստեղ ապրել են հայեր, հրեաներ, արաբներ, հնդիկներ: Զարարիա Սարկավազը նշում է, որ անզամ ապրել են ասորիներ, վրացիներ, ուզբեկներ, քրդեր<sup>76</sup>:

Դավրիժեցին նշում է «Քրանկների» մասին՝ նկատի ունենալով եվրոպացիներին: Քաղաքում եղել են մեծ թվով արհեստանոցներ՝ պետական և մասնավոր: Պետական արհեստանոցները կոչվել են «քարիսանե»: Հմուտ արհեստավորները վայելել են իշխանությունների հովանավորությունը:

Դավրիժեցու հաղորդած տվյալները Իրանի ներքին ու արտաքին դրության, ինչպես նաև սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին առ այսօր էլ լրացնում են ու ամբողջացնում հարեւան պետության պատմության ուսումնասիրումը:

Դավրիժեցուց զատ Իրանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական հարցերին է անդրադարձել նաև XVII դարի պատմիչ Զարարիա Սարկավազը: Այս պատմիչը ինչ որ լսել է, առանց սուտն ու ճիշտը զանազանելու գրի է առել: Այնուամենայնիվ դրանք ուշազրավ են, քանզի պատմիչը հանդես է զայիս որպես ականատես, բայց չունի քննադատական վերաբերմունք և դա նա խոստվանում է. «Արդ որպես առաջազդյն ծանուցաք թէ զոր ինչ լուաք ի համբաւոյ՝ զայն զրեցաք, թէ սուտն և թէ ճշմարիտն, և թէ զովութիւն լիցի և թէ սուտ պարսաւանք՝ նոցա լիցի. և մեր զիրամայեան արարաք. և դուք որպես կամիք այնպես արարեք»<sup>77</sup>:

Զարարիա Սարկավազի «Պատմազրությունը» մեծարանակ նյութեր է պարունակում ոչ միայն Հայաստանի, այլև հարեւան

<sup>76</sup>Տե՛ս Զարարիա Սարկավազ, էջ 54:

<sup>77</sup>Նույն տեղում, էջ 13:

Երկրների պատմության մասին: Այն նկարագրում է հասարակ մարդկանց, գերազանցապես զյուղացիների դառը կյանքը:

Իրանի վերաբերյալ տնտեսական բնույթի տեղեկություններ է հաղորդում Զաքարիա Ազուլեցին: Իր առևտրական գործունեությունը նա սկսել է Իրանի և Թուրքիայի շուկաներում, իսկ 1658թ. առևտրական գործերով շրջել է Եվրոպայի տարբեր քաղաքներում:

Նրա «Օրագիրը» առաջին հերթին կարող էր հետաքրքրել միայն վաճառականին, քանզի այնտեղ տրված են առևտրական երթուղիների նկարագրությունը, նշված են այն քաղաքները, զյուղերը, իջևանատները, որոնցով անցնում է առևտրականների ուղին, ցույց են տրված բնակավայրերի միջև եղած տարածությունը, փոխադրամիջոցները, մարսերի չափերը, օգտագործվող կշիռները, չափերն ու դրամները<sup>78</sup>:

Սեֆյան տերության սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքի, աշխարհագրության, ազգագրության, կենցաղի, թուրք-իրանական պատերազմների, իրանահայ վաճառականների միջազգային առևտրական կապերի՝ հետևաբար նաև արտաքին տնտեսական հարաբերությունների, իրանահայ զաղութիւն և մի շարք այլ հարցերի մասին ուշագրավ տեղեկություններ են պարունակված XVII դարի պատմիչ Գրիգոր Դարանադցու «Ժամանակագրությունում»<sup>79</sup>:

Հարկ է նշել, որ ուշ միջնադարի պատմագիրներից շատերը կողմնակալ ու միակողմանի մոտեցում են ցուցաբերել իրենց

<sup>78</sup>Տե՛ս Զաքարիա Ազուլեցու Օրագրությունը, Երևան, 1938, էջ 21-22:

<sup>79</sup>Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցոյ կամ Դարանադցոյ, իրապարակեց Մեսրոպ վարդապետ Նշանեան, Երուսաղեմ, 1915, Այսուհետև Գրիգոր Դարանադցի:

կողմից նկարագրվող երևոյթների և իրադարձությունների նկատմամբ: Դա ցայտուն կերպով արտահայտված է հատկապես Գրիգոր Դարանադցի պատմագրի մոտ: Խոսելով Արցախի լեռնային շրջաններում զյուղացիական շարժման դեկավարի՝ վանական Մեխլուի մասին, պատմագիրը նրան անվանում է դիվարնակ, իսկ շարժման մասնակիցներին՝ մարախ<sup>80</sup>: Մեխլուի և նրա զյուղացիաների մասին նրա աղբյուրն, ինչպես ինքն է նշում ,նորջուղայեցի վաճառականներն են եղել որոնց խիստ բացասաբար է բնութագրում: Դա հասկանալի մոտեցում է, քանզի եկեղեցու գաղափարախոսը չէր կարող այլ կերպ վարվել, մանավանդ, որ Մեխլուի շարժումն իր արձագանքն էր գտել Նոր Զուղայում: Այս մասին Դարանադցին զայրույթով գրում է. «... վասն առաւել ատելութեանց հպարտ և անառակ ջուղայեցոցն, որ թողեալ զիւրեանց աշաց գերանն եւ զսեազլխաց շիւկն հանել կու ջանան»<sup>81</sup>:

Նորջուղայեցիների նկատմամբ ունեցած խիստ բացասական վերաբերմունքը պայմանավորել է վաճառականությանը տրված նրա բնութագիրը: Առարել Դավրիթեցուց, Խաչատուր Զուղայեցուց և մյուսների հաղորդումներից մենք զիտենք, որ XVII դարում հայ հասարակական կյանքում ինչ դեր են կատարել հատկապես Նոր Զուղայի խոջաները հայ եկեղեցու վերանորոգչության բնագավառում: Պանդխտության մեջ դեգերող պատմագիրը, սակայն վարկաբեկիչ ձևով է ներկայացնում վաճառականությանը, որոնք թողել են հայրենիք, ընտանիք ու թափառում են աշ-

<sup>80</sup> Տե՛ս Գրիգոր Դարանադցի.., էջ 457:

<sup>81</sup> Նույն տեղում, էջ 457:

խարիսս երեսին: Այս ամենի պատճառը ըստ նրա ազահությունն է և հարստության տենչը<sup>82</sup>:

Դարանաղին չի մերժում վաճառականության գոյությունը, այն համարում է անհրաժեշտ, որը պետք է սակայն չափ ու սահման ունենա: Առևտրական ճանապարհորդությունները չպետք է լինեն երկարաժամկետ. «Որչափ եմք տեսել, որ երեսուն տարով եւ յաւելի ի յերիտասարդական հասակին ելան ի տանց եւ ի ծերութեան հասակին եղեն եւ մեռան յօտարութեանն և ազահութեամբ ժողովեալն թշնամեաց եղեն կերակուր, որպէս որ բազմաց պատահեցաք եւ շատ ջանացաք՝ չկարացաք ի հաւանութիւն ածել ի տուն գնալոյ... մանաւանդ ջուղայեցիքն»<sup>83</sup>: Բնականաբար այս հարցում պատմագիրը իրավացի է:

Գրիգոր Դարանաղին միաժամանակ նշում է, որ նրանք օտար երկրներում ցոփ ու շվայտ կյանք են վարում: Օտարության մեջ կազմում են նոր ընտանիքներ, հաճախ դավանափոխ են լինում: Այս ուղղությամբ պատմագիրը բերում է մի շաբթ օրինակ-ներ ու ավելացնում. «Զայսրան փոքրիշատէն զոր ես զրեցի, ամենեցուն ականատես եմք լեալ, եւ են ամեներեան շատաշուրջըն միապէս վէսք, ամբարտաւանք, սնապարծք, անզութք, անողորմք, աննուերք, անպատիք եւ բնաւ ոչ դնեն պատիւ ումեք բայց յԵրուսաղեմացոց եւ Էջմիածնեցոց՝ վասն փառասիրութեան աղազաւ»<sup>84</sup>:

Պատմագիրը շատ խիստ է իր գնահատումների մեջ և ամեն-սին կանգ չի առնում նորջուղայեցի խոշաների կատարած դրական դերի վրա, որն ուղղված էր հայապահպանությանը: Այնուա-

<sup>82</sup> Նույն տեղում, էջ 457-458:

<sup>83</sup> Տե՛ս Գրիգոր Դարանաղի, էջ 459:

<sup>84</sup> Նույն տեղում, էջ 465:

մենայնիվ հայրենասեր պատմագիրը զրում է. «Եւ ի նոցա միջում այլ կու լինին լավ հասկացող եւ երկիւղած բարեսէր մարդիկ...»<sup>85</sup>, ցավով շեշտում է, որ ավաղ դրանք շատ քիչ թիվ են կազմում. «... մինն ի հազարաց եւ ի բիւրուց»<sup>86</sup>:

Պատմագրի հաղորդումները մեծ մասամբ ճշմարտապատում են, քանզի դրանք ականատեսի և դեպքերի անմիջական մասնակցի զրառումներն են և հարուստ նյութ են պարունակում XVI դարի վերջի և XVII դարի առաջին կեսի հասարակական - քաղաքական կյանքի և սոցիալ-տնտեսական հարցերի ուսումնասիրման համար:

Ռուս-իրանական առևտրական-տնտեսական բանակցությունների ժամանակ նորօրուղայեցի հայ վաճառականները, որոնք հանդես էին գալիս որպես իրանական կառավարության պաշտոնական դիվանագիտական ներկայացուցիչներ, շոշափում էին նաև քաղաքական խնդիրներ, մասնավորապես Ռուսաստանի հետ հակաթուրքական դաշինք ստեղծելու հարցը<sup>87</sup>:

XVII դարի առաջին կեսը հայ պատմագրության մեջ նշանափորվեց նրանով, որ նրանում արտացոլում գտավ Հայաստանի քամանաման իրողությունը /1639թ/: Հայ պատմագրության զարթոնքն ազդարարող երկու հայ պատմագիրներ՝ Գրիգոր Դարա-

<sup>85</sup> Նույն տեղում, էջ 466-467:

<sup>86</sup> Նույն տեղում:

<sup>87</sup>Տե՛ս Բայբորդյան Վ., *Посредническая роль новоджукольфинских купцов в дипломатических отношениях Ирана с западноевропейскими странами в начале XVII века. Краткие сообщения Института Народов Азии АН СССР.*, 1964, N 7, стр. 84-100. Տե՛ս նաև Բայբորդյան Վ. Ա., *Իրանահայերի մասնակցությունը իրան-կվրուպական հակաթուրքական դաշինք ստեղծելու փորձերում /XVI-XVII դարեր/*. ՃիւԱՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական զիտությունների» 1984, N 9, էջ 19-36:

նաղցին և Առաքել Դավրիթեցին ներկայացրին Արևմտյան և Արևելյան Հայաստանի ճակատագրական նշանակություն ունեցող իրադարձությունները, որոնք կապված էին Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի վարած քաղաքականության հետ:

Դարանաղցին մակերեսորեն նշում է թուրք-իրանական պատերազմները, կաթողիկոսության համար մղվող զահակալական պայքարը և այլն: Նրա հիմնական նպատակն է ներկայացնել Թուրքիայում և նրա տիրապետության տակ գտնվող արևելյան նահանգներում տեղի ունեցող իրադարձությունները: Պատմագիրը Արևելյան Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին անդրադառնում է ակնարկներով: Զարկ է նշել, որ Դավրիթեցին էլ իր հերթին Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին նույնպես անդրադառնում է հպանցիկ:

Հավանաբար պատմագիրները խուսափել են կրկնություններից, որն անշուշտ բարձրացնում է նրանց աշխատությունների պատմագիտական արժեքը: Դարանաղցին անուղղակի կերպով անդրադառնում է նաև Իրանում տեղի ունեցող իրադարձությունների նկարագրությանը:

Պատմագիրը իր օգտագործած աղբյուրներից ոչ մեկը չի հիշատակում, սակայն նշում է, որ այն ինչի մասին ինքը գրել է ականատեսի վկայություն է, կամ իրեն պատմել են իրադարձությունների մասնակիցները:

Գրիգոր Դարանաղցին մանրամասն ներկայացնում է Օսմանյան կայսրությունում XVII դարում տեղի ունեցող իրադարձությունները, նշելով, որ դրանք անիշխանության տարիներ էին, որից էլ օգտվելով շահ Աբբաս Ա-ը մեկ տարում բազում քաղաքներ ու զավառներ գրավեց:

Արևմտյան Հայաստանի դրությունը բարդանում էր ոչ միայն տևական արտաքին պատերազմների, այլև 1595-1628թթ ջալալիների ապստամբությունների պատճառով։ Պատմագիրը ջալալիներին համարում է զազաններ. «...ի մարդակերպ Ջալալոց զազանաց ժանեացն գերծելոյն»<sup>88</sup>:

Պատմագիրը նշում է, որ ներքին բախումներից մեծապես տուժում են ռամիկ հողագործները<sup>89</sup>:

XVII դարի հայկական աղբյուրներում արժանահավատ տեղեկություններ են պարփակված նաև հայկական զաղթօջախների մասին։ Իրանահայ զաղթօջախներում հայ առևտրականները ձեռք են բերում համաշխարհային ճանաչում։ Այս տեսանկյունից առանձնանում է հատկապես Նոր Ջուղան, որն ամենից սերտ կապեր ուներ Մայր Հայրենիքի հետ։ Կարևոր էր նաև այն հանգամանքը, որ Նոր Ջուղան անմիջապես մոտ էր Սպահանին<sup>90</sup> և հայ վաճառականները անմիջապես կապերի մեջ էին Իրանի շահերի և բարձրաստիճան պաշտոնյաների հետ։ Շահ Աբբաս Ա-ը հայ վաճառականների նկատմամբ վարում էր հովանավորչական քաղաքականություն՝ նպատակ ունենալով զարգացնել իր երկրի արիեստներն ու առևտուրը<sup>91</sup>։

Նորջուղայեցիները իրենց ձեռքը վերցրեցին Իրանի առևտուրի մեծ մասը, հատկապես մետարսի ու թանկարժեք քարերի առևտուրի մենաշնորհը։ Նրանք կարծ ժամանակահատվածում կուտակեցին հսկայական հարստություն և սկսեցին առաջատար դեր

<sup>88</sup> Գրիգոր Դարանաղյի, էջ 71:

<sup>89</sup> Պասպարյան Ա., Գրիգոր Դարանաղյին ջալալիների շարժման մասին. ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ, Գիտական աշխատություններ, հ. VII Գյումրի. 2004, էջ 27-31:

<sup>90</sup> Տե՛ս Բայրության Վ., Նոր Ջուղա, Երևան, 2007, էջ 27:

<sup>91</sup> Տե՛ս Սիրզոյան Հ., Հովհաննես Մըրրուղ Ջուղայեցի. Երևան, 2001, էջ 22:

խաղալ Իրանի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում: Զուղահայ վաճառականները առնտուր էին անում աշխարհի բազում երկրների հետ: Գրիգոր Դարանադցին նշում է այն երկրները, ուր լինում էին ջուղահայ վաճառականները: Այն համարյա ընդգրկում է ժամանակի աշխարհի քարտեզը իր մեծ ու փոքր պետություններով<sup>92</sup>:

Դժբախտաբար Նոր Զուղայի նման վիճակը երկար չունեց և արդեն XVII դարի երկրորդ կեսից Իրանում սկսեց ուժեղանալ եվրոպական ներդրումների ազդեցությունը, որը բացասաբար անդրադարձավ Նոր Զուղայի և Մայր Հայրենիքի վրա: Զուղահայ կապիտալը չդիմացավ մրցակցությանը:

Դավրիժեցին «Պատմության» մեջ զգալի տեղ է հատկացրել հայ առևտրա-վաշխառուական կապիտալի վերնախավի ծավալած գործունեությանը XVII դարի սկզբին Հայաստանում, Իրանում ու Թուրքիայում: Բազմաթիվ փաստերով համակողմանիորեն ցույց է տվել նրա որոշիչ ու կարևոր դերը հասարակական-քաղաքական կյանքում: Այդ խավի գործունեության մեջ հակառակ Գրիգոր Դարանադցու, նա տեսել է լուսավոր այն ծալքերը, որոնք նախադրյալներ են հանդիսացել ազգային ինքնազիտակցության համար<sup>93</sup>:

Պատմագիրը հիացմունքով ու հպարտությամբ է խոսում Հին ու Նոր Զուղաների հարստության և շքեղության մասին: Նկարագրելով Հին Զուղայում շահ Աբրաս Ա-ին ցուցաբերած ընդունելությունը նա նշում է. «Իշխանք՝ և ծերք. և երտասարդք՝ ի զարդ և ի զէնս ոսկեհուոն սխրատեսիլ հանդերձից պրՃնազար-

<sup>92</sup>Տե՛ս. Գրիգոր Դարանադցի, էջ 460-461:

<sup>93</sup>Առաքել Դավրիժեցի, էջ 456:

դեալը ընդ առաջ ընթանային: Եւ նորաբողբոց գեռահաս մանկունք ոսկի բաժակաւ զանուշահամ, և ազնիւ զինի մատուցանէին»<sup>94</sup>:

Հարկ է նկատել, որ Դավրիժեցու տեղեկությունների կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նա վեր է հանում իր կողմից նկարագրվող իրադարձությունների պատճառները և հետևանքները: Նրա մոտ ամեն մի իրողություն փաստարկված է ու հիմնավորված:

XVII դարի 30-ական թվականներին Իրանի ներքին դրությունը կրկին սկսեց վատանալ: Շահ Աբբասի մահից հետո (1629թ), կրկին արվեցին երկրի ներքին հակասությունները: Չնայած արտաքուստ երկիրը դեռևս պահում էր իր հզորությունը, սակայն ըստ էության, անկման նշաններն արդեն առկա էին: Շահ Սեֆի Ա-ի օրոր /1629-1642թ/ երկրում կրկին սկիզբ առան ապստամբություններն ու ընդվզումները<sup>95</sup>:

Պատմագիրը դառնությամբ նշում է, որ այդ ժամանակաշրջանում քրիստոնյաների վիճակն էլ ավելի վատթարացավ: Դավրիժեցին հավասար չափով ողբում է նաև Վրաստանից զաղթածների վիճակը. «Բայց զնացեալ ժողովուրդըս... զոր ինչ ունէին վաճառեալ կերին, և ի պատճառէ չքատրութեան բողոք բարձին ազգն Վրաց առ շահն... Եւ շահն պատասխանի արար նոցա, թէ ուրացեք զձեհաւատն... և ես տամ ձեզ յոլով ինչս, որով ապրիք՝ և ուտեք»<sup>96</sup>:

<sup>94</sup> Առարել Դավրիժեցի, էջ 24-25:

<sup>95</sup> Նույն տեղում, էջ 250:

<sup>96</sup> Նույն տեղում, էջ 134:

Վերջիններս ինչպես նշում է Դավրիժեցին, ստիպված հավատափոխ են եղել և չեն բարեւել անզամ քրիստոնյաներին՝ համարելով դա մեծ մեղք<sup>97</sup>:

Առաքել Դավրիժեցին աշխատության տարբեր գլուխներում անդրադառնում է Իրանի առևտրական հարաբերություններին: Հայտնի է, որ Եվրոպա-ասիական առևտրական ծովային նոր ճանապարհը ձեռնոտու էր բարավանայինի համեմատ: Մետաքսի արտահանման առավել շահավետ ուղին օգտագործելու դրդապատճառներից էր նաև այն, որ Թուրքիայով անցնող առևտրական տարանցիկ ճանապարհները անբարեկարգ էին ու վտանգավոր: Փաստորեն այդ ընթացքում ավազակները շարունակում էին թալանել բարավանները, որի պատճառով ճանապարհային երթեկությունը դառնում էր անկանոն: Ըստ Էության մետաքսի նոր ճանապարհը Իրանին ազատում էր նման իրավիճակից:

Եվրոպական երկրների, ինչպես նաև Ռուսաստանի հետ Իրանը շարունակում էր պահպանել իր տնտեսական կապերը և իրականացնել աշխույժ առևտուր: Երկու երկրների միջև կար որոշակի հակասություններ՝ կապված ռուսների Հյուսիսային Կովկասում և Կասպից ծովի շրջաններում իրականացվող սուաջիաղացման հետ:

Դեռևս 1617թ. շահական կառավարությունը անզիյական Արևելահնդկական ընկերության հետ կնքել էր պայմանագիր, ըստ որի վերջինս պարտավորվել էր արտահանել մետաքսը ծովային ճանապարհով, Պարսից ծոցի միջոցով<sup>98</sup>:

<sup>97</sup> Նոյն տեղում:

<sup>98</sup>Տե՛ս Բանբորտյան Վ. Ա., Արմանսկայ կոլոնիա Նовоյ Ջուլիֆա և XVII դար: Երևան, 1969, ստ. 41:

Պայմանագիրը հնարավորություն տվեց անզլիացիներին ոչ միայն անարգել արտահանել մետաքսի հումքը, այլև Իրան ներմուծել անզլիական ապրանքներ: Սա անզլիացիների առաջին փորձն էր իրանական շուկա ներթափանցելու և իր մենաշնորհը հաստատելու ուղղությամբ: Պայմանագիրը նպատակ էր հետապնդում Եվրոպական մյուս երկրներին /Պորտուգալիա, Իսպանիա/ հեռու պահել Պարսից ծոցի տարածքից<sup>99</sup>: Պայմանագրի հենց սկզբից շահական իշխանության և Արևելահնդկական ընկերության միջև առաջ եկան տարածայնություններ: Դրանք կապված էին այն հանգամանքի հետ, որ շահը պահանջում էր մետաքսի առևտորի համար վճարել տարադրամով, իսկ անզլիացիները փորձում էին այն վճարել անզլիական ապրանքներով՝ դրանով ձգտելով բարձրացնել իրենց ապրանքների գինը և ընդհակառակը՝ իշեցնելով հում մետաքսի արժեքը: Չհամաձայնվելով անզլիացիների պահանջների հետ, շահը հրամայեց դադարեցնել հում մետաքսի առևտորի իրավունքը անզլիական վաճառականներին: Անզլիական ներկայացուցիչները ստիպված էին հեռանալ Իրանից: Սակայն շուտով /1618թ/ Արևելահնդկական ընկերությունը Իրան ուղարկեց իր ներկայացուցչին՝ պայմանագրի վերականգման և 1617թ. պայմանագրի պայմանների վավերացման համար: Անզլիական ներկայացուցիչը հայտարարեց, որ ընկերությունը համաձայն է շահի պահանջների հետ և միաժամանակ շահագրգուված է որպեսզի Իրանի կառավարությունը լրիվ դադարեցնի հում մետաքսի առևտուրը իսպանացիների ու պորտուգալացիների հետ<sup>100</sup>:

<sup>99</sup> Նոյն տեղում, էջ 43:

<sup>100</sup>Տե՛ս Եսայության Բ. Ա., նշվ. աշխ., էջ 44:

Հարկ է նշել, որ անզիացիների մենաշնորհ ստանալը լրջորեն հարվածում էր Նոր Զուղայի վաճառականության շահերին: Իրանում մետարսի առևտուրը կատարվում էր գլխավորապես հայ վաճառականների միջոցով: Նոր Զուղայի առևտրական կապիտալը կովան էր ծառայում Իրանի առևտրի համար: Այդ էր պատճառը, որ հայ խոշաները օգտվել են լայն իրավունքներից և եղել են Իրանի շահերի մերձավորներն ու խորհրդատունները: Այս մասին Դավրիժեցու երկում կան ուշագրավ տեղեկություններ ու վկայություններ, որոնք ամբողջացնում են հայ վաճառականության կատարած դերն ու նշանակությունը Իրանի առևտրի զարգացման գործում<sup>101</sup>:

Իրանն առևտրական ու դիվանագիտական հարաբերություններ է հաստատել նաև Ռուսաստանի հետ: Առաքել Դավրիժեցու հավաստմամբ շահ Աբբաս Ա-ի օրոք Սեֆյանները Ռուսաստանի հետ դեսպանություններ էին փոխանակում. «Եւ եղև՝ զի ... եկին դեսպանք ի Ռուսաց թագաւորեն վասն սիրոյ և բազում գործոց», գրում է պատմագիրը<sup>102</sup>:

Անզիան ամեն զնով փորձում էր ներթափանցել իրանական շուկա և իր ձեռքը վերցնել մետարսի առևտուրը:

Հայ խոշաները միանգամից բարձրացրեցին հում մետարսի զները, որպեսզի դրանով կանխեն անզիացիների կողմից հում մետարսի արտահանումը: Նրանք նույնիսկ խնդրեցին շահին չեղյալ հայտարարել անզլո-իրանական պայմանագիրը:

<sup>101</sup> Դանելյան Լ. Գ., Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր. Երևան, 19789, էջ 146-147:

<sup>102</sup> Առաքել Դավրիժեցի, էջ 140-141:

Շահը պատասխանեց, որ դա տնտեսական խնդիր է և ով ավելի շատ վճարի, նա էլ կստանա դրա իրավունքը: Շահ Աբբասն այս նպատակով հայտարարեց աճուրդ: Հայերը առաջարկեցին ամենից բարձր զինը: Շահը անմիջապես չեղյալ հայտարարեց անզլիացիների հետ կնրած պայմանագիրը և մետարսի առևտուրը հանձնեց նորջուղայեցի վաճառականներին: Դրանից հետո անզլիացիները հեռացան Իրանից: Փաստորեն անզլիացիների առաջին փորձը ներթափանցել իրանական շուկա, ավարտվեց անհաջողությամբ: Հայ վաճառականները պաշտպանելով իրենց տնտեսական շահերը փաստորեն կանխեցին օտարերկրյա կապիտալի ներթափանցումը Իրան<sup>103</sup>:

Մետարսի առևտորի պետական մենաշնորհը պահպանվեց մինչև շահ Աբբասի մահը: Նրա հաջորդ շահ Սեֆի Ա-ը անցնելով իշխանության զլուխ անմիջապես վերացրեց այդ մենաշնորհը: Նորջուղայեցի վաճառականները այլևս չեն համարվում շահի պաշտոնական ներկայացուցիչները մետարսի արտահանման գործում: Նրանք զբաղվում էին միայն մետարսի արտահանմամբ սեփական նախաձեռնությամբ:

Դա ամրապնդեց նրանց կապը մետարսի մանր արտադրողների հետ: Բայց դրանք էական չեն և հայ վաճառականների մեծ մասը մինչև XVII դարի վերջը շարունակում էին կախման մեջ մնալ շահական և իանական կառույցներից, որոնց ապրանքները հիմնականում արտահանում էին Եվրոպա: Ըստ որում, XVII դարի հայ «առևտրական բուրժուազիա» և «առևտրական կապիտալ» ասելով ամենից առաջ պետք է նկատի ունենալ ջուղահայ առևտրականներին և նրանց կապիտալը, քանզի հայ հասարակական-

<sup>103</sup> Նույն տեղում, էջ 45:

բաղաքական, ինչպես նաև իրանական իրականության մեջ գիտամշակութային կյանքի դեկը վարում էր Նոր Զուղան: Ուստի պատահական չե, որ այդ շրջանը անվանվում է ջուղայական շրջան:<sup>104</sup>

Նոր Զուղայի խոշաների նյութական ու բարոյական աջակցությամբ իրատարակվել են Ամստերդամի հայկական տպարաններում լույս տեսած գրքերի մեծ մասը, որը բխում էր ջուղահայ վաճառականության հոգեստը պահանջմունքներից: Զուղահայ ավագանին իրավամբ համարվում էր արևելահայության դեկավար մարմին<sup>105</sup>: Դավրիժեցին զրում է. «...խոշայ Սաֆարն՝ որ էր աւագ Զուղայեցոց, ոչ միայն Զուղայեցոց, այլ և ամենայն ազգին Հայոց՝ որը կային ի ներքոյ թագաւորութեանն Պարսից...»<sup>106</sup>:

Միաժամանակ պատմիչը խոսում է նաև խոշա Սաֆարի եղբոր՝ Նազարի մասին, որը նույնպես մեծ հեղինակություն էր վայելում իրանական արքունիքում. «...քանզի յոյժ հզօր և երևելի էր խօշայ Նազարն, նաև սիրելի թագաւորին Պարսից Շահաբասին...»<sup>107</sup>:

XVII դարի կեսերին Սպահանի արվարձան դարձած Նոր Զուղայի բնակչությունը արտակարգ կենսունակությամբ սկսեց վերականգնել Հին Զուղայի կենցաղը: Նոր Զուղան հայտնի է նաև իր արհեստներով ու արհեստավորներով, արվեստագետներով ու մտավորականներով<sup>108</sup>:

<sup>104</sup> Տե՛ս Միթրզյան Հ., նշվ աշխ., էջ 93:

<sup>105</sup> Տե՛ս Միթրզյան Հ., XVII դարի հայ փիլիսոփայական մտքի բննական վերլուծություն, Երևան, 1983, էջ 41:

<sup>106</sup> Առաքել Դավրիժեցի, էջ 186:

<sup>107</sup> Նույն տեղում, էջ 524:

<sup>108</sup> Տե՛ս Ստեփանյան Ա..., Նոր Զուղայի արհեստները, Մերձավոր և Միջին Արևելյան երկրներ և ժողովուրդներ, հ. XV, Երևան, 1989, էջ 256-264:

Փաստորեն Նոր Զուղան ակնառու դեր է ունեցել ոչ միայն Իրանի տնտեսական, այլև քաղաքական կյանքում:

Սակայն սկսած XVII դարի 70-80- ական թվականներից Իրանի տնտեսական անկմանը զուգընթաց Նոր Զուղան աստիճանաբար կորցնում էր իր նախկին շուրջը և ենթարկվում շահական իշխանությունների կամայականություններին ու չարաշահումներին:

Նոր Զուղան հայտնի է հայկական եկեղեցիներով, հատկապես Ամենափրկիչ վանքով, որի մասին Հարություն Տեր-Հովհանյանը գրում է. «Մինչ Հայք ժամանեցան յԱսպահան և սկիզբն արարին՝ ի Զուղայ հաստատել զբնակութիւնս, ըստ անձուկ հանգամանաց վիճակի իրեւանց՝ առաջին անգամ շինեցին զվանքն անփառաւոր և առանց արձակ շինութեան, տալով նմա զանուն Ամենափրկիչ վանքն զոր ունեին ի Հին Զուղայ»<sup>109</sup>:

XVII դարի 30- ական թվականներից սկսած Նոր Զուղայում սկսվեց լուսավորական ուժեղ շարժում: Բուռն կերպով սկսեց զարգանալ մտավոր մշակութային կյանքը: Թեմի առաջնորդ Խաչատուր Վարդապետ Կեսարացու ջանքերով հիմնվում է մի դպրոց, կամ ինչպես այն ժամանակ են կոչել համալսարան, որտեղ դասավանդել են ժամանակի կարևոր գիտությունները:

Հայտնի է եղել նաև Ամենափրկիչ վանքի վանական դպրոցը, որի սաները ուսումնասիրել են եւլուսական ու ասիական լեզուներ: Դպրոցի հիմնական խնդիրներից մեկն է եղել սովորեցնել «արվեստ վաճառականության»<sup>110</sup>:

<sup>109</sup> Տե՛ս Տեր-Հովհանյանց Հ., Պատմութիւն Նոր Զուղայու, որ յԱսպահան, հ. II, Նոր Զուղա, 1881, էջ 11:

<sup>110</sup> Տե՛ս Բայրության Վ., Խշվ. աշխ., էջ 276:

Նոր Զուլան ստացավ նաև ինքնակառավարման իրավունք: Հակառակ Իրանում գոյություն ունեցող ավանդական կարգերին և շարիաթով հաստատված օրենքին, ըստ որի շահի քրիստոնյա հպատակը իրավունք չուներ պետության մեջ գրավելու բարձր վարչական պաշտոններ, շահ Աբբաս Ա-ը խախտելով այդ օրենքները և ըստ էության դեմ զնալով մահմեդական բարձր հոգևորականությանը, հայ ազդեցիկ խոշաներին շնորհում էր զանազան պաշտոններ: Աղբյուրներից մեկի վկայությամբ խոչա Մարջան անունով մեկը շահ Աբբաս Ա-ի օրոք գրավեցնում էր Սեֆյան կառավարության ֆինանսական վարչության զինավոր կառավարչի պաշտոնը<sup>111</sup>: Առաջին անգամ շահը հարուստ ու ազդեցիկ նորջուղայեցիներին տրամադրել է այն բոլոր իրավունքներն ու արտոնությունները, որոնցից օգտվում էին Սեֆյան պետության բարձրաստիճան ներկայացուցիչները:

Առաքել Դավրիժեցին տեղեկություններ է հաղորդում նաև իրանաբնակ այլ համայնքների մասին: Նա նշում է, որ 1604-1605 թթ. բռնագաղթի ժամանակ զաղթվածների թվում են եղել նաև հրեաները. «Դարձեալ ի սոյն թուին (1605-Ա.Գ.) առաջին Շահաբասն զԱտրպատական աշխարհի բնակիչն զիայ, զտաճիկ, զջիուտ ի ի միասին քշեաց և տարաւ յ Ասպահան, այս ՝ մեծ սուրգունն»<sup>112</sup>: Եվ ապա. «Իրամայեաց (շահ Աբբաս Ա-ն- Ա.Գ) զամենայն բնակիչս աշխարհին Հայոց, եթէ քրիստոնեայ, եթէ հրեայ, եթէ մահմետական, քշել յաշխարհն Պարսից»<sup>113</sup> գրում է Դավրիժեցին:

<sup>111</sup>Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 328:

<sup>112</sup>Առաքել Դավրիժեցի, էջ 635:

<sup>113</sup>Նույն տեղում:

Այսպիսով բռնազաղթի հետևանքով զգալիորեն ավելացավ նաև իրանաբնակ հրեաների թիվը: Դավրիմեցու հաղորդմամբ՝ «Սակաւը էին ազգն Հրեաց բնակեալը յԱսպահան քաղաքի, իբրև երեք հարիւր տուն, պակաս և ոչ աւելի»<sup>114</sup>: Դա նշանակում է, որ մոտավորապես 1500 հրեա էր բնակվում Սպահանում:

Առարել Դավրիմեցու հաղորդումների գերակշռող մասը բնականաբար վերաբերում է հայ համայնքին, որի նկարագիրը հսկաստում է այն իրողությունը, որ համայնքը մշտապես հանդես է եկել հանուն ինքնապահպանման:

Մեֆյան իշխանություններն ամեն գնով ձգտում էին լցնել պետական գանձարանը: Օգտագործելով պայքարը կարողիկոսական արքորի և հոգևոր պաշտոնների համար, նրանք հանդես էին գալիս պաշտոնների վաճառքով. «Արծաթով և կաշառօք դարալայի և հարկի ի Պարսից թագաւոր՝ ն առնուին զիշխանութիւն կաթուղիկոսութեան և զուրբ Աթոռն Էջմիածին», գրում է Դավրիմեցին<sup>115</sup>:

Հանրագումարի բերելով հայկական աղբյուրների արժանահավատ հաղորդումները, անվարան կարելի է նշել, որ դրանք իրոք համակողմանիորեն արտացոլում են ոչ միայն Իրանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական դրությունը, այլև հայ-իրանական փոխհարաբերությունները, որը մի առանձնահատուկ ձև ու բովանդակություն ստացավ շահ Աբրաս Ա-ի զահակալման տարիներին (1587-1629 թթ.):

<sup>114</sup> Նույն տեղում, էջ 467:

<sup>115</sup> Առարել Դավրիմեցի, էջ 289-290:

**2. ԾԱՀ ԱՐԲԱՍ ԱՌԱՋԻՆԻ ՆԵՐՔԻՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ XVII-  
XVIII ԴԱՐԵՐԻ ՀԱՅ ՊԱՍՄԻՉՆԵՐԻ  
ԼՈՒՍԱԲԱՆՄԱՍԲ**

Շահ Աբբաս Ա-ը Իրանի պատմության մեջ պսակվեց «Մեծ» տիտղոսով: Նրան ծանր ժառանգություն էր բաժին հասել: Երկիրը բգկտված էր ու անդամահատված, զրկված ուազմական ուժից ու միջազգային հեղինակությունից: Հաղթանակած Թուրքիան նվաստացուցիչ պայմաններ էր թելադրում նրան: Շահ Աբբասը մեկն էր այն արևելյան հզոր բռնակալներից, ովքեր իրենց ժողովրդականությունը վայելում էին նրանում, որ ուազմական նվաճումները միաձուլում են արմատական բարեփոխումների հետ:

Ստեղծված ծանր դրությունից դուրս գալու և պետության վրա կախված վտանգը կանխելու համար շահը ստիպված համաձայնվեց հաշտություն կնքել Թուրքիայի հետ: Այդ նպատակով նա դեսպանություն ուղարկեց Կոստանդնուպոլիս՝ հաշտության բանակցություններ վարելու համար: 1590 թ. Կոստանդնուպոլիսում կնքվեց պայմանագիր, որով շահը թուրքերին զիջեց Վրաստանը, Արևելյան Հայաստանը, Շիրվանն ու Ասորպատականը<sup>116</sup>:

Նվաստացուցիչ այս պայմանագիրը պետք էր շահին նախ՝ ֆեռդալական կենտրոնախույս ուժերի դեմ պետական իշխանությունը ամրապնդելու և ապա Իրանի զավթված երկրամասերից թուրքերին վտարելու համար:

Սեֆյան Իրանը պատրաստվում էր մարտական նոր գործողությունների իրականացմանը, որի նպատակն էր դրժելով այդ

<sup>116</sup> Բայրության Վ., Թուրք-իրանական հարաբերությունները 1900-1914 թթ., Երևան, 1974, էջ 6:

ամոթալի պայմանագիրը, վերստին տիրանալ թուրքական տիրապետությանն անցած հյուսիս արևմտյան նահանգներին:

Նման քայլը կրում էր միայն մարտավարական ու ժամանակավոր բնույթ: Տարկ է նշել, որ հետագա դեպքերը արդարացրին նման գործելակերպը, քանի որ Օսմանյան կայսրությունը XVI դարի վերջին և XVII դարի սկզբին ապրում էր բարդ իրավիճակ թե՝ ներքին, թե՝ արտաքին բնագավառներում:

Այս ժամանակավոր հանգիստը շահն օգտագործեց ճնշելու համար ներքին ապատամբություններն ու խռովությունները: Այս հաշտությամբ վերջացավ թուրք-իրանական պատերազմների երկրորդ էտապը:

Շահ Աբբասը նախատեսում էր իրականացնել որոշ միջոցառումներ և ապա նոր անցնել հարձակման թուրքերի դեմ: Սակայն պատերազմը սկսվեց նախքան նախատեսված միջոցառումների լիակատար իրազործումը: Դրան նպաստեց Թուրքիայի արևելյան նահանգներում սկսված ջալալիների հզոր շարժումը, որը քայլայում էր թուրքերի ուժերը: Թուրքիայում շարունակ տեղի էին ունենում ենիշերիների խռովություններ:

Նախքան շահ Աբբաս Ա-ի իշխանության գլուխ անցնելը երկրի ներքին ու արտաքին դրությունը գտնվում էր ծանր վիճակում: Երկրի ներսում շարունակվում էին երկպատակութական պատերազմները և ժողովրդական ապատամբությունները: Շահի վարած ներքին քաղաքականությունը նպատակ էր հետապնդում վերջ տալ ֆեոդալական մասնատվածությանը և ստեղծել մեկ միասնական հզոր տերություն: Շահը հենվում էր ֆեոդալական պայն դասի վրա, որը շահագրգուված էր ուժեղ շահական իշխանության ամրապնդմամբ:

Շահն ամեն ինչ անում էր երկրի արտադրողական ուժերի զարգացման համար: 1598 թ. մայրաքաղաքը տեղափոխվեց Սպահան: Իրականացրեց հարկային բարեփոխում, ամբողջ երկրում վերացվեց անասնապահության համար վճարվող հարկը (չորսն բեկի), իսկ մնացած հարկերը մասնակիորեն կրծատվեցին: Մայրաքաղաքն իր ամբողջ շրջակայրով մեկ տարի ազատվեց բոլոր տեսակի հարկերից: Այս ամենն ուղղված էր թեթևացնելու գյուղացիների և քաղաքացիների դրությունը և վերականգնելու երկրի քայլայված տնտեսությունը: Շահ Աբբասը առաջին հերթին կարևորում էր բանակի դերը<sup>117</sup>:

Նա վերացրեց դզլքաշների ցեղային բանակները և նրանց փոխարեն ստեղծեց նոր միավորներ՝ շահսեններ (շահին սիրող): Ռազմական բարեփոխումներն ունեին նաև քաղաքական նշանակություն: Ստեղծելով մշտական բանակ և կրծատելով ֆեոդալների դերն ու նշանակությունը, նա ամրապնդում էր կենտրոնացված իշխանությունը<sup>118</sup>:

Արդյունքում երկիրը դարձավ կենտրոնացված պետություն, չնայած մինչև վերջ էլ չկարողացավ հաղթահարել ֆեոդալական մասնատվածությունը:

Շահ Աբբաս Մեծի ներքին քաղաքականությունն ուղղված էր երկրի տնտեսական վերականգմանը և դրա համար իրականացրեց անզամ դրամական բարեփոխում: Դրամական նոր միավորը՝ աբբասին, գործածվում էր թուրքական և եվրոպական դրամներին

<sup>117</sup> Գասպարյան Ա., Շահ Աբբասի արշավանքների արտացոլումը Սոարել Դավիթեցու երկում, ԵՊՀ 80-ամյակին նվիրված ՇՄ գիտաժողով, Նյութերի ժողովածու, Երևան, 2000, էջ 158-131:

<sup>118</sup> Ст. в Всемирная история, под ред. М. Смирнина, т IV, М 1958, стр. 559.

զուգահեռ: Շահը հոգ էր տանում առևտրի և արհեստի զարգացմանը:

Շահ Աբբասի գործունեության մասին արժանահավատ տեղեկություններ կան Առաքել Դավիթիցնու «Պատմության» մեջ: Պատմագիրը ճիշտ էր հասկացել շահի հետապնդած նպատակները և նրա վարած քաղաքականությունը: Հայրենասեր պատմիչն անզուսպ ատելությամբ է լցված շահի և իրանական արքունիքի քաղաքականության նկատմամբ: Նա անարգանքի սյունին է գամում այն մարդկանց, ովքեր նպաստում էին շահ Աբբաս Ա-ի ծրագրերի իրականացմանը:

Պատմիչը շահին Զուղայում ցույց տված ընդունելության մասին գրում է. «Իսկ վիշապն անդընդային Շահաբաս՝ որ իսկզբանէ զբարս օձի ունի բնաւորեալ յինքեան ընդդեմ քրիստոնէից, իբրև տեսանէր զայնքան հարստութիւն՝ և զբարեվայելչութիւն քրիստոնէից՝ մախայր. և զզայուէր ի սրտի՝ թէ զիարդ պատճառ և ժամ գոցէ նենզել զնոսա: Բայց առ ժամն ծածկեալ զթոյնսն առ երեսս սրտահաճուկ լինէր»<sup>119</sup>:

Պատմագիրը նկարագրում է, թէ ինչպես օսմանյան բանակը պարսիկների առաջխաղացումը կանգնեցնելու նպատակով մտնում է Կարսո, այսինքն՝ Էրզրումի զավառը: Շահ Աբբասը ստիպված նահանջում է և կանգ առնում իին Երվանդակերտում, որ կոչվում էր Աղջաղալա<sup>120</sup>:


<sup>119</sup> Առաքել Դավիթիցնու, էջ 25:

<sup>120</sup> Տե՛ս Առաքել Դավիթիցնու, էջ 37-38:

Շահը զգում է, որ անզոր է հաղթելու թուրքական մեծարանակ ուժերին և մշակում է իր դիվային ծրագիրը՝ զաղբեցնել անխստիր Արարատյան դաշտի և սահմանակից ենթակա բոլոր զավառների բնակիչներին Իրան, ավերել մարդաբնակ վայրերը, որպեսզի օսմանցիները գրավելով երկիրը, հնարավորություն չունենան ապաստան ու պարեն հայթայթելու, իսկ տարագրված ժողովուրդը պետք է դառնա Իրանին հարկատու և ծառայի պարսիկներին: Շահը նախապատրաստում է ավագանուն առաջարկելով, որ ժողովուրդը նախապես մինչև օսմանյան բանակի տեղ հասնելը, թողնի բնակավայրը և հեռանա: Եթե Սեֆյանները հաղթեն օսմանցիներին, ապա ժողովուրդը կվերադառնա իր բնակավայրը, իսկ թե թշնամին հաղթի, ժողովուրդը դարձյալ կվերադառնա և կենթարկվի թուրքերին:

Հայ ավագանին հասկանում է շահի նենգ մտադրությունը և խնդրում է հետաձգել զաղթը, պատճառաբանելով, որ աշուն է, ժողովուրդը պատրաստ չէ, չունի զրաստներ՝ ունեցվածքը փոխադրելու, իսկ ծերերը և մանուկները չեն կարող զնալ, ուստի խնդրում են թույլատրել, որ այդ իրամանը զարնանը կատարեն: Դավրիժեցին դառնացած զրում է: «Իսկ աւերիչն աշխարհաց՝ և վատնիչն բրիստոնեայ ազանց՝ բնակարանն Նեսարայ»<sup>121</sup>:

<sup>121</sup> Նույն տեղում, էջ 39:



Շահ Արքաս Ա-ի ձեռնարկած այս բոնազադրը դարձավ հայ ժողովրդի պատմության արյունոտ էջերից մեկը, որը կոչվեց «Մեծ սուրգուն» «Մեծ զաղթ»: Այն իր ծափալներով, բնույթով ու հետևանքներով առանձին տեղ գրավեց հայոց պատմության մեջ, իբրև նրա ծանր դրվագներից մեկը:

Բոնազադրի վերաբերյալ մեզ են հասել զգալի թվով արժանահավատ աղբյուրներ, մասնավորապես Ժամանակակիցների վկայություններ և սկզբնաղբյուրներ, որոնք մեծ մասամբ նկարագրում են մեր ժողովրդի անլուր տանջանքները և սարսափելի տեսարանները:

Առարել Դավրիժեցին այն եզակի պատմագիրներից է, ով կարողանում է վերլուծություններ կատարել և վեր հանել բոնազադրի իրական պատճառներն ու հետևանքները: Նրա հաղորդումներով մասնավորապես լրացվում կամ ճշտվում են այլ աղբյուրների կցկտուր և միտումնավոր տեղեկությունները: Ըստ Դավրիժեցու շահի հիմնական ռազմավարական նպատակն այն էր. «զի եկեալ Օսմանցւցն անբնակ զտանիցեն գերկիրն ի մարդկանէ»<sup>122</sup>:

Այնուհետև Դավրիժեցին նկարագրում է բոնազադրի այդ զարհուրելի տեսարանը. «Եւ հեծեալք ոմանք ի օրացն Պարսից՝ որք ունեին ուժեղ ձիս, և ինքեանք արք արի և կարող, շրջելով ի մեջ քրիստոնէից տեսեալ նկատէին զուստերս և զդստերս քրիստոնէից, և որոց հաւանեալ սիրտք իւրեանց, եթէ կանանց, եթէ աղօկանց, և եթէ տղայոց. Էր զի խարեին զտեարսն, թէ տուր՝ զի վասն քո անցուցից ընդ գետն յայնկոյս, և իբրև անցուցաներ, ո՞չ դնէր անդէն ի գետնի, այլ առեալ երթայր յո և կամեր»<sup>123</sup>:

<sup>122</sup> Նույն տեղում, էջ 38:

<sup>123</sup> Առարել Դավրիժեցի, էջ 44:

Պատմագիրն այդ հրամանը համարում է աշխարհակործան և դառնությամբ նկարագրելով այդ բռնազաղթը նշում է. «...զի թշուառութիւնը՝ և արհաւիրք անտանելիք հասին ի վերայ ազգիս մերոյ, և ոչ բաւեմ թէ որով տարազու հիւսեցից ողբս դամբանականս և աշխարանաց ի վերայ բեկման հայկական սեոիս, որք այսրան չարակրութեանց եղին ընդունակը»<sup>124</sup>:

Ըստ Դավրիժեցու շահ Աբբասն եղել է անզիջում ու դաման, բայց հայ առևտրա-վաշխառուական խավի ներկայացուցիչների՝ մասնավորապես նորջուղայեցիների նկատմամբ եղել է բարյացակամ և անզամ նրանց համար ստեղծել է հատուկ պայմաններ:

Շահի նման վերաբերմունքը առաջ է բերել մոլեռանդ շիփ-ների և հոգևորականների զայրույթը: Իրանի մեծամեծները դժողովում են և բողոքում շահին: Խոկ շահը նրանց բացատրում էր, որ նրա սերք արհեստական է և կեղծ: Եթէ նա սիրով չվարվի հայերի հետ և իրավունքներ չտա նրանց, նրանք այդ երկրում չեն մնա և կիեռանան իրենց աշխարհը. «Դուք ընդ սույ ինչ սնոտի սէրն իմ, զոր առնեմ ընդ նոսա, մի՛ վշտանայր՝ և մեղադրէք ինձ, զի ես բազում ծախիւք, ջանիւք և հնարիւք հազիւ թէ կարացի բերել զնոսայ աշխարհ. ոչ՝ թէ վասն օգտի նոցա՝ այլ վասն օգտի մեր՝ զի աշխարհս մեր շինեսցի՝ և ազգն մեր յաւելցի»<sup>125</sup>:

Շահը ավելացնում է. «...եթէ զամենեսեան զնոսա մասն մասն կոտորեալ յօդ յօդ բաժանէք, ո՞չ որ ի նոցանէ դառնայ յօրէնս մեր»<sup>126</sup>:

<sup>124</sup> Նոյն տեղում:

<sup>125</sup> Նոյն տեղում, էջ 66:

<sup>126</sup> Նոյն տեղում:

Ուստի շահը առաջարկում է սիրալիք վարվել հայերի հետ: Նման բացատրությունը լիովին բավարարեց շիփրներին և վերջիններս դրվատելով շահի իմաստությունը գոհունակությամբ հեռացան:

Դավրիմեցին դառնությամբ է զրում, որ իր ապրած օրերում իրականություն է դարձել շահ Աբրասի հրեշտակոր ծրագիրը և դարձել ազգակործան չարիք: Նա գիտակցել է շահի նման բաղարականության եռությունը և ամենայն իրավամբ վերջինիս համարում է Հայաստան երկրի և հայոց ազգի ավերողն ու կործանողը:

Պատմագիրը՝ շատ լավ է հասկացել, որ շահը կարող է բնաջինշ անել հայ ազգաբնակչությանը, բայց նա անզոր է սպանել աղջի պատմական բնագդը :

Չուղայի բռնազարդից հետո շահ Աբրաս Ա-ը ձեռնամուխ է լինում Գանձակ և Շամախի բաղաքների գրավմանը: Շահ Աբրասը Թավրիզում մի փոքր հանգստանալուց հետո հավաքում է իր զորքերը և շարժվում է օսմանյան զորքերի վրա, որոնք տակավին գտնվում էին Գանձակում. «Թազաւորն Պարսից Շահարաս ամենայն զօրօքն իւրովք կայր ի Թարվեզ քաղաքի զմեռն զայն՝ իսկ ի շնչել հողմոյն հարաւոյ՝ ի ժամանակ զարնան ժողովեաց զամենայն զօրս իւր՝ և զնաց ի վերայ զօրացն Օսմանցւոց՝ որք տակաւին էին ի քաղաքին Գանձակայ՝ որ է Գանջայ, յորում ամի եր թուականն մեր Ոճե. և ի հասանիլն անդր շրջապատեալ զբերդն նստալ ի վերայ»<sup>127</sup>:

Շահն ամեն հնարք փորձում էր օգտագործել բերդը զրավելու համար, բայց օսմանյան զորքը կատաղի դիմադրում էր: Տեսնելով, որ պաշարումը ձգձգվում է շահը հրամայեց ձուկել թնդանոր-

<sup>127</sup> Առաքել Դավրիմեցի, էջ 93:

ներ, որոնց օգնությամբ տապալեցին պարհսպները և բերդը հանձնվեց. «Եւ մինչ ետես շահն թէ սակաւ ինչ երկարի գործ պատերազմին՝ ձուլեաց անդէն երկուս թօփս մեծամեծս, հօրու և ուժգնաբաղիս որոց ի ձգելն կարի փլուցաներ զպարհսպ բերդին. և սովաւ յոյժ վտանգ լիներ Օսմանցւոցն»<sup>128</sup>. Գանձակը գրավելուց հետո շահ Աբբասն ուղղություն վերցրեց դեպի Թիֆլիս քաղաքը: Նա խաղաղությամբ մտավ ու խաղաղությամբ դրւս եկավ, որով հետու երկու երկրների միջև կնքվել էր դաշնոր: Այնուհետև շահը գրավեց նաև Շամախին: Քաղաքը գրավելուց հետո շահը Շամախիում իշխան նշանակեց Զուլֆիղար խանին, իսկ ինքը բանակի հետ միասին շարժվեց Թավրիզ:

Շահ Աբբաս Ա-ը խորաթափանց անձնավորություն էր և ընդունակ պետական գործիչ ու կարծ ժամանակում կարողացավ բարելավել երկրի ներքին ու արտաքին դրությունը:

Պետք է նշել, որ իրանական մասամբ և հայկական աղբյուր-ները խիստ գովաբանում են շահ Աբբասին և շափազանցնում նրա կատարած գործերը: Իրանական աղբյուրների կողմից այս վերաբերմունքը հասկանալի է և մեկնաբանման կարիք չունի, իսկ հայկական որոշ աղբյուրների նման վերաբերմունքը բացատրվում է նրանով, որ շահ Աբբասն ելնելով իր պետության տնտեսական ու քաղաքական շահերից, հովանավորում էր նաև հայ եկեղեցուն և հոգևորականությանը, ինչպես նաև վաճառականներին: Այդ պատճառով էլ ժամանակակից հայ պատմագիրները, որոնք գրեթե բոլորն էլ պատկանել են հոգևոր դասին, բարյացակամ վերաբերմունք են ցուցաբերում պարսից շահի նկատմամբ: Օրինակ Զաքարիա Սարկավազը մեծ սիրով նկարագրում

<sup>128</sup> Նույն տեղում, էջ 94:

Է Շահ Արքաս Ա-ի մասին գոյություն ունեցող հերիաթ զրույցները, որոնց ոչ մի ուշադրություն չէր դարձրել Առաքել Դավիթիցին:

Զաքարիա պատմագիրն այնուամենայնիվ հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում և մասնավորապես նշում է, որ շահի հրամանով իբր թէ արգելվել է անզամ ռամիկներին կողոպտելը: Շահը ամբողջ Երկրով մեկ հրաման է արձակում. «Եւ առաքեաց յերկիրն ահարկու, թէ ով որ ի Պարսից ազգէ բռնութեամբ ինչ առնու ի ռամկաց, զգլուխն հատանեմ»<sup>129</sup>:

Անշուշտ, շահ Արքաս Մեծը Իրանի նշանավոր շահերից էր և շատ բան է արել իր երկրի հզորացման և առաջընթացի համար: Այնուամենայնիվ նա տիպիկ արևելյան դաժան բռնակալ էր և հայտնի էր իր անազորույն արարքներով: Դավիթիցին ոչ միայն չի մեծարում Իրանի շահին, այլև խիստ բացասաբար է արտահայտվում նրա մասին՝ կապված հայերի տարագրության հետ. Նրան համարելով. «...հանճարեղն ի խորհուրդս չարեաց Շահաբաս»<sup>130</sup> և այլն:

Հայկական աղբյուրներում ուշագրավ տվյալներ են պարունակված նաև Էջմիածնի կաթողիկոսների և Իրանի շահերի փոխհարաբերությունների մասին<sup>131</sup>:

Դավիթիցին նշում է այն տառապանքներն ու ծանր իրադարձությունները, որոնք պատահեցին հայոց աշխարհում շահ Արքասի կառավարման ժամանակաշրջանում:

<sup>129</sup> Զաքարիա Սարկավագ. էջ 25:

<sup>130</sup> Առաքել Դավիթիցի. էջ 61:

<sup>131</sup> Գասպարյան Ա., Առաքել Դավիթիցին շահ Արքաս Առաջինի և Հայոց կաթողիկոսների փոխհարաբերությունների մասին. ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ. Գիտական աշխատություններ. հ. III. Գյումրի, 2000, էջ 189-191:

Հայրենասեր պատմիչը դառնությամբ է նշում թէ ինչպես նվազում են քրիստոնյա ժողովուրդները և հզորանում են մահմեդականները՝ պարսիկները արևելքում, թուրքերը՝ արևմուտքում: Դավրիժեցին խոսում է Դավիթ և Մելքիսեդ կաթողիկոսների մասին, որոնք կաթողիկոսությունը վարում էին ժամանակի թելադրության և իրենց կարողությունների համաձայն. «Յետ սուրա եկաց կաթողիկոս սուրբ Էջմիածնի տէր Դաւիթ, և սա ևս ի նոյն գեղջէն Էջմիածնի, իբրև է ա՛ն սա զկաթողիկոսութիւնն, վարեր ըստ բերման ժամանակին և ըստ իւրում կարի»<sup>132</sup>:

Արդյունքում հայոց հոգևոր կենտրոնի պարտքը գնալով շատացավ և ինչպես Դավրիժեցին է նշում, հասավ մինչև հիսուն հազար դուրուշի, որը անհնար էր վճարել: Ու երբ պարտատերերը գալիս և պահանջում էին պարտքը, ապա կաթողիկոսները չկարողանալով վճարել, ստիպված թաքնվում էին կամ գտնվում էին փախուստի մեջ: Ականատեսների վկայությամբ, նրանց կյանքը դարձել էր անտանելի: Վերջիններս երկար մտատանջություններից հետո, որոշեցին նամակ գրել Սրապիոն վարդապետին, որը Տիգրանակերտ քաղաքի առաջնորդն էր, որպեսզի վերջինս զաև վճարի իրենց պարտքերը: Սրապիոն վարդապետը, որը հարուստ և հաւատացյալ մարդ էր, եկավ Էջմիածին, բայց ոչ թէ կաթողիկոս դառնալու, ինչպես նրան առաջարկել էին, այլ՝ Մայր Աթոռու փրկելու: Նա Վան քաղաքի վրայով հասավ զյուղաքաղաք Զուղա, որը այդ ժամանակ գեղեցիկ ու նշանավոր բնակավայր էր, քանզի դեռևս չէր իրականացվել մեծ բռնազարդը:

Երկու կաթողիկոսները դիմավորեցին Սրապիոն վարդապետին: Բայց երբ վարդապետը հանդիմանեց կաթողիկոսներին, ա-

<sup>132</sup> Կույին տեղում, էջ 6:

պա նրանք վեճ ու խոռվություն բարձրացրեցին և գնացին Սյունիքի Տաթևի վանքը: Արապիոն վարդապետը մնաց Զուղայում և վայելեց ժողովրդի սերն ու համակրանքը: Ուստի նրանք միահամուտ կերպով Արապիոն վարդապետին կարգեցին հայոց կաթողիկոս 1603թ. օգոստոսի 14-ին և ձեռնադրելով նրան անվանեցին Գրիգոր, ի պատիվ Լուսավորչի: Այդ ժամանակամիջոցում շահ Աբրաս Ա-ը պատրաստվում էր ներխուժել Հայաստան:

Երկու կաթողիկոսները իրենց կաթողիկոսությունը պահելու, ինչպես նաև ազգի գոյությունը պահպանելու համար որոշեցին գնալ շահի մոտ: Նրանք հավաստի տեղեկություններ ունեին այն մասին, որ Իրանի զահակալը պատրաստվում է զալ Հայաստան. «Եւ պատճառ գնալոյ սոցա առ շահն այս էր, զի հաւաստեալ և ստոյգ զիտէին, թէ շահն պատրաստեալ է զալ ի յաշխարհս Հայոց, քանզի յառաջ քան զոսա բազումք ումանը յաշխարհէս Աստրատականի իշխանը և կողմնակալը մահմետականը և քրիստոնեայք, գնացեալ էին առ թագաւորն Պարսից, վասն զի յոյժ չարաշար նեղութեամբ նեղէին գնոսա ազգն Օսմանցւոց ծանր հարկապահանջութեամբ, և կեղերմամբ զրկէին և կողոպտէին, և հաւատոց կուտէգութիւն (խստություն) առնէին, և այլ բազում տառապանօք չարչարէին, ոչ միայն զազգս Հայոց, այլև զազգն Վրաց և զՄահմետականաց, և վասն այնք նեղութեան գնացին առ թագաւորն Պարսից, զի թերևս նովաւ դիւրութիւն զոցեն զեղծեալը ի ծառայութենէն Օսմանցւոց»<sup>133</sup>:

Փաստորեն այս քայլով հայոց կաթողիկոսները նպատակ էին հետապնդում ազատվել օսմանցիների ստրկությունից: Մինչ այդ տարրեր ազգերի ներկայացուցիչներ էին գնացել շահի մոտ և

<sup>133</sup> Նույն տեղում, էջ 15:

Վերջինս ընդառաջել էր նրանց խնդրանքներին ու ընդունել իր հովանու ներքը: Եթե նրանք ներկայացան շահին ու հայտնեցին իրենց պատրաստակամությունը, շահը մեծ ուրախություն ապրեց: Այս մասին պատմիչը արձանագրում է. «Իբրև զայն լուսաշահն և ծանեաւ, ցնծացաւ ի յոզի, բերկրեցաւ ի միտս, զուարթացաւ ի մարմին, զի մեծ եղի նմա ուրախութիւն յաւուր յայնմիկ քան զամենայն աւուրս կենաց իւրոց, և ըստ խորամանկ բարուց իւրոց Շահաբաս սկսաւ մեծարել և պատուել զնոսա առ ինքն՝ խօսեր ընդ նոսա ըստ մտաց նոցա, և զսիրտս նոցա յինքն յանկուցաներ և զինքն նոցին հաւատարիմ և բարեկամ ձևացուցաներ և խոստանայր մեծաց բարեաց հասուցանել զնոսա, և այնքան սնոտի և պատիր խաբէութեամբ կեղծաւորեալ զինքն նոցին մտերիմ ցուցաներ, մինչ զամենայն խորհուրդս սրտից նոցա յինքն զողացաւ. և զամենայն որպիսութիւն աշխարհաց նոցա զել և զմուտ և զաշխարհակալ արանց իմացաւ»<sup>134</sup>:

Չափ Աբբաս Ա-ը իրեն յուրահատուկ խորամանկությամբ նրանց սկսեց մեծարել, պատվել ընծաներով, իրեն ձևացնում էր վստահելի բարեկամ ու ընկեր: Եթե իրեն անհրաժեշտ բոլոր զաղտնիքները իմացավ, հրաման տվեց իր զորավարներին պատրաստվելու արշավանքի:

Չափ Աբբաս Ա-ը նախքան Թավրիզից մեկնելը Զիլֆիդար խանին մեծ զորքով ուղարկեց Նախիջևանը զրավելու: Թուրքերը սկզբում փորձեցին դիմադրություն ցույց տալ, բայց եթե իմացան, որ շահը մոտենում է Զուլային, թողեցին քաղաքն ու հեռացան: Զուլայում շահին փայլուն ընդունելություն ցույց տվեցին: Այնու-

<sup>134</sup> Նույն տեղում, էջ 17-18:

հետև շահը ժամանեց Երևան: Բնակիչները եկան երկրպագելու ու ողջունելու նրան և իրենց կարողության համապատասխան ընծաներ նվիրեցին: Սրապիոն կաթողիկոսը նույնպես ընծաներով դիմավորեց շահին: Երբ շահը իմացավ, որ այդ մարդը հայոց կաթողիկոսն է չցանկացավ խոսել նրա հետ և անզամ չընդունեց, քանզի ցանկանում էր Մելքիսեթին նշանակել կաթողիկոս. «Իսկ շահն անտես արար զնա՝ և ոչ խօսեցաւ ընդ նմա. վասն զի ո՞չ ընկալաւ զնա, զի կամէր զՄելքիսեթն կարգել կաթուղիկոս, որ ընդ իւր ունէր»<sup>135</sup>:

Իսկ Մելքիսեթը վայելում էր շահի վստահությունը: Սրապիոն կաթողիկոսը տեսնելով, որ շահը չի ցանկանում ընդունել իրեն Երևանից մեկնեց Զուղա, նպատակ ունենալով մեկնել Տիգրանակերտ:

Այն ժամանակ, երբ Դավիթ կաթողիկոսը շահի առջև ամբաւտանեց Մելքիսեթ կաթողիկոսին, դրանից հետո նա մնաց շահի քանակում, որտեղ գտնվում էր նաև Ամիրզունա խանը: Մի անգամ շահը Դավիթ կաթողիկոսի հետ քաղցրությամբ խոսելով ասաց. «Շնորհեցաք քեզ զկաթուղիկոսական իշխանութիւնն Էջմիածնի, արդ զնացեալ նստցիս յԷջմիածին և վարեսես զիշխանութիւն կաթուղիկոսութեանն»<sup>136</sup>: Այդ ժամանակ կաթողիկոսը խնդրել է շահին, որպեսզի վերջինս իրեն հանձնի Ամիրզունա խանին: Շահը ընդառաջել է նրա խնդրանքին և կարգադրել է Ամիրզունա խանին իր խնամակալության տակ վերցնել հայոց կաթողիկոսին:

<sup>135</sup> Նույն տեղում:

<sup>136</sup> Նույն տեղում, էջ 214-215:

Ամիրգունա խանը և Դավիթ կաթողիկոսը միասին վերադարձն Երևան և անցան իրենց պարտականությունների կատարմանը: Սկզբում Ամիրգունա խանը քաղցրությամբ էր վարփում կաթողիկոսի հետ, բայց երբ շահը հեռացավ, նա փոխեց իր վերաբերմունքը, որովհետև ցանկանում էր Մելքիսեդին տեսնել կաթողիկոսական աթոռին: Ումանք նույնիսկ ասում էին, թե խանը փորձում է անզամ սպանել կաթողիկոսին և միշտ նամակագրական կապի մեջ է գտնվում Սպահանում գտնվող Մելքիսեդ կաթողիկոսի հետ:

Այդ ժամանակ օսմանցինները հարձակման անցան Երևանի վրա և շահը եկավ բերդին օգնության: Դավիթ կաթողիկոսը վախենալով խանի զայրույթից ներկայացավ շահին և ասաց. «Զանկի չայինտան մանայ պիր իշում սու վերմատիլար»<sup>137</sup>: Այսինքն նա դժողոհեց, որ Հրազդան գետից իրեն մի պուտ ջուր չեն տալիս: Շահը հասկացավ այս ամենը և շրարկացավ խանի վրա, այլ բարկացավ Մելքիսեդի վրա, երբ իմացավ, որ նա Սպահանում ազատ կաթողիկոսություն է վարում, առանց իր թույլտվության: Նա մարդիկ ուղարկեց Սպահան կաթողիկոսին՝ բռնելու և իր մոտ ուղարկելու համար: Հրամանը կատարվեց և Մելքիսեդին բերեցին Վայոց ձոր, որտեղ այդ ժամանակ գտնվում էր շահը: Վերջինս անուշադրության մատնելով կաթողիկոսին՝ շարժվեց Նախիջևան: Այդ ժամանակ Դավիթ կաթողիկոսը շահից թույլտվություն խնդրեց Սպահան մեկնելու համար: Շահը թույլատրեց նրան և անզամ մի զուտ նվիրեց ապրուստի համար: Իսկ Մելքիսեդ կաթողիկոսը շարունակում էր մնալ շղթաների մեջ: Շահը Մելքիսեդ կաթողիկոսին տուզանեց երեք հարյուր թուման երեք հանցանք-

<sup>137</sup> Առաքել Դավիթիծեցի, էջ 216:

ների համար: Նախ սրբութի կույս Հոփսիմեի նշխարների համար, որը տարել էին ֆրանկները, իսկ շատերն ասում էին, որ կաթողիկոսը դրա համար անզամ կաշառք է ստացել: Երկրորդ՝ աքսորից վերադառնալու համար, քանզի եկել էր առանց շահի թույլտվության և վարում էր կաթողիկոսական իշխանությունը և երրորդ, որ Սպահանում ազատ վարում էր կաթողիկոսական իշխանությունը առանց շահի թույլտվության: Մրանց համար շահը ցանկանում էր նույնիսկ սպանել կաթողիկոսին, բայց Ամիրգունա խանը միջամտել է և շահը համաձայնել է տուգանքով ազատել կաթողիկոսին: Մելքիսեդը չէր կարող դա միանզամից վճարել և խնդրեց շահին, որպեսզի այն վճարի երեք տարում: Շահը համաձայնել է և կրկին նրան վերադարձրել կաթողիկոսական աթոռը: Փաստորեն տուգանքը ընկավ Մայր Աթոռի վրա: Կաթողիկոսը շրջում էր ժողովրդի մեջ և հանգանակություններ հավաքում: Բայց պարտքը գնալով ավելացավ և հասավ մինչև վեց հարյուր թումանի: Ի վիճակի չյինելով վճարել պարտքերը կաթողիկոսը ուղիներ էր փնտրում պաշտոնից հրաժարվելու համար: Շահը հրամայեց ձերբակալել Մելքիսեդ կաթողիկոսին և ենթարկեց անլուր տանջանքների: Միաժամանակ շահը պահանջեց, որպեսզի կաթողիկոսը իրեն ուղարի Լուսավորչի աջը<sup>138</sup>:

Դրանից հետո կաթողիկոսին պարտադրեցին ուտել իր իսկ թերթից կտրած միսը: Միայն Ամիրգունա խանի միջնորդության շնորհիվ կաթողիկոսը փրկվեց անխուսափելի մահից:

Կաթողիկոսն ուներ Սահակ անունով մի եղբորորդի, որին ինքը եպիսկոպոս էր ձեռնադրել: Վերջինս ցանկություն էր հայտնել դառնալ կաթողիկոս և Մելքիսեդը նրան օծեց կաթողիկոս: Այ-

<sup>138</sup> Առաքել Դավթիմեցի, էջ 207:

նուիետն դիմեց փախուստի և ըստ Դավրիթեցու անցակ օսմանցիների երկիրը, որտեղից զնաց Իլով (Լվով-Ա.Գ) քաղաքը, ուր և մահացել է<sup>139</sup>:

Սահակ կաթողիկոսը նույնպես չկարողանալով վճարել պարտքերը և չընդունվելով ջուղայեցիների կողմից, դիմում է փախուստի:

Շահ Աբբաս Ա-ի հայահալած քաղաքականության մեջ առանձնակի դաժանությամբ է աշքի ընկնում գեղեցիկ ու շրեղ զյուլաքաղաք Ջուղայի ավերումը: Շահը հրամայեց Թահիմազգություն մեկնել Ջուղա և բոլորին տարագրել, չթողնելով ոչ մի բնակիչ: Դեռևս 1603թ. շահը խախտելով հաշտությունը, թուրքերի դեմ նոր պատերազմ սկսեց: Այս պատերազմում նրան օգնեց հայ և վրաց ավագանին, ինչպես նաև հայ մելիքների մի մասը: Ըստ Դավրիթեցու շահի բանակը սկզբում արշավեց Թավրիզի վրա, բայց տեսնելով, որ թուրքերը հարձակվել են Սալմաստի վրա, նույնպես շարժվեց այնտեղ: Սոֆիանի ճակատամարտում տարած հաղթանակը (1605 թ.) բարձրացրեց շահի հեղինակությունը: Այնուհետև իրանական զինվորները զրավեցին Թավրիզը, որը տասնութ տարվա ընդմիջումից հետո կրկին դարձավ Սեֆյանների տերության մի մասը: Դավրիթեցին նշում է, որ նրանք առանց դիմադրության հանդիպելու մտել են Թավրիզ և հիմնահատակ ավերել<sup>140</sup>:

Աղբյուրների մի մասն էլ պնդում է, որ այն զրավել են 15-30 օր-յա պաշարումից հետո և այնտեղ թուրքերի մեծ կոտորած իրականացրել<sup>141</sup>:

<sup>139</sup> Տե՛ս Առաքել Դավրիթեցի, էջ 228:

<sup>140</sup> Տե՛ս Նոյն տեղում, էջ 20-21:

<sup>141</sup> Նաջարյան Հ., Թուրք-իրանական հարաբերությունները XVI դարում ու XVII դարի առաջին կեսին և Հայաստանը, Երևան, 1961, էջ 202:

Հայկական վաճառաշահ քաղաք Զուղայի բնակիչները, որոնք իրենց տնտեսական շահերով կապված էին Սեֆյանների տերության հետ, ապստամբեցին օսմանցիների դեմ, վոնդեցին թուրքական կայազորին և չտեսնված հանդիսավորությամբ և հյուրասիրությամբ ընդունեցին Իրանի շահին՝ նրան հանձնելով քաղաքի արձարյա բանալիները: Բնականաբար շահ Աբբասը շատ բարյացակամ վերաբերվեց ջուղայեցիներին և հովանավորեց նրանց:

Թուրքերը սկզբում փորձեցին դիմադրել, բայց երբ իմացան, որ շահը արդեն մոտենում է Զուղային, թողեցին քաղաքն ու հեռացան: Քաղաքի տեղական բնակիչները, նաև զինվորները չցանկացան հեռանալ իրենց բնակավայրերից ու հպատակվեցին պարսիկներին՝ պատրաստակամություն հայտնելով ծառայել շահին: Դրանից հետո շահը ժամանեց Նախիջևան<sup>142</sup>:

Թուրքերը, ամրանալով Երևանում պատրաստվում են լուրջ դիմադրության: Պաշարելով Երևանը շահը նամակ է ուղարկում Երևանի կայազորի պետ Շերիֆ փաշային, որով իրեն հատուկ գոռոգությամբ ու մեծամտությամբ հայտնում է, թե ինքն արդեն գրավել է Թավրիզը և պատրաստվում է գրավել Նախիջևանն ու Երևանը: Դրանից հետո ինքը պատրաստվում է գրավելու «ժառանգական երկիրը»:

Երևանի պաշարումը տևեց գրեթե 9 ամիս: Ռազմական գործողությունները զնալով լայն չափեր էին ընդունում և ընդգրկում էին հսկայական տարածքներ: Թուրքական զորքերը սակավաթիվ լինելով գրեթե ամենուրեք անցան պաշտպանության և փակվեցին բերդերում: Թուրքական զորքն այնքան էր բարոյալըվել, որ

<sup>142</sup> Բայրության Վ., Իրանի պատմություն, (Նագոյն Ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2005, էջ 318-319:

նրա առանձին գորամասեր ծառայության են մտնում շահ Աբբասի բանակում: Իրանի ռազմական ուժերի հաղթանակները բացատրվում էին ոչ միայն իրականացված բարեփոխումներով, այլև Թուրքիայի ներքին ու արտարին ծանր վիճակով: Օսմանյան գորքերը զբաղված էին ջալալիների ապստամբությունները և զինվորական խոռվությունները Ճաշելով: Այս մասին Գրիգոր Դարանադցին գրում է. «Եւ այս սուլթան Մուհամմատիս անհոգութենէն երեկ Շահապազն՝ պարսից թագաւորն, բազում աշխարհի բերդունայր եւ քաղաքունայր եւ բազում զաւառք ի մէկ տարոյն միջումն զամէնքէ էաս՝ վասն անտէրունչ լինելով աշխարհացն, որ եր թի. ՈՒԲ (1604)»<sup>143</sup>:

Գրավելով Երևանը, և ապահովելով իր թիկունքը շահ Աբբասը շարժվեց դեպի Կարս և պաշարեց բերդը: Շատ չանցած պարսիկները այն նույնպես գրավեցին:

Թուրքիայում իշխանության գլուխ է անցնում սուլթան Ահմեդը, որին հաջողվում է կարգավորել երկրի ներքին դրությունը և Իրանի դեմ նոր գորք ուղարկել: Շահ Աբբաս Ա-ը հաշվի առնելով, որ ինքը բաց դաշտում չի կարող կովել այդպիսի մեծաքանակ ուժերի դեմ, որոշում է նահանջել: Այդ նահանջի ժամանակ էլ նա հղանում է մի սարսափելի միտք, որոշում է ամայացնել ու անսպասի վերածել Իրանի և Թուրքիայի միջև ընկած հայկական մի շարք նահանգներ ու շրջաններ: Նա նպատակ ուներ ոչ միայն ավերել զավառներն ու քաղաքները, այլև տեղահան անել ու Իրան զաղեցնել տեղի բնակիչներին: Այս քայլը հետապնդում էր ռազմական ու տնտեսական նպատակ: Շահը ձգուում էր թուրքերի մշտական հարձակումները դժվարացնելու կամ անհնարին

<sup>143</sup> Գրիգոր Դարանադցի, էջ 14:

դարձնելու համար՝ նրանց արշավող բանակը զրկել պարենից ու սովորական տեսակետից նա ցանկանում էր պետությունը տնտեսապես ու մշակութապես զարգացնելու համար Իրան տեղափոխել հայերի՝ որպես գործունյա և աշխատասեր ժողովրդի՝ մի մեծ զանգված:

Միանգամայն իրավացի է Լեռն գտնելով, որ «...ուզմազիւտությունը միայն պատրվակ էր: Խսկական նպատակը հայ իոջայլական կապիտալը հափշտակել տանելն էր»<sup>144</sup>:

Իհարկե, մենք չենք բացառում տնտեսական գործոնը, բայց միաժամանակ չի կարելի նսեմացնել ուզմական գործոնը: Իրականում ջուլայեցիների զաղթեցման զլխավոր շարժադրը իրոք հայերի հարստություններն օգտագործելու հանգամանքն էր:

Հահ Աբբաս Մեծը՝ արևելյան այդ բննակալը, ձեռնամուխ եղավ իր հրեշտակոր ծրագրի իրականացմանը: Նա իրամայեց ոչ մի միջոցի առջև կանգ չառնելով կազմակերպել տեղահանությունը: Ինչպես նշում է Առաքել Դավիթիցին. «Վասն որոյ իրամայեաց զամենայն բնակիչս աշխարհին Հայոց, եթէ քրիստոնեայ, եթէ հրեայ, եթէ մահմետական, քշել յաշխարհն Պարսից»<sup>145</sup>:

Այս ամենը տեղի ունեցավ 1604 թ. օգոստոսին:

Տեղահանությունը իրականացվում էր ամենադաժան մեթոդներով: Ոչ ոք իրավունք չուներ մնալու, իսկ ճանապարհ ընկնելու համար, նրանք գուրկ էին նույնիսկ տարրական պայմաններից: Շուտով լուր ստացվեց, որ քուրքական բանակը հասել է Կարս: Անհանգստացած շահ Աբբասը իրամայեց արագացնել երթը, հա-

<sup>144</sup> Լեռ, Խոջայական կապիտալը և նրա բաղաքական-հասարակական դերը հայերի մեջ, Երևան, 1934, էջ 64 :

<sup>145</sup> Առաքել Դավիթիցին, էջ 38:

վարված ժողովրդին տանել Նախիջևան, իսկ այնտեղից էլ Իրան: Բազմահազար խաղաղ բնակիչներին բանակի առաջ զցելով ստիպեցին արագորեն առաջ շարժվել:

Ահա այսպիսի զազանային մեթոդներով տարագրվածներին հասցրին Արաքսի ափը: Պետք է նշել, որ տարագրվողների մեջ եղան մարդիկ, որոնք փախան անմատչելի վայրեր ու զինված դիմադրություն ցույց տվին թշնամիներին: Գառնի զյուղի բնակիչները պարսիկներին վտարեցին իրենց շրջանից: Այնուամենայնիվ, թշնամուն դժբախտաբար հաջողվեց ճնշել քարանձավներում պատսպարված մարդկանց, «... ի մակաղատեղս խաշանկոտորք թարց անխայելոյ»<sup>146</sup>, զրում է Դավիթիցին: Իսկ կենդանի մնացածներին միացրին զայթվողների ընդհանուր քարավանին:

Իրանից հետո հերթը հասավ Զուղային: Շահը իրամայեց երեք օրում տեղահան անել զուղայեցիներին: Այս նպատակով նա հատուկ զորամաս ուղարկեց Զուղա և կարգադրեց միջոցների առջև կանգ շառնել: Շահը շատ լավ հասկանում էր, որ Զուղայի գործունյա, հարուստ և ընդունակ վաճառականները խիստ անհրաժեշտ էին Իրանի տնտեսությանը և առևտրի զարգացմանը: Զուղայի վաճառականները հսկայական եկամուտներ կրերեին պետական գանձարանին: Զուղայի հայերը նաև միջնորդի դեր էին կատարում Արևելքի և Արևմուտքի միջև: Շահը ձգուում էր իր ձեռքը վերցնել մետաքսի առևտրային ճանապարհները և թուրքերին բուրս մղել այդ ասպարեզից: Միաժամանակ նպատակ էր հետապնդում քարավանային նոր ճանապարհի վրա տեղափոխել զուղայեցիներին<sup>147</sup>:

<sup>146</sup> Նույն տեղում, էջ 51:

Չուղայեցիների տեղահանումը մանրամասնորեն նկարագրում է Առաքել Դավրիժեցին: Պատմիչը նշում է, թե ինչպիսի ճշտությամբ, խստագույն սպառնալիքներով իրանական զինվորները իրականացրին շահի իրամանը ջուղայեցիների վերաբերմամբ: Չուղայի բնակիչներին հավաքեցին Արարսի ափը՝ Իրան տարագրելու համար: Բայց գետն անցնելու համար փոխադրական միջոցները քիչ են, մանավանդ, որ դրանց մեծ մասը տրամադրվելու էր պարսիկ զինվորներին: Սիա այդ ժամանակ էլ լուր ստացվեց, որ թուրքական բանակն արդեն հասել է Նախիջևան: Ժողովրդի համար ստեղծվեց սարսափելի մի իրավիճակ, որովհետև շահ Աբբասը իրամայեց անմիջապես գաղթականությանն անցկացնել գետը, քանի դեռ օսմանցիները տեղ չին հասել:

Այսպիսով սկսվում է թուրք-իրանական պատերազմի ամենասորբերգական ու իրեշավոր միջադեպը: Ժողովրդի մեծ մասը, մանավանդ կանայք ու երեխանները լողալ չգիտեին, իսկ գետը վարարած էր ու վտանգավոր: Զինվորները սրերով ու նիզակներով ստիպում էին ժողովրդին գետն անցնել: Այդ թշվառների մեծ մասը զոհ գնաց Արարսի ալիքներին: Գետի երկու ափերը լցված էին անթիվ դիակներով<sup>147</sup>:

Պարսիկ զինվորները օգտվելով այդ խառնաշփոթ իրադրությունից զբաղվում էին թալանով և առևանգում գեղեցիկ կանանց ու աղջիկներին: Սա արդեն մի նոր արհավիրք էր հայ ժողովրդի զլիխն: Հայ ժողովուրդը կրեց անլուր տառապանքներ: Ամենուր տարածվեց սովո՞ն ու ցրտահարությունը:

Շահ Աբբասը իրամայեց գաղթականներին տեղավորել շրջակա զյուղերում՝ մինչև գարուն, իսկ ջուղայեցիներին հասցնել

<sup>147</sup> Առաքել Դավրիժեցի, էջ 63:

Թավրիզ: Գարունը բացվելուն պես պարսիկները հայերին տեղափոխեցին Սպահանի կողմերը: Տեղ հասավ զաղթականների մի փոքր մասը: Մեծ մասը ճանապարհին կոտորվեց համաձարակներից, սովոր և ասպատակություններից:

Շահի կարգադրությամբ զաղթականների հիմնական մասին (բացի ջուղայեցիներից) տեղափորեցին Սեֆյան տերության մի շարք նահանգներում ու քաղաքներում, տրամադրելով նրանց հող ու հնարավորություններ ապրուստի համար:

Շահ Աքքաս Ա-ը առանձնապես հոգ տարավ ջուղայեցիների մասին և ամեն ինչ անում էր նրանց սիրաշահելու համար: Նրանց բնակեցրեց Սպահանում՝ նպատակ ունենալով մայրաքաղաքն ապահովել հմուտ արհեստավորներով ու առևտրականներով: Ջուղայեցիները քաղաքից ոչ հեռու հիմնեցին մի նոր քաղաք (արվարձան), որը կոչվեց Նոր Ջուղա՝ գեղեցիկ շենքերով, եկեղեցիներով ու լայն փողոցներով: Շահը ձգուում էր ամեն կերպ հայերին կապել նոր բնակավայրի հետո: Շահը շատ ջերմ հարաբերություններ էր պահպանում ջուղայեցիների հետ: Խոչա Սաֆարի, Խոջա Նազարի և մյուսների հետ միասին վայելում էր հայերի կերակուրները, առանց խտրականություն դնելու: Շատ հաճախ շահն ինքն էր հյուրընկալում հայերին և պատվիրում նույնն անել յուրայիններին. «Եւ հանապազ ինքնշահնզայր ի տունս նոցա, ուտէր և ըմպէր ընդ նոսա զկերակուրս նոցա առանց խտրելոյ, որպես սովորութիւն է Պարսից առնել խտրութիւն ընդ քրիստոնէից. այլ և ինքն շահն կոչէր զնոսա ի տուն և ի սեղան իւր, և պատուէր ընդ մենամեծս իւր. այլ և պատուիրեալ էր իւրոց նախարարաց նոյնպես առնել»<sup>148</sup>:

<sup>148</sup> Առաքել Դավթիմեցի, էջ 64:

Այնուհետև նա շատ թերև հարկ էր առնում քրիստոնյաներից, վեճերի կամ դատերի ժամանակ պաշտպանում էր հայերին: Նույնիսկ շատ մահմեղականների նա արտաքսեց իրենց բնակավայրերից ու նրանց հողերը տվեց հայերին: Չուղայեցիներին քոյլատրեց կառուցելու եկեղեցիներ և ինքն անձամբ այցելում էր հայկական եկեղեցիները: Քրիստոնյաները լիարժեք կերպով պահպանում են իրենց կրոնական և կենցաղային ծեսերն ու սովորույթները:

Իսկ ինչ վերաբերում է շահ Աբբասի կողմից գաղթեցված հայերի թվին, ապա այս մասին ստույզ տվյալներ չկան հայկական աղբյուրներում: Որոշ տվյալների հաշվարկներով գաղթեցված հայերի թիվը հասնում էր մոտ 400-500 հազարի<sup>149</sup>: Այս թիվը այնքան էլ չի համապատասխանում իրականությանը և չի հաստատվում հայկական աղբյուրների կողմից:

Շահ Աբբաս Ա-ը հեռատես քաղաքականություն էր վարում նաև հայ եկեղեցու նկատմամբ: Բնշանում է պատմիչը, այդ օրերին չարիքներ մտորելու մեջ հանձարեղ Շահ Աբբասը կանչեց իր մոտ Դավիթ ու Մելքիսեդ կաթողիկոսներին, ու ասաց. «Սովորութիւն է քաղաքարաց և կարգ, նաև յայտնի է ձեզ, թէ որպէս երկիրս յառաջն Օսմանցւոց էր, և այժմ մեր եղև, սոյնպէս և ամենայն ինչը և ստացուածք նոցա՝ որ անտեր մնացեալ են, պարտի լինիլ արքունական, այսինքն միքիմալի /պետական ուեցվածք-Ա.Գ»<sup>150</sup>:

Փաստորեն շահը պահանջում էր, որպեսզի իրեն վերադարձեն թուրքերի հարստությունները, որոնք հայերը պարտավոր

<sup>149</sup> Տե՛ս Առարելյան Հ., Պարսկաստանի հայերը. նրանց ներկան և ապագան, մաս Ա, Թիֆլիս, 1911, էջ 97:

<sup>150</sup> Տե՛ս Առարել Դարիմեցի, էջ 28:

Եին վճարել, քանզի դրանք հայերի պարտքերն են և պետք է վճարվի պետական գանձարանին: Եվ քանի որ գրավել են նրանց երկիրը, ապա բնականարար ունեցվածքը նույնպես պետք է գրավվի:

Պարտքերից գերծ չմնաց նաև Սրապիոն կաթողիկոսը, որին ձերբակալեցին Զուղայում և պահանջեցին իրենց հանձնել թարգված գանձերը: Սրապիոնը իր հնարավորությունների սահմաններում վճարում էր, բայց պարսիկները դրանով չեն բավարարվում և նրան ենթարկում էին բազում շարժարանքների: Անարգելով այդ պատվավոր մարդուն, փողոցի հրապարակում ոտքերից կախված բրածեծ արեցին: Ճարահատյալ կաթողիկոսը ստիպված փոխարինաբար գանձեր վերցրեց ու հանձնեց շահին և նոր միայն ազատվեց: Թախսիծը հոգում, տրտմալից սրտով, անմիտքար հոգով նա գնաց Վան, այստեղից էլ Ամիդ, որտեղ էլ 1606 թ. ապրիլի 23-ին վախճանվեց. «Որոյ յիշատակն օրինութեամբ եղիցի՝ և աղօթիւր նորա Տէր մեզ ողորմեացի ամէն»<sup>151</sup>:

Հայ Աքքաս Ա-ը իրականացնելով մեծ բռնազարդը նպատակ էր հետապնդում Հայատանի ավերման հաշվին շենացնել Իրանը: Շահը, լինելով զգուշավոր մարդ անընդհատ մտածում էր, թե ինչպիսի միջոցներ կիրառի, որպեսզի հայերը ցանկություն չունենան վերադառնալու իրենց երկիրը: Այդ նպատակով նա հանդիպում էր հայության լայն շրջանակների հետ, ուշադրությամբ լսում նրանց ցանկությունները և մտորում հետազա անելիքների մասին: Իր սովորության համաձայն նա այլակերպվելով շրջում էր փողոցից փողոց և լսում ժողովրդի խոսքերը: Ամենուր նա ասում էր, որ շահը շատ խաղաղասեր ու արդարադատ մարդ է և

<sup>151</sup> Առաքել Դավթիմեցի, էջ 29:

թույլ չի տալիս, որ իշխանները հարստահարեն խեղճ ժողովրդին։ Մանավանդ նշվում էր, որ շահը շատ հոգատար է հայերի նկատմամբ, բայց չզիտես ինչու հայերը ցանկանում են վերադառնալ իրենց հայրենիքը. «Եւ մանաւանդ առաւել խնամակալ է ազգին Հայոց, որ զամենայն զգործ և զբանս նոցա ըստ կամաց նոցա կատարե. և ընդէ՞ր ազգն Հայոց ոչ են ջերմագոյն և յօժարկալ ի յաշխարհիս Սապանահայ, զի շեն աշխարհ է և իշելի է. իսկ աշխարհն հայոց Սահրատ է և բերան թշնամոյ, և հանապազ աւար և գերութիւն»<sup>152</sup>:

Շահ Արքան ամենուր լսում էր նոյն պատասխանները, որ հայոց երկրում էժանություն է ու առատություն, որ այնտեղ են զտնվում հայ ժողովրդի վանքներն ու ուխտատեղիները և հատկապես Էջմիածինը։ Եղել են մարդիկ, որոնք շահին խորհուրդ են տվել, որ եթե նա ուզում է հայությանը կապել Իրանին, ապա պետք է Սապահան բերի Գրիգոր Լուսավորչի աջը և այնտեղ կառուցի նոր Էջմիածին։ «Արդ օձն դարանակալ և խորամանկ թշնամին կենաց, և հոգւոց, և հաւատոց քրիստոնէից, որ յար հանապազ ի տարակուսի կայր վասն ազգին Հայոց. արդ ի նոցանէ լուս զստոյց լուծումն տարակուսանացն»<sup>153</sup>:

Դրանից հետո շահը հաստատ մտադրվեց հայոց հոգևոր կենտրոնը քանդել և քարերը բերելով Իրան մի նոր Էջմիածին կառուցել։ Նոյնիսկ նա Սապահանում կառույցի համար տեղ հատկացրեց։ Մի անգամ այդ տեղում շահը դիմելով հայերին ասաց. «Վասն ձեր շինեմ աստ Էջմիածին, զի մի վասն այնմ Էջմիածնի կարօտութիւն կրեալ ճմլեսցին սիրտք ձեր, և հրամայեմ զնալ բա-

<sup>152</sup> Առաքել Դավիթիցի, էջ 199.

<sup>153</sup> Նոյն տեղում, էջ 200:

գում ուղտ ջորի և սայլ, զի գքար և զիող այնք Էջմիածնի քանդեալ բերցին աստ, զի այնու քարով և հողով շինեսցի այս Էջմիածինս, որպէս զի առանց իմիք երկրայութեան հաստատեսցին սիրտը ձեր ի վերայ նոր շինեցելոյս»<sup>154</sup>:

Փաստորեն, սա օգտագործելով որպէս պատրվակ, բռնակալ ցանկանում էր քանդել հայության հոգնոր կենտրոնը: Խոչա Նազարը չցանկանալով այդ ամենը, շահին ասում է, որ եթե նա ուզում է գեղեցիկ ու հաստատուն Էջմիածին կառուցել, ապա այն կարող է լինել ոսկուց ու արծաթից և ոչ թե քարից: Միաժամանակ նա փորձում է համոզել որ կարիք չլա այդքան տառապանք ու ծախս անել հեռավոր աշխարհից քար ու հող բերել, այստեղ էլ բարձական քար ու հող կա և կարելի է դրանցով կառուցել:

Բարեբախտաբար շահ Աբբաս Ա-ի դեսի Վրաստան ձեռնարկած արշավանքը խաթարեց այդ ծրագրի իրականացումը:

Շահի իրամանով Սպահան, ուղարկվեց Լուսավորչի աջը և Էջմիածնի քանդած քարերը: Քանդեցին սուրբ սեղանը, Քրիստոսի իշման տեղի քարը, ավազանը, քարե երկու մոմակալ: Նման մեթոդներով շահ Աբբասը խարխլում էր հայ եկեղեցու միասնությունը և իրականացնում իր հեռահար ծրագրերը:

Արտաքին քաղաքականության ոլորտում Շահ Աբաս Ա-ը կարևորում էր թուրքերի հետ պատերազմի հնարավոր բռնկումը և համառ ու համբերատար կերպով պատրաստվում էր պատշաճ հակահարված տալ թուրքերին: Ամրացնելով իր դիրքերը Արևելքում, նա ամենից առաջ ձեռնարկեց ռազմական գործի և զինված ուժերի վերակառուցումը: Այս գործում մեծ մասնակցություն

<sup>154</sup> Նույն տեղում, էջ 200-201:

ունեցան անզիացի երկու բախտախնդիրներ՝ Էստոնի և Ուրբերտ Շիրլի եղբայրները: Վերջիններս ազնվականներ էին և ունեին բարձրագույն կրթություն: Շահը նրանց հանձնարարեց վերակառուցել իրանական բանակը Եվրոպական ձևով: Եղբայրները Իրան էին եկել զիսավորապես հարստանալու նպատակով և հավանաբար ունեին նաև արտաքին քաղաքական հանձնարարություններ: Նրանք քաջ տիրապետում էին Եվրոպական տեխնիկական գիտելիքներին<sup>155</sup>:

Եղբայրները շահին հայտնեցին, որ իրենք բրիստոնյա միապետների կողմից ուղարկված են սուլթանի դեմ դաշինք կնքելու և առաջարկեցին իրենց ծառայությունը, որը շահը սիրահոժար ընդունեց: Եղբայրների զիսավորությամբ դեսպանություն ուղարկվեց Եվրոպական Երկրներ, ձգտելով ստեղծել հակաթուրքական ճակատ: Շահ Աբբասը միաժամանակ ջանքեր էր գործադրում զանազան տնտեսական և այլ արտոնություններով Եվրոպական կապիտալը ներգրավելու Իրան, չնայած, որ նման քաղաքականության արդյունքները խիստ աննշան էին:

Մնարդյունավետ եղան նաև շահ Աբբաս Ա-ի ուղարկած դեսպանության Եվրոպական բանակցությունները:

Շահը զգալի հաջողություններ ունեցավ Այսրկովկասում, որի ժողովուրդները դժողո էին օսմանների վարած քաղաքականությունից և ապավինում էին Իրանի աջակցությանը: Շահ Աբբասը սիրով ընդունում էր նրանց դժողությունները, որոնք էլ օգտագործում էր իր ծրագրերի իրականացման համար: Ըստրված պահը խիստ նպաստավոր էր:

<sup>155</sup> Բայրության Վ., նշվ. աշխ., էջ 315:

Թուրքերը ստիպված են դիմել ջալալիների օգնությանը: Գրիգոր Դարանաղցին նշում է, որ ջալալիների առաջնորդները համաձայնում են թուրքերի առաջարկին և դաշինք են կնքում նրանց հետ: Պատմիչի տվյալների համաձայն այդ ամենը եական փոփոխություններ չեն մտցրել Թուրքիայի դրության մեջ<sup>156</sup>:

Ճահ Աբբաս Ա-ը շարունակել է իր նվաճումները, որոնք, ըստ Դավիթիցնու, կրել են զավթողական բնույթ: Պատմիչը զգալի տեղ է հատկացնում ռազմական գործողություններին, որոնց նկատմամբ ցուցաբերում է անաշառ վերաբերմունք: Դավիթիցնու «Պատմության» մեջ արտացոլված ռազմական գործողությունները բաժանվում են հետևյալ փուլերի՝

1. Իրանական արշավանքների սկիզբը, Թավրիզի, Երևանի և Նախիջևանի գրավումը:

2. Օսմանյան բանակի հակահարձակումը, պարսիկների նահանջը և մեծ բռնագաղթը:

3. Ղզբաշների հետազա նվաճումները:

Իրանական պատմիչները շահի արշավանքներն արդարացնում են այն հանգամանքով, որ եկել էր ժամանակը, որպեսզի Այսրկովկասն ու Ասորպատականը, այսպես կոչված «ժառանգական հողերը» վերադարձվեն օրինական տերերին: Բայց «ժառանգական հողերի» թեզը միակը չէր նվաճումները արդարացնելու համար: Առաջ էր բաշվում իրանա-թուրքական հակամարտությունների հարցը: Բայց հիմնականում Իրանը այս տարածքում ձգտում էր հասնել տնտեսական ու քաղաքական գերիշխանության և դա համարում էր «փրկություն» տեղի ժողովուրդների համար:

<sup>156</sup>Տե՛ս Գրիգոր Դարանաղցի, էջ 43:

Դավրիժեցու հաղորդած տվյալները մխտում են այդ ամենը և ապացուցում, որ այդ արշավանքները ամենսին չարդարացրին Այսրկովկասի ժողովուրդների հոլոսերը և նրանք ստիպված են-քարկվեցին Սէֆյանների շահագործմանը:

Պատմազիրը 9,10,11,12-րդ գլուխներում ընդարձակ էցեր է նվիրում այն բոլոր վայրագությունների նկարագրությանը, որ գործադրում էր շահ Աբբասը Վրաստանում: Ցավով և վշտով նա պատմում է վրացիների գերեվարությունը դեպի Իրան և նրանց տառապանքներն այդ երկրում: Միաժամանակ նկարագրում է Սպահան գաղթած հայ ժողովրդի կրած տառապանքները: Շահ Աբբասը ծրագրում է կրոնափոխ անել ժողովրդին՝ փոխարինաբար դրամ վճարելով պետական զանձարանից, ձգտում էր կախման մեջ զցել իրենից: Եվ երբ զալիս է պարտքը մուծելու ժամանակը, ապա հայ ժողովուրդը ի վիճակի չկինելով այն վճարել կանգնում է դժվարին կացության առջև: Օգտվելով հայերի ծանր դրությունից շահը առաջարկում է հայերին հավատափոխ լինել: Հայերը մերժում են առաջարկը և ենթարկվում անլուր չարշարանքների. «Եւ այնուհետև ողորմելի ժողովուրդըն Հայոց՝ որդուվք և ընտանեօր շրջեին ի պողոտայս և ի փողոց քաղաքին առ ամենայն որ լալով և ողբալով՝ զի թերևս յուստերէ լիցի հնար օգնութեան կամ փոխով կամ ողորմութեամբ»<sup>157</sup>:

Ուշազրակ է նաև Դավրիժեցու այն հաղորդումը, ըստ որի շահ Աբբասը սովորություն է ունեցել ծպտված շրջել ժողովրդի մեջ իմանալու, թե ինչ է կատարվում իր երկրում. «Իսկ ինքն Շահաբաս ըստ հանապագորդ սովորութեան իւրոյ՝ որ այլակերպեալ

<sup>157</sup> Առաքել Դավրիժեցի, էջ 154:

զինքն ձեսնայր, որպես զմի ոք ի զինուորաց՝ և գնայր ի մեջ արանց և ժողովրդոց՝ իմանալ և զիտել զբան ինչ»<sup>158</sup>:

Այդպիսի հերթական այցի ժամանակ նա ապաստանեց մի պառավ կնոջ տանը: Վերջինս ուներ ընդամենը մի որդի, որը հովիվ էր: Շահը տեսնելով նրանց ծայրահեղ աղքատությունը սկսեց հետաքրքրվել թե ո՞րն է դրա պատճառը: «Պառավը բացատրեց, որ պատճառը արքունական հարկերն են և հատկապես խիստ ծանր է ոչխարի հարկը. «Ոչխարի քօդան է, զոր թագաւորական հարկահանքն եկեալ ոչխարաց քօդաւ առնուն, զի տարեց տարի զնալով զինի միմեանց՝ որքան զնաց ծանրացաւ քօդան, և այնքան ծանրացաւ, որ զնոյն ինքն ոչխարսն զամենայն վաճառեալ տուաք ի քօդան, և, այնու ոչ կարացաք զերծանիլ, զպարտս ևս առաք և տուաք քօդաւ, և ապա զինչս և զստացուածս օր յաւուր վաճառելով, զորս ի քօդան տուաք, և զորս պարտատեարցն վճարեցաք. ոչինչ չմնաց, քանզի կարի յոյժ ծանր է հարկն քօդափին»<sup>159</sup>:

Շահ Աբբաս Ա-ը պառավի որդուն՝ Լալային իր պալատում նշանակեց նախարար և կոչեց Լալաբեկ: Նրա մասին Դավիթեցին մի հետաքրքիր գրույց է պատմում:

Մի շաբթ նախարարներ նախանձելով Լալաբեկին ամբաստանում են նրան շահի առաջ և վերջինս հրամայում է խլել նրա ունեցվածքը և փողոց շարտել: Եթք նրա մոտ գտան մի սնդուկ, տեսան, որ դրա մեջ գտնվում է մի զրոյգ մաշված տրեխս ու պատառոտված գուլպաներ: Ու եթք զարմացած հարցրեցին թե սրանք ի ՞նչ են Լալաբեկը պատասխանեց. «Այս այն տրեխս է, զոր ի Հայրենի տամ միում զգենուի, և արդ՝ եղեալ եմ աստ՝ և հանա-

<sup>158</sup> Նոյն տեղում, էջ 171:

<sup>159</sup> Նոյն տեղում, էջ 174:

պազ եկեալ տեսանեմ, և յիշեմ, և ասեմ, դու այն ես, որ զայս միայն ունեփր. և շահն բերեալ զքեզ յայդպիսի յաղբատութենէ յայսքան մեծութիւն հասոյց. արդ՝ զգոյշ լեր մի զուցե զոցի նենզութիւն ի սիրտ քո վասն շահին. և այլոց չարախօսաց զնմանէ մի լիցիս համաձայն, և մի մոռանայցես զերախստիս նորա, զի մի այս ամենայն դառնայցէ քեզ հարամ, և լինիցիս սեներես առաջի Աստուծոյ և մարդկան»<sup>160</sup>:

Երբ շահը այս ամենը լսեց, հասկացավ որ Լալաբեկն անմեղ է և ամեն ինչ կրկին հետ վերադարձրեց ու ավելի բարձր պարզեների արժանացրեց:

Շահ Աբբասը մեծ ուշադրություն էր դարձնում նաև մայրաքաղաք Սպահանի ներքին կարգ ու կանոնի կարգավորմանը: Քաղաքում ապրում էին մեծ թվով քրիստոնյաներ և Ղավրիմեցին նկարագրում է այն պատճառները, ըստ որի քրիստոնյաներին հանեցին քաղաքից և տարան քնակեցրին քաղաքից դուրս:

Շահ Աբբաս Ա-ը մի անզամ Սպահանից մեկնում է Ղազվին և կարգադրում արգելել զինու առևտուրը և զինի պատրաստելը: Նա հրամայում է չենթարկվողներին խիստ պատժել, ընդհուպ մահապատճեթ: Բայց զինեմոլությունը չի վերանում և շահին զեկուցում են, որ դրանով զբաղվում են ֆրանկները, հայերը և հրեաները: Շահը Սպահան է ուղարկում պալատական պաշտոնյա Նաջաֆորվուն, որին հանձնարարված էր հրամանն ի կատար ածել, գործածելով բոլոր խստագույն մեթոդները: Ու մի անզամ, եթք վերջինս գտնվում էր խնջույքի մեջ, շահի արքայական զբաղարանի պետն ասաց, որ միակ միջոցը հայերին ու հրեաներին Սպահանից հեռացնելն է. «Ի զուր է աշխատանք ձեր, և ոչ հաստատի

<sup>160</sup> Նույն տեղում, էջ 177:

արգելում զինւոյդ, զի պատճառք բազումք գոն և մանաւանդ այս, զի ամենայն ազգը ի միասին խառն ի խուռն ընդ միմեանս ընակեալ են, մահմետականք, որք ոչ ըմպեն զինի և այլ ևս ազգքն՝ որք ըմպեն զինի. այսինքն, ֆուանկը, Հայր, և Զիոնտը»<sup>161</sup>:

Ուստի լավագույն լրւծումն այն է, որ այս ժողովուրդները հեռացվեն քաղաքից: Այդ առաջարկին հավանություն են տալիս շահի նախարարները, որոնք համոզում են շահին զրավոր հրաման տալ քրիստոնյաներին տեղափոխելու մասին:

Պատմագիրը նշում է, որ սկզբում քրիստոնյաների համար դժվար էր հեռանալ, բայց հետո ուրախացան, որ ազատվեցին պարսիկների ճնշումից:

Դավրիմեցու «Պատմությունը» չի ներկայացնում պատմական իրադարձությունների համակարգված շարադրանք, աշխատության առանցքը շահ Աբբաս Ա-ի արշավանքներն են ու նրա մղած պատերազմները օսմանցիների դեմ: Պատմիչը շահի արշավանքների ժամանակ եղել է անշափահաս երեխա և այդ շրջանի դեպքերը նա ներկայացնում է որպես ականջալուր, որը չի ցցում աշխատության արժեքը, քանզի պատմիչը օգտագործել է մեծ թվով աղբյուրներ, որոնց նկատմամբ ունեցել է քննադատական մոտեցում:

Շահ Աբբաս Ա-ի արշավանքներին է անդրադարձել նաև XVII դարի հայ պատմիչ Երեմիա Քյոմուրճյանը, որը զրում է.

Հուակ կըլայի Միհրիպանի  
զայ Շահ Ապաս՝ զգօրս առաքեալ,  
Երկու հազար անձինք Պարսից  
յայն վայր ի մարտըն կոտորեալ:

<sup>161</sup> Առաքել Դավրիմեցի, էջ 445-446:

Երկրորդ անգամ եղեն բախտեալ,  
Պարսիկք դարձեալ անդ կոտորեալ,  
Եվ զզինեալ խան, զւէրտար Պարսից  
Շահ Ապասի կալելալ, սպանեալ<sup>162</sup>:  
Խոսելով Երևանի գրավման մասին Քյումուրճյանը գրում է.  
ԶԵՐԵՎԱՆԻ առնուլն լրւաւ  
Շահ Ապասն և զայրացեալ,  
Թաւրիզաւ յԵրևան զայ  
և ընդ ձմերան իսկոյն առեալ<sup>163</sup>:  
Շահ Աբբաս Ա-ի գործունեության մասին հետաքրքիր տեղե-  
կություններ է հաղորդում նաև Զաքարիա Սարկավազը: Նա գո-  
վարանում է Երևանի Ամիրգունա խանին և ըստ պատմիչի վեր-  
ջինս քաջ ու անվեհեր մի մարդ է, պատերազմների մեջ արի և  
անահ, որ աննկուն, եռանդուն շինարար է և հայ ժողովրդի բարե-  
կամ: Արարատյան երկրի բնակչության (հայերի - Ա. Գ.) թիվը ա-  
վելացնելու համար այս խանը արշավանքներ էր կազմակերպում  
Հայաստանի այլ վայրերը (թուրքաբնակ գավառները) և այդու-  
ղից մեծ քանակությամբ բնակիչներ բերում ու բնակեցնում այս-  
տեղ<sup>164</sup>:

Շահ Աբբաս Ա-ի կապակցությամբ նա գրում է. «Զսրա ամե-  
նայն գործ գրեալ է Առաքել պատմազիրն՝ անպակաս զամենայն:  
Ով որ կամիցի գիտել զատոյզն, ընթեռնուցու զայն, և ի նմանէ ուս-  
ցի: Այլ ես զոր ինչ լուեալ եմ վասն այս Շահ Աբասիս, թէ՛ սուս և  
թէ՛ առասպել, և թէ՛ ճըշմարիտ և յիրաւ, զամենն զրեմ, թէ՛ պար-

<sup>162</sup> Տե՛ս Երևանի Քեռմիրճեան, Պատմութիւն համառու ԴՃ տարւոյ Օսմանցց թագաւորացն, Երևան, 1982, էջ212:

<sup>163</sup> Նույն տեղում, էջ 223:

<sup>164</sup> Տե՛ս Զաքարիա Սարկավազ, հ. Ա., էջ 45-47:

սաւանք և նախատինք լինի՞ն/ և թէ՝ գոհութիւնք և զովութիւնք լի-  
ցի՞ն/, նոցա լիցի՝ որոց պատմեցին մեզ: Քանզի նորա՝ որք ակա-  
նատեսք էին, զատոյզն պատմեցին: Իսկ նորա՝ որք ականջալուրք  
էին, վեր ի վերոյ ասացին, ասկայն մեր զոր լուսք, զնոյն պատմես-  
ցուք՝ թէ՝ սուս և թէ՝ իրաւն»<sup>165</sup>:

Աշխատության մեջ մեծ թիվ են կազմում Իրանի շահերի վերա-  
բերյալ զրուցներն ու երգերը: Հատկապես շահ Աքքասի վերաբերյալ  
բերում է բազմաթիվ ավանդություններ ու առասպելներ: Ըստ այդ  
առասպելների Հայաստանն ավերողը բավականին համակրելի  
գծեր է ունեցել: Զարարիան հավատացել է դրանց և իր հերթին գու-  
նազարդել այդ առասպելները:

«Սովորութիւն էր Շահ Աքքասին՝ որ երբեմն երբեմն՝ յայլակերպս  
եղեալ շրջեր: Լինէր՝ զի երբեմն երիվարաւ և փայեկաւ գնայր՝ ուր և  
կամեր, երբեմն միայն, երբեմն ի կերպ փօրեզկի՝ որ է Չարչի: Եւ այս-  
պես շրջեր՝ ի մեջ մեծամեծաց և ռամկաց: Հարցանէր և տեղեկանայր  
յամենայն՝ ի Շահէն և յերկրէն, ի հարկաց և յամենայն իրաց»<sup>166</sup>:

Պատմիչը բերում է այդպիսի մի ավանդություն: Մի անգամ  
Գուլփիքան զյուղաբաղաքում շահը հորդ անձրևից պատսպարվե-  
լու նպատակով մտնում է մի տուն և տանտիրոջից խնդրում օթևան: Տա-  
հանտերը սիրով ընդունում է և հյուրասիրում: Առավոտյան, երբ շա-  
հը հարցնում է թէ որքան պետք է վճարի հյուրասիրության համար,  
տանտերը պատասխանում է. «Աստուած մի արասցէ զոր Շահի ա-  
նունն յիշօղն և վասն Աստուծոյ եկեալ հիւրն՝ պատառ մի հաց կերի-

<sup>165</sup> Զարարիա Սարկավագ, էջ 14-15:

<sup>166</sup> Նոյն տեղում, էջ 15:

ցե, զգինս նորա առից և կորուսից զվարձս իմ և այսպես արձակեաց զնա»<sup>167</sup>:

Այդ տանտերը եղել է Ալլահվերդին, որը ծագումով հայ էր ու շահը ի նշան երախտագիտության նրան նշանակում է Շիրազ քաղաքի խան:

Շատ հավանական է, որ այս հերիարքը լսել է նաև Առաքել Դավ-րիմեցին, բայց չի գրել, քանզի նրա մոտ Ալլահվերդի խանը շահի նշանակոր զորավարներից է և մասնակցել է նրա արշավանքներին: Շահը հաշվի առնելով նրա ծառայությունները, կատարում է Ալլահ-վերդու խնդրանքը և զաղթեցրած հայերից 500 ընտանիքի ուղարկում է Շիրազ՝ այնտեղ բնակեցնելու համար: Զաքարիայի ժամանակաշրջանում շահական զինվորների կողմից ռամիկների ունեցվածքի անօրինական հափշտակումները մեծ չափերի են հասել:

Ըստ պատմիչի շահն արգելել է այդ անօրինականությունները, որպեսզի զայիր սերունդները լավ իմանան այդ ամենը: Խոսելով շահ Աբբասի մասին նա գրում է «Ի հազար և հիմքունին նստաւ Աբսս թագաւոր այր, քաջ ի պատերազմի, ճոռումաբան, քազմահանձար, յորնահնար, խորագիտ և ճարտարաբան, լի ամենայն հնարիւք, առ ամենայն զործս աջողակ գտաւ զործ նորա»<sup>168</sup>:

Պատմիչը շահ Աբբաս Ա-ի ռազմա-քաղաքական գործունեության մասին գրեթե չի խոսում և փոխարենը մեծ սիրով նկարագրում է այդ հերիարք զրոյցները: Նա չի զիտակցել, որ այդ «բարի» «քրիստոնեասեր» շահը այդ բոլորն արել է ենելով իր պետության շահերից: Սակայն չի նշանակում թե պատմիչն ընդհանրապես դրական է վերաբերվում Իրանի դեկավարներին և նրանց

<sup>167</sup> Նույն տեղում:

<sup>168</sup> Զաքարիա Սարկավագ, էջ 14:

Նկատմամբ չունի բացասական դիրքորոշում: Նա Մահմադ խանին ներկայացնում է գոռող, ինքնահավան, թուլամորթ, ազահ և այլն:

Չնայած դրան Զաքարիայի աշխատությունը հետարրիք է, ուշագրավ և ինչպես նշում է Լեռն. «Զաքարիան համարվում է 19-րդ դարի մեծ քանաքեռոց»՝ Խաչատուր Աբովյանի գրական նախահայրը<sup>169</sup>:

Չահ Աբբաս Ա-ի քաղաքականության ուսումնասիրման տեսակետից առանձնանում է Խաչատուր Զուղայեցու հաղորդումները<sup>170</sup>:

Պատմագիրը ատելությամբ է խոսում շահ Աբբասի մասին, նրան «ամենախարդախ նենզավոր օձն» է համարում: Չնայած արտաքուստ նա ցույց է տալիս, որ հայերի հետ խաղաղ է ու հաշտ, բայց ներքուստ հայերի նկատմամբ լցված է չարությամբ ու նենզությամբ և դավեր է նյութում նրանց դեմ: Պատմիչը կարևորում է նաև Նոր Զուղայում կառուցված եկեղեցիները, որոնք կառուցվել են շահ Աբբասի օրոք. «Եւ մերթ ընդ մերթ ինքն Շահաբաս զայր՝ և կանգներ յանդիման ճարտարացն շինողաց, և հրամայեր գեղեցիկ յօրինուածովք շինել, և երիներանց գունովք« և պճառագրդ տեսլեամբ զարդարել: Որովք խորամանկութեամբք յանկոյց զիրտ նախնեաց մերոց առ ինքն. և մնացին մինչև ցայսօր ի ծառայութիւն պարսից»<sup>171</sup>:

Զուղայեցին սրանով հաստատում ու լրացնում է Դավիթիմեցու շահ Աբբաս Ա-ի հրամանով եկեղեցիների կառուցման պատճառ-

<sup>169</sup> Լեռ, նշվ. աշխ., հ. 3, գիրք առաջին, էջ 356:

<sup>170</sup> Գասպարյան Ա., Խաչատուր Զուղայեցու աշխատությունը որպէս Պարսկաստանի պատմության ուսումնասիրման սկզբնադրյուր, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ, Գիտական աշխատություններ, հ. IV, Գյումրի, 2001, էջ 102-107:

<sup>171</sup> Նույն տեղում, էջ 114:

ների մասին վկայությունը և բացահայտում է շահի հեռազնա նպատակները հայերի նկատմամբ:

Պատմիչը, նկարագրելով շահ Աբբաս Ա-ի իրականացրած քոնությունները, միաժամանակ իր արդար զայրույթն է հայտնում, որ այդ խոշտանգումների հանդեպ հայերը «անզգա են, անխմաց» են ու համար և քարացած իրենց մոլորության մեջ, երբեք չեն զարթնում քնից, չեն զգաստանում, չեն տեսնում և ճանաչում իրենց թշվառությունը, չեն ձգուում թոթափելու օտարի լուծը և շանք չեն թափում ստանալու երազած ազատությունը, որը ժողովրդի կյանքի ապահովման միակ երաշխիքն է<sup>172</sup>:

Շահ Աբբաս Ա-ի կապակցությամբ Խաչատուր Զուղայեցին գրում է. «Արդ՝ ահաւասիկ մինչև ցաստ ծայրաքաղ արտահաննեալ հաւաքեցի ի պատմութեանց Շահ Աբբասայ՝ ստոյգ դիսողութեամբ ի մերոց և ի պարսից մատենից: Բայց ոչ զբոլորն համանգամայն զրեցի, այլ ի բիւրոց և յանբաւից գործոց նորա, զյոյժ հասաստին և զկարևորն վասն իմոյ իսկ տենչալոյս բացայայտեալ զեզուցի»<sup>173</sup>:

Նման խոսքերով պատմիչն արտահայտում է իր վերաբերմունքը շարադրված նյութի հանդեպ:

Խաչատուր Զուղայեցին տեղեկություններ է հաղորդում նաև շահ Աբբաս Ա-ի շինարարական աշխատանքների մասին. «Այլ ի 1058 թուոց մերում ելանէ Շահ Աբազ Աբբայն ի քաղաքէս Սպահանայ՝ և զնայ դէպ ի Մազանդարան, ուր շինեաց քաղաք մի՝ և անուն նորա յորջորշեաց Ֆահրապատ, և յոյժ ուրախ եղի ի վերայ նորա»<sup>174</sup>:

<sup>172</sup> Նույն տեղում:

<sup>173</sup> Խաչատուր Զուղայեցի, էջ 136:

<sup>174</sup> Նույն տեղում, էջ 126:

Պատմիչը գրում է թե ինչպես շահ Աբբասը ձգտում էր հավատափոխ անել քրիստոնյաներին: Նորակառույց Ֆահրապատ քաղաքում սաստիկ սով էր տարածված և երբ քրիստոնյաները խնդրեցին շահին օգնելու իրենց, վերջինս պատասխանեց, որ փրկության միակ ելքը հավատուքացությունն է. «Խսկ ամենախարդախ նենզատը օձն Շահարաս՝ ասէ ցնոսա, ուրացէ՛ք դուք զհավաւատս ձեր, և մտէք ընդ յօրէնս մեր ես անխայաքար տամ ձեզ զպարզես՝ և զգանձս յոլովս, որովք դիւրաքար՝ և յոյժ խրախճանութեամբ կարասչիք ապրել»<sup>175</sup>:

Վրաց ժողովուրդը միամստաքար հավատաց նրան և կրոնափոխ եղավ, իսկ շահը խոստումնազանց եղավ և ընդամենը ամեն մեկին տվեց մի ոսկի դահեկան: Խաչատուր Զուղայեցին զայրույթով է նշում, որ մի ոսկե դահեկանի համար վրացիները զրկվեցին իրենց քրիստոնյա հավատից և դարձան տարագիրներ:

Շահ Աբբաս Ա-ի որդիներից ոչ մեկը շարժանացավ զահին, քանզի շահը ժամանակին հոգացել էր վերացնելու նրանց կողմից իշխանությունը զավթելու հնարավոր վտանգը. «...Արքայս Շահարաս զորովս իւր զումանս սպան՝ և զումանս կուրացոյց, վասն երկիւնի՝ զի մի զուցէ թագաւորեսցեն իշխանին, և մնացեալ էր թոռն մի՝ որդի աւագ որդոց իւրոյ, վասն որոյ ետ զթագաւորութիւնն թոռին իւրոյ»<sup>176</sup>:

Շահ Աբբաս Ա-ին իր կտակի համաձայն փոխարինեց թոռը՝ շահ-Անգի Ա-ը (1629-1642 թթ.), որը լինելով կամակոր ու դաման մարդ, իրենից հեռացրեց Շահ Աբբասի մերձավորներին ու մահապատճի ենթարկեց նշանավոր զորավարներին: Երկրի դրությունը կրկին դարձավ անկայուն:

<sup>175</sup> Նույն տեղում, էջ 127:

<sup>176</sup> Առաքել Դավիթիցից, էջ 308-309:

**Յ. ԻՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲՆՈՂՈՇ  
ԳԾԵՐՀ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԻ  
(XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՇ ԿԵՍ)**

Շահ Աբբաս Ա-ի մահից հետո Իրանի և Թուրքիայի միջև կրկին սկսվեցին ռազմական գործողությունները: Սուլթան Մուրադ IV-ը օգտվելով Իրանում ստեղծված ծանր դրությունից, նոր զորք է ուղարկում նրա դեմ, որի առջև դրված էր հստակ խնդիր՝ զրավել Բաղդադը: Սեֆյանները ստիպված էին անցնել պաշտպանության: Թուրքական արշավանքը ձախողվեց:

Շահ Սեֆին օգտագործելով ստեղծված վիճակը 1635թ բանակ ուղարկեց Վանի վրա և պաշարեց այն, բայց չկարողացավ զրավել: Զաքարիա Սարկավագը նկարագրում է, թե ինչպես իրանական զորքերը նախրան Վանից հետ քաշվելը երեք օր շարունակ կողոպտեցին քաղաքի շրջակայրը<sup>177</sup>:

Այս ամենին զուգահեռ տեղի են ունենում այն սարսափելի տեսարանները, որոնք կապված էին պատերազմի հետևանքների հետ և որոնց զոհը դարձան հայկական բազմաթիվ բնակավայրեր: Դարձյալ ռազմական գործողությունների թատքրաբեմը Արարատյան երկիրն էր: Զաքարիա Սարկավագի վկայությամբ ժողովրդի մեծ մասը զայթեց զանազան վայրեր ու երկրներ: Բնակչության մի փոքր մասին հաջողվեց փախչել, իսկ մնացած մասը օսմանցիների կողմից ենթարկվեց սոսկալի աղետների:

1635թ. սեպտեմբերին թուրքերը առանց դիմադրության հանդիպելու զրավեցին Թավրիզը: Դա բացատրվում է նրանով, որ ըստ Գրիգոր Դարանադցու, շահ Սեֆին մարտավարարական նկատառումներով թուրքական բանակի դեմ հանդիման դուրս չե-

<sup>177</sup>Տե՛ս Զաքարիա Սարկավագ, հ. I, էջ 64-65:

կավ, այլ սպասում էր ցրտերի սկսվելուն, որպեսզի ձմեռվա պայմաններում դյուրին լինի ջախջախել նրան<sup>178</sup>:

Թուրքերն ավերեցին ու թալանեցին Թավրիզը: Այնուհետև նրանք հասան մինչև Արդեբիլ, բայց 1635 թ. դեկտեմբերին ետ վերադարձան: Ուսումնասիրողների մի մասի կարծիքով ետ վերադառնալու պատճառը ձմեռն էր, իսկ մյուս մասն էլ գտնում է, որ պատճառը այն լուրն էր, ըստ որի Արևմուտքից արշավանք էր պատրաստվում Թուրքիայի դեմ: Այս տեսակետին է նաև Զարարիա Սարկավազը<sup>179</sup>:

Այսպիսով, 1635-37 թթ. պատերազմը ցույց տվեց, որ Թուրքիան անկարող էր վերականգնել 1590 թ. պայմանագիրը: Միայն հաջողվեց որոշ ուղղում մտցնել 1555 թ. պայմանագրում: Նրա տարածքային նվաճումները Այսրկովկասում այդ ժամանակ արտահայտվեցին Վրաստանի սոսկ մի մասը անջատելու մեջ: Թուրքիան չէր հրաժարվում նոր պատերազմի գաղափարից, իսկ եթե 1637 թ. Իրանն առաջարկեց վերսկսել հաշտության բանակցությունները, Թուրքիան մերժեց:

1638 թ. սուլթան Մուրադը նոր արշավանք ձեռնարկեց Իրանի դեմ, այս անզամ հարվածն ուղղելով Բաղդադի վրա: Թուրքական բանակը նոյեմբերի 6-ին պաշարեց Բաղդադը: «Թուին ՈՉԵ Ապրելի ԻԸ նոյն սուլթան Մուրատն զնաց ի վերայ Բաղդատայ, և ի Նոյեմբերի Զ. եհաս ի Բաղդատ, և ծեծեաց զբերդն հզօր զ օրութեամբ ԼԸ օր և ի Դեկտեմբերի Դ էաո զբերդն»<sup>180</sup>:

<sup>178</sup> Տե՛ս Գրիգոր Դարանաղի, էջ 519:

<sup>179</sup> Տե՛ս Զարարիա Սարկավազ, հ. 2, էջ 6:

<sup>180</sup> Առաքել Դավթիմեցի, էջ 575:

Թուրքերը ունեին 120 հազարանոց բանակ, որից 30.000-ը բողեջին Բաղդադի պաշտպանության համար, իսկ մյուս մասով շարժվեցին առաջ և գրավեցին մի շարք իրանական քաղաքներ:

Այս պատերազմից Հայաստանի մեծ մասը գերծ մնաց: Արարատյան դաշտում և Երևանի կողմէրում գործող ջոկատները, հակահարվածի հանդիպելով, հեռանում են երգրում, իրենց հետ տանելով մեծ թվով գերիներ<sup>181</sup>:

Բաղդադը գրավելուց հետո թուրքական բանակը դադարեցրեց առաջիսաղացումը և սուլթան Մուրադը 1639 թ. հունվարին մեկնեց Կոստանդնուպոլիս: Այստեղ է ժամանում նաև Իրանի պատվիրակությունը և սկսվում են հաշտության բանակցությունները: Բանակցությունները երկար տևեցին, քանզի յուրաքանչյուրն իր պահանջներն ու հավակնություններն էր ներկայացնում: Հատ Դարանադցու, թուրքական կողմը պահանջում էր Երևանն ու Թավրիզը, իսկ Իրանը՝ Կարսը<sup>182</sup>:

Բաղդադի գրավումով Թուրքիան ձևականորեն համարվում էր հաղթող, բայց մի շարք հանգամանքներ նրան ստիպում էին պատերազմը դադարեցնել և հաշտության բանակցություններ սկսել:

Փաստորեն թուրք-իրանական այս վերջին պատերազմում հակամարտող կողմերից ոչ մեկը չհաղթեց և երկուսն էլ ստիպված դադարեցրին ուազմական գործողությունները: Վերսկսվեցին բանակցությունները, որոնք հանգեցրին դրական արդյունքների և երկու երկրների միջև 1639 թ. մայիսի 17-ին Դիարբեքիրում կայացավ նախնական համաձայնություն, այնուհետև Զոհարում,

<sup>181</sup> Տե՛ս Գրիգոր Դարանադցի, էջ 578–579:

<sup>182</sup> Տե՛ս Գրիգոր Դարանադցի, էջ 580:

Քասրե Շիրին կոչված վայրում կնքվեց հաշտություն, իսկ սեպտեմբերին Կոստանդնուպոլսում ստորագրվեց և վավերացվեց հաշտության պայմանագիրը:

Այս հաշտությունը կնքվեց 30 տարով և թուրք-իրանական հարաբերությունների պատմության մեջ նոր էտապի սկիզբը հանդիսացավ: Այդ հաշտությունը, ի տարբերություն մյուսների ավելի հաստատուն և երկարատև եղավ և պահպանվեց մինչև 1723 թվականը:

Կնքված պայմանագրով երկու կողմերի միջև անցկացված սահմանագիծը համեմատաբար ավելի մանրամասն ու որոշակի է տրված, քան նախորդ հաշտությունների ժամանակ անցկացված սահմանագծերը: Այս պայմանագրով Հայաստանը, Վրաստանը, Ատրպատականը և Իրաքը բաժանվեցին Թուրքիայի և Իրանի միջև, ընդ որում Բաղրադը անցավ Թուրքիային, իսկ Երևանը՝ Իրանին: 1639 թ. պայմանագիրն ամրապնդում էր Իրանի և Թուրքիայի տիրապետությունը նրանց կողմից նվաճված և բռնի կերպով Օսմանյան և Սեֆյան ֆեռդալական պետությունների կազմի մեջ մտցված ժողովուրդների, հատկապես այսրկովկասյան ժողովուրդների վրա: Այդ պայմանագիրը նշված երկրները բաժանում էր երկու մասի, բացառում նրանց բաղարական միավորումը և անհնար դարձնում ազգային զարգացումը<sup>183</sup>:

Այնուամենայնիվ այս պայմանագիրը մի բարերախսություն էր՝ մանավանդ հայ ժողովրդի համար: Դրանով վերջ տրվեց զրեթե անընդհատ տեղի ունեցող արյունահեղություններին ու ավերածություններին: Այս հաշտության մասին Զաքարիա Սարկա-

<sup>183</sup>Տե՛ս Նաջարյան Հ. Խ., նշվ. աշխ., էջ 267:

վազը նշում է. «Զի ի Կոստանդնուպոլսէ մինչ՝ ի Ասպահան երթ-նեկութիւն է առանց երկիրդի և ահու»<sup>184</sup>:

Պայմանագրի առթիվ իր գոհունակությունն է հայտնում նաև Առաքել Դավիթիծեցին. «Վասն որոյ ամենայն աշխարհը արևելեայք և արևմտեայք օրինեն և ողորմի տան երկուց թագաւորացն, զի կեան ի խաղաղութեան. զի նախքան զբարիշութիւնն ի փախստեան և ի թաքստեան կային, ի յափշտակութեան և յաւարառութեան, ի գերութեան և ի սպանութեան, ի սով և ի սուր, և մանաւանդ ողորմելի ազգս Հայոց»<sup>185</sup>:

Հակոբ Կարնեցին հաղորդում է, որ ըստ պայմանագրի՝ «...արար խաղաղութիւնն սուլթան Մուրադն ընդ Ղըզըլքաշին ուխտ և դաշին եղին, որ Երէվան Ղըզըլքաշին լինի և Պաղտատն օսմանցուն, այլ միմեանց թուր չքաշեն, վաճառականը և շինականք աներկիւդ գայցեն և գնայցեն. հօտք սոցա և նոցա այժմ խառնին ընդ միմեանս, զի Երէք տարին անզամ մի առաքէ շահն ընծայ ի Ստամբոլ»<sup>186</sup>:

Այս պատմիչներին կարելի է հասկանալ, քանզի տվյալ պայմաններում այդ խաղաղությունը իրոք հսկայական նշանակություն ուներ:

Խաղաղություն հաստատելուց հետո, Իրանում բուռն կերպով սկսեցին զարգանալ ֆեռդալական հարաբերությունները: Սկսեցին ավելանալ վակֆային հողատարածությունները: Երկրի քաղաքական դեկալարումը անցավ թյուրք քոչվոր վերնախավի ձեռքը: Վերելք էին ապրում քաղաքները, արհեստն ու առևտուրը:

<sup>184</sup> Զաքարիա Սարկավագ. հ. 2, էջ 26:

<sup>185</sup> Առաքել Դավիթիծեցի, էջ 575-576:

<sup>186</sup> Հակոբ Կարնեցի. Տեղեկագիր Վերին Հայոց. Վաղարշապատ, 1903, էջ 34:

Թավրիզում 1641 թ. տեղի է ունեցել ահավոր երկրաշարժ, որի մասին տեղեկություններ է հաղորդում Դավրիժեցին: Պատմիչը նշում է թե ինչպես Թավրիզում ու շրջակա գավառներում, հանկարծակի ու անսպասելի ահավոր երկրաշարժ եղավ, կործանվեցին ու տապալվեցին բոլոր շենքերը, ապարանքները, իշխանատները: Մեծ էր վնասը նաև Թավրիզի շրջակայքում: Ճեղվեց երկրի հաստաշերտ կեղևը: Աղետը պատահեց ձմռանը: Շատերը մնացին փլվածքների տակ և խեղղվեցին: Ըստ Դավրիժեցու, դա Աստծու պատիժն էր. «... մինչև ցանցանել բարկութեան Տեառն. քանզի յայտնի եղև բնակչաց աշխարհին, նաև ամենայն տիեզերաց, թէ ոչ էր այն ըստ կարզի սովորական շարժման, այլ յայտնի պատիժ պատուհասի բարկութեան Տեառն հասեալ էր ի վերայ նոցա ըստ նմանութեանն Նինուկացւոց»<sup>187</sup>:

Քաղաքի բնակիչները ուշի գալով, խնդրում են երկնավորից բարեգութ գտնվել: Աստված զթաց նրանց և ներեց, ինչպես հայրն ու մայրն են ներում զավակներին: Այս ամենի մասին պատմիչը նշում է. «Որովք յայտնեալ ցուցաւ ամենակարող օրութիւնն անմահ թագաւորութեան նորա, և գութ և ողորմութիւն մարդասէր կամաց նորա. վասն որոյ ամեներեան առհասարակ ի ձայն զոհութեան փառաւորեն զքաղցր տէրութիւն Աստուծոյն մերոյ, օրինելոյն ի բարձունս յաւիտեանս յաւիտենից. ամէն»<sup>188</sup>:

Եթե հայ պատմիչները XVII դարի առաջին քառորդը ներկայացնում են որպես Արևելյան Հայաստանի ավերման պատմություն, ապա նույն դարի երկրորդ և երրորդ քառորդները բնութագրում են որպես նրա նորոգման պատմություն: XVII դարի կեսե-

<sup>187</sup> Առաքել Դավրիժեցի, էջ 484:

<sup>188</sup> Նույն տեղում, էջ 485:

րին, ինչպես Կենտրոնական Իրանում, այնպես էլ Արևելյան Հայաստանում սերտ համագործակցություն կար հայ աշխարհիկ և հոգեոր կալվածատերերի ինչպես նաև ապրանքատերերի միջև։ Արարատյան դաշտի բերքը ավատատերերին վճարվող բնատուրքը՝ բամբակը, յուղը, պանիրը, ճրագուն, կաշին և այլն, արտահանվում էին Թավրիզի կողմերը։ Խակ Երևանում վաճառահանվում էին Թավրիզի արհեստագործության ապրանքները ու չոր մրգերը։

Ապրանքադրամական հարաբերությունների զարգացումը զարկ է տալիս պետական հարկերի և ֆեոդալական ռենտայի աճին, ծավալվում էր վաշխառությունը և տեղի էր ունենում զյուղի ու քաղաքի տնտեսական քայլայում։ XVII դարի վերջին քառորդում այս ամենը նկատելի են դարձնում Իրանի տնտեսական այն վայրէջքը, որն իր հերթին պատճառ է դառնում երկրի քաղաքական կյանքում հետզիետե նկատելի դարձող անկմանը։

Արտաքին շուկայի պահանջարկի նվազման հետևանքով մասնածագործությունը անկում էր ապրում՝ թէ՛ ծավալով, թէ՛ որակով։ XVII դարի վերջին այս երևոյթը մեծ վնաս էր հասցնում իրանահայ առևտրականներին ու միաժամանակ նվազեցնում պետության եկամուտները։

Քննարկվող ժամանակաշրջանում Իրանը համարվում էր կենտրոնացված միապետության, որի զլուխ կանգնած էին Սեֆյան շահերը։ Պետական գործերի անմիջական կառավարման համար շահը նշանակում էր զիսավոր վեզիրին ինչպես նաև մի շարք այլ բարձր պետական պաշտոնյաների, որոնք վարում էին կառավարման տարբեր բնագավառները։ Շահն էր նշանակում նաև զորքերի զիսավոր հրամանատարին։ Իրանի արքունիքում կային բազմաթիվ այլ պաշտոններ։ Մեծ վեզիրին պաշտոնանկ կարող էր անել

միայն շահը<sup>189</sup>: Մեծ վեզիրը սերտ կապի մեջ էր հոգևոր գերազույն առաջնորդի՝ սաղրի հետ: Այս փաստը ցայտուն կերպով արտացոլված է Դավրիմեցու աշխատության մեջ<sup>190</sup>:

Սաղրը լինելով կրոնական առաջնորդ ու հոգևոր բարձրագույն ատյանի պետ ծանրակշիռ դեր ուներ պետության կառավարման մեջ: Մեֆյանների օրոք սաղրի պաշտոնը փոփոխությունների է ենթարկվում, և շահ Թահմազի ժամանակներից սկսած այն վարում են երկու հոգևորականներ, որոնք կոչվում են «աղբե ամին», «սաղրե խասսե»<sup>191</sup>:

Առաքել Դավրիմեցին տվյալներ է հաղորդում դիվանբեկի կողմից Իրանի այլակրոն քնակիչների դատական հարցերի քննության վերաբերյալ: 1657թ. մի սպանության առիթով՝ հրեաների դատավարության ժամանակ դիվանբեկին ներկայանում է իրեն զիսավոր քննող ու վճռող անձ, որի կայացրած մահվան վճիռը նոր մահմեղականություն ընդունած հրեային սպանող երեք հրեաների նկատմամբ՝ անհապաղ ի կատար է ածվում<sup>192</sup>:

XVII դարի երկրորդ կեսին Մեֆյան պետությունը թևակոխեց քաղաքական ու տնտեսական անկման մի ժամանակաշրջան, որն արտահայտվեց նրա, արտաքին ու ներքին դրության վատթարացմամբ: Մեֆյան Իրանի թուլացման հիմնական պատճառներն են ֆեռոյալական ճնշման սաստկացումը, դասակարգային պայքարի սրումը և հպատակեցված ժողովուրդների դիմադրության աճը: Այդ գործընթացը առանձնապես արագ ընթացավ XVII դարի վերջին և XVIII դարի սկզբին: Կառավարող վերնախավի ներսում սրվել էր քաղաքական ու տնտեսական ճնշաժամբ:

<sup>189</sup> Առաքել Դավրիմեցի, էջ 648:

<sup>190</sup> Նույն տեղում, էջ 464:

<sup>191</sup> Դանելյան Լ. Գ., նշվ. աշխ., էջ 140:

<sup>192</sup> Տե՛ս Առաքել Դավրիմեցի, էջ 475-476:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### 1. ՍԵՅՅԱՆ ԻՐԱՆԻ ԹՈՒԼԱՅՄԱՆ ՈՒ ԱՆԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՍՄԲ

XVIII դարի սկզբին Սեֆյան պետությունը ծանր ճգնաժամի մեջ էր: Դրան զուգահեռ անկայուն դարձավ նաև քաղաքական կացությունը: Այս ամենի հիմնական պատճառը համարվում էր ֆեոդալական շահագործման սաստկացումը, հարկային քաղաքանությունը և դասակարգային հակասությունները: Նման պայմաններում կրծատվեցին արտաքին առևտրի ծավալները: Դեռևս շահ Սուլեյմանի օրոր (1666-1694 թթ.) արդեն նկատելի էր երկրի քաղաքական թուլացումը: Իսկ Սուլթան Հուսեյնը (1694-1722 թթ.) կտրուկ կերպով ավելացրեց հարկերը, որն էլ բացասաբար ազդեց զյուղատնտեսության և արտաքին առևտրի զարգացման վրա<sup>193</sup>:

XVII դարի վերջում և XVIII դարի սկզբին Իրանում տեղի ունեցող տնտեսական անկումը ուղեկցվում էր Սեֆյանների կենտրոնացված պետության քայլայմամբ: Կենտրոնն արդեն ի վիճակի չէր իր իշխանությունը պահպանել ծայրամասերի վրա: XVII-XVIII դարերի սահմանագծին իր տարածքով հսկայական Սեֆյան տերության մեջ իրար հետևից տեղի էին ունենում ապատամբություններ: Դրանցից ամենախոշորն ու նշանակալին, որի հետևանքով Սեֆյան տերությունը քայլայվեց, աֆղանական ցեղերի ապատամբությունն էր: Այն սկսվեց զիլզահ աֆղանական

<sup>193</sup> Քայլության Վ., Իրանի պատմություն, (Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2005, էջ 332:

ցեղի առաջնորդ Միր-Վեյսի գլխավորությամբ: 1709 թ. շարժումն ընթանում էր սուննիզմի դրոշի ներքո ընդդեմ շիա Իրանի: Ապստամբությանը հարեցին նաև աֆղանական մյուս ցեղերը և առհասարակ Սեֆյան տերության արևելյան ծայրամասերի բոլոր ժողովուրդներն ու ցեղերը: 1711 թ. Միր - Վեյսը իրեն հոչակեց անկախ կառավարիչ<sup>194</sup>: Նրա որդի Մահմուդը ութամսյա պաշարումից հետո զրավեց Սեֆյանների մայրաքաղաք Սպահանը: Շահ Հուսեյնը ստիպված էր հրաժարվել զահից հօգուտ Մահմուդի: Աֆղաններին հաջողվեց իրենց իշխանությունը տարածել Կենտրոնական Իրանի մեծագույն մասի վրա<sup>195</sup>:

Օգտվելով ստեղծված դրությունից Ռուսաստանն ու Թուրքիան ակտիվացրին իրենց նվաճողական քաղաքականությունը Իրանի նկատմամբ:

XVIII դարի առաջին քառորդում Իրանը իսկապես գտնվում էր տնտեսական ու քաղաքական կազմալուծված վիճակում: Աֆրիկան շրջանցող ծովային ճանապարհի յուրացումը ծանր հետևանքներ թողեց Իրանի տնտեսական կյանքի վրա: Արևմտյան Եվրոպայից Իրանի վրայով ձգվող ցամաքային տարանցիկ ուղին փոխեց իր ուղղությունը և անցավ ծովային ճանապարհով: Իրանը դուրս մնաց միջազգային աշխույժ առևտորի ոլորտից և մեկուսացավ: Նա զրկվեց առևտրական գործարքներից և պետական եկամուտներից:

Երկրի տնտեսական ճգնաժամին զուգայիպեց նաև քաղաքական կյանքի կազմալուծումը: Շահ Սուլթան Հուսեյնը Սեֆյան

<sup>194</sup>Տե՛ս Բայրության Վ., Խշվ. աշխ., էջ 123

<sup>195</sup>Գասպարյան Ա. Ա., Հայ-իրանական հարաբերությունները XVIII դարի 20-30-ական թվականներին. ՀՀ ԿԳՆ ԳՊՄԻ, Զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 2001, էջ 14-16:

հարստության ամենից ապիկար ու անձեռնհաս գահակալն էր: Ռուսական պատվիրակ Արտեմի Վոլխնսկին, որ 1715-1719 թթ. եղել է Իրանում և հանգամանորեն ուսումնասիրել Երկրի քաղաքական կյանքը, Պետրոս Մեծին ներկայացրած իր գեկուցագրում գրում է. «Այստեղ / Իրանում - Ա. Գ./ այնպիսի մի դեկավար է, որ ինքը ոչ թե հպատակների զիսին է կանգնած, այլ հպատակ է իր հպատակների մոտ, և հազվադեպ կարելի է գտնել նման մի հիմարի ո՛չ միայն թագակիրների, այլ նույնիսկ հպատակների մեջ: Այդ պատճառով ինքը ոչ մի գործի մեջ չի մտնում և ամեն ինչ վստահել է իր փոխանորդ Էհտիմա Դովլին, որն ամեն տեսակ անասունից էլ հիմար էն<sup>196</sup>:

Տեղերում փատական իշխանությունը գտնվում էր իսաների ձեռքում, որոնք օգտվելով կենտրոնացված իշխանության թուլացումից անխնա կեղերում էին ժողովրդին: Պետական պաշտոնյաները նշանակվում էին կաշառքով: Նման եղանակով էր նշանակվում անգամ խանը: Ցուրաքանչյուր պաշտոնյա ձգտում էր հարստահարել ժողովրդին և կորցել իր տված կաշառքի կրկնակին: Որպես կանոն պաշտոնյաները Երկար չէին կառավարում և դա նորանոր կաշառքի հնարավորություն էր ստեղծում:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի մասին կարենք տեղեկություններ է հայտնում Եսայի Հասան Զալայանը, որը բացահայտում է այդ հարստության անկման պատճառները: Ըստ պատմիչի այդ պետության հիմքերը խարիսուլ են և բնականաբար այն Երկար կյանք չէր կարող ունենալ. «Զի յայտնի իսկ է, գրուն է նա, - ամենեցուն այս, թէ տուն և կամ այլ շինուած ինչ մեծ թէ փոքր

<sup>196</sup> Ст. и Соловьев С.М., История России с древнейших времен, Москва, 1963, кн. IX, стр. 367.

յորժամ հզնացեալ վիանոց իցէ. նախ որմունք և հիմունք խախտեալ բաժանի և ապածեղուն տանեացն իշանէ. և զկսի այնորիկ ամենայն տանիքն ի վայր իշեալ կործանի. Այսպէս եղև և Թագաւորութիւն պարսիցէ<sup>197</sup>:

Վերջինիս հաղորդած տվյալները կարևոր են, որովհետև հեղինակը եղել է ոչ միայն ժամանակակից ու ականատես իր նկարագրած շատ իրադարձությունների, այլև գործուն մասնակցություն է ունեցել իր ժամանակի քաղաքական իրադարձություններին:

Եսայի պատմագիրն ատատորեն օգտվել է Առաքել Դավրի ժեցուց. «Ի գրոցն Առաքել վարդապետի ծաղկաբաղ արարեալ հաւաքեցաք»<sup>198</sup>:

Պատմիչը անդրադառնում է նաև ներքին ֆեոդալական երկպատակություններին, որոնք ել քուլացնում են Բրանի պետական հիմքերը:

Եսայի Հասան-Զալայյանը եղել է XVIII դարի հայ ականավոր ուազմա-քաղաքական և դիվանագիտական գործիչ: Լինելով Հայոց Արևելյան կողմանքի՝ Հայոց Աղվաննքի կաթողիկոս, նա ամբողջովին նվիրվել է ազգային - ազատազրական շարժմանը:

Պատմագիրը զիտակցելով պատմության դերն ու նշանակությունը, ժամանակակիցներին ու զալիք սերունդներին ներշնչել է հայրենասիրություն, ազգային արժանապատվություն և քաղաքական ինքնազիտակցություն:

Շահ Սուլթան Հուսեյնի մասին նա տալիս է արժանահավատ տեղեկություններ և XVIII դարում Բրանում ստեղծված նման

<sup>197</sup>Տե՛ս Եսայի Հասան - Զալայյան, էջ 22-23:

<sup>198</sup>Տե՛ս Եսայի Հասան - Զալայյան, էջ 16:

իրավիճակը բացատրում է Սուլթան Հուսեյն շահի վարած ներքին քաղաքականությամբ՝ հատկապես հարկային դաժան և կործանարար հետևանքներով, որի արդյունքը հանդիսացան աֆղանների ապստամբությունները: Եսային շատ լավ է զիտակցում Սուլթան Հուսեյն շահի վարած քաղաքականության ծանր հետևանքները և պատահական չեն, որ աշխատության այս գլուխը նա անվանել է «Յաղագս վրդովման և խանգարման թագաւորութեանն Պարսից», որտեղ նկարագրում է Իրանի ներքաղաքական կացությունը:

Պատմագիրը խոսում է նաև 1699 թվականի աշխարհագրի մասին և մանրամասն նկարագրում է դրա իրականացման միջոցառումները, որը տևեց ավելի քան չորս տարի (1699-1702 թթ.): Պատմիչը դաշնորեն նշում է. «Զայս ամենայն, զոր զրեցաք, նորահնար չարիք էր, զոր եղին ի վերայ առաջնոյ սահմանեալ հարկացն, որ և առաջինն ևս ծանրագոյն էր բեռն ի վերայ ժողովրդեան, այժմս փոխանակ թեթևացուցանելոյ, զայրան ևս յաւելին ի վերայէ<sup>199</sup>:

Եսայի պատմագիրը այնուհետև բացահայտում է Իրանի պետական համակարգում գոյություն ունեցող արատավոր բարքերը և ներկայացնում դրանց վնասակար հետևանքները երկրի ու ժողովրդի համար: Նշում է, որ ըստ ընդունված կարգի, եթք նշանակում էին պաշտոնյաներին.ապա միայն ծանր հանցանքների համար էր հնարավոր նրանց հեռացնել պաշտոններից. «Իսկ այժմս և այսու թագաւորաւս ո՞չ այսպէս այլ թագաւորն և նախարարք իւր կաշառակուր լեալ փոյթ ընդ փոյթ փոփոխեալ հանեին և ի միում ամի, Բ և Գ տեարս և իշխանս, ի միում քաղաքի և զաւարի

<sup>199</sup>Տե՛ս Եսայի Հասան - Զալալեան, էջ 16:

զկնի միմեանց առաքեին և նորա եկեալ որպէս և ինքեանք կաշա-  
որ ստացեալ էին զիշխանութիւնս իւրեանց, նոյնպէս և նորա  
այնպէս ամենայն գդատ և զիրաւունս ժողովրդեան ի բաց եղեալ  
կեղերեին, կողոպտէին զինազանգեալս իւեանց...»<sup>200</sup>:

Նման տեղեկությունների մենք հանդիպում ենք նաև Առաքել  
Դավրիմեցու աշխատության մեջ, իսկ Եսայի պատմիչը ուղղակի  
վավերացնում է այդ փաստերի առկայությունը: Պատմագիրը իրա-  
կանությունից բխող և իրականությանը համապատասխանող  
միանգամայն ճիշտ եզրահանգումներ է անում:

Ընդհանրապէս նա ատելությամբ է խոսում իրանական զին-  
վորների մասին և նրանց պատերազմներում կրած պարտութ-  
յունների պատճառը համարում է այն, որ նրանք թուլամորթ և կա-  
նացի ազգ են և ամբողջ զիշերն անցկացնում են խնջույքներում,  
իսկ առավոտյան խոր քուն են մտնում. «Ըստ սովորութեան ի-  
րեանց՝ զոր ի զիշերի մինչև ցառաւոտ խնձոյիք արքենան և յա-  
ռաւուուուն ընդ խոր քնովք անկանին որպէս զշունսէ»<sup>201</sup>:

Լինելով ակտիվ հասարակական քաղաքական գործից, Եսայի  
Հասան Զալալյանը խիստ կարևորում է միջազգային հարաբերութ-  
յունները և աշխատության մեջ զզալի տեղ է հատկացնում այդ  
բնագավառին: Նկարագրելով հայ-վրացական և հայ-ռուսական  
հարաբերությունների մերձեցումը, պատմիչը կանգ է առնում Ի-  
րանի ցուցաբերած դիրքորոշմանը այս հարցում: Շահ Թահիմազ Բ-  
ն անհանգստացած ռուս-վրացական հարաբերությունների ըն-  
թացքից, վրաց թագավոր Վախթանգին մեղադրեց պետական դա-  
վաճանության մեջ և 1722 թ. նրան գրկեց Քարթլիի վալիի ու իրա-

<sup>200</sup> Նույն տեղում, էջ 22-23:

<sup>201</sup> Նույն տեղում, էջ 42-43:

նական գորահրամանատարի իրավունքներից: Շահն այդ պաշտոնները հանձնեց նրա հակառակորդին՝ Կախեթի Կոստանդին թագավորին,որին հանձնարարվեց նաև Երևանի, Գանձակի ու Ղարաբաղի խանությունները: 1722 թ. վերջերից զինաբանման մեջ մտնելով Վախթանգ թագավորի հետ, 1723 թ. մայիսին Մուհամադկուլի խանը գրավեց Թիֆլիսը և քաղաքի դրույթը լայնորեն բացեց օգնության հրավիրված լեզգի ավարառուների առջև<sup>202</sup>: Վախթանգը ստիպված էր անցնել Ռուսաստան:

Երկարատև չեղավ նաև Կոստանդինի իշխանությունը: Թուրք նվաճողները շտապեցին քաղաքից վտարել Վախթանգին գորավիզ դարձած Թիֆլիսի հայ «քաղաքամարտիկ գորականներինե. «...որք զիոնիս և զորդիս, զինչս և զանձինս եղեալ էին ի վերայ նորա (Վախթանգի - Ա. Գ.) յօժար սրտիւէ<sup>203</sup>: Մուհամադկուլի խանը հավատարիմ մնալով պարսկական կողմնորոշմանը, հետամուտ եղավ հակաթուրքական ուժերի համախմբմանը<sup>204</sup>:

Նման պայմաններում փլուզվեց հայ-վրացական այն զինակցությունը, որը նպատակ էր հետապնդում ստեղծել հայ-վրացական թագավորություն: Հայերն ընկան մեկուսացման օդակի մեջ: Սակայն այդ վիճակում անզամ նրանք լարում էին իրենց ամբողջ ուժերը՝ երկրի ինքնապաշտպանությունը ապահովելու համար:

Ռուսական արքունիքը անզամ ձգտում էր կապվել Միքամբույժի հետ, պատրաստակամություն հայտնելով Իրանի զա-

<sup>202</sup>Տե՛ս Եսայի Հասան-Զալալյան, էջ 54:

<sup>203</sup>Նոյն տեղում, էջ 53:

<sup>204</sup>Տե՛ս «Ժամանակագրություն Պետրոս դի Սարգիս Գիլանենցի», Կոունկ Թիֆլիս, 1863, էջ 200:

հակալ ճանաչելու նրան, եթե միայն իրաժարվեր Թուրքիայի հետ դաշնակցելու մտադրությունից<sup>205</sup>:

Սեֆյան տերությունը գնալով ավելի ու ավելի էր թուլանոս: Աֆղանները օգտվելով ստեղծված ծանր վիճակից անցան հարձակման և ուղղություն վերցրեցին դեպի Սպահան: Քաղաքից 25կմ արևելք գտնվող Գյուլնաբադ զուտի մոտ տեղի ունեցած ճակատամարտը ճակատազրական եղավ Սեֆյանների համար: Իրանական զորքը պարտություն կրեց: Շահն անձնատուր եղավ աֆղանների առաջնորդ Միր Մահմուտին և թագն անձամբ հանձնեց նրան: Բայց բնակչությունը բուտն կերպով դիմադրում էր նվաճողներին:

Շահ Սուլթան Հուսեյնի որդին՝ Թահմազը, որ մայրաքաղաքի պաշարման օրերին կարողացել էր փախչել երկրի հյուսիսային նահանգները, իրեն շահ հայտարարելով, կոչ էր անում ժողովրդին համախմբվելու իր շուրջը՝ շարունակելու պայքարը օտար նվաճողների դեմ<sup>206</sup>:

Շահ Թահմազի մասին մեզ տեղեկություններ է հաղորդում Աբրահամ Երևանցին, որը «Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուիե» աշխատության մեջ անդրադառնում է աֆղանահրանական, աֆղան-թուրքական և իրանա-թուրքական հարաբերություններին:

Պատմազիրը մինչև անգամ մեզ տեղեկացնում է, որ Սյունիքի և Արցախի ազատագրական շարժման առաջնորդները կարգավորել են հարաբերությունները շահ Թահմազի հետ և անգամ Դավիթ Բեկը շահից ստացել է լայն լիազորություններ: Այս փաս-

<sup>205</sup> Տե՛ս Եստկով Պ. Ղ., Մամերսալы для новоу истории Кавказа с 1722 по 1803 гг. ч II, СПБ 1869, стр. 44.

<sup>206</sup> Հայոց պատմություն, հ. III, Երևան, 2010, էջ 53:

տր հաստատում է նաև «Պատմութիւն Ղափանցւոց» աշխատության մեջ բերված շահ Թահմազ Բ-ի հրովարտակը ուղղված Դավիթ Բեկին. «Շահթահմազ արքայ Պարսից՝ առ քաջդ Դաւիթ ՊԵԿ, և առ քաջ զօրաւարս Հայոց՝ որք ընդ քեզ են, ողջոյն: Ի բազմաց բազում անգամ ազդ եղեւ մեզ՝ զքաջութեանց քոց, բայց արդ իբր ականատես իսկ եղեալ մեր զգերոց մեծամեծ քաջութեանց՝ որ ընդդեմ թշնամեացն մերոց, ահա՝ արդ կացուցի զքեզ իշխան եւ զլուխ ամենայն իշխանաց մերոց, որք են ի կողմանսդ յայդոսիկ, եւ երկիրդ Ղափան՝ զոր կալար քաջութեամբ, քեզ լիցի. բայց դու ելցես, եւ ժողովեսցես առ քեզ զամենայն զօրս, եւ զլանս ի կողմանցդ յայդոցիկ, եւ ի բաց հանցես զօմանցին ի սահմանաց քոց»<sup>207:</sup>

Ըսդհանուր թշնամու դեմ համատեղ պայքարի անհրաժեշտությունը ստիպել է Իրանի շահին ոչ միայն ճանաչելու Դավիթ Բեկի իշխանությունը, այլև նրան նշանակել է կուսակալ:

Աբրահամ Երևանցին Սեֆյան հարստության անկման պատճառը համարում է աֆղանների ապստամբությունը, որի նկարագրումով կ սկսում է իր պատմությունը. «Հրայման ետ զօրքին՝ մոտան ի քաղաքն, սուր քաշեց, յամեներեան մեծացմեծ եւ իշխանք ըմբռնեց, շահ Յուսէն ըսպանեցին ե (=5) որդին, մին որդի թարուցեալ էր եւ փախեալ»<sup>208:</sup>

Պատմագիրը կանգ է առնում նաև քաղաքների ու բերդերի պաշարման վրա, նկարագրում է զորքերի մարտական ուղին և մեկնաբանում շահ Թահմազի հաղթանակների պատճառները: Այստեղ նա կարևորում է երկու կարևոր հանգամանք նախ՝ նշում

<sup>207</sup> «Պատմութիւն Ղափանցւոց», էջ 173-174:

<sup>208</sup> Աբրահամ Երևանցի, էջ 21:

Է շահի ուազմավարական բարձր մարտավարությունը և երկրորդ՝ թշնամիների անմիաբանությունը: Երևանցին պատերազմների պատմության պատմագիր է և դա է նրա՝ իբրև պատմագրի առանձնահատկությունը: Նա նկարագրում է Բաղդադի 9-ամսյա պաշարումը և թուրքերի պարտությունը Օսման փաշայի զլիավորությամբ: Երևանցին գոհունակությամբ նշում է, թե ինչպես թուրքական բանակը, որը մեծ գերակշռություն ուներ, Մծնկերտի մոտ զլսովին ջախջախվել է, իսկ Աբդուլլա փաշան բռնվել ու սպանվել:

Պատմագիրը նշում է, թե ինչպես Բաղդադի վրա արշավելու ժամանակ օսմանցիք փակել էին միակ ճանապարհը և շահ Թահմազը զիշերով աննկատ 48000 հեծելազորով և 6000 հետևակով անցել է անանցանելի լեռան վրայով. «Երբ որ զիշերի կէս եղավ, հրայման ետ զօրքին իւր բօվանդակ, ձիայորն ոտովացուց, ամէն մարդ իւր ձին յետնէն քաշէ« ճանհայպարօն չըզնայ, ես լեռ սարովս ինքն խանն յառաջ գնաց, այսչաք զօրքն իւր յետնէն գնացին ես լեռիս զլսովին անցան, ես զիշերան կէտուն, գնաց մտան օսմացու հողն...»<sup>209</sup>:

Աբրահամ Երևանցին նշում է, որ թուրքերը համար դիմադրություն են ցույց տվել պարսիկներին, բայց վերջիններս խիզախորեն շարժվել են առաջ: Զանգանու վարարած գետի վրայով անցնելուց առաջ Թահմազը դիմելով զորքին ասել է. «Ով որ զիս կուզայ ջուրն թաքի, ձիով անցնիի»<sup>210</sup>:

Սկզբում ջուրն անցավ Թահմազը, իսկ այնուհետև զորքը, իսկ վերջում պարանների օգնությամբ անցկացրեցին հետևակն ու թնդանորները:

<sup>209</sup> Աբրահամ Երևանցի, էջ 68-69:

<sup>210</sup> Կոյս տեղում, էջ 69:

Ոգեշնչված հաղթանակներով Թահմազը շարժվեց Սպահան և տիրացավ հոր գահին:

Միաժամանակ շահը Ռուսաստանից նույնպես պահանջել է վերադարձնել Գիլյանը, բայց մերժում է ստացել: Մուկվան պատճառաբանում է, որ դրա վրա ինքը շատ զումարներ է ծախսել և կվերադարձնի, եթե Իրանը փոխհատուցի այդ զումարները: Աբրահամ Երևանցին ընդգծում է, որ շահը համաձայնել է այդ ամենին և դրանից հետո կարգավորվել են ռուս-իրանական հարաբերությունները:

Ականատեսի մանրամասնությամբ պատմագիրը նկարագրում է Հայաստանում և Իրանում տեղի ունեցող իրադարձությունները: Հատկապես մեծ տեղ է հատկացնում ռազմական գործողություններին: Ցույց տալու համար թե ինչպիսի մանրամասնությամբ է Երևանցին նկարագրում ռազմաերթերը և մարտական ուժերը բերենք մեկ օրինակ: Օսմանյան մեծաքանակ բանակը Ահմադ փաշայի հրամանատարությամբ շարժվում է դեպի Համադան, «... եկին հասին Սայինայ, Սայնու յետ վեր կացի, զնացին Քանդայվար, Քանդայվարու զնացին Սուշբուլախ, որ մին յախբուր այն նորայ դրս եկել քանզի շատ ջուր այ դրս զալիս էս յախբուրէ վերաս»<sup>211</sup>: Եվ այսպես շարունակ:

Աբրահամ Երևանցին Թահմազովի խանի /Նադիրի - Ա. Գ./ ծավալած ռազմական գործողությունների նկարագրությունն սկսում է նրա՝ Շիրազում աֆղանների դեմ մղած մարտերով, առանց սակայն նրա մասին որևէ տեղեկություն հայտնելու: Միայն նշում է, թե երբ շահ Թահմազը իմացել է Թահմազովի խանի Սպահան զալու մասին. «Մարդ դրկեց Թահմազին թէ

<sup>211</sup> Աբրահամ Երևանցի. էջ 46:

«Լոնե /Զորքը - Ա. Գ./ Բախտիարին զօրայցել այ, մեր գեղերն մեր գերայվարում այ գնաս նորա վերայէ<sup>212</sup>: Խանը կատարում է շահի հրամանը, թշնամին պարտվում է .«....շահն յուրախացավ եւ խնդաց, որկեց Թահմազին լավ պատվայկան ըսգեստ հայգ-ձուձէ<sup>213</sup>:

Չահ Թահմազ Բ-ի միջազգային բաղաքականության վերաբերյալ արժանահավատ տվյալներ է հաղորդում Եղիա Կարնեցին, որը 1724 թ. զիսավորել է իրանական պատվիրակությունը դեպի Եվրոպական երկրներ<sup>214</sup>:

Պատվիրակության նպատակն էր շահ Թահմազի օրոք արձակված իրովատակները հանձնել ավստրիական Կարլոս VI կայսրին, Լյուդովիկոս XV թագավորին և Խննովկենտիոս պապին: Եղիա Կարնեցին մտադիր էր լինել նաև Պետքբուրգում: Նրա Ռուսաստան մեկնելու շարժառիթը, սակայն միանգամայն այլ էր, նա հանդիպել է Պետրոս Մեծին, զադոնի բանակցություններ էր վարել նրա հետ և խնդրել է արազացնել հայ ժողովրդին իրանաբուրքական արյունոտ լծից ազատազրելու գործընթացը: Սակայն ֆրանսիական հետախուզության ջանքերով, նրան զրպարտում են իրքն իրանական գործակալ և ձերքակալում են: Ռուսական իշխանությունները նրան 12 տարի պահում են բանտում և հետո արսորում: Սակայն երբ համոզվում են, որ Եղիան զրպարտության զոհ է, արդարացնում են և ազատում բանտից:

Ձերքակալության ժամանակ, նրանից բռնազրավել են նրա վարած զրագրությունների 60-ից ավելի թղթապանակները, որը

<sup>212</sup> Նոյն տեղում, էջ 53:

<sup>213</sup> Նոյն տեղում, էջ 53:

<sup>214</sup>Տե՛ս Եղիա Կարնեցու Դիվանը, Նյութեր Սերձավոր Արևելքի և Անդրկովկասի պատմության, Երևան, 1968, էջ V:

հետո հանձնում են արտաքին գործերի պետական կողեզիայի արխիվ: Նման ճանապարհով մեզ է հասել Եղիա Կարնեցու գրագրությունը, որը պատմական բացառիկ արժեք է ներկայացնում Մերձավոր Արևելքի և Այսրկովկասի պատմության ուսումնասիրության համար:

Նշված նամակները պարունակում են արժեքավոր տեղեկություններ Մերձավոր Արևելքի քաղաքական, տնտեսական ու հասարակական կյանքի պատմության ուսումնասիրման համար և արժանի են հատուկ ուշադրության:

Նրա թողած տեղեկությունների մեջ մասը վերաբերում են Իրանի, Իրաքի, Վրաստանի, Հայաստանի, Թուրքիայի, Դաղստանի և Հնդկաստանի պատմությանը: Կարնեցին նամակներ է ստացել Սպահանից, Պոլսից, Հալեպից, Կարինից և այլ վայրերից ու պատասխանել է դրանց: Եղիա Կարնեցու հետ նամակագրական կապեր է ունեցել Իրանի արքունի Էհտիմա Դովլա Նազին, Միր Ազիզ Սուլթան խանը, Պոլսի ֆրանսիական դեսպան Մարկիզ դը Բոնակը և այլք: Նրա նամակներում արժանահավատ տեղեկություններ ենք գտնում իրանական արքունիքում տեղի ունեցող փոփոխությունների, Այսրկովկասի ժողովուրդների ազատազրական շարժումների, ռուս-իրանական դիվանագիտական հարաբերությունների և այլ ուշագրավ ոլորտների մասին: Եղիայի վավերագրերում միջանկյալ տեղեկություններ կան հայկական զաղթօջախների վերաբերյալ: Առևտրական հաշվեմատյանները հարուստ փաստական նյութ են պարունակում Մերձավոր Արևելքի և հարևան երկրների տնտեսական կյանքի պատմության մասին<sup>215</sup>:

<sup>215</sup> Եղիա Կարնեցի, Աշվ. աշխ., էջ XXXV:

Սովորաբար Սեֆյան շահերը վարպետորեն օգտագործում էին իրանահայ վաճառականների առևտրական լայն կապերը օտարերկրյա պետությունների հետ ոչ միայն առևտրական, այլև քաղաքական նպատակներով։ Առևտրական գործերով հայ վաճառականներին ուղարկելով Եվրոպա, Սեֆյան կառավարությունը նրանց տալիս էր դիվանագիտական բնույթի հանձնարարություններ։ Հայ խոշաները հատկապես գործուն մասնակցություն էին ցուցաբերում իրանա-Եվրոպական քանակցություններում հակառարքական ռազմական դաշնք կարելու. Իրանի առևտրի ուղին թուրքական Ճանապարհից դեպի Պարսից ծոց թերելու, ինչպես նաև Եվրոպական երկրների հետ առևտրական պայմանագրեր կնքելու հարցերում։

XVIII դարի սկզբից Իրանի տնտեսական անկմանը գուգընթաց իրանահայության նվիճակը սկսում է վատթարանալ։ Պետության եկամուտների կրծատումը ստիպում է Սեֆյան կառավարությանը ուժեղացնել հարկապահանջությունը և առհասարակ տնտեսական ճնշումը։

Հատկապես ծանր հարկեր էին դրվում Նոր Ջուղայի վրա, որին գալիս է լրացնելու դավանակինության քաղաքականությունը։ Ամեննեին էլ պատահական չէր, որ հայության արտազադը ավելի ու ավելի համատարած բնույթ էր կրում։ Նոր Ջուղան դատարկվում ու անշրջանում էր։

Անուրանալի է Նոր Ջուղայի դերը իրանահայության թե տնտեսական, թե քաղաքական կյանքում<sup>216</sup>։

Իրանի հայ գաղթօջախները իրենց քազմադարյա գոյության ընթացքում ստեղծել են ուշագրավ մշակութային արժեքներ։ Միա-

<sup>216</sup> Բայրության Վ. Ա., Խշկ. աշխ., էջ 274։

ժամանակ բարերար ազդեցություն կրելով իրանական հարուստ մշակույթից և իր հերթին ազդելով նրա վրա, հայ վարպետները հայկական ու տեղական մշակույթների համադրությամբ ստեղծել են ինքնատիպ և իր տեսակի մեջ անկրկնելի մի մշակույթ, որն իր տեսակի մեջ արժանի է հատուկ ուշադրության:

Ամենայն իրավամբ Խաչատուր Զուղայեցին խոսելով ջուղայեցիների ստեղծարար աշխատանքի մասին գրում է. «Ըստ որոց և զՃին Զուղայի բնակիչսն վարեալ եքեր ի յԱսպահան, և ետ տեղի բնակութեան ի Զուղայեցիք հրաշալի յօրինուածովք, և բարձրաբերձ և գեղեցկազարդ շինուածովք, և ոսկենկար և զանազան երփնափայլ երանգոց վայելչութեամբք զտունս և զյարկս բնակութեան իրեանց ըստ որում և զորոց պայշառութեանց ի տեսողաց գերահոչակ խոկ է արդեօք»<sup>217</sup>:

---

<sup>217</sup> Խաչատուր Զուղայեցի. էջ 102:

## 2. XVIII ԴԱՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԻՉՆԵՐԸ ՆԱԴԻՌ ՇԱՀԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ (1736-1747ԹԹ.)

XVIII դարի առաջին քառորդում Իրանի թե՛ ներքին, թե՛ արտաքին դրությունը շարունակում էր մնալ չափազանց ծանր: Անհրաժեշտ էր իրականացնել կտրուկ միջոցառումներ՝ երկիրը անխուսափելի կործանումից փրկելու համար: Նման առաքելությունը վերապահված էր Նադիր շահին: Իրանի պատմության մեջ սկսվում է մի նոր ժամանակաշրջան՝ Նադիր շահի ժամանակաշրջանը, որը Իրանի պատմության բուռն իրադարձությունների ու վերելքի մի ժամանակահատված էր:

Դեռևս աֆղանա-իրանական պայքարի եռուն շրջանում Նադիրը միացել էր Թահմազ Բ-ին և իր ունակությունների շնորհիվ մեծ հեղինակություն էր ձեռք բերել: Նադիրը ծագում էր թյուրքական աֆշար ցեղից: Ծնվել է 1688 թվականին: Փորրուց մոր հետ միասին տարագրվել է ստրկության՝ Խորեզմ, որտեղից փախել և վերադարձել է Խորասան: Նա հավաքագրել է ջոկատներ և անցել ծառայության շահ Թահմազի մոտ ու վերջինս էլ նրան նշանակեց Խորասանի կառավարիչ: Ժամանակի ընթացքում Նադիրը իր ազդեցության տակ գցեց շահին և ամրապնդեց իր դիրքերը ամբողջ Խորասանում: Այս մասին Զուղայեցին գրում է. «Խոկ զայսու ժամանակաւ և Նատըր Ղուլին զրոնավորական իշխանութիւն իւր ի գործ արկեալ էր ի սահմանս Խորասանայ. ո՛չ ընդ իշխանութեամբ աղուանից մտանէր, և ո՛չ քագաւորին, որով և զարհուրելի և սարսափելի իմն էր լեալ արդեօք բոլոր տեսողաց՝ և լսողաց»<sup>218</sup>:

<sup>218</sup> Խաչատուր Զուղայեցի, էջ 247-248:

Նադիրն ընդունեց Թահմազգովի խան անունը և բոլոր մարդերի կառավարումը կենտրոնացրեց իր ձեռքը: Նադիրի հաջողությունները անհանգստացրեցին աֆղաններին, որոնք 30 հազար զորքով հարձակվեցին Խորասանի վրա: Նադիրը զիսովին ջախչախեց նրանց: Հետապնդելով նահանջող աֆղաններին Նադիրը մոտեցավ Սպահանին: Աֆղանները ստիպված հեռացան մայրաքաղաքից: Նադիրը հանդիսավոր մտավ քաղաք և ամրապնդեց Թահմազի իշխանությունը: Իրանը լիովին ազատազրվեց աֆղաններից: Այնուհետև 1730 թ. Նադիրը օգտվելով օսմանյան արքունիքում սկսված զահակալական պայքարից, թուրքերից ազատազրեց Համադանը, Քերմանշահը, Արդեքիլը և Թավրիզը<sup>219</sup>.

Թուրքերի դեմ մղած ճակատամարտում Թահմազը ծանր պարտություն կրեց և հազիվ փրկվեց գերի ընկնելուց: 1731 թ. շահը կնքեց թուրքերի հետ հաշտություն, որով վերջինս պահպանում էր իր իշխանությունը Արարսի հյուսիսային մասում գրաված տարածքներում: Միաժամանակ Թուրքիան ստացավ 9 մարզ Քերմանշահից: Նադիրն այս պայմանագիրը համարեց ամոթալի և շճանաչեց այն: Նա գումարեց դուռությայ (ավագանու ժողով) և հասավ այն բանին, որ շահ Թահմազը հրաժարական տվեց և նրա փոխարեն շահ հոչակվեց որդին՝ Արա Գ-ն (1732-1736 թթ.): «Այլ հաճեցաւ նախ ընտրել զվեցամսեայ մանուկն Արա՝ որդին Թամազայ ի վերայ պարսից թագաւոր»<sup>220</sup>:

Նադիրը փաստորեն ամբողջ իշխանությունը վերցրեց իր ձեռքը և դարձավ երկրի ինքնիշխան տէրը: Թազավորական զահի

<sup>219</sup> Զուլայյան Մ., Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դարերում, Երևան, 1980, էջ 101:

<sup>220</sup> Խաչատոր Զուլայյեցի, էջ 252:

նկատմամբ ցուցաբերած խորամանկ «անտարբերությունը» մեծ չափով բարձրացնում էր Նադիրի հեղինակությունը: Նրա մեջ զուգորդված էին խորամանկ քաղաքագետն ու մարտերում կոփված ռազմագետ գորավարը: Ճիշտ գնահատելով ստեղծված քաղաքական իրավիճակը, նա ամենայն վճռականությամբ հավաքագրում էր բոլոր զինական ուժերը՝ հակահարված տալու Իրան ներիուժած թուրքական գորքերին:

1732 թ. Նադիրը ռուսների հետ կնքեց պայմանագիր, ըստ որի ռուսական գորքերն անմիջապես պետք է հեռանային Իրանի մերձկասպյան նահանգներից<sup>221</sup>:

Դրանով Նադիրը հնարավորություն է ստանում ամբողջ ուժերը կենտրոնացնել Իրաքում և Այսրկովկասում հաստատված թուրքական գորքերի դեմ:

Տեղեկանալով Նադիրի նախապատրաստությունների մասին, սուլթան Մահմուդը գորքեր ուղարկեց Կովկաս: Նադիրն արդեն հասցրել էր Թավրիզի ու Արդեբիլի վրայով մտնել Շիրվան, գրավել Շամախին ու պաշարել Գանձակի բերդը:

Վճռական ճակատամարտը Նադիրի ու Աբդուլլա փաշայի գորարանակների միջև տեղի ունեցավ 1735 թ. հուլիս 8-ին, Երևանից ոչ շատ հեռու գտնվող Եղվարդ գյուղի մոտ (Մուրադ-Թափա անունով բլրի մոտ) և, չնայած թվական բացարձակ գերակշռությանը, թուրքերն այսուեղ ջախչախիչ պարտություն կրեցին և անկանոն ու խուճապահար նահանջեցին: Այս ճակատամարտում փայլեց Նադիրի ռազմական տաղանդը: Թուրքերի դեմ նա օգտա-

<sup>221</sup> Բայրության Վ., Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011, էջ 340-341:

գործեց իր սովորական մարտաեղանակը՝ հարձակվել որքան կարելի է մեծ արագությամբ և հանկարծակի բերել թշնամուն:

Իրանական զորքերը տարան փայլուն հաղթանակ: Սպանվեց նաև թուրքական բանակի զիսավոր հրամանատար Քյոփիրյուլու Աբդուլլա փաշան:

Կրետացին նշում է. «Զի այնմ վայրի և ի նոյն տեղի, որում ժԵ/15/ ամա յառաջ Գ/3/ զօրավոլում Յ/300/ արամբքն զԺԲՌ/12000/ պարսիկս կոտորեցին, և արեան ճապաղի դիաթաւալ ընդ երեսս դաշտին զգէշս մարդկան արկին կերակուր լինել զազանց և թռչնց, նոյնգունակ զտրիտուրն փոխարինաց հատոյց ամենակարողն»<sup>222</sup>:

Ականատես պատմիչն հավելում է, որ սպանված օսմանցիների թիվը հասել է 40 հազարի. «Որ և յետ կոտորածին հանդէս արար և ետ ի թիւ արկանել զսպանեալսն: Եւ գտին ԽՌ (40000) դի ի յօսմանցոց»<sup>223</sup>:

Պատմիչը միաժամանակ մանրակրկիտ տեղեկություններ է հաղորդում Եղվարդի ճակատամարտի մասին: Թուրքերը վստահ, որ իրենց ուժերը գերակշռում են, անցան հարձակման. «Եւ զինի թօփերաց հեծեալքն, և ի միջի իրեանց՝ սէրասքէր Ապտուլահ փաշեն, և Սարու Մուստաֆայ փաշայն, և Թէմուրն, և Փօլատն այլն՝ Քոռ չաւուշն, որ և պարծեցեալ էր ի նոյն զիշերին, եթէ «Ի՞նչ պիտի լինին պարսիկքն, զի առ ոսս հեծելազօրացն իմոց տամ առաթուր կոխել զնոսա»<sup>224</sup>:

<sup>222</sup> Աբրահամ Կրետացի, էջ 57-58:

<sup>223</sup> Նույն տեղում, էջ 61:

<sup>224</sup> Նույն տեղում, էջ 58:

Հունիսի 8-ի 133կիրակի օրը սկսվեց այդ նշանավոր ճակատամարտը. «Օսմանցին 5(2) կամ 133 զ (3) թօփ միայն կարացին ձգել, իսկ պարսից կողմն՝ թուփ, թէՅ (300) (այլ աւելի թօփ ձգեցին, և զամաքարակներն՝ զամենայն և ձեռաց թֆանկնե՞ն՝ բազում»<sup>225</sup>:

Թուրքերն իսկապես այնպես էին թուլացել, որ չեն կարողանում անգամ ձեռքները շարժել, որպեսզի պաշտպանվեն. «Որք և ձեռք անգամ ոչ կարէին վերացուցանել, որպէս թէ կապեալ էին առաջի սպանողաց»<sup>226</sup>:

Պատերազմող կողմերի համար հայ ժողովրդի դիրքորոշումն ուներ կարևոր նշանակություն՝<sup>227</sup>:

Նկարագրելով Եղվարդի ճակատամարտը և իրանական զորքերի հաղթանակը, Կրետացին գրում է, որ ինքը դրանից երեք օր հետո եղել է ճակատամարտի դաշտում և իր աչքերով տեսել թուրքերի ողբերգական վիճակը:

Ու այս ամենը կատարվեց Նադիր-դուլու /Ճրաշըների ստրոկ/ շնորհիվ: Փաստորեն հասարակ ուղղապահը և ավագակապետը դարձավ մեծ հեղինակության տեր անձնավորություն: 1736 թ. ավարտվեց Իրանի քաղաքական միավորումը, քայլ երկրի տնտեսությունը դեռ շարունակում էր մնալ ծանր դրության մեջ: Նադիրը պարզորոշ տեսնում էր, որ Սեֆյանները կորցրել են ոչ միայն իրական իշխանությունը, այլև իրենց հեղինակությունը վերնախավում: Նա որոշեց հարմար պահն օգտագործել իրանական զահը գրավելու համար:

<sup>225</sup> Նույն տեղում, էջ 59:

<sup>226</sup> Արքահամ Կրետացի, էջ 61:

<sup>227</sup> Կոստիլյան Ք., Թահմասյ Ա-ի հայերին ուղղված հրովարտակները և 1730-1731 թթ. նրա արշավանքը դեպի Երևան, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIII, Երևան, 2004, էջ 356-371:

1735 թ. նոյեմբերին Նադիրն իր քանակով շարժվեց Մուղան: Այստեղից նա հրավերներ ուղարկեց երկրի բոլոր նահանգների կառավարիչներին և ավագանուն հավաքվելու՝ կարևոր խորհրդակցության: Հրավիրվածների շարում էր նաև հայոց կաթողիկոս Աբրահամ Կրետացին: Հաջորդ տարվա գարնանն արդեն այստեղ էր հավաքվել Իրանի աշխարհիկ ու հոգևոր, մուսուլման և այլաղավան ավատատիրության վերնախավը: Նադիրը կոչ արեց ընտրել նոր շահ, քանզի Աբաս Գ-ն երեխա է, իսկ ինքը հոգնել է և ցանկանում է զնալ հանգստի: Իհարկե, բոլորը հիանալի հասկանում էին, որ դա ձևական բնույթ է կրում: Ժողովը շիամածայնեց այդ ամենի հետ և երկար ժամանակ համոզում էին Նադիրին համաձայնելու դառնալ շահ: Ավագանու ժողովը զահի միակ արժանի թեկնածու ճանաչեց երկիրն օտար նվաճողներից ազատազրող Նադիրին: Գարնանամուտին, իրանական ավանդական ամանորին, Մուղանում տեղի ունեցավ Նադիրի թագադրությունը:

Օտար աղբյուրները նշում են, որ Աբրահամ Կրետացին է թագադրության ժամանակ կապել Նադիրի սուլթանը<sup>228</sup>:

Կաթողիկոս պատմագիրն իր հիշատակարանում զգալի տեղ է հատկացրել Մուղանում Նադիրի թագադրման նկարագրմանը: Կրետացին, որպես ականատես մանրամասն նկարագրում է Մուղանի ճամբարը, հանդիսավոր արարողությունները: Պատահական չէ, որ անզիխացի զիտնական Լուտրենս Լոկլարտը իր աշխատությունը գրելիս հիմնականում հենվում է Կրետացու տվյալների վրա<sup>229</sup>:

<sup>228</sup> Lavisse E. Rambaud A., Histoire Générale du IV<sup>e</sup> Siècle à Nos Jours, Paris, 1896, t. VII, p. 113.

<sup>229</sup> Lockhart, Nadir Shah, a critical study mainly upon contemporary sources, London, 1938, pp. 97-98.

Հայ պատմագրության մեջ Մուղանի իրադարձությունների մասին մեզ տեղեկություններ է հաղորդում մեկ ուրիշ ժամանակակից՝ Հակոբ Շամախեցին, որը հետազայում դարձավ հայոց կաթողիկոս: Նրա տվյալները հիմնականում համընկնում են Կրետացու հաղորդած տվյալներին, բայց Շամախեցին խիստ սուր տեղեկություններ է հաղորդում այս մասին<sup>230</sup>, իսկ Կրետացին ընթերցողի ուշադրությունն է հրավիրում ամեն մի մանրութիւ վրա: Նրան քաջածանոթ էր Իրանի քաղաքական կառուցվածքը և հիանալի կերպով նկարագրում է քաջադրության մասնակիցներին, թվարկում նրանց կոչումները և պաշտոնները, որից ել պարզ է դառնում, թե որ խավի վրա էր հենվում Նադիր շահը: «Խսկ Խանն բազմեալ էր ի զլուկս վրանին՝ ի մեջ փոքր խցանման տեղին: Քանզի վրանի ծայրն ուներ երիս յատուկ տեղիս որպէս ճիպինլուխ, փոքր վրանաձև փերտէով և դրներն վարագուրով: Յորում բազմեալ էր Խանն ի մեջ միոյն ի նոցանե, և դէմքն առ մեզ նայելով առ ամենեսեանսն, զի դրանց վարագուրն ի բաց էր »<sup>231</sup>:

«Այդտեղ 1736-ին յունուար 6 նոյն կաթողիկոսն վառաւորապէս կատարում է ջրօրինեաց հանդէսը Երասխի վերայ, խաչը ջրիցն հանում է Սէլիք-Եկեանն»<sup>232</sup>: Սովորության համաձայն հայոց հայրապետը շահին նվիրում է երկու նժույգ, իսկ շահն ել նվիրում է կաթողիկոսին հնդկական հայրապետական թանկագին զգեստ, որն այսօր պահպանվում է Էջմիածնի թանգարանում:

<sup>230</sup> Тер-Аветсиян С., Походы Тахмас-Кулу хана (Надир-шаха) и избрание его шахом в описании Акопа Шамахеци, Тифлис, 1932, стр. 15-17:

<sup>231</sup> Արքահամ Կրետացին, էջ 106:

<sup>232</sup> Պատմութիւն Աղուանից, ք. հատոր, ի Մակար Եպիսկոպոսէ Բարխուտարեանց, Թիֆլիս, 1907, էջ 94:

Հարկ է նշել, որ Նադիրի կերպարը Կրետացին ներկայացրել է իդեալականացված: Ելնելով հայ եկեղեցու շահերից, Կրետացին Նադիրին ներկայացնում է իբրև քրիստոնեասեր, հայերին ընդառաջող ու բարյացակամ: Կրետացին «Պատմության» մեջ նշում է, որ Մայր Աթոռն ուներ բազում կարիքներ, իսկ միջոցները խիստ սուր էին: Կաթողիկոս պատմիչը խնդրում է Նադիրին օգնել եկեղեցուն և Նադիրը սիրով ընդառաջում է նրան: Մինչև անգամ Կրետացին իրեն վտանգի ենթարկելով խնդրում է Նադիրին ազատել 300 հայ ընտանիքներին, որոնց ուզում էին տարագրել Խորասան: Շահը դարձյալ հարգում է կաթողիկոսի խնդրանքը:

Պատմիչի հաղորդումներից դժվար չէ նկատել, որ կա երկակիություն Նադիրի գործունեության գնահատման շուրջ: Մի կողմից նա գովարանում է Նադիրին, անվանելով նրան «մեծախելք» «երկրորդ Ալեքսանդր» «իմաստուն» և այլն, իսկ մյուս կողմից նա նշում է, որ գործ ունի բռնակալի հետ: Նման մոտեցման պատճառն արդեն ակնհայտ է: Պատմագիրը չափազանց դիպուկ բացահայտում է Նադիրի բռնակալական հատկությունները և այդ ամենը նա գրում է Նադիրի կենդանության օրոք: «Բարք՝ սաստիկ իշխանութիւն և հրաման երկրորդ Աղեկսանդրիս: Զի անհուն բանակն և այնքան խառնիճաղանձ բազմութիւնն, իբրև զայր մի, անշշունչ և համեստ կային սասանեալ: Եւ ոչ ոք իշխեր ասել այր ցընկեր իսր և կամ ցոամիկս, ևս առաւել՝ ցմեզ և ցմեր ազգն, եթէ՝ «Այսպէս արայ, կամ՝ այնպէս»: Այլ իրարանշիւր ի վերա պահպանութեան իւրոյ և գործոյն հաստատ և ահիւ պակուցեալ»<sup>233</sup>.

<sup>233</sup> Արքահամ Կրետացի, էջ 87:

Պատմագիրը նշում է, որ Նադիրը այդ հեղինակությանն է հասել շնորհիվ պատերազմներում ձեռք բերած փառքի և իր շուրջը ստեղծած ահ ու սարսափի:

Կրետացին գրում է, թե ինքն ինչպես իր ականջներով լսել է, որ երկրի խաղաղությունը ապահովելու նպատակով, Եղվարդի ճակատամարտում 40000 բուրք սպանող Նադիրը ի լուր աշխարհի թուրքերին պարսիկների եղբայր է համարել:

Կրետացու նկատմամբ Նադիրի մոտեցումը նույնպես եղել է երկակի: Նա հաճախ ընդառաջ է գնացել կաթողիկոսի խնդրանքին, նպատակ ունենալով ստանալ հայ եկեղեցու աջակցությունը, քանզի քաջ գիտակցում էր, թե ինչ դեր ունի եկեղեցին հայ քաղաքական կյանքում: Այնուամենայնիվ շահը լիովին չէր վստահում Կրետացուն:

Պատմիչի վկայությամբ, Նադիրի մասին շողոքրորթական բանաստեղծություններ է գրել Ատրպատականի վեզիրը, որը եղել է նաև քանաստեղծ: Կրետացին ցույց է տվել նաև Նադիրի խոսքի և գործի հակասությունը, թե ինչպես Նադիրը Թիֆլիսում իր մեծամեծներին ասել է. «Եւ չի լինի թէ նեղացներ զազդ հայոց կամ վեասեր, զի զայնպիսին պատուհասակոծ առնեմ»<sup>234</sup>:

Բայց, եթե շահը Թիֆլիսից գնացել է Խորասան, ապա կարգադրել է բռնությամբ հայ բնակչությանը տեղահանել Խորասան:

Կրետացու մեկ այլ վկայությամբ Նադիրը իր նախկին գրագրին կարգել է պատմիչ և պատվիրել գրելու իր պատմությունը թագավորների ու եղելությունների մասին: Նույնիսկ կան տեսակետներ, որ նմանատիպ առաջարկություն է ստացել նաև Աբրահամ Կրետացին:

<sup>234</sup> Աբրահամ Կրետացի. էջ 70:



Նադիր շահ Աֆշարը չսահմանափակվեց իրանական պետության վերականգնումով: Անխոնջ նվաճողին հանգիստ չէր տալիս Ալեքսանդր Մակեդոնացու փառքը: Վարում էր ակտիվ զավթողական քաղաքականություն: Ստեղծելով հզոր բանակ, նա 1737 թ. արշավեց Աֆղանստան, գրավեց Ղանդահարը, 1738 թ. մտավ Քարբուզ: Իրեն ենթարկելով աֆղանական ցեղերին, Նադիր շահը պատերազմ հայտարարեց «Մեծ Մողոլի» պետությանը, մտավ Հնդկաստան և 1739 թ. գրավեց Դելին: Այնուհետև նա գրավեց Բուխարայի և Խիվայի խանությունները: 1743-46 թթ. ձեռնարկեց նոր պատերազմ Թուրքիայի դեմ. «Արդ՝ ի 1190 թուոջն՝ դարձաւ Նատըր մեծաւ յաղթանակօք, և անհամար աւարօք ի Պարսկաստան»<sup>235</sup>:

Այսպիսով Նադիրը ստեղծեց մի հզոր պետություն, որի սահմանները հասնում էին Եվրասիայի մինչև Հնդոս գետը:

Նվաճողական արշավանքներում Նադիրը ունեցավ մեծ հաջողություններ<sup>236</sup>: Սակայն երկրի ներսում բռնկվեցին ներքին ապստամբություններ, որոնք ճնշելու համար Նադիրը ստիպված էր զգալի ուժեր տեղափոխել ռազմաճակատից: Թուրքիայի դեմ մղված նոր պատերազմը չնայած իրանական զորքին բերեց որոշակի հաջողություններ, այնուամենայնիվ դրանք չունեցան նախկին ազդեցություննը, քանզի երկրի ներքին դրությունը դարձել էր անկայուն: 1746 թ. Բրանի և Թուրքիայի միջև կնքվեց նոր պայմանագիր, որով երկու երկրների սահմանները մնում են անփոփոխ:

<sup>235</sup> Խաչատուր Չուլյայշի, էջ 262:

<sup>236</sup> Գասպարյան Ա., Նադիր շահի ներքին ու արտաքին քաղաքականության զնամնության շուրջ, ՀՀ ԳՊՀ, գիտական նյութերի ժողովածու, Երևան, 2000, էջ 87-91:

Արշավանքների իրականացումը պահանջում էր մեծ ծախսեր և ամենեին էլ չարդարացրեց սպասված հույսերը: Մինչև անգամ Նադիրը մտածում էր գրավել Կասպից ծովի ափերը: 1743 թ. ձեռնամուխ Եղավ ռազմական նավատորմի կառուցմանը: Սա անհանգստացրեց Ռուսաստանին և վերջինս կենտրոնացրեց իր ռազմական ուժերը: Սակայն գործը ռազմական բախումների շիասավ:

Նադիրը վարում էր կենտրոնաձիգ քաղաքականություն: Մայրաքաղաքը տեղափոխեց Մեշհեդ: Սակայն երկրում խորանում էր տնտեսական ճգնաժամը: Այժմ արդեն երկրի ներսում Նադիրի քաղաքականությունը աջակցություն չէր գտնում: Պետության հարստության մեծ մասը ծախսվեց ռազմական նպատակներով: Զանալով կարգավորել ստեղծված դրությունը, Նադիրը բռնագրավեց վակֆային հողերի մեծ մասը և կրծատեց դղլբաշների հողային տիրույթները: Նման քայլը առաջ բերեց շիամահմեդականության և դղլբաշների դժգոհությունը:

Տեսակետ կա նաև այն մասին, որ իբր Նադիրը ծրագրեր էր փայփայում իր մականի տակ ողջ Մերձավոր ու Միջին Արևելքի տարածքում միասնական մահմեդական պետություն ստեղծելու մասին, ուստի իր ապագա նվաճումների համար փորձում էր ստեղծել զաղափարական համապատասխան հող

Նադիրը սակայն միայն նվաճող չէր, նա ուներ մեծ գաղափարներ և քաջ հասկանում էր, թե ինչ ահավոր չարիք են կրոնական խորականությունները և ձգում էր վերացնել դրանք: Նա ցանկանում էր ստեղծել մեկ ընդհանուր կրոն և նույնիսկ կարգադրել էր արաբերենից պարսկերեն թարգմանել իսլամի սուրբ գիրքը՝ Նուրանը: Շահնշահը կարգադրեց նաև թարգմանել Հին

Կտակարանը: Նադիրը ձգտում էր իր կողմը գրավել սունիներին և դրանով իսկ թուլացնել շիա մահմեդականության դիրքերը: Այս մասին Զուղայեցին արձանագրում է. «Եւ ապա վճռահատէ՝ միաբանիլ զՇիայ, և զՄիւնի ազգսն. և հրամայէ ի քաց բառնալ զամենայն տարածայնութիւնս, այսինքն՝ ոչ անհծանել զՕմարն, զՕսմանն և զԱբրուբարըն, և ո՛չ առնել զիսառնիճաղանձ և զբանդագուշեալ ամբոխն ի տօնի մահուան Հուէնին, և զայլս այսպիսիս, որովք զիսառակութիւնս կրէին ընդ տաճկաց»<sup>237</sup>:

Նադիրը իմանալով, որ շիա հոգևորականության եկամուտները հասնում են 7 մլն.ոութլու<sup>238</sup>, հետաքրքրվեց՝ թէ՝ ինչի վրա են ծախսվում այդ զումարները: Նրան պատասխանեցին, որ դրանք ծախսվում են դպրոցների, մզկիթների և մոլլաների վրա, որոնք աղոթում են, որ ալլահը պահպանի երկիրը թշնամիներից: Նադիրը բռնագրավեց հոգևորականության եկամուտները և հատկացրեց պետական զանձարանին:<sup>239</sup>

Այս քայլը նա մեկնաբանեց այն հանգամանքով, որ, եթէ Իրանը չկործանվեց, ապա շնորհիվ ոչ թէ ալլահի՝ այլ իր քաջ զինվորների: Սա աննախադեալ քայլ էր մահմեդական երկրների կյանքում:

Զգտելով կարգավորել երկրի տնտեսական անկումը, Նադիրը երեք տարով ազատեց Իրանի ժողովրդին ամեն տեսակի հարկերից: Բայց այս քայլն էլ չօգնեց, քանզի օրավոր սաստկանում էր ժողովրդի դժգոհությունը Նադիրի քաղաքականությունից: Դժգոհությունը առկա էր նաև ռազմական ու քաղաքական շրջաննե-

<sup>237</sup> Խաչատոր Զուղայեցի, էջ 260-261:

<sup>238</sup> Լեռ, նշվ. աշխ., հ. III, գիրը 1, էջ 222:

<sup>239</sup> Կամսար Ս. Օ. - Походы Надир-шаха в Герат Кандагар, Индия и события в Персии после его смерти, Тифлис, 1889, стр. 216.

րում: Խիստ կերպով քայրայվել էր պետության միասնականությունը: Նադիրը միայն գենքի ուժով էր կարողանում պահպանել այդ հսկայածավալ պետության հանգստությունը:

Դժգոհության հետևանքները եղան մի շարք ապստամբությունները, որոնք ծավալվեցին քաղաքացիների ու զյուղացիներյան շրջաններում: Նադիրին չնայած հաջողվում էր գենքի ուժով ճնշել դրանք, այնուամենայնիվ չեր կարողանում կարգավորել ներքին դրությունը երկրում: Որքան արագ տեղի էր ունեցել Նադիրի բարձրացումը, նույնքան արագ էլ այն սկսեց անկում ապրել: Հասկապես աղետաբեր եղավ Դադստանում բռնկված ապստամբությունը: Նադիրը գորքով մեկնեց այն ճնշելու, բայց լեռնային կիրճերում ընկալ շրջապատման մեջ և ունեցավ մարդկային ու նյութական մեծ կորուստներ: Չորքի մեջ սով սկսվեց, նկատվեցին նույնիսկ մարդակերության դեպքեր: Սկիզբ առան պալատական խարդավանքները: Շահին հավատացրին, որ իր դեմ դավադրություն է լարում որդիին՝ Ռուս-դուխ-միրզան: Նադիրը հրամայեց կուրացնել նրան: Հետազոտում պարզվեց, որ որդին անմեղ էր: Խղճի խայթը տանջում էր Նադիրին: Նա դարձել էր չափազանց կասկածամիտ և դաժան: Ուշագրավ է այն հանգամանքը, որ երբ Նադիրը ուղարկեց դահիճներին որդուն կուրացնելու, վերջինս խնդրեց նրանց հայտնել իր հորը, որ այդ քայլով կուրացնում է ամբողջ Իրանը:

Թագաժառանգը մեծ հեղինակություն էր վայելում երկրում և երեք սպաներ ուխտեցին Վրեժինդիր լինել թագաժառանգի կուրացման համար: Չորքն էլ էր դժգոհ, որովհետև շահը երկար ժամանակ չեր վճարում գորքին, պատրաստվելով ինչպես ասում էին, պետական հարստությունները տեղափոխել հայրենի Խորա-

սան, ուր և մտադիր էր բնակություն հաստատել: Բայց ամենից վատրարն այն էր, որ պատերազմական բախտը նույնպես երես էր թեքել նրանից<sup>240</sup>:

Նադիր շահի գործունեությունը լայնորեն արտացոլված է նաև Խաչատուր Զուղայեցու «Պատմութիւն Պարսից» աշխատության մեջ: Նա մեզ տեղեկություններ է տալիս Կրետացուց մոտ 50 տարի հետո: Պատմագիրը ներկայացնում է, թե ինչպես աննշան տոհմից սերված ռամիկ ուղտապանը կարողացել է հասնել այդ փառքին: Պատմիչը այդ մասին արձանագրում է. «Այլ ստոյգ է՝ զի սա ի ռամկաց և յաննշան տոհմից վերաբուժեալ շառաւիդեաւ. քանզի և հայր նորա էր թաղեացագործ՝ որով աշխատեալ ուտեր զիաց իւր, և անուն նորա Խմամ Ղուլի»<sup>241</sup>:

Խոսելով Նադիրի քաղաքականության հետևանքների մասին Զուղայեցին դառնացած գրում է. «Եւ իբրև սպառեալ եզերեցաւ չար բռնակալութիւն նորա, յայնժամ իսկ և իսկ կալաւ սկիզբն այլոց չարագունից բռնակալութեանց. որք մինչև ցայսօր մի զկնի միոյ ելսէցս առնելով տգրկաբար ծծեն զարինս մեր. և զկեանս ողորմելի ժողովրդոց յերկրիս խոշտանգանօր քաղեն»<sup>242</sup>:

Զուղայեցին Նադիրի բռնակալությունը ավելի դաժան է համարում, քան աֆղաններինը և միաժամանակ պարզաբանում է նրա աղետալի հետևանքները:

Պատմագիրը անդրադառնում է նաև հայ-իրանական հարաբերություններին: Հավատարմություն հայտնելով Նադիրին, հայ մելիքները իրենց զորքերով մասնակցում էին թուրքերի դեմ

<sup>240</sup> Բայրության Վ., էջ 379-380:

<sup>241</sup> Խաչատուր Զուղայեցի, էջ 255:

<sup>242</sup> Նույն տեղում, էջ 272:

մղվող կոխվներին, ապահովում ռազմական հարկերի ու տուրքերի գանձումը, բանակին մատակարարում էին պարեն ու հանդերձանք<sup>243</sup>:

Նադիրի բանակում, ինչպես վկայում է Աբրահամ Երևանցին, կային հինգ հայ հարյուրապետներ, իրենց զորքերով. «Եւ էին,- ասում է նա,- ի օրս Պարսից հինգ քրիստոնեայր յազգէս մերմէ, որք էին հազարապետք Ղուլի խանին և ունեին օրս հարիւրատրս, անուն միոյն՝ Դափիթ, զոր Գործենցի բեկ ասեն. երկրորդն էր Ատովսին որդի Արիճան. երրորդն էր չափնեցի Եյղին բեկի որդի Աղաճանն, չորրորդն չափնեցի Սուսիսին որդի Բալիզն, հինգերորդն՝ Ճաղակերանց Թօփուզի որդի Ճախնեզարն»<sup>244</sup>:

Բնականաբար շատ հավանական է այն տեսակետը, որ Նադիրի բանակում գտնվում էին հայ զինվորականության վերջին բեկորները: Շահը առատորեն պարզեատրում էր հայ մելիքներին իրենց ծառայության համար: Հատկապես Նադիրը գոհ էր Մելիք-ջանի քաջությունից և վերջինս ոչ միայն հաստատվեց իր հայրենի ժառանգական իրավուքների մեջ, այլև նշանակվեց Երևանի խանից անկախ մի կառավարիչ նաև մահմեղական տիրապետողների վրա: Անզամ Նադիրը նրան անվանում էր «քարա», այսինքն՝ հայր<sup>245</sup>:

Նադիրին մեծ ռազմական աջակցություն ցուցաբերեցին Ղարաբաղի հայ մելիքները և Նադիրը երախտազիտության նշաններով վարձահատուց եղավ նրանց: Նադիրը բարյացակամ էր

<sup>243</sup>Տե՛ս Կոստիկյան Ք., Ղարաբաղի հայ մելիքները Նադիր շահի իշխանության տարիներին, Մերձավոր և Միջին Արևելյան երկրներ ու ժողովուրդներ, հ. XXVII, Երևան, 2007, էջ 264-265:

<sup>244</sup>Աբրահամ Երևանցի, Աշվ. աշխ., էջ 75-76:

<sup>245</sup>Լեռ, Աշվ. աշխ., հ© 3<sup>րդ</sup> զիրք 2, Երևան, 1973, էջ 224:

տրամադրված Ղարաբաղի ազատազրական շարժմանը, քանի որ այն ուղղված էր Իրանի արյունաբերության թշնամի թուրքիայի դեմ:

Արցախի հայ մելիքների գինակցությունը՝ Նադիրի հետ ավելի քան ամրացրեց նրանց իշխանությունը՝ ծնունդ տալով նոր վարչական միավորի՝ «Խամսայի մելիքություններին», Նադիրը փաստորեն վավերացրեց այն, ինչ 15 տարիների հերոսական պայքարի շնորհիվ ձեռք էր բերել Արցախի ազատաւունչ հայությունը:

XVIII դարի 30-ական թվականների հայ իրականության խոշորագույն քաղաքական դեմքը Դիզակի Մելիք Եզանն էր: Նադիրի պալատական պատմիչ Մուհամմեդ Քյազիմը բազմից հիշատակում է նրան որպես իմաստուն մի գործիչ, որը Նադիրի կողմից արժանացել է մեծ սիրո և վատահության: Պարսիկ պատմիչը նշում է նաև Մելիք-Թամրազի և Մելիք-Զարությունի անունները: Ըստ նրա հայ մելիքները, որոնք գործում էին Սյունիք-Արցախում ու Արարատյան երկրում, թուրքական զորքերի ներխուժումից առաջ, իրենց իշխանությունը տարածել էին մինչև Կուր և Արաք ու սպառնում էին Գանձակի և Երևանի բերդերին<sup>246</sup>:

Հարկ է նշել, որ միայն ուազմական հանգամանքներով չեր պայմանավորված Նադիր շահի նման վերաբերմունքը հայերի հանդեպ: Այդ դաժան նվաճողը, որից սարսափում էր ամբողջ Իրանը մի առանձին հակում ուներ դեպի Էջմիածինն ու հայոց կաթողիկոսը: Նա սիրով կատարում էր Աբրահամ Կրետացու խնդրանքները, հայոց հոգևոր կենտրոնին տալիս էր զանազան արտոնություններ և մեծ նվիրատվություններ: Իրողությունն այն էր, որ Նադիրը շատ լավ հասկանում էր հայոց կաթողիկոսի դերն ու նշանակությունը հա-

<sup>246</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 181:

յության կյանքում: Միաժամանակ շպետը է ժխտել նաև Աբրահամ Կրետացու անձնական հատկանիշները: 1737 թ. վախճանվեց հայոց կաթողիկոսը և նրան փոխարինեց Ղազար Զահկեցին: Վերջինս ամեն ինչ անում էր Նադիրի բարյացակամությունը շահելու, բայց ապարդյուն, քանզի բռնակալն անզամ չէր ցանկանում նրա երեսը տեսնել: Այդ տարիներին հայ ժողովուրդը ենթարկվեց նորանոր բռնությունների:

Կյանքի վերջին տարիներին Նադիրը մեծ աշխարհակալից դարձել էր երկիրը կեղեքող բռնակալ: Նրա կասլածամությանն ու դաժանությանը անխստիր ենթարկվում էին բոլորը: Դավադրության վտանգը նրան դարձրել էր անողոք ու անզուք: Մարդկանց գանգերից բուրգեր էր կառուցում: Շիրազի ամբողջ ազգաբնակչությանը հրամայեց կոտորել, իսկ Մեշհեդում հանել տվեց բոլոր բնակիչների մի կամ երկու աշքերը<sup>247</sup>:

Իրանի բնակչությունը հոծ խմբերով փախչում էր օտար երկրներ: Նման դրությունից գերծ չմնաց նաև հայությունը: Նադիրը հանձնարարել էր Նախիջևանի խանին իմանալ բնակիչները վերաբերմունքը իր նկատմամբ: Վերջինս խորամանկությամբ իմացավ դժգոհ խավի անունները, որոնց մեջ կային նաև մեծ թվով հայեր ու հայտնեց այդ մասին Նադիրին: Շահը հրամայեց կուրացնել բոլոր ցուցակագրվածներին, իսկ ունեցվածքը բռնագրավեց. «Եւ անդ էր ողորմ տեսիլ տեսանել և անբերելի բռնութիւն յափշտակութեան. քանզի պաշարեալ զտունս նոցա, և մտեալ ի ներքս՝ հանին նախ արտաքս զընտանիս նոցա, զգուշութեամբ որոնելով ի վերայ նոցա, զի մի ինչ տարցին ի ծանրազին իրաց. և

249 Բայրության Վ., Աշվ. աշխ., էջ 376:

յապս առեալ զամենայն զպատուական ինչս՝ պահեցին զայնս ուրոյն»<sup>248</sup>:

Խաչատուր Զուղայեցին քննադատելով Նադիր շահի գործունելությունը, ամբողջացնում է նրա բնութագրումը: Տրված է նրա տիրապետության կործանարար հետևանքները Իրանի և նվաճված երկրների համար. «Այլ ո՞չ ինչ իւիք օգտեցան նորա /պարսիկները-Ա. Գ./ ի սնոտի յուսոյ իւրեանց, քանզի նա Նադիրը - Ա. Գ./ ևս քան զևս յաճախեր ի բռնաւորական իշխանութիւն՝ որով և օր ըստ օրէ առաւել աճիւր և զօրանայր ախտ ազահութեան ի սրտի նորա: Եւ որով իսկ գրեթէ զբողոր Պարսկաստան ընկլուգելայ ընկղմէր ի սաստիկ և յանբերելի թշուառութիւն»<sup>249</sup>:

Այն կապակցությամբ, որ Նադիրը պատվիրել է մի քանի հոգենորականների իր համար հայերենից պարսկերեն թարգմանել չորս սուրբ գրքերը և արաբերենից՝ պարսկերեն Ղուրանը և դրա համար նրանց հարյուր թուման պարզ էր տվել, պատմագիրը զարմացած գրում է. «Եւ թէպէտ դոյզն ինչ էր զոր նա պարզեեց նոցա, որ և չև ևս էր բաւական ծախուց ճանապարհին, սակայն աստանօր զարմանք իմն մեծ երևի, քանզի ի տատասկէ թուզ քաղեն, և ի մորենաւզ խաղող: Քանզի սա Նադիրը- Ա.Գ./ որ ի բնոււտ իսկ ուներ ըզսովորութիւն՝ առնուլ, ստանալ և ժողովել զինչս, արդ ահաւախիկ ձօնէր նոցա զպարզես, որ թուի թէ՝ որով իսկ ակն ունէր առ յապա զմեծամեծ պարզես զանձուց ի նոցանէ ստանալ»<sup>250</sup>: Որոշ ժամանակ անց նա հայոց կաթողիկոսից պահանջեց. «...զքսան և չորս հազար դահեկանսս»<sup>251</sup>:

<sup>248</sup> Չամցյան Մ., «Պատմ. Հայոց», հ. Գ, Երևան, 1984, էջ 817-818:

<sup>249</sup> Խաչատուր Զուղայեցի, էջ 263:

<sup>250</sup> Խաչատուր Զուղայեցի, էջ 264-265:

<sup>251</sup> Նույն տեղում, էջ 264-265:

Ըստ Զուղայեցու մի առիթով բռնակալը հավաքել է իր մեծամեծներին ու ասել է. «...ահա դուք արք անողորմք և խիստք, և ես ի վերայ ձեր պատիժ և պատուհաս ի Տեառնէ առաքեցեալ»<sup>252</sup>: Պատմագիրը միանգամայն համամիտ է դրան և բացականչում է. «Ահա՝ արդարք ճշմարիտ վճիռ՝ որ զնմանէ արտադրեցաւ առ նոսա»<sup>253</sup>:

Մի այլ կապակցությամբ խոսելով Նադիր շահի մասին Խաչատուր Զուղայեցին նշում է. «Եւ մինչ յայնմ ժամանակի կայր նա Շադիրը- Ա. Գ./ յԱսպահան՝ զբարբարոսութիւնս մեծամեծս և զարսափելիս գործէ. քանզի աճեցոյց զբերինս բնակչաց նորա ծանրագոյն տուգանօք, և զբազումս ի յորոց անպարտ մահու դատապարտէր: Որպէս և յազգէս մերոյ ևս իսկ ընդ կենդանւոյն այրել հրամայեաց....»<sup>254</sup>:

Պատմագիրը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Նադիրի դեմ վրացիների ապստամբության և նրանց «համակիրը» լինելու համար, հայերի դեմ նորանոր հալածանքներ կիրառվելու մասին:

Նադիր շահը Երևանը զրավելուց և 1746 թ. Թուրքիայի հետ հաշտություն կնքելուց հետո որոշել է զնալ Սպահան: Բայց մինչ այդ հրովարտակ է ուղարկել Վրաստան, պահանջել բոլոր ազնվականների որդիներին ուղարկել իր մոտ իբրև պատանդ. «... զրէ զիրովատակս՝ և առաքէ ի վրաց տուն, և ի նոցանէ պահանջէ զորդիս համայն Ազնուականաց երկրին ի պատանդս պահել զնոսա առ ինքն...»<sup>255</sup>: Սակայն ինչպէս զոհունակությամբ նշում է Զուղա-

<sup>252</sup> Նույն տեղում, էջ 271:

<sup>253</sup> Նույն տեղում:

<sup>254</sup> Նույն տեղում, էջ 268-269:

<sup>255</sup> Խաչատուր Զուղայեցի, էջ 268:

յեցին. «... վիրք եղին ի մտի մանաւանդ զձեռս իւրեանց ի սուր արկանել քան թէ հնազանդել անիրաւ հրամանի նորա»<sup>256</sup>:

Փաստորեն վրացիները անտեսել են Նադիրի հրամանը և որոշել այայրաբել:

Սակայն շահը չի կարողանում վրացիներին պատժել, քանզի լուր է ստանում Խորասանում բռնկված ապստամբության մասին և շտապ վերադառնում է Սպահան:

Պատմագիրը դառնությամբ է խոսում Նադիրի նորանոր բարբարոսությունների մասին: Շահն արդեն կասկածում էր հայերին՝ վրացիներին աջակցելու մեջ. «Բայց թուի թէ՝ կասկածէր նա՝ զազդն հայոց համակիցը լեալը ընդ ապստամբութեան ազգին վրաց»<sup>257</sup>:

Աֆղաններին պարտության մատնելուց հետո Շեյնուն զյուղի պարսիկները զնացել են Նադիրի մոտ և զանգատվել հայերից, որ իբր նրանց դրդմամբ են աֆղանները ապստամբել, որ նրանք համատեղ են իրենց զյուղը ավերել ու թալանել: Դա առիթ է հանդիսանում, որ Նադիրը հայերից պահանջի տարեկան տասը հազար թուման: Հայերը ստիպված կատարում են այդ պահանջը, սակայն շահը հայերից կրկին պահանջում է 45 հազար թուման<sup>258</sup>:

Արդյունքում. «...բազումք յազգես հայոց, - դառնացած զրում է պատմագիրը. - Ետուն զամենայն ստացուածս իւրեանց, և ինքեանք մերկը և կորոպուտք անկան փախստականք ի յօսար աշխարհ. և յայնմիեսէ սկսաւ իսկ իսաքարեալ աղարսիլ զբազմամարդ և զգեղեցկաշէն աւանս մեր Նոր Զուղայ»<sup>259</sup>:

<sup>256</sup> Նոյն տեղում:

<sup>257</sup> Նոյն տեղում, էջ 269:

<sup>258</sup> Նոյն տեղում:

<sup>259</sup> Նոյն տեղում, էջ 269-270:

Նադիրի դաժան քաղաքականությունից հատկապես տուժեց Նոր Զուլան: Զուղահայերի դժբախտությունը այն էր, որ զտնվում էին Սպահանի մոտ: Մայրաքաղաքը համարվում էր դավադրության բույն և Նադիրը պատրաստվում էր ազատվել ըմբռստ մսյրաքաղաքից շատ հեշտ կերպով, այն է՝ սրի քաշելով նրա ամբողջ ազգաբնակչությանը: Բայց Նադիրի սպանությունը փրկեց ժողովրդին անխուսափելի կոտորածից: Այս մասին Խաչատուր Զուլայեցին գոհունակությամբ գրում է. «Եւ իբրև ծանուցեալ եղի զօրաց պարսից զկորուստ իւրեանց՝ արք ումանք քաջազօրք և արիասիրտը, որոց զիսաւորն կոչիր Սալեհ քէկ, ի զիշերայն իսկ դիմեցին ի խորան նորա, և ի վրանի անդ իւրում սպանին զնա: Ահա՝ այսպէս անկեալ սատակեցաւ պատուհանն երկնային Նատըր՝ ի վատսուն և մի ամի կենաց իւրոց, և ի մետասան ամի թագաւորութեան իւրոյ, և վասն խստագրյն չարութեանց իւրոց՝ ո՛չ կարաց ժամանել ի բարի վաղճանի»<sup>260</sup>:

Այնուհետև պատմիչը շարունակում է. «Որով ուսանիմք մեր՝ զի թագաւոր մի և կամ խան՝ որ փոխարկէ զգութ և զողորմութիւն, ընդ անիրաւութեան և անզօռութեան. Նոյն գունակ թշուառաբար կորնչելոց է յաւոր միում. և ո՛չ դիպեսցի նմա ևս՝ զբարի վաղճան, որպէս և նոր այն»<sup>261</sup>:

Խաչատուր Զուլայեցին այնուամենայնիվ դրվատանքով է խոսում Նադիրի խիզախության մասին. «Արդ՝ երանի՝ թէ Նատըր արքայն ըստ հաւասար քաջութեան իւրոյ՝ բարոյական առաքինութեամբ պերճացեալ իցեր և բարզաւաճեալ. արդա՛րև ճշմարիտ

<sup>260</sup> Խաչատուր Զուլայեցի, էջ 270-271:

<sup>261</sup> Նոյն տեղում:

իսկ զոգջիր՝ զի թարց իմիք խոշնդակի, և առանց իրիք սպուժելոյ՝ իսկ և իսկ հասանիցեր ի կատար ցանկութեան ըղձից իւրոց»<sup>262</sup>:

Նադիրի սպանությունից հետո, հսկայական տերությունը փլուզվեց, քանզի այն հիմնված էր ուազմական ուժի վրա: «Հումկու Նադր-Շահի մահից յետոյ մինչև ներքինի Աղա-Մամատ Շահի օրանապն, Պասկաստանի տիրապետողներն ոչ եթէ կանոնաւոր թագաւորներ կամ Շահեր էին, այլ սուկ մարդասպան և երկրի խաղաղութիւնը վրդովող խաներ»<sup>263</sup>:

Իշխանության համար պայքարը գնալով սրվում էր և երկրի ներսում պարբերաբար տեղի էին ունենում պալատական հեղաշրջումներ, որոնց հետևանքով զահը ձեռքից ձեռք էր անցնում: Նման դրությունը պահպանվեց մոտ կես դար:

Ըստ XVIII դարի անանուն մի հեղինակի վկայության. «Սպազմի կենացրաւ լինելոյ սորին Նադիրի-Ա.Գ. վեր ի վայր տապալեցաւ իշխանութիւնն Պարսից, և բոլոր Պարսկաստանն. մի զմիռվ ելանէին. իւրաքանչիւր խանք և երևելիք յիւրաքանչիւր տեղեաց շարժեցան, և իւրաքանչիւր մասնաւոր զաւար գրեթէ մի մի թագաւորութիւն ցուցին զինքեանս, և յարեան ի վերայ միմւեանց պատերազմաւ յորս երևելին Աղլշահ, Իբրահիմ շահ, և Մայախան. և այլ ևս 33 խանք և բուռն իշխանք, և այլը յոլովը, որը յիւրերաց վերայ յարձակեալ հարին յանդուզն մարտիր զմիմւեանս. ասպատակեցին և աւերացին զերելիք և զահիման միմւեանց. և այս ի սուղ ժամանակի մինչև ասել յառասպես՝ ո՞վ ստեղպին դու տեսեր զերիս թագաւոր, զի մինչ ի սերմանիլ, աճիլ և սպառիլ ստեպղին երեք թագաւորք մի զկնի միոյ անցին»<sup>264</sup>:

<sup>262</sup> Նըսխ տեղում. էջ 272-273:

<sup>263</sup> Տե՛ս Պատմութիւն Աղուանից, նշվ. աշխ., էջ 7:

<sup>264</sup> «Դիւան հայոց պատմութեան», զիրք Ժ. Թիֆլիս, 1912, էջ 157-158:

«Պատմութիւն Աղուանից» աշխատության մեջ հանդիպում ենք հետևյալ տվյալների. «...շատերն պատերազմա ճգնում էին յափշտակել զահը միմեանցից: Վերջապէս միևնույն բուին զահակալում են Նադր-Շահի թոռն Շահ-Ռուհն Մաշադում և Նադր-Շահի եղբորդի Աղլ-Շահն՝ Թաւրիզում»<sup>265</sup>:

Գահի առաջին հավանական թեկնածուն Աղիլ/արդարություն/շահն էր, որն անցնելով իշխանության զլուխ, հասուկ հրամանով խոստացավ բարելավել պետության ու ժողովրդի դրությունը՝ համարելով այն իր զլխավոր նպատակը<sup>266</sup>:

Բայց դաժանությամբ նա ամենին չէր զիջում հորեղբորը և անխնա կերպով սկսեց կոտորել Նադիրի բոլոր հարազատներին ու մերձավորներին: Այս ամենը սրեց նրա հանդեպ դժգոհությունը: Աղիլի դեմ հանդես եկավ եղբայրը՝ Իբրահիմը: Աղիլը դիմեց փախուստի: Իբրահիմը երկար չկարողացավ կառավարել ու զահընկեց եղավ Շահրուխի կողմից: Վերջինս էլ մի քանի անգամ զահընկեց եղավ ու բանտարկվեց: Զուղայեցու վկայությամբ Շահրուխը սպանեց Իբրահիմին և 1748թ. անցավ իշխանության զլուխ: «Որ և վաղվաղակի սպանանել զնոսա հրամայէ, և ապա ինքն միայնակ տիրէ ի վերայ ամենայն տէրութեան պարսից»<sup>267</sup>:

Այսպիսով, XVIII դարի առաջին կեսին Իրանը թևակոխել էր անկումային մի ժամանակաշրջան, որի կայունացման համար անհրաժեշտ էին ներքին ու արտաքին բնազավարներում իրականացնել լուրջ բարեփոխումներ:

<sup>265</sup>Տե՛ս՝ Պատմութիւն Աղուանից, էջ 97-98:

<sup>266</sup>Կասմաշեա, նշվ. աշխ., էջ 222:

<sup>267</sup>Խաչատուր Զուղայեցի, էջ 279:

3. ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒԽՆԵՐԸ ԻՐԱՆԻ  
ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՅՐԻՎԵՐՈՒՄՆԵՐԻ ՍԱՍԻՆ  
(XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ)

XVIII դարի երկրորդ կեսին Իրանի քաղաքական ու տնտեսական մասնատվածությունը գնալով խորանում էր: 1751 թ. ամբողջ երկիրը բաժանվեց մի քանի մանր ֆեոդալական իշխանությունների, որոնք միմյանց հետ գոնվում էին երկպառակտչական կողմների մեջ: Կենտրոնական իշխանության թուլացումն առիթ տվեց երկրի զանազան կողմերում ապստամբությունների բռնկման: Վրաստանում Հերակլ Բ.-ն իրեն անկախ թագավոր հռչակեց: Դրան էլ գումարվում էր արտաքին արշավանքների վտանգը: Քայրայվեց զյուղատնտեսությունը, անկման եզրին հասան արհեստներն ու առևտուրը: Ներքաղաքական պայքարում հաջողության հասավ Քերիմ խան Զենդը, որը գենդական ցեղերից մեկի առաջնորդն էր և անընդհատ պայքարի մեջ էր գոնվում դաշտական ցեղերի դեմ: Նա սկզբում զորքերի զիսավոր հրամանատար էր, ապա դարձավ անշափահաս Խամայիլ շահի խնամակալը, իսկ այնուհետև անցավ իշխանության գլուխ:

Պատմական աղբյուրները Քերիմ խանին ներկայացնում են որպես խելացի, արդարամիտ ու համեստ մի մարդու, որը հոգ էր տանում երկրի բարզավաճման մասին: Խաչատուր Զուղայեցին նույնպես չի զլացել դրվատանքի խոսքեր ասել Քերիմ խանի մասին, որը կարողացել էր վերջ տալ զահակալական արյունահեղ կողմներին ու միջֆեոդալական պատերազմներին

և Իրանում ստեղծել համեմատաբար խաղաղ ու կայուն վիճակ: Հաստատելով իր իշխանությունը համարյա ամբողջ Երկրում, նա իրեն շահ շիռշակեց և անվանվեց իբրև «վերիլ» (պետության լիազոր). «Բայց ո՛չ կամեցաւ անուանիլ թագաւոր, այլ խան միայն և փոխանորդ թագաւորի»<sup>268</sup>:

Քերիմ խանի կառավարման շրջանում (1750-1779 թթ.) Երկրում մտցվեց կայուն հարկային համակարգ, սահմանվեց հստակ զներ պարենային ապրանքների համար: Բնակչության ապահովության համար մտցրեց զիշերային պահակային հսկողություն: Շիրազում իրականացվեցին լայնածավալ շինարարական աշխատանքներ, կառուցվեցին պալատներ, մզկիթներ, այգիներ, որոնք նոր տեսք ու շուրջ հաղորդեցին քաղաքին: Քերիմ խանը հովանավորում էր շիա մահմեդականությանը: Իրականացվեցին լայնածավալ միջոցառումներ արհեստների զարգացման ուղղությամբ: Շիրազում ծավալվեց ապակու արտադրություն: Զգտելով զարկ տալ զյուղատնտեսությանը, Քերիմ խանը, կանոնավորելով հարկային համակարգը, փորձեց փոքր ինչ սահմանափակել զյուղացիների շահագործումը: Երկրի տնտեսությունը աստիճանաբար սկսեց վերականգնվել<sup>269</sup>:

Խաչատուր Չուղայեցին իր աշխատության երկրորդ մասում ներկայացնում է Քերիմ խանի քաղաքականությունը մինչև նրա մահը ներառյալ: Այս շրջանի մասին նա տալիս է ճշգրիտ տեղեկություններ իբրև՝ ականատես ու ժամանակակից:

<sup>268</sup> Խաչատուր Չուղայեցի, Էջ 325:

<sup>269</sup> Ст. и История Ирана, под. Под. Иванов М. С., М., 1977, стр. 211.

Պատմիչը նկարագրում է Քերիմ խանի մղած մարտերը ընդ-դեմ բաջարների և հատկապես կանգ է առնում Սպահանի նվաճ-ման վրա՝ գովարանելով Քերիմ խանի գործողությունները:

Քերիմ խանը Սպահանի քաղաքապետ կարգեց Ռեֆի խանին, որը Զերի խանի եղբայրն էր և համարվում էր Քերիմ խանի խորք եղբայրը: Այս մասին Զուղայեցին գրում է. «Քանզի մայր նոցա՝ զկնի մահու առն իւրում եղբօր Եինաղայ՝ առնու զնա յիւր կնութին Եի-նադ հայր Քերիմ խանի, զի էր կին եղբօր իւրոյ, ըստ մոլար օրինի պարսից կարգադրութեան»:<sup>270</sup>

Վերջինս զալով Սպահան իրականացրեց ակտիվ գործու-նեություն և արժանացավ բնակչության վստահությանը: Բնակ-չությունը հատկապես դգորի էր Սավգալի խանի շարաշահումնե-րից և զանգատվում է նրանից: Ռեֆի խանը կանչեց Սավգալի խա-նին իր մոտ և սկսեց կշտամբել հափշտակումների ու շարաշա-հումների համար: Զայրացած Սավգալի խանը ատրճանակի կրա-կոցով սպանեց նրան. «Արդ՝ այն այր յորժամ լուալ զբանս զայտ-սիկ ի բերանոյ նորա, մրմրեալ լի ցասմամբ արձակէ զատրճա-նակն ի վերայ նորա և սպանանէ զայնպիսի արդարակորով և հե-զահամբոյր զիշխանն, և զազգականն Քերիմ խանի»<sup>271</sup>:

Խուճապահար Սավգալի խանը դիմում է փախուստի, սակայն բռնվում է և ենթարկվում մահապատժի. «Ապա իսկ զնայ Սավգալի խան փախստեայ ի Սպահանայ ի տեղի ինչ ամրագոյն դողեալ թագչի, բայց յետոյ ըմբռնեալ՝ սպան զնա Քերիմ խան»<sup>272</sup>:

<sup>270</sup> Խաշատուր Զուղայեցի, էջ 316:

<sup>271</sup> Նույն տեղում, էջ 317:

<sup>272</sup> Խաշատուր Զուղայեցի, էջ 317:

Խաչատուր Զուղայեցին շարունակելով գովարանել Քերիմ խանին նշում է. «Սա էր այր անձնեայ և թիկնաւետ, հզօր և ահագին, գուարթատես և նազարան և ի խրախճանութիւնս կերակրոց՝ անշափութեամբ ուտելով և ըմպելով խրախանայր»:<sup>273</sup> Սակայն բոլոր իրավիճակներում էլ նա զգոն էր, խոհեմ էր ու բարեգութ. «....ևս առաւել ի վերայ քրիստոնէից, որով զրեթէ անշափական շինութիւն և խաղաղութիւն բերիւր յամենայն ազգ»:<sup>274</sup>

Քերիմ խանը շատ հիշարժան գործեր կատարեց իր երկրի բարգավաճման համար: Հատկապես վերելք ապրեց Շիրազ քաղաքը: Պատմագիրը Քերիմ խանին համեմատում է Սեֆյան շահերի հետ և զտնում է, որ վերջինս նրանց գերադասում է և՝ հզորությամբ, և՝ իմաստությամբ:

Իսկ համեմատության մեջ դնելով Նադիր շահի հետ, Խաչատուր Զուղայեցին գրում է . «...սա /Քերիմ խանը- Ա. Գ./ յաւետ զերապայծառ եղի քան զնա. /Նադիրը Ա. Գ./ այլ միայն զդրկողութիւն, և զշափազանց անզթութիւն նա առաւել ունէր քան զսա, որով և ահազին իսկ երեխիր բոլոր տեսողաց»:<sup>275</sup>

Քերիմ խանի փորձերը մեղմացնել ֆեռդալների շահագործումը առանձնակի հաջողության չհասան: Տեղական ֆեռդալները չէին կատարում Քերիմ խանի կարգադրությունները և ավելի էին սաստկացնում զյուղացիության շահագործումը:

1768 թ. Արդեբիլում տեղի ունեցավ ժողովրդական ապստամբություն, որի ժամանակ սպանվեց տեղի խանը: Ապստամբություն-

<sup>273</sup> Նոյն տեղում, էջ 326:

<sup>274</sup> Նոյն տեղում:

<sup>275</sup> Նոյն տեղում:

ներ տեղի ունեցան նաև այլ վայրերում, որոնք երկրի ներքին դրությունը դարձրին անկայուն:

Տեղերում սկսված ապստամբությունը ճնշելու համար Քերիմ խանը ուղարկեց իր փորձված գորակամանատար Նազար-Ալի-խանին, որը խոստացավ ներել բոլոր նրանց ովքեր կինազանդվեն: Բայց այդ խոստումը չպահպանվեց և ապստամբությունները կրկին շարունակվեցին:

Ապստամբությունները կրում էին զուտ տեղական բնույթ և հեշտությամբ ճնշվում էին, քանի որ բոնկվում էին միմյանցից անջատանջատ:

Քերիմ խանը վարում էր նաև ակտիվ արտաքին քաղաքականություն: Հնդկաստանի գրավումը Անգլիայի կողմից անհանգուտացնում էր նրան, քանզի, լինելով հեռատես քաղաքական գործիչ, քաջ հասկանում էր, որ այդ նոյն վտանգը սպառնում է նաև Իրանին: Նա սկսեց սահմանափակել քաղաքական ու տնտեսական հարաբերությունները օտարերկրյա պետությունների հետ: Հատկապես զգուշանում էր Անգլիայի ազդեցությունից: Ռուսաստանի հետ իրականցվում էր աշխույժ առևտուր<sup>276</sup>:

XVIII դարի երկրորդ կեսը նպաստավոր ժամանակաշրջան էր Երկրի տնտեսության զարգացման համար: Լայնորեն զարգացան առևտրական կապերը, հաստատվեցին միջազետական հարաբերությունները: Քերիմ խանն ամեն ինչ անում էր Երկրի քաղաքական ու տնտեսական առաջընթացն ապահովելու համար:

Խաշատուր Զուլայեցին մանրամասն նկարագրում է թե ինչպես Քերիմ խանը հետզհետե սկսում է հեղինակություն վայելել Երկրում: Նա հաջողությամբ կարողանում է հաղթանակ տանել իր

<sup>276</sup> Сл. «История Ирана», под. пед. Иванов М. С., М., 1977, стр. 214.

հակառակորդների նկատմամբ ու ամրապնդել իշխանությունը: Խոսելով Քերիմ խանի ռազմական գործողությունների մասին: Այս մասին պատմազիրը գովեստով գրում է. «Այր ուն Քեարիմ անոն՝ որ եր ծնեալ ի տոհմէ ստրկաց. բայց եր հզոր գօրութեամբ, և ի մարտս պատերազմի յոյժ հրահանգեալ»<sup>277</sup>:

1753 թ. անզիջում պայքար սկսվեց նաև բախթիարակյան ցեղի առաջնորդ Ալի Մարդան խանի և զենդերի առաջնորդ Քերիմ խանի միջև:

Ալի Մարդան խանը փորձում էր համաձայնության գալ Քերիմ խանի հետ՝ խոստանալով վերջինիս նվիրել Նոր Ջուղան, որն աչքի էր ընկնում իր հարստությամբ և գեղեցկությամբ: Քերիմ խանը համաձայնեց և հաղթանակներ տանելով մտավ Սպահան: Ալի Մարդան խանը կատարեց տված խոստումը. «Եւ Քերիմ սպարապետ՝ արար բազում քաջութիւնս, մինչև վանել զամենայն պարսիկս, և գալ հասանել յԱսպահան. ուր մտեալ Ալիմերտէն խանին, առնէ բազում կոտորածս, թագաւորէ ի բաղարիս, և տայ Քերիմայ զ-Ջուղայ՝ ըստ խոստման իւրում»<sup>278</sup>:

Եվ երբ Քերիմ խանը ժամանեց Նոր Ջուղա, ապա նրան փայլուն ընդունելություն ցուցաբերեցին. «... Եւ յօրէ յայնմանէ եղիս հայոցս պաշտպան»<sup>279</sup>: Այնուհետև Քերիմ խանը արշավանք ձեռնարկեց մարերի դեմ, իսկ Ալի Մարդան խանը նորոշուայեցիներին դրեց ծանր հարկի տակ: Նոր Ջուղայի վիճակը խիստ վատացավ: Քերիմ խանը դգոհեց նման վերաբերմունքի համար. «Քանզի զնորն Ջուղայ՝ զոր դաշտամբ ուխտի խոստա-

<sup>277</sup> Խաչատուր Ջուղայեցի, էջ 282:

<sup>278</sup> Խաչատուր Ջուղայեցի, էջ 282:

<sup>279</sup> Նոյն տեղում:

ցար տալ ինձ, և ետուր. այժմ հանեալ թափեցեր յինէն և յափշտակեցեր թարց իրաւանց, զողորմելի բնակիչս նորա խստութեամբ կապտեցեր, և զծառայն իմ անտի մերժեալ հալածեցեր»<sup>280</sup>:

Այս ամենից հետո նրանք դարձան երդվյալ թշնամիներ: Բախումն անխուսափելի էր: Ալի Մարդան խանը սարսափեց, որով հետև շատ լավ գիտեր, որ զորքն ու ժողովուրդը սիրում ու գնահատում են Քերիմ խանին: Ալի Մարդան խանը ճարահատյալ դիմեց փախուստի, իսկ Քերիմ խանը հանդիսավորապես մտավ Սպահան:

Նման տեղեկություններով Զուղայեցին ավարտում է աշխատության առաջին մասը և սկսում երկրորդ մասը՝ Քերիմ խանի ժամանակաշրջանը:

Գրավելով իշխանությունը Քերիմ խանը ձգուում էր միավորել մասնատված երկիրը: Սկզբում արշավեց Գիյյան և նվաճեց այն: Ղաջարների առաջնորդ Հասան խանը հաշտություն խնդրեց: Քերիմ խանը լսել անզամ չուցեց: Նրան հաջողվեց շախջախիչ պարտության մատնել ղաջարներին:

Բայց պետության ներքին դրությունը դեռ շարունակում էր մնալ անկայուն: Քերմանշահ քաղաքում բռնկվեց ապստամբություն, որը զլսավորում էր Ազադ խանը: Վերջինիս հաջողվել էր իր շուրջը համախմբել աֆղաններին ու աֆշարներին և շարժվել դեպի Սպահան:

Քերիմ խանը ի վիճակի չէր կասեցնելու նրա առաջխաղացումը և արդյունքում Ազադ խանը հանդիսավոր կերպով մտավ Սպահան: Քաղաքի բնակչությանը, ինչպես նաև նորջութայեցիներին դրեց ծանր հարկերի տակ: Խաչատուր Զուղայեցին դառ-

<sup>280</sup> Նույն տեղում, էջ 283:

նացած զրում է. «Արդ՝ յայնմիետէ զի տեղլոցէ յայնմանէ բարձաւ, և տապալեալ քայրայեցաւ զշինութիւն և զխաղաղութիւն, և գտեղի նոցա փոխաբերեցան գեղծումն և զապականումն»<sup>281</sup>:

Վիճակը զնալով ծանրանում էր ու ժողովուրդը պատրաստակամություն հայտնեց ամեն ինչով օգնել Քերիմ խանին, եթե նա շարժվի Սպահան: Հիմնական հորդորողը Ղումիշա ավանի բնակիչներն էին. «Որք և խոստացան ամենեքեան՝ առ ի զնա օգնել, տալով ցնա զիետեւակս հրացանաւոր զօրաց. վասն որոյ յուսադրեցաւ Քերիմ խան ի բանից նոցա՝ առնու զիամայն զունդս զօրաց իւրոց՝ ելեալ ի Շիրազայ զայ ի Ղումիշայ ժամանէ»<sup>282</sup>:

Իմանալով այս մասին Ազադ խանը նախահարձակ է լինում և պարտության մատնում Քերիմ խանին: Վերջինս տեսնելով իր զորքի պարտությունը մի քանի հավատարիմ մարդկանցով դիմում է փախուստի և ապաստանում Շիրազ քաղաքում: Ազադ խանը նույնպես պատրաստվեց արշավելու Շիրազ՝ «...առ իսպատ ստնանելոյ զՔերիմ խան, և ընդ իւրով ձեռամբ նուածելոյ զՊարսկաստան, և զայլս բազում զաւառս աշխարհաց»<sup>283</sup>:

Ազադ խանը զորքերի հրամանատար էր կարգել աֆշար ցեղից ոմն Ֆարալի խանի, որը հայտնի էր իր դաժանությամբ ու խստասրտությամբ: Տսկայական ուժերով նա հարձակվեց Քերիմ խանի վրա, որը հաշվի առնելով ուժերի հարաբերակցությունը ստիպված նահանջեց: Ազադ խանը ձգտում էր Քերիմ

<sup>281</sup> Խաշատուր Զուլայեցի, էջ 294:

<sup>282</sup> Նոյն տեղում, էջ 294-295:

<sup>283</sup> Նոյն տեղում, էջ 298:

խանին կենդանի գերել. «Երանի՝ թէ Քերիմ խան անկանիցիւր կենդանի ի ձեռս իմ. որով ի միջոց դոյզն ժամանակի կարելի խոկ լինել Տիեզերակալ աշխարհի»<sup>284</sup>: Քերիմ խանին հաջողվեց ձեղբել թշնամու պաշարումը և ապաստանել Քասարան քաղաքում: Այստեղից նա կոչով դիմեց ժողովրդին՝ սատարելու իրեն: Եթե չեն ուզում ապրել գերության մեջ: Քերիմ խանի շուրջը համախմբվեցին մեծ թվով նվիրյալներ ու ցնծության աղաղակների ներքո նա կրկին ժամանեց Շիրազ: Ժողովուրդը նրան համարում էր իր փրկության և խաղաղության խորհրդանիշը:

Ազադ խանը, վախենալով Քերիմ խանի հզորությունից, ձգուում էր կասեցնել նրա առաջխաղացումը: Իմանալով, որ դաշարական ցեղի առաջնորդ Հասան խանը ուսնացություն է կատարում իր բերդերի վրա, որոշեց՝ նախահարձակ լինել: Ատրպատականի սահմանում նրանց միջև տեղի ունեցավ ուսգիմական բախում, որտեղ Ազադ խանը պարտվեց: Հասան խանը ուղղություն վերցրեց դեպի Սպահան: Իմանալով այս մասին Քերիմ խանը Շիրազից շարժվեց Սպահան և արժանացավ փայլուն ընդունելության: Համախմբելով զինված ուժերը նա արշավեց Հասան խանի վրա: Քերիմ խանի ուժերը պարտություն կրեցին, իսկ Հասան խանը մեկնեց Թէհրան. «Ապա այնուհետև եկեալ Հասան խան մեծաւ յաղթանակութեամբ մտանէ ի Թէհրան քաղաք, և տիրէ իսկ յամենայն սահմանաց նորս»<sup>285</sup>:

<sup>284</sup> Խաչատոր Զուղայեցի, էջ 299:

<sup>285</sup> Նույն տեղում, էջ 306:

Գոլնապատ զյուղի մոտ երկու հակադիր ուժերի միջև տեղի ունեցավ ճակատամարտ, որտեղ Քերիմ խանի զորքը պարտվեց. «Իսկ այնուհետև չուէ խաղայ Հասան խան ընդ ամենայն բազմութեամբ գօրուն ի տեղուցէ բանակին՝ եկեալ մտանէ մեծահանդէս և շրեղապանձ ճոխութեամբ յԱսպահան քաղաք»<sup>286</sup>:

Այստեղ նա բնակչությանը սկսեց ճնշել և նեղել: Հատկապես խիստ ծանր էր հարկապահանջությունը: Տեղեկանալով, որ Ազադ խանը նպատակ ունի զրավել իր հայրենի Վրկան քաղաքը, Հասան խանը շարժվեց Ղազվին քաղաք՝ նպատակ ունենալով զրավել այդ անառիկ բերդը: Հաջողությամբ զրավելով բերդը, նա Ազադ խանին պարտության մատնեց: Վերջինս փախավ Բաբելոն, իսկ հետազայում անցավ ծառայության Քերիմ խանի մոտ:

Հաղթանակ տանելուց հետո Հասան խանը մեծ ավարով վերադարձավ Սպահան: Քերիմ խանը գտնվում էր Թեհրանում և պատրաստվում էր արշավելու Սպահան: 1762 թվականին քաղաքում բռնկվել էր ապստամբություն, որն ուղղված էր շահագործման ու հարկային քաղաքականության դեմ: Քերիմ խանը մտավ Սպահան: Քաղաքի կառավարիչ Զերի խանը դիմեց փախուստի, բայց բռնվեց ու հանձնվեց Քերիմ խանին. «...որոյ տեսեալ զնա՝ զապանումն նորա ներէ թողլով զանցանս նորա, բայց պահէ առ ինքն մեծաւ զգուշութեամբ և անարզանօր»<sup>287</sup>: Իսկ նրա կողմնակիցներին ենթարկեց մահապատժի:

<sup>286</sup> Նույն տեղում, էջ 308:

<sup>287</sup> Խաչատուր Զուղայեցի, էջ 320:

Քերիմ խանը իր հավատարիմ մարդկանցից մեկին նշանակեց Սպահանի կառավարիչ, իսկ ինքը մեկնեց Երկրի տարբեր շրջաններում կարգ ու կանոն հաստատելու. «Ապա զնացեալ մտանէ պերճահանդէս փառօք ի Շիրազ, և անդ դնէ զաթող թագաւորութեան իւրոյ. և հնարիւք իմն նուածեալ զնախարարս պարսից, հնազանդեցոյց զնոսա ընդ իւրև, և վարեաց խաղաղութեամբ զթագաւորութիւնս պարսից մինչև ի մահ»<sup>288</sup>:

XVIII դարի 90-ական թվականներին խոշոր իրադարձություններ տեղի ունեցան Իրանի ներքաղաքական կյանքում: 1779թ. Քերիմ խանի մահը ազգակիցների միջև առաջ բերեց սուր երկպառակություններ, որից օգտվեցին զենդերի հնամենի հակառակորդները՝ թյուրքական ցեղախմբերից դաշարները: Նրանց հաջողվեց կործանիչ հարված հասցնել և վերացնել զենդերի պետությունը: Գահակալական երկարատև կոփվներում հաղթող հանդիսացավ դաշար ցեղի ներկայացուցիչ Աղա Մուհամմադ խանը (1778-1797թթ.), որը կարծ ժամանակում տիրելով գրեթե ողջ Իրանին, իր առջև խնդիր դրեց վերականգնել Իրանի երբեմնի գերիշխանությունը Այսրկովկասում: Մուհամմադ խանը հիմք դրեց դաշարական հարստությանը (1796-1925): Նոր շահը իր համար մայրաքաղաք ընտրեց Երկրի հյուսիսում գտնվող մի փոքրիկ քաղաք՝ Թեհրանը: Ինչպես նշում է Լեռն. «Այդ մարդուն, որ կրում էր շահի անվան հետ երբեք չծլրդված «Աղա» անունն այն պատճառով, որ նա ներքինի էր, վիճակվել էր Պարսկաստանը նորից միացնելու և Պարսկական անիշխանությանը վերջ դնելու մեծ բախտը»<sup>289</sup>:

<sup>288</sup> Մույն տեղում, էջ 325:

<sup>289</sup> Լեռ, Խշկ. աշխ., հ.3, զիրք 2, էջ 384:

Ծայրահեղ դաժանությամբ աշքի ընկած խանը դարձավ ուզմական մի գործիչ, որին հրապուրում էր միայն նվաճողական փառքը: Իրանը նա հնազանդեցրեց ոչ միայն գենքով, այլև սարսափ տարածելով ամենքի վրա: 1794 թ. գրավելով Քերման քաղաքը, նա տեղի 20 հազար կանանց հանձնեց իր գինվորներին, իսկ տղամարդկանց հրամայեց ծեծել կամ կուրացնել: Իր առջև բերված 7 հազար զույգ աշքերը նա կշռում էր անձամբ ու համրում: Այնուամենայնիվ նա Իրանը չէր համարում ամբողջական դարձած, քանզի պակասում էր Այսրկովկասը, որը համառորեն չէր ուզում ճանաչել նրա իշխանությունը<sup>290</sup>:

Շուտով Աղա Մուհամմադ խանը Վրաց Հերակլ Բ արքայից պահանջեց խգել կապերը Ռուսաստանի հետ և անվերապահորեն ենթարկվել իրեն: Նա հպատակություն էր պահանջում նաև Այսրկովկասի տարածքում եղած խանություններից: Սակայն Հերակլ Բ-ն, որն ապավինել էր Ռուսաստանի հովանավորությանը, ամենայն վճռականությամբ մերժեց սպառնալիքներով ուղեկցվող այդ պահանջը: Աղա Մուհամմադ խանը մերժում ստացավ նաև Ղարաբաղի Իբրահիմ խանից: Նրանք կարծում էին թե խանը իրանական անիշխանության սովորական վաղանցուկ երևույթներից մեկն էր:

Հարկ է նշել, որ Իրանի թիկունքում կանգնած էին Անգլիան և Ֆրանսիան, ինչպես նաև Թուրքիան, որոնք խիստ անհանգստացած էին Ռուսաստանի արևելյան քաղաքականության հաջողություններով, որի մեջ մեծ նշանակություն ուներ Իրանը: Ռուսաստանը միայն 1796 թվականին ձեռնարկեց իրանական արշավանքը, որը զիսավորում էր Վալերիան Զուբովը:

<sup>290</sup> Նոյն տեղում, էջ 384:

Այդ արշավանքին մասնակցեց նաև ոռուսահայ հայտնի գործիչ Հովհաննեսի Արդությանը, որը գործուն ծառայություններ մատուցեց ոռուսական հրամանատարությանը<sup>291</sup>:

1795 թ. Աղա Մուհամմադ խանը արշավանք սկսեց Վրաստանի դեմ, որի ժամանակ դաջարները սոսկալի ավերածության ենթարկեցին Թիֆլիսը (Տփղիսը): Բռնի Իրան քշվեց մոտ 12 հազար մարդ: Երկու կողմերի միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 1795 թ. սեպտեմբերի 12-ին Կրծանիս կոչվող վայրում<sup>292</sup>:

Զնայած վրացական գորքերի քաջարի դիմադրությանը, թշնամուն հաջողվեց ներխուժել Թիֆլիս և այրել այն: Այս ավերիչ արշավանքը խոր հետք է քողել թէ՛ ժամանակակիցների հիշողություններում, թէ՛ հայ և վրաց աղբյուրներում: Թիֆլիսին հասած աղետը շատ ծանր են վերապրել մայրաքաղաքի հիմնական բնակչությունը կազմած տեղի հայերը: Դրա մասին են խոսում այն բազմաթիվ վկայությունները, որոնց հեղինակները ժամանակակից են տեղի իրադարձություններին, կամ ականջալուր են եղել այդ արհավիրքի ականատեսներին: Այդ վավերագրերը հավաստում են ընդհանուր թշնամու դեմ եղբայրական երկու ժողովուրդների մղած միասնական պայքարը:

Թիֆլիսի ավերման մասին հայ հեղինակների նկարագրությունների մեջ առանձին ուշադրության է արժանի դեպքե-

<sup>291</sup>Տե՛ս Դիլոյան Վ., Լազարյանների հասարակական – քաղաքական գործունեության պատմությունից, /XVIII դարի երկրորդ կես, Երևան, 1966, էջ 177-178:

<sup>292</sup>Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի անդրկովկասյան արշավանքների մասին, /1795-1797թթ./, աշխատասիրությամբ Տիտանյան Ռ. Տ., Երևան, 1981, էջ 6:

թին ականատես թիֆլիսաբնակ կույսեր Թագուհի Միքայելյանի և Գայանե Խոջա-Բեհբուլյանի նամակը, որը պահպում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 8216 ձեռագրում<sup>293</sup>:

Թագուհի Միքայելյանը 1795 թ. աղետի ժամանակ եղել է Թիֆլիսի սր. Ստեփանոս կուսանոցի մայրապետը, իսկ Գայանե Խոջա-Բեհբուլյանը՝ սարկավագուհին: Երկուսն էլ սերում էին թիֆլիսաբնակ հայտնի գերդաստաններից, որոնք ճանաչված էին ու հեղինակություն էին վայելում ամբողջ Վրաստանում: Երկու կույսերն էլ մեծ զրկանքներ կրելով հասել էին Մողդոկ, անցել Աստրախան, որից հետո հանգրվանել Ղզլարում: Այստեղ էլ նրանք մահացել են, Գայանեն 1796 թ. օգոստոսին, իսկ Թագուհին՝ 1799 թ.<sup>294</sup>:

Կույսերի նամակը Թիֆլիսի 1795 թ. զրավման մասին մեզ հայտնի հայ աղբյուրներից հնագույնն է: Այդ նամակը հասցեազրված էր Հովհաննես Լազարյանին և նրա տիկնոջը՝ Կատերինային: Նամակը վկայում է, որ հեղինակները ծանոթ են հայ պատմագրության հուշարձաններին և քաջածանոթ են Հին Կտակարանին: Նրանց հաջողվել է ժամանակազրական հաջորդականությամբ և ամենայն մանրամասնությամբ պատմել Թիֆլիսին և նրա բնակիչներին հասած աղետների մասին: Կույսերը վշտացած նշում են այն հանգամանքը, որ Քարթլի - Կախեթի թագավորության զինված ուժերը միասնությամբ

<sup>293</sup> ՀՀ Մատենադարան, ձեռագիր 8216, երև 203:

<sup>294</sup> Գասպարյան Ա. Ա., Արժանահավատ տվյալներ 1795 թ. Թիֆլիսի զրավման հետևանքների մասին, ՀՀ ԿԳՆ, ԳՊՄԻ, Զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 2001, էջ 26-28:

հանդես չեկան և չկարողացան արժանի դիմադրություն ցույց տալ թշնամուն:

«Իբրև լուեալ վրաց, թէ յայն ինչ տեղի եկեալ են, ելին ի ճակատ առ ի ընդում կալ նոցա, բայց սակաւ զօրոք (մանաւանդ, թէ յանմիաբանութենէ վրաց և հայոց) ոչ կարողացաւ արքայն պայքարել ընդ զօրաց պարսից, յորոց զանգիտացեալ մի գուցէ ձերբակալ լինի և ի ձեռու նոցա, ապա ի յետս կոյս դարձաւ, զորմէ զրեթէ մազապուրծ ելեալ, փախեաւ և զնաց ի նեղուց և ի կիճս լերանց՝ առ զուզակիցն իւր, իսկ ըստ այս և զօրքն վրաց փախեան և զնացին յայլ և յայլ ամրոց տեղիս, ապա զկնի նոցա եկին զօրքն պարսից յամենուստ, իբրև շոլերս երամոց՝ ըստ հրամանի շահին՝ զրոհ տուեալ մտին ի քաղաքն մեր Տփիլիս՝ (Թիֆլիս-Ա.Գ) ի 1795 թույն, ի սեպտեմբերի 10-ին, յորում կուռն ջանիր բազմատարագ հարուածս արարին և բազումս սրոյ ճարակ ետուն, զոմանս յեկեղեցւոց, զոմանս ի պալատս, զոմանս ի տունս, զոմանս ի պանդոկս, զոմանս ի վաճառնոցս, զոմանս ի փողոցս, զոմանս առաջի կրպակաց, զրազումս կոտորեցին և զբազումս սրախողիսող արարին»<sup>295</sup>:

Նկարագրելով այն անլուր զրկանքները, զարիուրելի կտտանքները, իրանական զինվորների վայրագությունները, կույսերը սրտի մորմորով միաժամանակ զրում են նաև քաղաքի հրդեհի մասին: Այստեղ նրանց շարադրանքը զեղարվեստական երանգ է ստանում: Թագուիի և Գայանե կույսերը նկարագում են նաև Թիֆլիսից փախած հայերի ծանր վիճակը, որոնց

<sup>295</sup> Հայկական աղյուրները Աղա Մուհամմադ խանի անդրկովկասյան արշավանքների մասին, աշխատասիրությամբ Տիտանյան Ռ. Տ. Երևան, 1981., էջ 45:

թիվը ըստ նրանց կազմել է 3000 ընտանիք: Դա միանգամայն հավանական թիվ է: Գերվաճների քանակը ըստ նրանց հասել է 105 հազարի: Սա թիշ հավանական է, թեև գերիների մեջ եղել են նաև Թիֆլիսի շրջակա զյուղերից և այլ վայրերից տարագրվածներ: Հայտնի է, որ Թիֆլիսից գերվաճների թիվը հասել է 15 հազարի: Հարկ է նշել, որ նամակի հեղինակները Թիֆլիսի գրավման ժամանակ արդեն հեռացել են քաղաքից և գերվաճների մասին ստույգ տեղեկություններ չեին կարող ունենալ:

Այնուամենայնիվ, այս նամակը շարադրված է իրադարձությունների թարմ տպավորության ներքո, անաշառ ականատեսների կողմից, հետևաբար այն արժանահավատ ու կարևոր սկզբնաղբյուր է: Նամակը կարող է նպաստել նաև իրանական գորքերի կողմից Թիֆլիսի գրավմանն առնչվող մի շարք հարցերի պարզաբանմանը և ճշգրտմանը:

Խոսելով Աղա Մուհամմադ խանի արշավանքների մասին Վարդան Օձնեցին գրում է. «Ներքինի աղայ Մհամմադ խան, որ եր ազգեաւ դաշար, յերկրէն Քուշանաց՝ որդի Մահմետ Հասան խանի, զօրացաւ յոյժ ի վերայ պարսից, յաղթահարեալ նուածեաց ընդ լծով իրով զամենայն զաւառակալս Պարսկաստանի»<sup>296</sup>: Այնուհետև նա գրավեց Թավրիզը, Սպահանը և հասավ մինչև Արցախ:

Հատկապես մեծ արժեք են ներկայացնում Վարդան Օձնեցու տեղեկությունները 1795 թ. պարսիկների Երևան կատարած արշավանքի մասին: Ըստ այդ տվյալների Ալի դուլի խանը պահանջում է Երևանի խանից հնագանդվել իրեն, սակայն ստանում է մերժողական պատասխան:

<sup>296</sup> Նույն տեղում, էջ 176:

Զկարողանալով զրավել Երևանը« Այի դույի խանը ավերում է Արարատյան նահանգի զյուլերն ու շրջանները: Վարդան Օձնեցին կարևոր տեղեկություններ է հաղորդում նաև 1795 թ. Շուշիի հերոսական պաշտպանության մասին. «Իսկ Մհամմադ շահ ուղղակի հասեալ ի Ղարաբաղ զբերդարադաքն Շուշի պաշարեաց, ուր ժողովեալ ամրացեալ էին Երրահիմ խան Արցախայ և ամենայն քնակիչը Միւնեաց և Արցախայ, ոչ բաւականացեալ բերոն տեղի բազմութեանն երկոտասան հազար տուն հայր Արցախայ և Միւնեաց ամրացան ի ձորն, որ ի ներքոյ է Շուշի բերդին»<sup>297</sup>:

Ինչպես Երևանում, այնպէս էլ Շուշիի ամրոցների պարիսպների տակ կրած պարտության համար իրանական զինվորները վրեժինդիր են լինում անզես ժողովրդից: Օձնեցին նկարագրում է, թե ինչպիսի խիզախություն են ցուցաբերում 60 հայ քաջորդիներ, որոնք հանկարծակի հարձակվում են թշնամու վրա և մեծ կորուստներ պատճառում նրան. «Պատմեաց մեզ ոմն արցախեցի ծերունի ականատես, թէ ի պաշարել բերդին յամրացելոց անտի հայոց ի բերոն վաթսուն արք կորուվիք, հետևակք և սուսերամերկք բազում վնաս և տառապանս հասուցանէին արքունի զօրաց պարսից հարկանելով յափշտակէին զպաշար և զկարասիս զօրաց նոցա, որոց յոյժ վշտացեալ Մհամմադ շահ, իրամայէ ամենայն զօրաց իւրոց, որք էին իբրև ութսուն հազար, ամենայն արթնութեամբ ի դարան մտանեն և ածել ընդ բրամբ զվաթսունս»<sup>298</sup>:

Շուշի արշավելու ժամանակ շահի բանակում են եղել Մելիք Մեմլումն ու Գանձակի Զավադ խանը, որոնք Աղա Մուհամմադ

<sup>297</sup> Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի անդրկովկասյան արշավանքների մասին, աշխատասիրությամբ Տիտանյան Ռ. Տ., Երևան, 1981, էջ 181:

<sup>298</sup> Նոյն տեղում:

խանին համոզել են սկզբում արշավել Թիֆլիսի, նոր ապա Շուշի: Եվ շահը լսելով նրանց այդպես էլ վարփում է. «Շահն զննելով Շուշի ամրոցի անմատչելի դիրքը, թողնում է այն անգրաւ և գնում Թիֆլիսի վերայ»<sup>299</sup>:

Ռուշադրության է արժանի այն փաստը, որ վրացիները թերազնահատել են հակառակորդի ուժերը և լրջորեն չեն նախապատրաստվել քաղաքի պաշտպանությանը: Հստ Վարդան Օձնեցու ժողովուրդը խուճապի է մատնվել և քաղաքը թողել բախտի բմահաճույքին: Այս մեղադրանքը վերաբերում է միայն քաղաքի վերնախավին, իսկ բնակիչները համառ կերպով պայքարել են ամեն մի փողոցի համար: Պատմիչը նշում է նաև Թիֆլիսի բնակչության գոհերի ու գերիների թիվը. «Եղան թիւ կոտորածի բնակչաց Տփխիս քաղաքի ի հայոց և ի վրաց ութ հազար անձանց, և գերելոցն տասն և վեց հազար»<sup>300</sup>:

Թիֆլիսն ավերելուց հետո Աղա Մուհամմադ խանը շարժվում է Մուղանի դաշտ՝ ձմեռելու: Նա նպատակ էր հետապնդում զարնանը վերսկսել ու ազմական գործողությունները: Սակայն ոուսական գորքերի առաջխաղացումը ստիպում է Աղա Մուհամմադ շահին վերադառնալ Իրան:

Հայկական աղբյուրներում բազում տեղեկություններ կան պահպանված Աղա Մուհամմադ խանի դաժանությունների մասին: Անանուն հեղինակը նշում է. «Աղա Մուհամմեդի հաշմանդամութեան պատճառ լինող Նադիր շահի (վերջինս նրան դարձել էր ներքինի-Ա.Գ.) երկրաւոր ածիւնը նա ամփոփել էր

<sup>299</sup> Պատմութիւն Աղուանից, Բ. հատոր, էջ 123:

<sup>300</sup> Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ-խանի անդրկովկասյան արշավանքների մասին, աշխատասիրությամբ Տիտանյան Ռ. Տ., Երևան, 1981, էջ 189:

դեպի դահլիճ տանող նրբանցքի սալահատակի տակ - որպէս զի ամեն օր միջոց ունենայ կոխ տալ ատելի ոսկերքը»<sup>301</sup>:

Շահը ցանկանում էր նաև այդպիսի մի գերեզմանի մեջ ամփոփել ամբողջ մարդկությանը և ոտնակոխ անել. «Մարմնապէս հաշմանդամ եղած-շահը դարձաւ բարոյական հրեշ»<sup>302</sup>:

Աղա Մուհամմադ խանի դաժանությունները իր դեմ հանեցին նույնիսկ իրեն ամենահավատարիմ մարդկանց:

1797թ. Աղա Մուհամմադ խանը երկրորդ անգամ է արշավում Այսրկովկաս և այս անգամ, ինչպես նշում է Սարգիս Հասան Զալայյանցը, Իբրահիմ խանը չկարողանալով դիմադրել. «Ելեալ ի զիշերի ախիւն հանդերձ փաղչի ի Կալկաս, առ աներ իւր՝ առ խանն Օմար և բերդն թողու ի դատարկ»<sup>303</sup>: Աղա Մուհամմադ խանը հեշտությամբ գրավում է անպաշտպան բերդը և դաժան ավերածության ենթարկում. «Հուսկ յետոյ ի մտեալ յետ կողբապտելոյ զբոլոր քաղաքն զիիմն ի վեր առնել բոլոր շինուածոց և զամենայն բնակիչս նորին վարեալ ի Պարսկաստան»<sup>304</sup>:

Աղա Մուհամմադ խանի՝ դեպի Այսրկովկաս կատարած արշավանքների մասին ուշագրավ տեղեկություններ ենք գտնում նաև Սերովի Պատկանյանի արձակ և չափածո ստեղծագործություններում<sup>305</sup>:

Սերովի գրիչը եղել է մեզ հետաքրքրող դեպքերի ականատես և թողել է «Պատմութիւն աւերման Տիգիս քաղաք» վեր-

<sup>301</sup> Նույն տեղում, էջ 199:

<sup>302</sup> Նույն տեղում, էջ 163:

<sup>303</sup> Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ-խանի անդրկովկասյան արշավանքների մասին, աշխատասիրությանք Տիտանյան Ռ. Տ., Երևան 1981 թ., էջ 164:

<sup>304</sup> Նույն տեղում, էջ 164:

<sup>305</sup> Տե՛ս՝ Դիւան Հայոց պատմութեան, զիբք Ժ. Թիֆլիս, 1912, էջ 376:

նազրով արձակ մի ստեղծագործություն: Լինելով ժամանակի կրթված անձանցից մեկը Սերովբեն շատ ճիշտ է ընկալել դեպքերն ու եղելությունները և կարողացել է պատշաճ կերպով գնահատել դրանք: Նրա նկարագրություններն աչքի են ընկնում անմիջականությամբ և զգացմունքայնությամբ:

Անհուն կսկիծով նա գրում է սիրելի քաղաքի ավերման ու կործանման, բնակչությանը հասած արհավիրքների և անլուր դաժանությունների մասին, որ պատճառում էին պարսկական հրոսակները:

Հարկ է նշել, որ դեռևս Այսրկովկաս կատարած արշավանքի նախօրյակին Աղա Մուհամմադ խանը բանակցություններ է վարել մի քանի պետությունների հետ, նպատակ ունենալով ճշտել նրանց վերաբերմունքը ձեռնարկվելիք արշավանքի հանդեպ:

Ասենք նաև, որ հայկական աղբյուրներում այս մասին ոչ մի տեղեկության չենք հանդիպում<sup>306</sup>:

Արշավանքից առաջ Աղա Մուհամմադ խանը խորհրդակցություն է հրավիրում քննարկելու իրանա-ավստրիական հարաբերությունների հարցը և լսել ավագանու կարծիքն այդ մասին: Սերովբեն Պատկանյանը նշում է, որ ավագանին հավանություն է տալիս Աղա Մուհամմադ խանի գործելակերպին:

Հայտնվել է այն կարծիքը, որ Թուրքիան անշուշտ հավանություն կտա արշավանքի իրականացմանը, բայց ավելի նպատակահարամար կլինի եթե այդ ծրագիրն արժանանա նաև

<sup>306</sup> Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի անդրկովկասյան արշավանքների մասին, աշխատասիրությամբ Տիտանյան Ռ. Տ., Երևան, 1981, էջ 73:

ավստրիական կայսեր հավանությանը: Անմիջապես դեսպաններ են ուղարկվում հիշյալ երկրներ՝ մեծագին նվերներով հանդերձ: «Որք առ ժամայն փութացուցին զծայրս զրչաց ի կաղամարս սնորակ մելանի թանալ, և ի սպիտակ քարտէնս շարահիւսել, հուսկ յետոյ՝ ընդ այլ յոլով պարզես յանձն առնուլ ընտիր ընտիր արանց և առաքել անուամբ դեսպանութեան առ երկարանշիւր կայսերսն. այսինքն առ Բիւզանդիոյն, /Կոստանդնուպոլիս-Ա.Գ./ և առ Վիեննային»<sup>307</sup>:

Հետաքրքիր է այն հանգամանքը . որ հիշյալ երկրները հավանություն տալով հանդերձ այդ ծրագրին, նկատի ունենալով Ռուսաստանի հովանավորությունը, մատնանշել են Վրաստանը զրավելու անկարելիությունը:

Սերովի Պատկանյանը ամենայն ճշտությամբ շարադրում է Աղա Մուհամմադ խանի գործելակերպը: Ինչպես զիտենք վրաց թագավոր Հերակլ II-ը մերժում է Աղա Մուհամմադ խանի վերջնազիրը: Այդ առիթով Սերովին զրում է հետևյալը. «Ուստի նա ետ զբացատւեթան պատասխանիս՝ ապահնելով նախ՝ յԱստուծոյ, և ապա՝ յօգնութիւն ոռուաց: Քանզի՝ Եկատերինէ կայսրուիին շնորհեալ էր Հերակլայ Արքային զ 25000 զինորս կապեալս զինուք, որք յաւետ կային ի Մօղդօրի, մեծաւ պատրաստեութեամբ, և ակնունէին զալստեանն համբաւոց կողման, որք իբրև զբազէ և զցին ժամանեսցեն յանձկութիւնս նեղութեանց Քրիստոնէից»<sup>308</sup>:

Ի դեպ հայկական սկզբնադրյուրներից միայն Սերովի մոտ ենք հանդիպում պատմական այն իրողությանը, ըստ որի

<sup>307</sup> Նույն տեղում, էջ 73:

<sup>308</sup> Դիան Հայոց պատմութեան, զիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ 357:

Աղա Մուհամմեդ խանը նախրան Վրաստանի վրա հարձակվելը, իրեն հատուկ երկդիմությամբ շտապում է հավատացնել Հյուսիսային Կովկասում (Մոզդոկում) գտնվող ռուսական զորքերի հրամանատարությանը, թե ինքը չի պատրաստվում արշավելու Այսրկովկասի վրա<sup>309</sup>:

Սերովքեն տեղեկություններ է հաղորդում նաև վրացական և իրանական զորքերի միջև տեղի ունեցած ճակատամարտերի մասին:

Այնուհետև Սերովքեն նկարագրում է Թիֆլիսի գրավումն ու ավերումը և հանգամանալից խոսում իրանական հրոսակների այն սահմոկեցուցիչ դաժանությունների մասին, որոնց ենթարկվում էր քաղաքի խաղաղ բնակչությունը. «...զումանս խարեին պէս պէս շարչարանօք և շանթացեալ երկաթիւք և այլ տանջանարանօք և զումանս տանէին ի գերութիւն»<sup>310</sup>:

Մի շաբթ հայկական սկզբնադրյուրների վկայությամբ իրանական զորքերը Թիֆլիսում մնացել են յոթ օր, իսկ ըստ Սերովքեի՝ երեք օր: Արագ հեռանալու պատճառը ըստ նրա Աղա Մուհամմադ խանի երկյուղն էր ռուսական պետությունից: Եվ իսկապէս, Մոզդոկում գտնվող ռուսական զորքերը իմանալով Թիֆլիսի ավերման մասին շտապում են օգնության: Սակայն ճանապարհն անբարեկարգ լինելու պատճառով ռուսական զորքերը չեն կարողանում արագ շարժվել<sup>311</sup>:

<sup>309</sup> Դիւն Հայոց պատմութեան, գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ 357:

<sup>310</sup> Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի անդրկովկասյան արշավանքների մասին, աշխատափրությամբ Տիտանյան Ռ. Տ., Երևան, 1981, էջ 81:

<sup>311</sup> Նույն տեղում, էջ 26:

Սարգիս Հասան Զալայյանցը անդրադառնալով վերոհիշյալ իրադարձություններին լրացնում է Սերովքեի հաղորդած տեղեկությունները պարսիկ ռազմիկների գործողությունների մասին<sup>312</sup>:

1795-1797թթ. Աղա Մուհամմադ խանի՝ Այրկովկաս կատարած արշավանքների մասին կարևոր վկայություններ են պարունակում կաթողիկոս Ղուկաս Կարնեցու գրագրություններն ու նամակները՝ հասցեազրված Եկատերինա Բ.-ին, Պավել Ա.-ին և Հերակլ Բ.-ին: Լազարյաններին և Հովսեփ Արդությանին, ինչպես նաև հնդկահայ գաղթօջախի նշանավոր ներկայացուցիչ Շահամիր Շահամիրյանին: Վերջինիս ուղղված նամակում կաթողիկոսը հայտնում է, որ Աղա Մուհամմադ խանը յուրայիններից մեկին սարդարի պաշտոնով ու մեծաքանակ զորքով ուղարկել է Աստրավատական և որ այդ սարդարը պահանջել է անվերապահ հպատակություն Այրկովկասի խաններից և Հերակլ II-ից, սակայն վերջինս և Շուշիի Իբրահիմ խանը համաձայնության են եկել ընդհանուր թշնամու դեմ միասնաբար պայքարելու և «...ընդդիմանալու շահ անուանելոյն և սարդարին»<sup>313</sup>:

Հիշատակության է արժանի Ղուկաս Կարնեցու տեղեկությունը Աղա Մուհամմադ խանի եղբոր՝ Ալի Ղուլի խանի, երկրորդ անգամ սարդարի իրավունքներով Երևանի խանություն մուտք գործելու և բնակչությանը կրկնակի հարկադրումների և տուգանքների ձևով բռնազանձումների ենթարկելու մասին: Տեղեկություններ կան նաև Աղա Մուհամմադ խանի մեծաքանակ զորքերի Արդեքիլում գտնվելու և Վերստին Արցախ արշավելու մասին: Մտնելով

<sup>312</sup> Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի անդրկովկասյան արշավանքների մասին, աշխատասիրությամբ Տիտանյան Ռ. Տ., Երևան, 1981, էջ 30:

<sup>313</sup> Նույն տեղում, էջ 36:

Արցախ նա լուր է ստանում, որ Իբրահիմ խանը լրել է Շուշիի ամրոցը և ապաստանել Դաղստանում: Թևավորված այս իրողություններից բռնակալը վերցնում է ընդամենը հազար հոգուց քաղկացած մի հեծելազոր և շտապում է մտնել Շուշիի բերդը: Սակայն հաջողության չի հասնում<sup>314</sup>:

Արժանահավատ են Ղուկաս Կարնեցու տեղեկությունները Աղա Մուհամմադ խանի սպանության մասին: Կարնեցու նամակից տեղեկանում ենք, որ երբ Աղա Մուհամմադ խանի սպանության լուրը հասնում է Երևան, ապա նրա եղբայրը՝ Ալի Ղուլի խանը, որ մինչ այդ «...զեղջուրս ածէր յայս կոյս և յայն կոյս նկուն եղեալ եմուտ ի բերդն և ետ աւուրց ընդ բերդապահացն կորեան»<sup>315</sup>:

Ալի Ղուլի խանը շտապում է Թեհրան՝ ժառանգելու թափուր մնացած զահը, սակայն անմիջապես կուրացվում է թագաժառանգի՝ իր եղբորորդու, Բաբա խանի հրամանով:

Ըսդգծելով Ալի Ղուլի խանի դաժանությունները կաթողիկոսը գրում է. «...և զորայիսի աղետալի անցուցին ընդ քազում զաւառ, զաւերութիւն, զրածութիւն և զգերութիւն և զկողոպատումն ընչից, յորոց և որքան վնասը հանդիպեցան սրբոյ արռողջոյ, և որչափ նեղութիւնք ժամանեցին մեզ»<sup>316</sup>: Ղուկաս Կարնեցին այդ ամենը անհնարին է համարում հանձնել թղթին: Օտար զավթիչների ընչաքաղցության, բռնազանձումների ահուելի չափերի մասին

<sup>314</sup> Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի անդրկովկասյան արշավանքների մասին, աշխատասիրությամբ Տիտանյան Ռ. Տ., Երևան, 1981, էջ 42:

<sup>315</sup> Ղույն տեղում. էջ 37:

<sup>316</sup> Ղույն տեղում:

պատկերացում տալու նպատակով Դուկաս Կարնեցին գրում է. «Թէ զիանդերձս մեր ևս վաճառեալը ոչ լինուր վճարել»<sup>317</sup>:

Հակոբ Շուշեցին խոսելով Աղա Մուհամմադ խանի դաժանությունների մասին նշում է, որ անզամ նրանից դժգոհ էին իր անմիջական սպասավորները, որոնցից մեկը՝ Սաֆար Ալին զիշերով մտնում է շահի ննջարանը և սպանում է նրան:

Վերոհիշյալ պատմիչները գոհունակությամբ են խոսում Աղա Մուհամմադ խանի սպանության մասին, որի մահը փրկեց երկիրը հետագա կոտորածներից: Անանուն հեղինակը նշում է, թե ինչպես Սաֆար Ալին իր համախոհ Աբբաս բեկի հետ միասին մտնում է շահի ննջարանը: Թերև շշուկից շահը բացեց աշքերը, բայց նույն բոպեին Սաֆար Ալին դաշույնը միարձեց նրա սիրտը: Շահը, որ պատկած էր, կիսով շափ բարձրացավ, ձեռքը դրեց կրծքին ու ասաց. «Թշառական, դու սպանեցիր Իրանը»<sup>318</sup>:

Իրանը դաժան ու անզութ բռնակալի վերջին խոսքերն էին:

Աղա Մուհամմադ խանի մահը մեծ խառնաշփռթություն առաջացրեց և երկրում կրկին սկսվեցին զահակալական կոիվները: Հիմնական պայքարը ընթանում էր թագաժառանդ Ֆաթհ-Ալի-խանի և Նադիր-Միրզայի միջև: Վերջինս բավականին ակտիվ գործունեություն էր ծավալել Խորասանում և աֆղանական գորքերի օգնությամբ գրավել Մեշհեդը: Նրան էին միացել դաշարներից դժգոհ Խորասանի խաները: Մի շաբթ նահանգներում ժողովուրդը չէր ընդունում նոր շահի՝ Սադեղ-խան Շեկակիի իշխանությունը և օգտվելով դրանից Ֆաթհ-Ալի-շահն իրեն ենթարկեց Սադեղ-խանին և շարժվեց Մեշհեդ: 1799 թ. օգոստոսին Նադիր-Միրզան անձնատուր

<sup>317</sup> Նույն տեղում:

<sup>318</sup> Հայկական աղյուսները Աղա Մուհամմադ խանի անդրկովմիայն արշավանքների մասին. աշխատասիրությամբ Տիտանյան Ռ. Տ., Երևան 1981թ., էջ 204:

եղավ, իսկ Խորասան-ի խաները հպատակվեցին Ֆարհ-Ալի-շահին<sup>319</sup>:

Այսպիսով, Ֆարհ-Ալի-շահին հաջողվեց հաղթանակ տանել իր հիմնական հակառակորդների նկատմամբ և հաստատվել Իրանի գահին: Բայց շահի իշխանությունը երկրի մի շարք նահանգներում կրում էր զուտ անվանական բնույթ: Նահանգների ու մարզերի կառավարիչները հաճախ հրաժարվում էին ոչ միայն հարկեր վճարելուց, այլև նույնիսկ ձևականորեն չէին ընդունում շահի իշխանությունը: Ֆարհ-Ալի-շահը ստիպված էր իշխանությունը ամրապնդելու համար հաճախ դիմել ռազմական մեթոդների կիրառմանը:

Այսուհանդերձ XVIII դարի վերջերին Իրանը շարունակում էր մնալ հետամնաց ազրարային երկիր, որտեղ գերիշխում է ֆեոդալական, իսկ մի շարք բռչվոր ցեղերի մոտ կիսաֆեոդալական, կիսանահապետական հարաբերությունները: Նման դրությունը բարենպաստ նախադրյալներ էր ստեղծում օտարերկյա տերությունների միջամտության համար:

Չնայած նման դրությանը, Իրանը չէր համարվում Եվրոպական երկրների ազդեցության ոլորտը, քանզի այդ երկրների դիրքերը դեռ շատ թույլ էին Իրանում: Եվրոպական երկրների միջազգային քաղաքականությունը առանձնակի ազդեցություն չուներ նաև Իրանի ներքին ու արտաքին քաղաքականության վրա: Այսուամենայնիվ երկրի հասարակական-քաղաքական կյանքի թուլացումը և անկումը նախադրյալներ էր ստեղծում օտարերկյա տերությունների միջամտության համար, որոնք աստիճանաբար ձգուում էին Իրանը դարձնել կախյալ տերություն:

<sup>319</sup> Ст. в История Ирана, под. ред. Иванов М. С., М, 1977, стр. 217.

Հարկ է նշել, որ հենց XVIII դարի վերջին Իրանն ընդգրկվում է Եվրոպական պետությունների քաղաքականության շրջանակների մեջ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատության մեջ օգտագործված ու քննարկման առարկա դարձած ամբողջ նյութը հնարավորություն է տալիս հանգելու հետևյալ եզրակացությունների

1. Հայկական աղբյուրները մեծ կարևորություն ունեն Իրանի XVII-XVIII դարերի պատմության ուսումնասիրության դիտանկյունից՝ լրացնելով թուրքական, արաբական, եվրոպական (հատկապես ճանապարհորդական նորեր) սկզբնաղբյուրների վկայությունները։ Նրանց բնորոշ հատկանիշներից է օտար երկրների ու ժողովուրդների պատմության վերաբերյալ հարուստ նյութերի ընդգրկումը։

2. Իրանի պատմության վերաբերյալ նյութերով առանձնապես հարուստ է XVII-XVIII դարերի հայ պատմագրությունը։ Առարել Դավթիծեցու, Զաքարիա Քանաքեցու, Զաքարիա Ազուլեցու, Արքահամ Կրետացու, Աբրահամ Երևանցու, Սիմեոն Երևանցու, Խաչատուր Զուլայեցու, Հովհաննես Տեր-Դավթյան Զուղայեցու և այլոց երկերն աշքի են ընկնում ոչ միայն Իրանի պատմության վերաբերյալ նյութերի մեծ ծավալի ընդգրկմամբ, այլև տվյալների հավաստիությամբ ու անաշառությամբ։ Այդ հատկանիշները հիմք են տալիս վստահորեն հենվելու նշված աղբյուրների հաղորդումների վրա և նրանցով հավաստելու կամ հերքելու այլ աղբյուրների տվյալները։

3. Այդ դարերի պատմագրության մեջ լայն անդրադարձում է գտել իր բուռն զարգացումն ապրող հայ առևտրավաշխառուական կապիտալի զաղափարախոսությունը, որը և զգալի չափով նպաստել է աղբյուրների աշխարհականացմանը։ Հանդես են եկել աշխարհիկ հեղինակներ, որոնք իրենց երկերում մեծ տեղ են

հասոկացրել առևտրավաշխառուական վերնախավի ծավալած գործունեությանը Հայաստանում, Իրանում, Թուրքիայում և այլուր: Այս ամենը նպաստում է ոչ միայն նշված երկրների տնտեսական զարգացմանը, այլև նպաստում է նրա քաղաքական-հասարակական ու մշակութային կյանքի վերակենդանացմանը:

4. ՈՒսումնասիրվող ժամանակաշրջանի հայկական աղբյուրներն օժտված են մի շարք առանձնահատկություններով, որից կարևորվում է այն հանգամանքը, որ դրանք իրենց եռթյամբ զգալի չափով աշխարհականացված են, չնայած նրա ներկայացուցիչները, չնշին բացառությամբ պատկանել են հոգևոր դասին: Թեմատիկան հիմնականում աշխարհիկ է և նրանցում իր անդրադառում է ստացել սոցիալ-տնտեսական ու քաղաքական խնդիրները:

Այդ աղբյուրներում անզամ երևան են եկել քաղաքական կողմնորոշման արմատական հիմնահարցերը: Արժեքավոր տեղեկություններ են ամփոփված Էջմիածնի կաթողիկոսների և իրանական շահերի փոխհարաբերությունների մասին:

5. Կարևոր առանձնահատկություն է նաև այն հանգամանքը, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանի պատմության մեջ համակողմանիորեն արտացոլվել է հայ զաղթավայրերի ու պանդստության պատմությունն իր դրական ու բացասական կողմերով:

Հայ պատմիչների տեղեկությունները աներկրա հավաստում են հայ վաճառականների կատարած անգնահատելի դերի մասին թե՛ Իրանի, և թե՛ Հայաստանի տնտեսական ու քաղաքական կյանքում:

6. Հայ-իրանական առնշություններն իրենց արմատներով գնում են դարերի խորքը: Այդ հարաբերություններն իրենց ակնա-

ոու արտացոլումն են գտել հայ պատմագրության մեջ: Նշված դարաշրջանի ռազմա-քաղաքական իրադարձությունները չեն կարող դուրս մնալ հայ պատմագիրների ուշադրությունից: Նման երևոյթը օրինաչափ է և պայմանավորված է առարկայական գործոններով:

Հայ պատմագրության հետաքրքրությունը Իրանի և հայիրանական հարաբերությունների նկատմամբ, պայմանավորված է ոչ միայն երկու ժողովուրդների դարավոր պատմական կապերով, այլև նրանց միջև հաստատված քաղաքական հարաբերությունների զարգացման հանգամանքով:

Հայ պատմագրությունը որպես հասարակական-քաղաքան մտրի քաղկացուցիչ մաս արտացոլում է հարևան երկրում տեղի ունեցող բեկումնային արմատական փոփոխությունները և ռազմա-քաղաքական կարևորագույն իրադարձությունները:

Հայ-իրանական դարավոր առնչությունները ստեղծում են գիտական հենք Իրանի պատմության ուսումնասիրության համար:

7. XVII-XVIII դարերի հայկական աղբյուրներում արտացոլված է նաև Իրանի միջազգային դրությունը. նրա արտաքին հարաբերությունները եվրոպական երկրների հետ, ինչպես նաև արտաքին քաղաքականության բարդ և ելեւջային հակամարտությունները, ոուսական և եվրոպական դիվանագիտության ոլորտում գոյություն ունեցող սուր ներհակությունները, որոնք բնականաբար չեն կարող վրիպել հայ պատմիչների ուշադրությունից:

XVII դարի վերջին և XVIII դարի սկզբին Իրանում տեղի ունեցող տնտեսական անկումը ուղեկցվում էր Սեֆյանների կենտրո-

նաձիգ պետության քուլացմամբ ու քայրայմամբ։ Նման վիճակից փորձում էին օգտվել արտաքին ուժերը, որոնք ձգուում էին միջամտել երկրի ներքին ու արտաքին գործերին։ Ընդհանրացնելով Աեֆյան հարստության տիրապետության շրջանում Իրանի կազմի մեջ Արևելյան Հայաստանի, ինչպես նաև իրանահայ զաղթօջախների սոցիալ-տնտեսական ու քաղաքական կացությունը, ինչպես նաև ամբողջությամբ վերցրած նրա զարգացման ու գոյատևման հնարավորությունները, պետք է նշել, որ դրանք իրենց բացասական կողմերով հանդերձ, ամուսենայնիվ հայության համար եղել են զարգացման տարիներ։

8. XVII-XVIII դարերի հայկական աղբյուրներում պարունակած հարուստ, արժեքավոր ու բազմարովանդակ նյութերը՝ իրք ականատեսի, ականջալուրի ու գործող անձի գրվածք, հավաստի ու ստուգապատում սկզբնադրյուր է ոչ միայն Հայաստանի, այլ նաև Այսրկովկասի, Իրանի և Թուրքիայի պատմության ուսումնասիրության համար։

Հայկական աղբյուրներն այժմ ել պահպանում են իրենց արդիականությունը և ենթակա են համակողմանի ուսումնասիրության ու վերաարժեքավորման։

Ի վերջո կարևոր առանձնահատկություններից է հայկական աղբյուրների լեզուն, նյութի մատուցման ձևերն ու եղանակները։ Լեզուն փորք բացառություններով միջին զրաբարն է և ժամանակի խոսակցական լեզուն, մատուցման ձևը չափազանց պարզունակ է, բայց միաժամանակ հազեցված հայրենասիրական ջերմ զգացումներով։

XVII-XVIII դարերի հայ պատմիչների աշխատությունները Իրանի պատմության ուսումնասիրության ոլորտում, լիարժեք կեր-

պով լրացնում են այն պակասը, որը գոյություն ունի օտար աղբյուրներում: Նրանց հաղորդած հարուստ ու բազմաբռվանդակ նյութը հավաստում է այն հանգամանքը, որ Հայաստանի պատմությունը մեկուսացված չէ հարևան ժողովուրդների պատմությունից ընդհանրապես, Իրանի պատմությունից՝ մասնավորապես:

Պատմական հանգամանքների բերումով հայ ժողովուրդը սերտ շփումներ է ունեցել Իրանի ժողովրդի հետ կյանքի տարբեր բնագավառներում: Հայկական աղբյուրները հայ ժողովրդի պատմությունը ներկայացրել են Իրանի պատմությանը գուգակցված, ուստի այդ պատմական երկերն ավելի կամ նվազ չափով սկզբնաղբյուր են նաև Իրանի պատմության ուսումնասիրության համար: Այս ամենով էլ պայմանավորված է հայ պատմագրության առանձնահատուկ դերը համաշխարհային պատմագրության մեջ:

Հայկական աղբյուրներն առանձնակի տեղ են գրավում համաշխարհային պատմագրության և հատկապես իրանազիտության մեջ: Այս առումով միանգամայն ճիշտ է նկատել ֆրանսիացի գիտնական Սեն Մարտենը, որ «Հայ պատմիչների տված տեղեկությունները Ասիոյ պատմության մեկ մեծ դատարկը կըլեցնեն»<sup>320</sup>:

Իրանը անզուգական կոթողներ են հայ պատմագրության մեջ:

<sup>320</sup> Ալիշան Դ., նշվ. աշխ., էջ 14:

## РЕЗЮМЕ

### ВОПРОСЫ ИСТОРИИ ИРАНА В XVII-XVIII ВЕКОВ В ТРУДАХ АРМЯНСКИХ ИСТОРИКОВ

В трудах армянских историков мы часто сталкиваемся с очень ценными сведениями по истории Ирана, освещдающими также и историю развития армяно-иранских отношений. Они раскрываются на фоне взаимоотношений двух стран и получают весьма актуальное звучание. С этой точки зрения особенно выделяются труды армянских историков XVII-XVIII вв., которые освещдают ключевые вопросы политической и экономической истории Ирана данного периода. Самые важные события того времени не могли остаться незамеченными армянскими историками, которые пытались достаточно беспристрастно прокомментировать их. Армянские историки, о трудах которых идет речь, были свидетелями и непосредственными участниками этих событий. И не случайно эти источники находятся в центре внимания и иранской исторической науки.

В настоящее время, когда армяно-иранские отношения переживают неуклонное развитие, естественно, возрастает интерес армянского народа к истории соседней страны. В этом смысле армянские источники приобретают особую значимость, так как они являются подчас единственными фактическими материалами по истории взаимоотношений двух соседних народов. Основная цель данной работы представлят внешнее и внутреннее положение в указанный период, исходя из сведений и оценок содержащихся в трудах армянских историков - современников событий.

Среди них особенно выделяется "История" Аракела Даврижеци, как наиболее достоверный первоисточник по истории. Период истории, который представлен А. Даврижеци и является предметом нашего исследования, богат важными событиями. Армения в очередной раз стала ареной военных действий между Ираном и Османской империей, которые в этом противоборстве стремились разрешить вопрос владычества на Ближнем Востоке.

Находящаяся в трудном положения династия Сефянов искала пути выхода из этой ситуации. Продолжались турецко-персидские войны, и Армения превратилась в арену военных действий. Армянские источники 17-18 вв. основные исторические события представляют объективно, без прикрас. В основном они лишены односторонности, и в центре внимания всегда наличествуют важные с точки зрения истории военно-политические события.

Эти богатые и многосодержательные источники указывают на то обстоятельство, что история Армении не оторвана от истории соседних народов, особенно от истории Ирана.

Значимая часть этих источников была написана современниками и свидетелями этого времени.

Все эти источники и исследования до сих пор не утратили своей актуальности, нуждаются в исследовании и переоценке. Армянские источники занимают особое место в мировой истории, особенно в ирановедении.

Of course, it is not excluded that the following sources can not be completely unexceptional especially when we speak about questions, referring to Armenians. But in general they are free from one-sidedness and the events that are important from the point of military-political history are always in the focus of attention.

The works of Armenian historians of XVII-XVIII centuries in the field of Iran history fill up the gap that exists in foreign sources. The rich content testifies the fact that Armenian history is not isolated from the history of neighbouring people at all, especially from Iran history. According to historic circumstances Armenians have had contacts with Irans in different fields of life. They have represented Armenian history in combination with Iran history, so historic works are basis for the exploration of Iran history more or less. So the distinctive role of Armenian historiography in the world historiography is conditioned by it.

It is not by chance at all that the rise of Armenian late medieval historiography began just in XVII century. That period was fatal for Armenians. The great deportation of the turn of the century gave rise to self-preservation instinct, with which Armenian historians were saturated.

In the exploration of Iran history the necessity of Armenian sources is also stated by Iran historians ,thus, in Said Nafiss opinion the whole history of Iran can not be written without using Armenian sources. All these sources and explorations have not lost their contemporaneity till today, and they are liable to comprehensive exploration and estimation.

Armenian sources have special place in world historiography especially in the science of Iran.

They are incomparable monuments in Armenian historiography.

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՊԲՅՈՒՐՆԵՐԻ և ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

## 1. ԶԵՂՈԱԳՐԵՐ

«Մաշտոցի անվան Մատենադարան. ձեռագիր  
N1496, 4515, 8216, 604 3912:

## 2. ԱՊԲՅՈՒՐՆԵՐ

1. Պատմութիւն Առաքել Վարդապետի Դաւրիժեցւոյ,  
Վաղարշապատ, 1896:
2. Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմացն  
1721-1736 թուի, Յառաջարան, բնագիր, Խմբագիր օրինակ  
և ծանօթութիւններ, պատրաստեց հ. Սահակ Ճեմճեմեան,  
Վենետիկ, 1977:
3. Աբրահամ Երեւանցի, Պատմութիւն պատերազմացն  
(1721-1736), Երևան, 1938:
4. Աբրահամ Կաթողիկոսի Կրետացւոյ, Պատմագրութիւն  
անցիցն իւրոյ եւ Նատօր Շահին Պարսից, Վաղարշապատ,  
1870:
5. Աբրահամ Կրետացի, Պատմութիւն, քննական բնագիր,  
ռուսերեն թարգմանություն, առաջարան և  
ծանօթագրություններ՝ Ն.Կ. Ղորղանյանի, Երևան, 1973:
6. Ալիշան Դ., Հայապատում, Վենետիկ, 1901:
7. Ալիշան Դ., Սիսական, Վենետիկ, 1893:
8. Ավգուստինոս Բաջեցի, Ճանապարհորդութիւն յԵւրոպա,  
գրչագիր ի Փարիզ, նոտարք մատենագրութեան հայոց,  
Ս.Պետերբուրգ, 1884:
9. Գարզըրճյան Հ., Պատմութիւն մատենագրութեան հայոց,  
Վիեննա, 1851:
10. Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցւոց», աշխա-  
տասիրեց Հ. Սամուէլ Վոդ. Արամեան, Վենետիկ-Ս.Պազար,  
1978:
11. Դիլան Հայոց Պատմութեան, գիրք Ժ., Թիֆլիս, 1912:
12. Եղիա Կարնեցու Ղիվանը, Երևան, 1968:
13. Եսայի Հասան-Զալալեանց, Պատմութիւն կամ Յիշատակ  
ինչ ինչ անցից՝ դիպելոց յաշխարհին Աղուանից,  
Շուշի, 1839:
14. Երեմիա Քեօմիրծեան, Պատմութիւն համառոտ Դժ  
տարւոյ Օսմանցոց թագաւորացն, Երևան, 1982:

15. Զաքարեայ Սարկաւագի, Պատմագրութիւն, հ. Ա., Բ., Գ., Կաղարշապատ, 1870:
16. Զաքարիա Ազուլեցու Օրագրությունը, Երևան, 1938:
17. Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէջին և պատերազմաց հայոցն Խափանու, Կաղարշապատ, 1871:
18. Ժամանակագրութիւն Գրիգոր Վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղցոյ, իրապարակեց Մեսրոպ Վարդապետ Նշանեան, Երուսաղեմ, 1915:
19. Խաչատուր արեղայի Զուղայեցոյ, Պատմութիւն Պարսից, /ԺԸ դար/ աշխատութեամբ Բարգեն Վրդ. Աղաւելեանց. Կաղարշապատ, 1905:
20. Հակոբ Կարնեցի, Տեղեկագիր Վերին Հայոց, Կաղարշապատ, 1903:
21. Հակոբյան Վ., Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. 1, 1951, հ. 2, Երևան, 1954:
22. Հակոբյան Հ., Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, Ուղեգրություններ, հ. Ա, և Զ., Երևան, 1932:
23. Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ Խանի անդրկովկասյան արշավանքների մասին, աշխատասիրության Ո. Տիտանյանի, Երևան, 1981:
24. Հայերեն ծեռագրերի հիշատակարաններ, ժԷ դար, աշխատասիրությամբ Հ. Փափազյանի, հ. Ա, Երևան, 1974:
25. Հովհաննես Տեր Դավթյան Զուղայեցու Հաշվետումարը, աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի և Հ. Փափազյանի, Երևան, 1984:
26. Մանր ժամանակագրություններ XIII -XVIII դդ., հ. 1, 1951, հ. 2, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1954:
27. Մելքիսեդ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Երևան, 1936:
28. Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտակներ, կազմեց Հ. Փափազյան, պրակ բ. Երևան, 1959:
29. Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, պրակ III /1652-1731/, կազմեց Բ. Կոստիկյան, Երևան, 2005:

30. Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, պրակ IV, /1734-1797/, կազմեց թ. Կոստիկյան, Երևան, 2008:
31. Պատմություն Աղուանից, թ հատոր, ի Մակար Եպիսկոպոս Բարխուտարեանց, Թիֆլիս, 1907:
32. Պատկանյան թ., Նոտարք մատենագրութեան հայոց, Ս. Պետերբուրգ, 1884:
33. Պետրոս Դի-Մարգիս Գիլանեցի, ժամանակագրութիւն, «Կռունկ» Հայոց աշխարհին հանդես, Թիֆլիս, 1863, N 3:
34. Սիմեոն Կաթողիկոս Երևանցի, Զամբռ, գիրք որ կոչչ յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս, եւ իւրոյ շրջակայից վանօրէիցն, համաժրդովկեցեալ եւ շարադրյալ ի Սիմէօն ցաւահար եւ վշտակօծ կաթողիկոսն Երեւանցւոյ, Կաղարշապատ, 1873:
35. Փիրղալեմյան Ղ., Նշխարք պատմութեան հայոց, h.2, «Հետ. Մատենադարանի, ծեռագիր N4515
36. Օրագրություն Երեմիա Չելեպի Քէօմիլըճեանի, հրատարակեց Ս. Նշանեան, Երուսաղեմ, 1939:

### 3. ԳՐՔԵՐ ԵՎ ՀՈՂՎԱԾՆԵՐ

#### Ա/Հայերեն

37. Աբեղյան Ա., Հայոց իին գրականության պատմություն, Երկեր, հ. Դ, Երևան, 1970:
38. Աճառյան Հ., Վավերագրեր հայ-պարսկական հարաբերությունների մասին, Երևան, 1927:
39. Աբրահամյան Ա., Նոր վավերագրեր Դավիթ Բեկի ու նրա գլխավորած ազատագրական շարժման մասին, ԳԱ, «Տեղեկագրեր», Երևան, 1951, N3:
40. Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, հ. Ա, 1964, հ. թ, 1967:
41. Արգարյան Գ., Զաքարիա Սարկավագ, Նրա մասին, Երևան, 1958:
42. Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ.Ա, Երևան, 1959:
43. Անասյան Հ., XVII դարի ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961:

44. Առաքելյան Ա., Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հ.2, Երևան 1964:
45. Առաքելյան Վ., Առաքել Դավրիծեցու մասին, Երևան, 1970:
46. Առաքելյան Հ., Պարսկաստանի հայերը, Նրանց ներկան և ապագան, մաս Ա, Թիֆլիս, 1911:
47. Ավդալբեկյան                          թ.,                          Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969:
48. Բաբայան Լ., Դրվագներ Հայաստանի XIV-XVIII դարերի պատմագրության, Երևան 1984:
49. Բաբայան Լ., Աբրահամ Կրետացի, Երևան, 1977:
50. Բայրուրդյան Վ., Իրանն այսօր, Երևան, 1999:
51. Բայրուրդյան Վ., Նոր Զուղա, Երևան, 2007:
52. Բայրուրդյան Վ., Նոր Զուղայի գաղթօջախը, հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972:
53. Բայրուրդյան Վ., Հայաստանի ազատագրման խնդիրը և զուղահայ առևտրական բուրժուազիան 16-17-րդ դարերում, «16-17-րդ դարերի ազատագրական շարժումները և հայ գաղթավայրերը» (ԳԱԱ պատմության ինստիտուտի ժողովածու), Երևան, 1989:
54. Բայրուրդյան Վ., Հայերի դերը ռուս-իրանական քաղաքական հարաբերություններում XVII դարում, «Հայաստանի պատմական կապերը հարևան Երկրների և ժողովուրդների հետ», Գիտական աշխատությունների ժողովածու, Երևան, 1986:
55. Բայրուրդյան Վ., Իրանահայերի մասնակցությունը իրանա-եվրոպական հակաթուրքական դաշինք ստեղծելու փորձերում (16-17-րդ դարեր) «Իրաբեր հասարակական և գիտությունների» N 9, 1984:
56. Բայրուրդյան Վ., Նոր Զուղայի հայկական գաղութը և կաթոլիկ միսիոնների կազմակերպությունները, ԳԱ, «Տեղեկագրեր», 1964, N9:
57. Բայրուրդյան Վ., Նոր Զուղայի վաճառականությունը և արևմտաեվրոպական կապիտալի տնտեսական էքսպանսիան Իրանում, «Պատմաբանասիրական հանդես», N 3/34/ 1966:
58. Բայրուրդյան Վ., Համաշխարհային առևտությը և իրանահայությունը 17-րդ դարում, Թեհրան, 1996:

59. Բայրուրդյան Վ., Իրանի պատմություն, (Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2005:
60. Բայրուրդյան Վ., Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011:
61. Բայրուրդյան Վ., Թուրք-իրանական հարաբերությունները 1900-1914թթ., Երևան, 1974:
62. Բայրուրդյան Վ., Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում XIX դարում և XX դարի սկզբին, Երևան, 1989:
63. Բայրուրդյան Վ., Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լուսի ներքո, Երևան, 2008:
64. Բայրուրդյան Վ., Իրանի հայ համայնքը. Արդի հիմնախնդիրներ, Երևան, 2013:
65. Գասպարյան Ա., Խաչատուր Զուղայեցու աշխատությունը որպես Պարսկաստանի պատմության ուսումնասիրման սկզբնաղբյուր, «ՀԱՍՏԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ», հ. IV, Գյումրի, 2001:
66. Գասպարյան Ա., Առաքել Դավիթեցին Շահ Արա Առաջինի և հայոց կարողիկոսների փոխհարաբերությունների մասին, «ՀԱՍՏԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ», հ. III, Գյումրի, 2000:
67. Գասպարյան Ա., Գրիգոր Դարանաղցին ջալալիների շարժման մասին, «ՀԱՍՏԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ», հ. VII, Գյումրի, 2004:
68. Գասպարյան Ա., Նադիր շահի ներքին ու արտաքին քաղաքականության գնահատման շուրջ, «ՀՊՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ», Երևան, 2000:
69. Գասպարյան Ա., Շահ Աբբասի արշավանքների արտացոլումը Առաքել Դավիթեցու երկում, ԵՊՀ 80-ամյակին նվիրված ԸՄ գիտաժողով, Նյութերի ժողովածու Երևան, 2000:
70. Գասպարյան Ա., Պարսկաստանի 17-18-րդ դարերի պատմության առանցքային հարցերը հայ պատմիչների երկերում, «ԿԳՆ, Հանրապետական գիտական նստաշրջան նվիրված երկրաշարժի տասնամյա տարելիցին, Գյումրի, 1999:
71. Գասպարյան Ա., Միջնադարյան հայկական ժամանակագրությունները և ձեռագիր հիշատակարանները

- որպես Իրանի պատմության սկզբնաղբյուր, գՊՄԻ Հանրապետական գիտական նստաշրջան, Նյութերի ժողովածու, Գյումրի, 2007:
72. Գասպարյան Ա., XVII դարասկզբի թուրք-իրանական հարաբերությունները հայ պատմիչների լուսաբանմաբ, << ԳԱԱ ՇՀՀԿ, Գիտական աշխատություններ, հ. V, Գյումրի, 2002:
73. Գասպարյան Ա., Հասարակական-քաղաքական կյանքի արտացոլումը XVII-XVIII դարերի հայ պատմագրության մեջ, << ԳԱԱ ՇՀՀԿ, Գիտական աշխատություններ, հ. VIII, Գյումրի, 2005:
74. Գասպարյան Ա., Արժանահավատ տվյալներ 1795թ. Թիֆլիսի գրավման հետևանքների մասին, << ԿԳՆ, գՊՄԻ, Զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 2001:
75. Գասպարյան Ա., Հայ-իրանական հարաբերությունները XVIII դարի 20-30-ական թվականներին, << ԿԳՆ գՊՄԻ, Զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 2001:
76. Դանեղյան Լ., Արաքել Դավրիծեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր, Երևան, 1978:
77. Դիլոյան Վ., Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, Երևան, 1966թ.:
78. Զարբիանայան Գ., Պատճութիւն հայերէն դպրութեան, հ. Բ, Վենետիկ, 1878:
79. Զուլայյան Մ., Թուրք-պարսկական պատերազմները Հայաստանում և նրանց հետևանքները /1555-1595/, ԳԱ, «Տեղեկագիր» 1961, N3:
80. Զուլայյան Մ., Թուրք-պարսկական պատերազմները Հայաստանում և նրանց հետևանքները, ԳԱ «Էրաբեր հասարակական գիտությունների» 1966, N2:
81. Զուլայյան Մ., Զալալինների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1966:
82. Զուլայյան Մ., Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դարերում, Երևան, 1980:
83. Թաղիադեանց Մ., Պատճութիւն Պարսից, հ. Ա, Կալկարա, 1846:
84. Իրանազիտության հարցեր, խմբ. Խ. Բարսեղյանի, Երևան, 1978:

85. Լեռ, Հայոց պատմություն, հ.3, գիրք առաջին, Երևան, 1969:
86. Լեռ, Հայոց պատմություն, հ.3, գիրք Երկրորդ, Երևան, 1973:
87. Լեռ, Խոջայական կապիտալը և նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ, Երևան, 1934:
88. Կոստիկյան Բ., Թահմասպ II-ի հայերին ուղղված հրովարտակները և 1730-1731թթ. նրա արշավանքը դեպի Երևան, Մերձավոր և Սիցին Արևելքի Երկրներ և ժողովուրդներ, հ.ХХІІ Երևան, 2004:
89. Կոստիկյան Բ., Ղարաբաղի հայ մելիքները Նադիր շահի իշխանության տարիներին, Մերձավոր և Սիցին Արևելքի Երկրներ և ժողովուրդներ, հ. XXVII, Երևան, 2007:
90. Հայ ժողովրդի պատմություն, հ.IV, (XIV-XVIII դդ.) Երևան, 1972:
91. Հայոց պատմություն, Նոր ժամանակաշրջան / XVII դարի Երկրորդ կես-1918/ հ. III, գիրք առաջին, ՀՀ ԳԱԱ, Երևան, 2010:
92. Հարությունյան Բ., Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ, Երևան, 1998:
93. Հարությունյան Պ., Անդրկովկասյան ժողովուրդների պայքարը իրանական և թուրքական ազրեսիայի դեմ XVII-XVIII դարերում, Երևան, 1955:
94. Հարությունյան Հ., Գյուղացիական շարժումները Հայաստանում XVII դարի առաջին քառորդում, Երևան, 1939:
95. ՀՀ. Պետ. Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու, N2, 1950:
96. Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Երկրորդ, Երևան, 1959:
97. Մարտիրոսյան Վ., Հայ և Վրաց ժողովուրդների հաճագործակցությունը ազատագրական պայքարում, (XVIII դարի 20-ական թվականներ), Երևան, 1971:
98. Միրզոյան Հ., XVII դարի հայ փիլիսոփայական մտքի ըննական վերլուծություն, Երևան, 1983:
99. Միրզոյան Հ., Սիմեոն Զուղայեցի, Երևան, 1971:
100. Միրզոյան Հ., Հովհաննես Մրգուզ Զուղայեցի, Երևան, 2001:

101. Սովորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1990:
102. Նաջարյան Հ., Թուրք-իրանական հարաբերությունները XVI դ. ու XVII դ. առաջին կեսին և Հայաստանը, Երևան, 1961:
103. Նաջարյան Հ., 1639 թ. թուրք-իրանական հաշտության պայմանագիրը և Հայաստանը, Երևան, 1969:
104. Չամչյան Մ., Հայոց պատմություն, հ.Գ, Երևան, 1984:
105. Պատմութիւն Նոր-Ձուղայու, որ յԱսպահան, աշխատասիրեալ Ի. Պ. Յարութիւնէ Թ. Տեր-Յովհաննեանց, հ. Ա, Նոր Ձուղա, 1880, հ.Բ, Նոր Ձուղա, 1881:
106. Տեր-Ավետիսյան Ս., Նադիր շահի արշավանքները ըստ Հակոբ Շամախինցու, Երևան, 1940:
107. Փափազյան Հ., Սեֆյան Իրանի ասիմլյատորական քաղաքականության հարցի շուրջը, «Բանբեր Մատենադարանի» N3, ԳԱ, Երևան, 1956:
108. Փափազյան Վ., Հայաստանի առևտրական ուղիները միջազգային առևտրի ոլորտում XVI-XVII դդ., Երևան, 1990:
109. Օրմանյան Մ., Ազգապատում, մասն թ. Կ.Պոլիս 1914:

*Р/ Олибрбй*

110. Арунова М., Ашрафян К., Государство Надир-шаха Афшара, Москва, 1958.
111. Баубуртян В., Армянская колония Нової Джульфы в XVII веке, Роль Нової Джульфы в ирано-европейских политических и экономических связах/, Ереван, 1969.
112. Баубуртян В., (Посредническая роль новоджульфильских купцов в дипломатических отношениях Ирана с западноевропейскими странами в начале XVII в. ), Краткие сообщения Института Народов Азии АН СССР N 7, 1964.
113. Бартольд В., соч. т.VII, Москва, 1971.
114. Бартольд В., Иран, исторический обзор, Ташкент, 1926.
115. Белоусов Я., Восток древний и близкий, По Ирану и Египту, Алма-Ата, 1971.
116. Беляев Е., Иран в средние века, Москва, 1939.
117. Богрова Е., Персия и персы, Москва, 1903.
118. Бутков П., Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 годов, ч.2, СПБ 1869.
119. Брюсов В., Летопись исторических судеб армянского народа, Москва, 1918.
120. Всемирная история, под. ред. Смирина М. т. IV, Москва, 1958.
121. Всемирная история, под.ред. Зутиса Я. т. V, Москва, 1958.
122. Дьяконов М., Очерк истории древнего Ирана, Москва, 1961.
123. Зулалян М., Армения в первой половине XVI в., Москва, 1971.
124. Иванов М., Очерк истории Ирана, Москва, 1961.
125. Ивановский К., Иран, Москва, 1952.
126. Иран: История и культура в сред. века и в новое время: (сб. статей, ред. Н.Кузнецова), Москва, 1980.
127. Иран: История и современность, (сб. статей, отв. ред. Н.Кузнецова), Москва, 1980.
128. Иран: Экономика, История, Исторография, (сб.статьй), Москва, 1976.
129. История дипломатии,под. ред. Зорина В., т I, Москва, 1959.

130. История Ирана, под. ред. Иванов М. С., Москва, 1977.
131. История Ирана с древнейших времен до конца XVIII века, Ленинград, 1958.
132. История Иранского государства и культуры, (отв. ред Б.Гафуров), Москва, 1971.
133. Кишишев С., Походы Надир-Шаха в Герат, Кандагар, Индию и события в Персии после его смерти, Тифлис, 1889.
134. Крымский А., История Персии, ее литературы и дервишской теософии, т II, Москва, 1913.
135. Милов П., Иран, Москва, 1957.
136. Мухаммед-Казим., Поход Надир-шаха в Индию, Москва, 1961.
137. Ненашев А., На перекрестке веков, Москва, 1974.
138. Огородников П., Очерки Персии, СПБ, 1878.
139. Памятники дипломатических сношении России с державами иностранными, т. I, II, СПБ, 1871.
140. Петрушевский И., Народное восстание в Гилане с 1629г. ученые записки ин-та Востоковедения, т III, 1951.
141. Пигулевская Н., Якубовский А. и др., История Ирана с древнейших времен до конца XVIII в. Ленинград, 1958.
142. Соловьев С., История России с древнейших времен, кн. IX, Москва, 1963.
143. Тер-Аветисян С., Походы Тахмас-Кули хана (Надир шаха) и избрание его шахом в описании Акопа Шамахеци, Тифлис, 1932.
144. Тер-Мкртчян Л., Армения под властью Надир-шаха, Москва, 1963.
145. Царьградские Письма о древних и нынешних турках и о состоянии и т.д. СПБ, 1889.

#### *Գ/ Այլ լեզուներով*

146. Baibourtian V., International Trade and the Armenian Merchants in the Seventeenth century. New Delhi. 2004.
147. Baibourtian V.. Participation of iranian Armenians in World Trade in the 17 th Century. Les Armeniens dans le commerci asiatique au debut de l' e' re modern. Paris. 2007.

148. Bellan L., Chah Abbas, sa vie, son histoire, Paris, 1932.
149. Brosset M., Livre d'Histoires, compose', parle vartabiet Arakel de Tauriz (Collection d'historiens, t I St.-Petersbourg, 1871).
150. Chardin J., Voyages en Perse, t I-IX, Paris 1811-1820.
151. Denison Rosse E., The early years of Shah Ismail, founder of the Safawi dynasty, London, 1896.
152. Lockhart, Nadir Shah, a critical study mainly upon contemporary sources, London, 1938.
153. Lavisse E. et Rambaud A., Histoire générale du IV<sup>e</sup> siècle à nos jours, Paris, 1896.
154. Malcolm, Histoire de la Perse, tIII, chad XVI P.h.
155. Lavallée Ph. Histoire de l' Empire Ottoman, Paris, 1855.
156. Raphael du Mans., Estat de la Perse en 1660, Paris, 1895.
157. Richards Fr.A Persian journey, London, 1932.
158. Sykes P., A history of Persia, voi II, London, 1951.
159. Toussaint J.B., Les six voyages de Jean Baptiste Tavernier en Turquie, en Perse et aux Indes, Paris, 1679.
160. Tournefort P., Relation d'un voyage du Levant, t.II, Paris, 1717.

#### 4. ՊԱՐԵՐԱԿԱՆՆԵՐ

##### *Ա/Հայերեն*

- «Հայրենիք» /հանդես/ 1930-1934թթ. համարները:
- ՀԽՍՀ ԳԱ Տեղեկագիր, հասարակական գիտությունների սերիա 1951, N5 1961թ., N3, 1964թ., N9, «Լրաբեր» 1966թ., N2, «Բանբեր մատենադարանի» 1965թ., N3:
- «Հ Պետ. Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու, Երևան, 1950, N2:
- «Արարատ» ամսագիր, 1888-1889թթ.:

##### *Բ/ Ոռուերեն*

- "Вопросы истории" N2, 1950, N6, 1951, N5, 1952, N7, 1953.
- Ученые записки Академии общественных наук, вып. II, 1946
- Советское востоковедение, N5, 1948, 1, 1956 г.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	40
1. ՀԱՅ ՊԱՏՄԻՉՆԵՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏԻՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (XVII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ) .....	40
2. ՀԱՅ ԱԲԲԱՍ ԱՌԱՋԻՆԻ ՆԵՐՔԻՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ XVII - XVIII ԴԱՐԵՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԻՉՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՍԻ .....	66
3. ԻՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ ՀԱՅ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ (XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՇԴ ԿԵՍ) .....	106
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՇԴ	114
1. ՍԵՖՅԱՆ ԻՐԱՆԻ ԹՈՒԼԱՑՄԱՆ ՈՒ ԱՆԿԱՍԱՆ ՊԱՏԱՌՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՍԻ .....	114
2. XVIII ԴԱՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԻՉՆԵՐԸ ՆԱԴԻՐ ՇԱՀԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ (1736-1747 ԹԹ.) .....	129
3. ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՅՐԻԿԵՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ /XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՇԴ ԿԵՍ/ .....	153
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	180
РЕЗЮМЕ .....	185
SUMMARY .....	187
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	189

# ԱՐԴԱՎԻՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԻՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ XVII-XVIII  
ԴԱՐԵՐԻ ՀԱՅ  
ՊԱՏՄԻՉՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Համակարգչային ձևավորումը՝ Ա. Մարանգոյանի  
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության 28.12.2015 թ.  
Տպաքանակ՝ 500 օրինակ

ՀՀ ԳԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ  
**ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА**  
**INSTITUTE OF HISTORY OF NAS RA**

---

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4  
Р.А. 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4  
24/4, Marshal Baghramyan ave., 0019, Yerevan  
<http://www.academhistory.am>


[2000 թ.]

ԳԱԱ Դիմնարար Գիտ. Գրադ.



FL0397572

A N  
ASOP394



ISBN 978-9939-0-1641-2



9 789939 016412 >